



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

1049

ԲՈՒՂԻ ՄԱՐԿՈՍԻ ԱՂԱՔԷԳԵԱՆ

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ, ԱԶԳԻ ԵՒ ԵԿԵՂԵՑՈՒ

ԱԶԳԱՅՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ա Ռ

ՊԱՏՈՒԱԿԱՆԱՅ ՊԱՏՈՒԱԿԱՆ

ՏԵՐ ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊՐՍԿՈՊՈՍ ԱՆԻՈՑ

Ե Ի

ՊԱՏՐԻԱՐԲ-ՕՍՄԱՆԵԱՆ ՀԱՅՈՑ



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

1878



ԹՈՒՂԹ ՄԱՐԿՈՍԻ ԱՂԱԲԷԳԵԱՆ

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ, ԱԶԳԻ ԵՒ ԵԿԵՂԵՑՈՒ ԱԶԿԱՅՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

PA  
27684

ԹՈՒՂԹ ՄԱՐԿՈՍԻ ԱՂԱԲԷԳԵԱՆ

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ, ԱԶԳԻ ԵՒ ԵԿԵՂԵՑՈՒ

ԱԶԳԱՅՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ա.Ռ.

ՊԱՏՈՒԱԿԱՆԱՑ ՊԱՏՈՒԱԿԱՆ

ՏԷՐ ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՆԻՈՑ

ԵՒ


ՊԱՏՐԻԱՐԲ ՕՍՄԱՆԵԱՆ ՀԱՅՈՑ

1049-Ա2

ԱՐԱՄԵԱՆ ՏՊԱՐԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

Չափագրվար Եզրուու, Յակոբեան խան, քիւ 13.



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

1878



Երիցս Պատուական

**Մրբագան Հայր,**

Այն հրամանն որ արիք ինձ կատարեցի մի ամսա միջոցում, իմ փոքրիկ գրեականն օգնութեամբ եւ իմ ամենանեղկակ ժամանակումս : Այսօր՝ Հայոց Աւիսահի, Ազգի եւ Եկեղեցու ազգայնութեան պատմութիւնը մի թղթում ամփոփեցի : Յուսամ որ՝ ապագայում Ձեր շնորհարարութեամբ Հայոց Աւիսահի՝ Ազգի եւ Եկեղեցու ամբողջ պատմական կեանքը հաստատուող գրեւորում բովանդակելու կարող լինիմ :

Մնամ խնդրելով

Ձեր գերագանց պատուականութեան ազօծքը

ինձ համար ապաւէն

ՁԵՐ ԱՄԵՆԱԽՈՆԱՐԷ ԵՒ ԱՄԵՆԱԶՆԱԶԱՆԳ ԺՈՂՈՎՐԿԱՌԳԻՆ

**ՄԱՐԿՈՍ ԱՂԱՌԷԳԵԱՆ**

ԻԶՄԻՐԵՑԻ

Գանձիլի 1878, Յուլիս 12.



802-2013

ԹՈՒՂԹ ՄԱՐԿՈՍԻ ԱՂԱՔԻԳԵԱՆ

## ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ, ԱԶԳԻ ԵՒ ԵԿԵՂԵՑՈՒ

ԱԶԳԱՅՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ա Ռ

ՊԱՏՈՒԱԿԱՆԱՑ ՊԱՏՈՒԱԿԱՆ

## ՏԵՐ ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՆԻՈՑ

Ե Ի

ՊԱՏՐԻԱՐՔ ՕՍՄԱՆԵԱՆ ՀԱՅՈՑ

Ո՛չ Հայոց աշխարհ կայ՝ առանց Հայոց ազգի,

Ռ՛չ Հայոց Ազգ՝ առանց Հայոց աշխարհի :

Ուստի և այս մեր օրերում, կառավարութեանց ծառայող մի քանի բարձրաստիճան պաշտօնաւորաց ասմունքը թէ՛ Հայեր եւ որեւորս առանց Հայոց աշխարհէ կամ թէ՛ Հայոց աշխարհ եւ որեւորս առանց Հայոց ազգէ հիմնովին խախուտ՝ առանց իրողութեան մի ասմունք է, որոյ նմանները, պետական մարդիկ, քաղաքական կարգէն լինին՝ զինւորական կարգէն, շինում են ու սարքում ու իբրև բանավճռիւ (formule) հասարակաց են անում, միմիայն նրա համար որ դուր գան դրանք իրանց տէրանց ականջին: Շատ անգամ, թէ որ այդպիսի բանավճռիւների վրայ միտք անենք և նրանք վեր ածենք, վեր հանենք մեզ ու մեզ (induction ou déduction faite) կը տեսնենք որ՝ դրանք հասարակաց ականջներին զարնելու յատկութենէն ուրիշ մի նշանակութիւն չունին : Արդ ցոյց տանք և մենք այս տեղ գիտութեան և քննութեան փորձով թէ՛ ո՛չ Հայոց աշխարհ կայ, առանց Հայոց

ազգի և ոչ Հայոց ազգ՝ առանց Հայոց աշխարհի և թէ երկուսն էլ կան այսօր և այնպէս կան, ինչպէս որ կրնային լինել և պէտք էր որ լինէին:

Աչքի առջեւ եղող մի իրողութիւն լաւ ճանաչելու համար՝ նրա ամեն կողմերովը՝ ներսովը ու դրսովը՝ պէտք է որ շատ անգամ դրա պատմութեան խորերը դիմենք գտնելու համար թէ՛ ինչ արմատական իրողութիւնք պատճառեն դարեւ այդ աչքի առաջ եղող իրողութեան յառաջ գալուն: Այդ պատճառով այդ դրութիւն մեզ պիտի ստիպացնէ, ուղենք չուղենք դէպի պատմութիւն դիմել և ծանրն այն է՝ դէպի հին պատմութիւն: Այդ մասին, Սրբազան Տէր, ձեր երկայնամտութիւնն եմ խնդրում, որ մի փոքր երկարաբան պիտի լինիմ. բայց և այնպէս պիտի աշխատիմ ձեռքէս եկածին չափ կարճախօս լինել:

Ուրեմն սկսենք որ տեղաց որ պէտք է սկսել:

Մեր պատմութեան, Սրբազան Տէր, բնու ամենեւին քննութեան չառնուած այլեւայլ հանգամանքներէ ամենակարեւորն ու ամենագլխաւորն է՝ Հայոց աշխարհի բնական դիրքը և Հայոց ազգի ընկերական վիճակը: Եւ ինչ ունի մեր պատմութիւն փառաւորադոյն և պատուականադոյն հին ժամանակուայ ազգաց և ազանց վրայ: Ո՛րքան Եգիպտացիք զիտութեանց, Փիւնիկեցիք վաճառականութեան, Պարսիկք աշխարհակալութեան, Հելլենացիք զբականութեան, Հռովմայեցիք պատերազմադիտութեան, Հրէայք կրօնադրութեան, Ասորեստանցիք քաղաքաշինութեան և ուրիշներն էլ իրանց բարեմասնութեամբ փառաւոր են եղել, պատուական են եղել: Հայք էլ իրանց աշխարհի բնական դիրքով, իրանց ազգի ընկերական կեանքով փառաւոր և պատուական են եղել: Այո՛, մինչդեռ միւս ազգ և ազինք իրանց այդ բարեմասնութիւնք ձեռք բերելու համար իրանց աշխարհ և ազգայնութիւն վրայ են տուել՝ Հայք և Հայոց աշխարհ ընդհակառակն, իրանց կրկնակի բարեմասնութեամբ, այսինքն Հայոց աշխարհ՝ իր բնական դրութեամբ զՀայոց ազգն է փրկել և Հայոց ազգ՝ իր ընկերական կեան-

քով՝ զՀայոց աշխարհն է փրկել և այդ փրկողութեան դործողութիւնն այնքան անգամ է կրկնուել, որքան անգամ որ մինը կամ միւսը կորստեան վտանգումն է գտնուել: Այսօր էլ, ես ասում եմ, Սրբազան Տէր, Հայոց աշխարհն որ կայ՝ Հայոց ազգին պիտի փրկէ, Հայոց ազգն էլ որ կայ՝ Հայոց աշխարհին պիտի փրկէ. թէ ինչպէս, հերիք է որ զիտենայ այդ բան Հայոց ազգ:

Ով որ քիչումիչ հին ազգաց ու ազանց պատմութեան դրքեր աչքով է անցուցել, յուսամ որ մի սաստիկ աչքի զարնող իրողութիւն իր ուշադրութեան ներքեւ ընկած լինի: Այդ իրողութիւնն այն է, օրինակի համար, երբ Եգիպտացիք հաստատուում են իրանց երկրում, իրանց առաջին դործն է լինում քաղաք շինել, տաճար կանգնել, բուրդ հիմնել: Իրանց մի երեւելի թագաւորներէն մինը Մէնէս (3000) շինած ունի Մեթիս քաղաքը, Թուամօսիսէլ Կառնայ ապարանը, Ամենօփիս էլ Լուսուրը և միւսներն էլ իրանց կարգին: Ասորեստանեայց աշխարհում ներբողգ անուն մի զօրաւոր մարդ էլ Բաբելոն քաղաքն է շինել: Նինոս էլ Նինուէ քաղաքը այդ Նինուէն էլ, ըստ Սըր Լէյլըդի, ինչ հանգի քաղաք է եղել, ես այս տեղ ուղումեմ առաջ բերել:

« Երկար ժամանակ առասպելական չափազանցութիւնք համարուեցան նախնեաց հաստատութիւնքը Նինուէ քաղաքի մեծութեան եւ չրջապատի մասին: Բայց մեր օրերում եղած խուզարկութիւնքը, մանաւանդ Սըր Լէյլըրտի յաջող զիւտերը ցոյց տուին շատ համոզական կերպով նախնեաց հաստատութեանց ճշմարտութիւնը: Լէյլըդը այնպէս է համարում իր կարծիքով թէ՛ Նեփթիս, Կառնուրիս, Խարսպատէ եւ Բաբելոնի աւերակները, որոնք մի զուգահեռազիծ ձեւ են կազմում ամէնքը միասին, նոյն եւ միայն մի քաղաքի մնացորդները լինին, եւ, ինչպէս որ այդ մնացորդների մէջ տեղ պարունակող անջրպետը բաւական ճշգրտեամբ պատասխանումէ Դիոտոր Սիկիլիացու Նինուէի տուած ներքնակողմին եւ համաձայնում է Յովնան Մարգարէի երեքօրեայ ճամբորդութեան հետ, ուստի եւ Լէյլըդը յօժարում է ընդունելու իբրեւ հաւատարի, նախնեաց ասածները Նինուէի ընդարձակութեան մասին: Այդ չորս լեռնանման աւերակները, ըստ իր կարծեաց, ապարաններ են եղել ամէն մէկը մասնաւոր թաղերու սրբոտ կազմող, այլեւայլ ժամանակ շին-

ուած եւ այլեւայլ անուն կրող : Ամէն մէկ թաղ՝ ժամանակով թագաւորական կացարան է եղել պարսպապատ ամրոցներով, եւ բայց այդ կացարանէ, բովանդակում է եղել իր միջում սրատեղիք եւ պարտէզներ, քաղքի մէջ տեղը մասնաւոր մարդկանց տներովն է եղել բռնուած, որոնք այգեստանի, մրգաստանի եւ արտերի միջումն են եղել : Ամենէն հին մասը Նինուէի, Զաք եւ Տէգրէ գետերու խառնուրդումն է եղել, որ տեղէ այսօր եւ Նեմրուտ գիւղիկը Յետագայ թագաւորներ նոր նոր ապարաններ շինելով քաղաքը ընդարձակել են, խորտապատ եւ Գույունջուկ եղած ապարաններն անշուշտ ամենէն նորերն էին . մասնաւոր փոքրիկ տներն աղիւսով շինուած շուտով աւերակ են դարել, որ նիւթով որ շինուած են եղել այն նիւթը հողին հետ խառնուել հաւսարել է, այնպէս որ բաւական ժամանակէ յետոյ՝ էլ ամենեւին նրանց նշմարն անգամ չէ գտնուել : Բայց երկրագործը երկիրը փորէ թէ չէ՝ իր արօրովը, որ հին բնակարանների նշմարները տեսնուում են եղել : Չէ կարելի, ասում է Լէյբրա, նկատել իրբեւ չափազանցութիւն, այն մեծութիւնը, որ տուած են եղել Նինուէին, իր ամենարարձր դարգացման ժամանակ, թէոր արեւելեան քաղաքների որպիսութիւնը նկատուելու լինի : Այդ քաղաքներն իրանց բնակիչներով եւրոպական քաղաքների նման նոյն համեմատութիւնը չունին : Կանանց առանձնականութիւնը (Չոկ ասլուրը) մասնաւոր տներումն արդէն շատ բնակարաններ էր սլահանջում . բայց այդ տներն էլ իրանց մէջ էին պարունակում պարտէզներ, վարելահողեր : Գիտաւոր Սիկլի-լիացի եւ Գուինա-Գուրդ մեզ սորվացնում են թէ Բաբելոնի միջնահողմը բաւական տեղ կայ եղել, պաշարման ժամանակ պէտք եղած ցորենը մշակելու բնակչաց աննդեանը համար, առանց մրգաստանն ու ծառաստանը հաշուելու : Յովնանի ասածէն, որ քաղաքում շատ դաւար էր գտնուում, կարելի է հետեւացնել թէ բաւականին արօտ եւ ճարակ է եղել գտնուում եւ դամբանները մեզ ցոյց են տալի որ պարսիսաների միջում բնակիչների մեծ մասը վրաններումն են եղել բնակում, ըստ այն սովորութեան, որ մինչեւ այսօր կայ Բաղդատ, Մուսուլ եւ միւս հարեւան քաղաքներում : Այդպիսի բնակատեղիքը շատ ընդարձակ միջոց են պահանջում քան հիւղերն ու տնակները : Սպահան եւ Գամաս քաղաքներն իրանց փառաւորութեան ժամանակ պարտէզներով եւ արուարձաններով գրեթէ հաւսարել պէտք էին Նինուէին՝ ընդարձակութեան կողմէն :

Իսկ ուրիշ աշխարհաման երեւելի ճամբորդներ Բաբելոնի այսօրուան վիճակի վրայ այնպիսի նկարագրութիւնք են անում, որ մարդուս վրայ սոսկում են բերում կարգալիս :

Այսօր, այդ փառաւոր աշխարհը, ասում են, բոլորովին երեսէ թողած խոպան մի երկիր է դարցած քանդիչ ու աւերիչ թուրք տիրապետութեան ներքեւ «Նաինի աստուածոց դրախտը» ասում են, աւաղակաց խշախք է եղած, քաղքի պարսիսաներու մնացորդներէն, շրանցքներու, շրամբարներու քարուքանդներէն, երեւում է եղել, որ աստիճան հոյակապ քաղաք է եղել : Բաբելոնական տէրութիւն ընկել է թէ չէ՝ իր փառաւոր շէնքերն էլ քարուքանդ են եղել, բնակիչք հեռոցհեռէ վատթարելով են վատթարել ու ցաք ու ցրիւ են եղել և հէնց Գրիստոսի թուականի Գ. դարումը արդէն Բաբելոն վայրի դաղանների խուռչ է եղել և գիշակեր թռչունների բոյն :

Նոյնպէս Փիւնիկեցիք Տէրոն ու Սէրոն են շինում . Հելլենացիք Սիւն, Սոլոն, Թէգէ կայն . Հուլմայեցիք Հուլմ . Հրէայք Երուսաղէմ : Իսկ մեր ազգական ազգ եւ աղինք, Մարք, Պարսիկք և Պարթեւք Եկբարան, Շուշան, Սոհր (ըստ Յունաց Պէրսէպոլիս) և Տէգրան և Պարսպար :

Մի նկատելու գլխաւոր բանն այն է, այդ ազգաց ու ազգանց մէջ, որ արեւմտեանց ընկերականութիւնը սկսում է քաղաքում, քաղաքաշինութիւնն ու ազգակազմութիւն մի եւնոյն ժամանակում են սկսում և ոչ թէ մինը միւսնէ առաջ բերում . վասնզի իրանց քաղաքացիութենէն և ազգակազմութենէն առաջ մի պատրաստական կեանք երեւում չէ իրանց մէջ քաղաքականն առաջ բերող, այլ քաղաքն է տալի իրանց ազգայնութեան անուն և ոչ աշխարհը կամ երկիրը, ինչպէս Աթենացիք, Թեփացիք, Սպարտացիք, Հուլմայեցիք կայն . մինչդեռ արեւելեանցը՝ դեռ իրանց քաղաքները չշինած, ասում են, Մարք կամ Մարտիկ, որ հովիւ ժողովուրդ ասել է և իրանց երկրի բերրութեամբ զօրանում են ու զարգանում և սպա կառուցանում են իրանց Եկբատան եօթնապարսպ քաղաքը . Պարսիկք նոյնպէս, որ Փարսիստանցի էին կոչում, այսինքն Չիստանցի, իրանց երկրում երկար ժամանակ ձիաւոր և աղեղնաւոր որսորդ ժողովուրդ լինելուց յետոյ, բռնապետութիւն պատճառ է

լինում պարսպապատ քաղաքներ շինելու : Իսկ Բարեւոյն ու Նինուէ քաղաքներն շինութիւնքն առաջ են դալի բռնապետութեան և սարկութեան արդիւնքով դաշտական, լեռնական և անապատական աղբաց ու ազանց յարձակմանց դէմ դնելու : Տարակոյս չկայ որ՝ Վաղդէացիք այսինքն Բարեւոյցիք, Նինուէացիք այսինքն Ասորեստանցիք առաջուց հովիւ երկրագործ ժողովուրդ են եղել և դաշտաբնակութեանէ դուրս են եկել քաղաքաբնակութեան մէջ մտել Երբայցեցոց նման և իրանց երկրի բերրութեամբ զօրանալով ու զարգանալով՝ առք կլիմայի ներքեւ իրանց քաղաքներն նման կառավարութիւն կամ իրանց կառավարութեանց նման քաղաքներ են հաստատել, հայրենիք, ազգայնութիւն և կրօն ընկերական կեանք՝ մի խօսքով, մարդկութիւնն ամբողջ իրանց բռնապետին միջումն ամբողջելով, ինչպէս որ այսօր էլ նրանց նման ազգութիւն և ընկերային կեանք տեսնում ենք մեր աչքի ստալը :

Հիմա էլ տեսնենք թէ՛ Հայք մեր նախնիք, ինչպէս են սկսել իրանց ազգակալմութիւնը, քաղաքաշինութեամբ՝ թէ՛ աշխարհաշինութեամբ : Հարկ եմ համարում այս տեղ, Սրբազան Տէր, այդ չն բառին և իրմէ դուրս եկած շնէ և շնո՞ւթիւն բառերի վրայ մի պատմական հայեացք դարձնել, ձեռքէս եկածին չափ կարճ և սղարդ : Երբ Մովսէս Խորենացու Հայոց Պատմութեան առաջին և երկրորդ գրքերը ուշագրութեամբ կարդար, այդ չն, շնէ, շնո՞ւթիւն բառերին շատ կը պատահէր. օրինակի համար շնէ րոնս, շնէ շնս, շնէ զասորակեցոս, շնէ զասորս, շնէ կեցոս, շնէ յաբարս, շնէ յեբրայս, շնէ յասորս, շնէ զեգլոս, շնէ երկրս : Իսկ մինակ չն բառը նշանակում է ըստ նրան, մի շինուած, սարքուած, բաղմատուն եւ բաղմաբնակ, զուարճ, կենդանի և զարդարուն մի տեղ երկրիս վրայ : Իսկ կեցո, որ ըստ Շահնազարեան Կարապետ վարդապետի կրօն, քաղաք է նշանակում և ըստ ինձ՝ քարափի վրայ շինուած դղեակ, իր միջում մի նահապետական ընտանիք պարունակող իր ամէն պէտքերով, և ոչ տուն կամ քաղաք : Դասակեցո և յեբրայս միւս նոյն բաներ են՝ բուն կերտին նշանակութիւնը սահմանող,

այն է ձեռքով շինուած ճարտարապետութեան արդիւնք : Կեցո բառն էլ «կեցո» բառին, հայկական սղման և հնչման օրէնքով, Խորենացու ժամանակ կեցո եղել պրծել է Հայոց բերնում : Շնէ բառն իր ժամանակին նշանակում է եղել, ինչոր այսօր նշանակում են ծաղկիլ, զարդանալ, քաղաքակրթուիլ բառերը : Երբ մի աշխարհ, ինչպէս մերինը, տներով, շէնքերով, դաստակերտերով, դաւառներով, կերտերով, աշխարհներով, ձեռակերտներով, աւաններով, դիւղերով է շինուած՝ աշխարհաշինութեան ծայրն հասած մի երկիր է եղել և ոչ թէ այսօրուայ բաղմացեղ և բաղմադէմ Թրքերու և Քրդերու բնակութեանը նման մի երկիր :

Առաջին դաղթողը Հայաստանում, թէ Արիական ցեղէն և թէ Սեմական, ամենեկին քաղաք շինելու հետամուտ չեն լինում : Հայկ, ասում է Մար Աբաս, երբ դաղթեց այս երկիր, արդէն բնակիչք կային ցար ու ցրիւ եղած դէսուդէն : Մի շէնք շինեց նաև իր թոռանը Կադմոսին տուեց և ինքն էլ զնաց հիւսիսու Արեմոքում մի լեռնադաշտի վրայ բնակուեց և մի գեղ շինեց այն տեղ Հայկաշէն անունով : Ինչպէս որ արդէն այդ կողմերում դէսուդէն ուրիշ մարդաշէններ կային : Իսկ Արմենակի համար, ասում է, իր Հարք անուն շէնը իր որդոց տալով զնում է ուրիշ տեղ շէն շինելու, իր թոռները Մանուազ և Բազ Ադի ծովու հիւսիսի արեւմտեան կողմն են շենացնում : Խոզ էլ Արմենակայ մի ուրիշ թոռը, հիւսիսումն է հաստատում : Սա էլ քաղաք շինելու տեղակ, դիւղեր ու շէնք է շինում : Յետոյ նորէն Արմենակի գէպի հիւսիս Արագած լեռան վրայ շէնք, դիւղեր, աւաններ է շինում : Իսկ թոռն Արմոյիս Երասխայ օփի վրայ մի կերտ է շինում, բայց իր որդին Շարա, դրա հակառակ այդ Արագած լեռան ետևի կողմերը մի ամենաբերրի հացն ու շուրը առատ մի դաշտ է զնում ու հաստատում : և այն տեղ շինում է Շիրակաւանը : Ամասիա հարաւու լեռանց կողմերը երկու շէն է շինում, մինը Պարսիսին և միւսն էլ Յուլիին է տալի : որանք յետոյ Պարսիստան ու Յուլիերտ են կոչում, ինչպէս իր անունով էլ Մասիս լեռը : Գեղամը գէպի հիւսիսի լեռանց կողմերն է գնում մի ծովակի եզեր-

քում շինութիւնն է սարքում, որոնք Գեղարքունի են կոչում: Գեղամայ որդին Սիաակն էլ բոլոր Երասխայ հովան տէր է լինում, ծովակի արեւելքէն մինչեւ Կասպից ծովու մօտն եղող դուրան երկիրը . սրա թուը Գառնիկն էլ մի գիւղ է շինում Գառնի անունով: Աղու էլ Կուր և Երասխ գետերու միջումն եղած հովիտներն տէր է լինում և այն տեղ տարածուելով շատ շէներ և գեղեր է շինում:

Ինչ էք ասում, Սրբազան Տէր, արդեօք Անկլիոյ երկրէն Ամերիկա գաղթող Երեքական, Մարրողական, Հարթողական Հասարակական և այլ հանդի մարդիկ ուրիշ կերպ բաժան բաժան արին Ամերիկական երկիրն իրանց մէջ:

Այդպէս, Սրբազան Տէր, ինչպէս որ արդէն քաջ գիտէք, այդ Արարատ, Սիւնիք, Տուրուբերան և Վասպուրական աշխարհները, որոնց մէջ նախ մեր նախնիք հաստատուեցան, չորս հինգ հարիւր դարուայ միջոցում սաստիկ բազմաբնակ և մարդաշատ եղան, այնպէս բնական օրէնքներով բնակրուեցան այդ աշխարհում, որ տեղէ էլ սպառնալու ջրնջուեւ անհնարին էր, բայց միայն մի կրկնակի ջրհեղեղով կամ մի ընդհանուր երկրաշարժով: Զորս հինգ դարուայ խաղաղութեամբ այդ դաշտաբնակ, լեռնաբնակ, հովտաբնակ, բլրաբնակ, ձորաբնակ Հայք աճելով են աճում, զօրանալով են զօրանում, և այնույետոյ՝ ոչ արչաւանք բռնակալաց, ոչ երկրաշարժ, ոչ հիւանդութիւնք չեն կարող լինում Հայքը ցրուել ջնջել այդ երկրէն և նրանց տեղը ուրիշներն տալ բոլորովին: Հայոց ազգակազմութեան գործը իր կատարին հասնում է, աշխարհով ազգն է կազմում, ազգով աշխարհն է կազմում: Հայոց ազգայնութիւնը այնույետոյ քաղաքական, ցեղական, կրօնական, պետական չէ լինում, այլ աշխարհային, Հայոց աշխարհ, Հայոց ազգ է կոչում: (Μέγας Ἀρμενία, Grande Arménie) մեծ Հայք ասուելով՝ թէ երկիրն և թէ ազգն է ըմբռնում: Այ՛ն, Սրբազան, ինչպէս որ հիմա պատմութիւնը պիտի անեմ, ձեր առաջը դնելով, քառասուն դարուայ թէ դէպի ներս, թէ դէպի դուրս մի գաղթականութեան, դեռ մինչեւ այսօր թէ Ռուսիոյ թէ Թուրքիոյ և թէ Պարսից պետու-

թեան տակ եղող հայաստանները, ոչ Ռուսաստան, ոչ Թուրքաստան և ոչ էլ Պարսկաստան են եղած, այլ Հայաստան: Եւ թէ ինչպէս՝ իր կարգին ձեր բանի խորը նկատող հանճարոյն առաջը կը դնեմ:

Չկարծէք, Սրբազան Տէր, որ Հայոց աշխարհ, միայն մի Հայկ, մի Արմենակ, մի Արամ կայն ունեցած լինի. ոչ շատ Հայկեր, Արմենակներ ու Արամներ է ունեցած, որոնց մասին այս տեղ խօսիլը մեր ուղղութեանն դուրս գալ է, այլ միայն մի բանի վրայ եմ ուղում խօսիլ և ձեր ուշադրութիւնը գրաւել: Արժն ազգանունը, որ Մովսէս Խորենացին Արամէն է աւանում. իսկ նորերումս Մխիթարեանք Արմենակէն և Հայոց աշխարհին են տալի. էս ընդունում չեմ: Ես կարծում եմ իմ յատուկ դիտողութեամբս, որ Հայք և Հայոց աշխարհը նրանցմէ առաջ Արժն և Արժնասրան կամ Արժնէս էր կոչում: Ար մասնիկն որ Քնի առաջ է դրուած, նշանակում է երկիր Մանսիրիւ լեզուով. և ահա ձեզ աբ մասնիկով սկսած մի շատ բառեր էլ, որ նոյն իմաստն են զարթեցնում իրանցում. արձմի, արճի, արոյր, արճա, արչա, արձե, արանեպե, արձո, արթ, արծո, արոս-դի, արճ, արճի, արս, արնել: Եմանապէս մի շատ յատուկ անուններ էլ արով սկսած: Արժնակ, Արա, Արաբա, Արամադր, Արամ, Արարար, Արասա, Արամ, Արամայիս, Արամա, Արբակ, Արբան, Արմաւիւր, Արշակ, Արարա, Արցախ և այլն և այլն: Իսկ Քն միայն, հոգի, մարդ. ուստի և Արժն երկրամարդ. ինչպէս Թորթն, Կերթն, Ալթն, Նօրթն, Մարթն և այլն: Արդ՝ այդ Արմէնք ընդունելով իրանց մէջ և Հայոց իրար հետ միանում են. միարարը լինում է աշխարհը, այսինքն ցորենը, գինին և գաւարը, ոչ թէ կրօն և կառավարութիւն: Յաղթող, յաղթուող չէ լինում նրանց մէջ. տէր և ծառայ, իշխան և ստրուկ, բռնապետ այսինքն թագաւոր, բռնատուն այսինքն պարսպապա քաղաք չեն լինում նրանց մէջ, ինչպէս իրանց հարեւան երկրներում: Կրօնն՝ մի կարգու սարք (institution) չէ դառնում, այլ հասարակաց սովորութիւն: Թէ կոչուած բլուրներն են իրանց մեհեանները, այն տեղերն են լինում ընկերական ահումքները. Բեթի վրայ զօհեր են դնում, աղօթքներ են անում. կարելի է որ՝ և

չատ անդամ թշնամու դէմ դնելու պատերազմական ճառեր էլ են ասում և կերտերն էլ գանձ ու ղէնք պահելու տեղի: Կրօնն ասացի, հասարակաց սովորութիւնն էր և այդ ձեղ տարօրինակ և անհաւատայի բան չթուայ, Սրբազան, Այնքան ապացոյցք կան դրա մասին, որ եթէ երկար չլինէին մէկ մէկ ձեր առաջ կը բերէի այս տեղ: Մի աւելի գերազանց բանն էլ այն էր որ խղճի ազատութիւնն իր համանշանակութեամբ տիրում էր Հայոց աշխարհում. նրա համար էր որ կրօնը տիրող օրէնք չէր, ինչպէս միւս քաղաքաբնակ ազգաց մէջ: Երբ հեռզհեռէ Խաղտիք, Տայք, Գուգարք, Կործայք և Ուտիք Հայոց հետ միացան, արդէն իրանց ունեցած կրօնները պահեցին: Նոյնպէս Արամէն յետոյ Փուլագայիք, Գամիրք, Կապադովկացիք, որ յետոյ Ա. Բ. Գ. Հայք կոչուեցան, իրանց կրօնն ու կեանքը պահեցին: Խաղտիք հիւսիսում, Մարք Կորդուաց, Ասորիք Աղձնեաց աշխարհներում, Հրէայք Սպերում, ձէնք (Չինացիք), Ուրպէլեանք և Մամիկոնեանք՝ Գուգարաց աշխարհում, Հնդիկ Տարօնում, Գնչուք, Բուլղարք Վանանդում, Ալանք և Վիրք, Յոյնք դրանց ամէնքն էլ Հայոց աշխարհում մինչ ի Քրիստոնէութեան ծաւալումն իրանց կրօն, իրանց բարբառ և բարք ազատօրէն պահպանեցին: Տիգրան Երուանդեանի ժամանակները բուն Արմէներէնը նրանց վրայ ներգործում է և իրանցն էլ Արմէներէնի վրայ փոխադարձ, և անզոյորէն արմէնութիւնն կամ հայութիւնն է տիրում: Կարող էք, Սրբազան, այդ կենական և կրօնական դրութենէն վեր ածել և Արմէնաց բարբառին վիճակն էլ, որն որ տիրող տարերքն է լինում: Արարատայ, Վասպուրականի, Տուրուբերանի և Միւնեաց աշխարհներէ բարբառները ինչպէս այն ժամանակ՝ այսօրուայ նման տիրողներն են լինում և ասում են միջերկրեայ ոստանիկ լեզու: Իսկ միւս գաւառաց լեզուները եղբրական: Ինչպէս լեզուն, Սրբազան, և Քրիստոնէութիւնն էլ այդ գաւառներում բուն դրաւ ծլեց աճեց և ուճացաւ, որն որ այսօր էլ ձեր աչքովը տեսնում էք:

Արդ՝ Սրբազան Տէր, Յարեթեան և Սեմեան, գիտութեանական բառով, Հնդկագերմանական, արիական սերմն է

ցանկում այդ աշխարհում այն դրութեամբ, որ վերեւն ձեր աչքի առաջ հանեցի, շատ շուտով այդ աշխարհի ակունքներէ առատ առատ հունձ դուրս է տալի. երկրով, օդով, ջրով սնուած, զարգացած այդ մարդկային հունձը լինում է երկրագործ, տուարած, տանուտէր: Այդպէս Հայոց երկիրը, աշխարհներով, գաւառներով, աւաններով, գիւղերով, կերտերով լիք, պրտէպրունդ շինուած շէնանում է և Եփրատական աշխարհներէ վրայ ամենքէն բաղմոքնակը մարդաչառն ու հարուստն է լինում 25-30 դար շարունակ, ըստ օտար պատմագրաց վկայութեամբ և գլխաւոր առարկայ Պարսից, Հռովմայեցուց, Արաբաց, Թուրքաց, Թաթարաց և Քրդաց արչաւանքներին ու ասպատակութեանց:

Սրբազան, Մովսէս Խորենացին յատուկ մի ողբ ունի շինած, որու մէջ Արչակունեաց հարստութեան բարձմանը վրայ ցու է յայտնում. ինչպէս որ յայտնի է: Ես ընդհակառակն ողբալով կողբամ Պարթեւաց Հայոց աշխարհի վրայ տիրապետելուն ու նախարար և նախարարապետութիւն հաստատուելուն. եթէ ներելի լինէր ինձ, այս տեղ երկար բարակ Վաղարշակայ Հայաստանում վերահաստատած ընկերական կարգաւորութեան վրայ կը ճառէի և կառուցուցանէի ձեզ շատ յստակ կերպով, որ այդ կարգաւորութիւնք փոխանակ Հայոց աշխարհի և ազգի ընկերական կազմուածքը ամբացնելու և պնդացնելու, ընդհակառակն Հայկազանց կեանքը խարխլեց, դարաւոր աշխարհային կռիւների պատճառ դարաւ, շարունակ հին կեանքը նոր կեանքի հետ կռուի բռնուած: Արչակունի թագաւորները բնիկ նահապետներին յետ քշեցին, նորեկ նահապետներին առաջ տարին, Հայկազանց ձեռնէն ընտիր գաւառները խլեցին ու տարազն նախարարների տուին. Բագրատունիք, Մուրացանք, Արծրունիք, Մամիկոնեանք և այլ դրանցպէսներ ընտիր ընտիր գաւառների տէր եղան. Բաղմակնութիւն մտցուցին, իշխանութեան հետ ստրկութիւնը, հարձութիւնն օրինաւորեցին, միութիւն հաստատելով իշխանութեան և կրօնին մէջ տիրող օրէնք արին աննորոգամտութիւնը: Առաջին կրօնական հայածանք կրողներն եղան

802-2013

Բազրատունիք ու յետոյ բուն Հայկազունք, թէեւ Վաղարշակ՝ մի բունատուն քաղաք չդանելով Հայաստանում, վերկացաւ գնաց Մծբին բնակելու, բայց շուտով ինքն ու իր յաջորդները շինեցին Տիգրանակերտը, Երուանդաշատը, Արտաշատը, Վաղարշապատը, Արշակաւանը և այլն. որոնց ամէնքն էլ Զանդիկ կառավարութեան, այսինքն՝ բունապետութեան կոթողներ էին: Պարթեւաց այդ պետական կառավարութիւնը, ընկերական կարգաւորութիւնը, կրօնական միակերպութիւնը բնաւ ամենեւին յարմարութիւն չունէին Հայոց աշխարհի ընկերական կեանքին նահապետական վարչութեան հետ: Ահաւասիկ մի քանի իրողութիւնք եմ առաջ բերում իմ այդ նկատողութեան ապացոյց:

Առաջնոյ Արշակայ օրով կրօնական հալածանք սկսաւ, Բազրատունիք կրօնի համար պաշտօնէ զրկուեցան, լեզուները կտրուեցան, ոմանք էլ սպանուեցան: Աբգարի հայրը Արշամ, Աբգարի որդին Անանունը, Աբգարի քրոջ որդին Սանատրուկը Տրդատայ հայր Խոսրովը, նոյն իսկ Տրդատը որքան արիւն թափեցին, յայտնի է. Թագէոս Բարդուղիմէոս առաքելք, Սանդուխտ կոյս, Ոսկեանք և Սուքիասեանք Արշակունեաց մոլեռանդութեան զոհ զնացին: Պարթեւաց հետ միասին եկել էին Հայաստան շատ պարթեւազն մեծամեծներ, դրանք էլ Արշակունի կոչուեցան և ստացան իշխան անուն, իշխանութիւնք և կալուածներ. այդ բան Հայկազանց սրտին ցաւ եղաւ. վասնզի իրանք այդ իշխան իշխանապետաց ծառայ, ստրուկ և հպատակ էին լինում:

Ահա, Սրբազան, ձեզ մի օրինակ Տրդատայ մի արարմունքը: Սլուկ նահապետն Տարօնոյ՝ գլուխ վերուց Տրդատայ դէմ, Տրդատ նրան դիւրութեամբ զսպել կարող չեղաւ. ուստի Մամգուն ճէնազին խոստացաւ Սլուկի երկիրները տալ, եթէ նրան դաւով սպաննէ: Մամգուն գլուխ տարաւ Տրդատայ հրամանը և տէր եղաւ Սլուկեաց ընդարձակ երկրին: Դրա նման մի ուրիշ բունապետական օրէնք էլ ունէին Արշակունիք, որ ում որ կամենային նախարարական պատիւ և կալուած կարող էին տալ, հետեւաբար շատ վատազգի մարդիկ նախարարութեանց կարգն անցկացան,

մանաւանդ Արշակ Բ. ի ժամանակ: Պարթեւաց այդպէս մի նախարարէն կալուած խլելով միւս նախարարին տալով՝ առաջ եկաւ նրանց միջում ամէն տեսակ մոլութիւնք, մատնութիւնք, նենգութիւնք, ստախօսութիւնք, երդմազանցութիւնք, քսութիւնք և հետեւաբար իրար հետ անհաշտ թշնամութիւնք և անմիաբանութիւնք: Ամէն նախարար մեծ և փոքր՝ ունէր աւաններ, կերտեր, գիւղեր, նմանապէս՝ հարիւրաւոր, հազարաւոր ստրուկներ, ծառայներ, արքանեակներ, աղախինք, նաժիշտք, հետեւակ և ձիաւոր զօրք, սուրհանդակ, թիկնապահ, սենեկապետ, մարդպետ, դահիճ, բանտապետ, թէ որքան հայկազուն ժողովուրդը նեղւում տանջւում էր այդ նախարարաց վարած շռայլ ու զեղի կեանքէն՝ հեշտ է հասկանալը: Թագաւորները մի սիրուն կնոջ համար մի լաւ դրախտի համար կամ մի ընտիր ձիու համար նախարարներին սպանում էին. նախարարք էլ իրանց կարգին՝ նոյն օրինակ էին վարւում, իրանց հպատակների հետ:

Ինչպէս մի քիչ առաջ ցոյց տուինք, Պարթեւք այնքան արիւնուուշտ էին, որքան փարթամ, ահեղ և բունաւոր էին. հէնց Արշակ առաջնուն օրը կրօնի համար արիւն եղաւ, նոյնպէս Արշամայ օրը. Անանուն իր խոյրարար Ադդէին սպաննեց, Սանատրուկ Աբգարի ցեղին սրի բերան տուեց, Երուանդ Սանատրուկի տունը տեղը կոտորեց. Արտաւազդ Բ. Աբգամի՝ իր հօր բարերարին՝ մօրուքը բռնեց, թագաւորի երկրորդութենէն հանել տուեց և յետոյ էլ սպանեց և բոլոր Մուրացան ազգին տնով տեղով փճացուց: Այդ նոյն Արտաւազդն նահատակել տուեց դեռ պատանի, Թագէոս առաքելու աշակերտներին: Սա իր մի եղբոր ձեռքով միւս եղբորը սպանել տուեց: Դեհն եմ թողնում Տիրանի, Արշակայ, Պապայ և Արտաշի արած արիւնի մասին խօսելը. արդէն գիտեմ որ ձեզ յայտնի են: Դրանց մի ապականիչ սովորութիւնն էլ էր բազմապնութեան ախար, որն որ Հայաստանում բերին իրանց հետ, ինչպէս վերեւն ասացինք և միասին կանանց ստրկութիւնը:

Մեր պատմութեան հէնց սկզբներում, երեւում է Հայոց

վարուց և բարուց յտաակութիւնը և ընտանեկան կենաց բարոյականութիւնը: Ամուսնութիւնը, Սրբազան, մի օրէնք էր իրանց միջում, կինը կենակից, ազատ ու հաւատար էր մարդուն: Մովսէս խորենացին յիշում է Արայի կին Նուարդին, Տիգրանի կին, Ջարուհուն և նրա քոյր Տիգրանուհուն, բայց երեքին էլ առաքինութեան պատկեր է ցոյց տալի:

Հայկազունք տեսնելով Պարթեւաց այդ մուլութիւնը, որ իրանց յարկերը լեցնում էին հարճերով, նաժիշաներով, աղախիններով, ուր օրէ օր աճում էր անառակութիւնը, շուայլութիւնը և ամէն տեսակ ապականութիւնը, անշուշտ հասկանում էին որ այդպիսի կանանց արգանդէն ծնելու չէին առաքինի թագաւորներ, որոնք կարող լինէին Հայոց աշխարհի աէր և ազգի հայր դառնալու: «արդէն իրանց բնական դրութեամբ՝ զիտէին որ մարդուս առաջին դաստիարակն է մայրը, իսկ բաղմակնութեան մէջ շատ անգամ թագաւորամայրն էր լինում լկտի տանտուն և թէ դա՛ ինչպէս դաստիարակութիւն պիտի տար իր որդուն ակներեւ էր: Այդ բաղմակնութեան պատճառով, Վաղարշակ մի օրէնք դրաւ, որ տիրող թագաւորը պէտք էր մի որդուն իր մօտ պահէր. ըստ մեծի մասին անդրանկան կամ իր սիրական կնոջ զաւակին և միւսները աքսորէր Հաշտենից կամ Աղիսովիտ գաւառներում: Վաղարշակ իր Արշակ որդուն իր մօտն ունէր, Արաաչէս իր Տիգրան, Արտաւազդ իր եղբարցը քչեց, Սանատրուկ նոյնպէս, Արշակ Գնելին աքսորեց. մի նկատելու բան էլ այն է, որ Պարթեւաց հետ Հայաստան մտաւ որդուց որդու յաջորդութիւնը և այդ կերպով հարբասութիւնը: Մինչդեռ Հայկազանց մէջ ընտրութիւն էր լինում քաջ նահապետաց մէջէն: Պարթեւաց մէջ դաստիարակուած թագաւոր մի քանիսն են երեւում: իսկ միւսների դաստիարակութիւնն անյայտ է. դրանց բաղմակնութիւնը, որ շատ առաջ էր դնացել հեթանոսութեան մէջ, ինչպէս տեսնում ենք Տրդատին Հռիփսիմէին արիւնը մտնելումը, Արշակին, որ համարձակուեց քրիստոնէութեան ժամանակ երկու կին ունենալ Ուրմալիադային և Փառաձեմին և այդ վերջնուն արարմունքն էլ յայտնի է ձեզ, Սրբազան:

Բայց սակայն չնայելով Արշակունեաց այդ բռնապետական վարքին ու բարքին և իրանց վարած Զանդիկական իշխանութեան, Մ. Խորենացին ասում է, թէ Արաաչէս Բ. ի ժամանակ, ոչ մի անմշակ երկիր գտնուում չէր ամբողջ Հայոց աշխարհում, ոչ սարերում, ոչ դաշտերում, այնքան երկրի զարգացում մեծ էր:

Այդ ասել է միթէ, Սրբազան Տէր, թէ Արշակունիք իրանց մեծամեծ մուլութեանց հետ և մեծամեծ առաքինութիւնք չունէին և թէ ինչպէս 120000 քառակուսի մղոն երկիր ամբողջ մշակուած և շէնացած բաղմաբնակ է լինում իրանց բռնական կառավարութեան ներքեւ: Այդ բան որքան աշխարհի բնական դրութենէն էր ի հարկէ, այնքան էլ իրանց մուլութեանց հետ միասին ունեցած առաքինութիւնք էին պատճառ և դրանցմով է փոխարինում իրանց Հայաստանին հասուցած վնասները. օրինակի համար՝ Պարթեւք լուսաւորութիւնը շատ էին սիրում, այդ էր պատճառ որ թագաւորներէն շատերը հելլենական գրականութեան հետ ծանօթ էին: Արտաւազդ բանահիւս է եղել, Արգար իմաստասէր, Սանատրուկ ճարտարագետ, Արտաչէս Բ. բանաստեղծ, Տրդատ թէ հայերէն թէ՛ յունարէն և թէ լատիներէն գիտում է եղել, Նոյնպէս Արշակ Բ. քաղաքականութեան վրայ մի զաղափար ունեցող մարդ է երեւում: իսկ Վռամշապուհ ինչ աստիճան բանասէր և ուսումնասէր է եղել՝ մեր տարեգրերը մեզ աննդում են: Բայց այդ, Արշակունիք և ասպետ ու ասպետական մարդիկ էլ էին, և իրանց այդ բնաւորութեամբ պէտք է ասել որ մեր միջերկրեայ լեզուին դիւցազնական և ազնուական դրոշմ տուին, մինչդեռ Հայկազանց ժամանակ հովուական և դաշտական յատկութենէն դենը չէր անցկացած:

Պէտք չէ ուրանալ, Սրբազան, որ մեր նախնեաց գրաւոր լեզուին Արշակունիք իրանց ասպետական կեանքի տիպարը տուին: Արմէններու բարբառը տարակոյս կայ ոչ, որ Ձէնդ և Սանսկրիդ մայր լեզուաց մի ճիւղն է, և սոստիկ մշակուած միմիայն այն կեանքով՝ որ Հայկազունք վարում էին. այսինքն՝ մշակական, հովուական և տուարածական, գուցէ և

պատերազմական : Արշակունիք, Արշակունեաց արքունիքը, Ազատանին, Ոստանիկը, Սեպուհը ասպետական արին հայկազեան լեզուն՝ մեհենական, դիւանական և այլն : Եւ մի յատուկ բան էլ որ ունի Հայոց աշխարհեցին՝ իր սղման և հնչման օրէնքն է, որով օտար ազգաց և ազանց բառերը իր բնիկ աշխարհեցի անելու յատկութիւնն ունի, որն որ շատ քիչ ազգի բարբառի տրուած է : Ես ասում եմ, Սրբազան, որ մեր Հայկայ և Արամայ խօսած լեզուին մէջ, որ հայկաբանութիւն է համարուած այսօր, զէնտերէն, քաղզէարէն, երբայեցերէն, յունարէն, արպերէն, ալաններէն, հին և նոր պարսկերէն, թրքերէն և թաթարերէն, անհամար հայացած՝ Հայոց աշխարհեցի եղած բառեր կան, որոնք եթէ երկար լինէին ոչ մի քանխան այստեղ առաջ կը բերէի, մի օրինակ սղման օրէնքին, *անբարան մարդ, ապարկեար, պատկեր, ալանահիստ, Աստուած, որբ, տէր, զհողբ, հալարն, հազար, ալինսի, Աշտահակ, և այլն :*

Պարթեւք՝ քաղաքներ, ամրոցներ, ճամբէք շինելու շատ միտում ունէին. Արարատ, Բարձր Հայք, Ծովաց և Աղձնեաց աշխարհներում այսօրուայ մնացած աւերակներն ամենքն էլ Պարթեւաց շինածներն են ինչպէս արդէն վերեւն ասացի :

Մի ուրիշ հանգամանք էլ, որ Հայկազանց և Արշակունեաց ժամանակ Հայոց աշխարհի երկրային զարգացման պատճառ եղաւ . այն է որ, Հայկայ և իր որդոց ու թոռանց հիմնարկած ընկերականութիւնը տեւեց մօտ 2000 տարի առանց մի մեծ արշաւանք կամ յարձակում դրսուանց կրելու : Հնումը տաք կլիմայի ներքեւ ապրող ազգ և ազինք սիրում չէին ցուրտ կլիմայով երկրներում արշաւել և մեր աշխարհը, եթէ նկատուի պատմութեան մէջ աւելի հիւսիսային արևելեան խուժուժ ազգաց և ազանց յարձակումներէն մնաս կրեց՝ քան թէ արեւելքէն և արեւմտքէն, ինչպէս Սիպերիականներէն և անապատականներէն :

Արշակունեաց դարերը տեւեցին մինչեւ Տրդատ հինգ ու կէս դար : Այս ժամանակամիջոցում աշխարհ աշխարհի, ազգ ազգի վրայ յարձակմունք չեղան, երբեմն Կովկասական

ազգ և ազինք իրանց քարակալ լեռնամէջներէն դուրս էին հրսուում, բայց շուտով էին նրանց առաջն առնուում : Հռովմայեցիք միայն կռուեցան, դրանց պատերազմներն էլ աշխարհի ու ազգի հետ չէին, այլ տիրող հարստութեան հետ, հետեւաբար Հայք խիստ խորը արմատ կարող եղան քցել Հայոց աշխարհի դաշտերում և լեռնագաւառներում, այնպէս որ անհա քսան խոշոր դարերու է մօտենում, որ երկու և երբեմն երեք անգամ դարէնը ազգ ազգի վրայ, կրօն կրօնի վրայ յաջորդում էին ու յաջորդում, Հայք դաշտայինք, Հայք դիւղականք, Հայք քաղաքայինք կային ու կան ու դեռ պիտի լինին. ինչպէս որ պիտի ցոյց տամ ձեզ :

Տրդատ՝ փորձ փորձեց Հայոց աշխարհը ձեռք բերելուց յետոյ հռովմէական կայսրութեան օգնութեամբ, զանդիկական կառավարութեան տեղ հռովմէական կայսրութեան նման մի կառավարութիւն հաստատել Հայոց աշխարհում, բայց յաջողուեց ոչ, նախարարք չընկճեցան նրա միապետութեան առաջ և ինքն իր փորձին զոհ դնաց, Վերանորոգութիւն անհնարին էր : Այդ դարերում, ամբողջ աիեզերական ընկերականութիւն շուռ գալու վրայ էր . մի նոր կրօն հին կրօնի վրայ էր յաջորդում և իրար հետ կռուի էին բռնուած. նոր կրօնն այն ժամանակ աւելի ժողովրդային և հասարակական էր, քան թէ արքայական և կայսերական : Ուստի պէտք է որ ուշ կամ վաղ այդ ընկերականութեան գոնէ երեսը կամ կերպարանքը փոփոխուէր կամ թէ կործանէր : Այդ կործանում, Սրբազան, մի ամբողջ դար տեւեց, իսկ կերպարանափոխութիւնը կատարուեց բոլորովին Տրդատէն ճիշդ հարիւր յիսուն տարի յետոյ :

Հարկ է որ, Սրբազան Տէր, մի արագ հայեցուածքով ձեր աչքի առաջ դնեմ այս տեղ այդ կերպարանափոխութեան տեսարանը, որնոր տեղի ունեցաւ ինչպէս ամէն աշխարհներում այնպէս էլ մերինում : Բայց զորդն ասելով՝ մերինն աննման է փառաւորութեամբ, աննման է դիւցազնութեամբ և գերազանց ամէնքի վրայ : Մի կարծէք խնդրեմ այդ իմ ազգասիրութեան զգացմունքն է որ այս տեղ դուրս եմ բերում, փոխանակ պատմական իրողութեան, ոչ ամենեւին :

բայց այդ փառաւոր և դիւցազն կերպարանաչը մը պէտք է ճիշդն ասել մի միայն մտաւորական կամ թէ կրօնական եղաւ և ոչ ընկերական: Հայոց աշխարհի ընկերական դրու- թիւնը մնաց այնպէս ինչպէս էր Հայկա—Արշակունեաց ժա- մանակ, միայն թէ Պորթեւական ազնուապետութիւնը բարեխառնուեց մի փոքր՝ եպիսկոպոսական իշխանութեան կարգով ու սարքով:

Երբ նախնիք, Սրբազան, իրանց բարոյապէս և մի փոքր էլ մտաւորապէս փոփոխուում էին, յաւալի է և միանգամայն ներելի, որ ամենեւին իրանց մտքում ընկաւ ոչ, որ առանց ազգային կամ աշխարհային աղտոտութեան՝ կայ ոչ մտաւոր կամ բարոյական կեանք: Նրանք կարծեցին որ հոգու մտաց ազատութիւնը՝ տեղն է բռնում և ընկերական կամ ազ- գային ազատութեան. և այդ պատճառով՝ երբէք միտք չարին իրանց ընկերական վիճակը վարչական միութեամբ ապահովացնել, ինչպէս իրանց բարոյական կեանքին մի վարչական սահմանադրութիւն տուին: Այդ բանն ըստ ինձ, Սրբազան Տէր, աւելի իրանց անկեղծ քրիստոնէութեան արդիւնքն է՝ քան թէ իրանց մտաց և զգացմանց թերու- թեան. վասնզի տեսնում ենք, որ իրանց խելքը շատ կարե- ւոր բաների հասել է. մի թէ այդ ամենակարեւորն էլ իրանց մտքով անց չէր կենում, երբ ամեն օր իրանց աչքին առաջ էին տեսնում այն:

Մի ազատ մտածող պատմաբանի դատաստանը, մի քրիս- տոնեայ աշխարհի, ազգի, ժողովրդի, կառավարութեան, դարու և մարդու վրայ այս հետազայ սկզբունքով պէտք է լինի:

Յիսուսի Քրիստոսի վրայ երեք բան երեւցան: Աստուա- ծային վարդապետութիւն, այսինքն երկնից արքայութեան քարոզութիւնը. վարք ու բարք իր վարդապետութեանց հա- մաձայն, այսինքն երկնային աշխարհի բնակիչ լինելու հոգե- կան բնաւորութիւն և մարդկայնութեան բնական կեանք. այսինքն՝ նա սիրեց մարդուն նրա ամեն տեսակ կեանքով. նա սիրեց երեխայ մարդուն, երիտասարդ մարդուն, ծե- րունի մարդուն, կին մարդուն, աղքատ մարդուն, հարուստ

մարդուն, ղինւորական մարդուն, քահանայ մարդուն, տէրին, ծառային, բռնաւորին, ստրուկին, մեղաւորին, մաքաւորին, գողին, բողին, հիւանդին, անդամաւրածին, հեթանոսին, կռապաշտին, մի խօսքով ամեն կարգի մար- դուն և ինքն էլ իբրեւ մարդ ծնաւ, ապրեց և մեռաւ:

Ուստի և իմ հասկացողութեամբ, քրիստոնեայ ենք ասո- ղէն, մարդ լինի դա՛, ժողովուրդ լինի, աղք լինի, դարե- կան ընկերականութիւն, կառավարութիւն լինի, եկեղեցի լինի և եկեղեցական իշխանութիւն, ինչ մարմին կուզէ թող լինի դա: Այդ երեք բանը պէտք է պահանջուի նրանմէն, վարդապետել է և վարդապետում է նա, երկնից արքայութիւն երկնային վարդապետին նման, ունեցել է և ունի նա վարք բարք իր վարդապետութեանց համաձայն և մարդկայնութեան. այսինքն՝ նա սիրել է, յարգել է և սի- րում է ու յարգում մարդուս բնական, հոգեկան և մտաւոր յատկութիւնքը, ինչպէս երկնից արքայութիւն քարոզող վարդապետն անում էր:

Ես, Սրբազան, այդ հայեացքով իմ նկատում հէնց առա- ջին դարուց՝ ազգաց և ազանց քրիստոնէական կեանքը, քրիստոնեայ ժողովրդին վարդապետութիւնը թէ՛ գրաւոր և թէ՛ բանաւոր, քրիստոնեայ ժողովրդին բարք և վարքը իր գործելում և ապրելում, քրիստոնեայ ժողովրդին տուած յարգն ու պատիւը, ինչպէս աստուածութեան այնպէս էլ մարդկութեան, վասնզի զրնայ լինել և եղաւ իսկ ազգ և ժողովուրդ, մարմնաւոր և հոգեւոր վարչութիւնք, որոնք վարդապետութիւն ունէին ուրիշ ընթացքով, բարոյակա- նութիւն ուրիշ ընթացքով: Նրբին նուրբը վարդապետեցին, վայրենեաց վրայ՝ վայրենի ապրեցան: Յիսուս Քրիստոսը աստուածային վարդապետը տասնապատիկ, հարիւրապա- տիկ և կարելի է հազարապատիկ երկինքը բարձրացուցին, մարդկութիւնը, մարդկային ազգը գետնէ դետին զարկին ամենախոր վիհն իջեցուցին: Այդպիսի կերպարանքով քրիս- տոնեայ ազգի, մարդու, վարչութեան, եկեղեցու, երբ մի մարդ իր աչքի առաջն ունենայ, ինչ դատաստան պէտք է անէ՝ նրա հաւատոյ, եկեղեցու, դաւանութեան, սահմա-

նադրութեան, արարողութեանց և սրբազան պաշտամանց մասին: Հէնց, Սրբազան Տէր, այդ հանգի աղգաց, աղանց, վարչութեանց, դարերու, եկեղեցեաց, ժողովոց, դաւանութեանց և այլն և այլն մէջէն պէտք է մերինը, այսինքն Հայաստանեայց քրիստոնէութիւնը, Հայաստանեայց եկեղեցին Հայոց աշխարհն ու ազգը դուրս հանեմ ու լոյս հանգիստում դնեմ ձեր աչքի առաջ:

Թէեւ այս թղթումս սկզբներում, մեր նախնի Հայոց կրօնի մասին հարեւանցի խօսեցայ, թիւը թիւական պաշտամունքը, բայց այս տեղ պէտք է որ կարճ խօսքով Հայկազանց ու Պարթեւաց դարերու կրօնների վրայ՝ հէնց վերեւանց անց կենամ, որպէսզի նրանց վրայ կամ տեղակ յաջորդող քրիստոնէութեան կրօնը լաւ իմացուի նրանց կեանքում:

Շատ հին Արմէններու և Հայոց կրօնի վրայ Հայկայ դաղթականութեան ժամանակ մի դրաւոր կամ բանաւոր աւանդութիւն կայ ոչ պատմութեան մէջ: Հապա, երբ հայկական ընկերականութիւնը կազմուեմ է մի քանի դար յետոյ, երեւում է մեր նախնեաց մէջ տարրապաշտութիւն և բնապաշտութիւն (Sapèisme) որ է հետեւանք իրանց երկրի բնական դրութեան: Կը տեսնենք մալրակների անուններ, որոնք իրանց համար օրեր էլ ունէին: Երեւակը Հայկով էր պատկերացած և նրա օրն էր հինգշաբթի: Լուսնթաղը Հայկայ կնոյմսով և օրն էր երկուշաբթի: Հրատը Արամով, օրը երեքշաբթի: Լուսաբերը Նոյայ աղջկան Աստղկանով: Արուսեակին օրն էլ չորեքշաբթի: Փայլածուն Կադմասով էր պատկերացած՝ օրը ուրբաթ, իսկ արեգակն էր Արայ դեղեցիկը պատկերացնում, որն որ «բ» «բ» էլ ասուեց և օրն էլ կիրակի: Լուսինն էր Արայի կին Նուարդը, Նանէի օրն էլ էր շաբաթ: Նախնի Հայք այդ կրօնն ունէին, այդ կրօնով ապրում էին և այդ տարրապաշտական կրօնը թէ իրանց կեանքումն էր և թէ մտքում կամ հոգւում: Մինչև այսօր այդ անուններով մկրտուած ենք տեսնում, ոչ միայն տղայ մարդիկ և կնիկ արմատները, այլ Հայաստանի բլուրները, սարերը, քարափներն անգամ: Բայց դար դարու վրայ դըրրուելով՝ կրօնը թէ կերպարանք է փոխել և թէ ծա-

ւալում է ունեցել: Ինչպէս ասացի կրօնի ազատութիւն կար Հայկազանց մէջ և ամեն եկամուտ աղգ ազատ էր իր կրօնը պաշտելու, ինչպէս որ ինքը հասկանում էր այդ բան. ուստի և այդ եկովի աղգ և ազինք ինչպէս Քնթունիք, Ասորիք, Մարք, Եբրայեցիք և վերջերումն էլ Պարթեւք իրանց կրօնները բերին իրանց հետ և մուծեցին Հայոց աշխարհում: Բայց մի նկատողութեան բան Հայկազանց միջումն այն է որ, ինչպէս իրանք էին Հայք բնութեամբ՝ այնպէս էլ էր իրանց կրօնը, քաղցր, ազնիւ, սիրուն, շնորհալի, աղու: Իրաւ է՝ քաջքի, դեւերու, գրողի և այլ պաշտամունք մտել են իրանց մէջ, բայց ոչ Հնդկաց աշխարհի ահուսարսափ շնչող աստուածներին նման և ոչ էլ միջերկրական աղգաց և ազանց նման անհամար աստուածներու հրոսակներ ունէին մարդկային կենաց պահապան և առաջնորդ: Ահուսափ ինչպէս էր հեթանոսական կրօնը քրիստոնէութենէ առաջ. Արեաց Արամազդն, որու պատկերն էր Անի ամրոցում, նոյնպէս և քրմերը, մի ուրիշն էլ Բագուանում: Մի ուրիշ կին աստուած էլ կար Անահիտ անունով, Արամազդայ դուստր, սրա պատկերն էլ Եկեղեցաց դաւառում էրիդ աւանումն էր. մի ուրիշ էլ Տարօնում: Մի Հայկազուն աստուած էլ կար Վահագն անունով Աշտիշատում և քրմերն էլ կոչուում էին Վահեվանեանք: Ուսմանց, դպրութեանց և երազի մեկնութեանց համար էլ Հայք մի աստուած ունէին Տիւր անուն, որ թառերումն էր պատկերը: Արիական աստուածների հետ Յունականներն էլ եկան տիրեցին մեր աշխարհի վրայ. Պարթեւաց հետ Միհրական, Նանէական, Բարչամական աստուածները, Արգար քրիստոնեայ չեղած իբան համար մի աստուած ունէր Թարաթա անուն:

Ինչպէս երեւում է, Սրբազան, քանի Հայոց աշխարհի ժողովուրդ, մշակական, հովուական և տուարածական կեանք էին վարում, իրանց կրօնն էլ նոյնպէս պարզ և յստակ է եղել, իսկ երբ նախարար և նախարարապետութիւն է հաստատուել իրանց միջում նոյնպէս քուրմ և քրմապետութիւն: Երբ նախարարք և նախարարապետք իրանց համար կերտեր քաղաքներ են կառուցել, նոյնպէս և նրանք

մեհեաններ, Բաղուաններ, Աշտիշատներ են հաստատել քարակապ և պարսպապատ, փոխանակ պարզ օդում սարքուած թիլերու և սօսի անտառների :

Մի հանգամանք էլ կայ նկատուղութեան արժանի, Հայաստանում, դեռ Արդարի միջոցով քրիստոնէութիւնը չմտած, որն որ պէտք է բանի տեղ դնել, այն է՝ Հրէից բաղմութիւնը Հայոց քաղաքներում: Այլեւայլ դաղթականութեանց վրայ՝ ամենէն մեծն եղաւ Եբրայեցոցը: Ըստ Մովսէս Խորենացու, առաջին անգամ Նաբուգոդոնոսորի օրերում Եբրայական ցեղեր դաղթեցին Հայոց աշխարհում. Արշակունի Տիգրանի օրերում նորէն շատ մեծ բաղմութեամբ, այնպէս որ մի քանի քաղաքներում խիստ շատուոր էին: Արտաշատ քաղաքում, ասում են, մօտ 9000 ընտանիք կայ եղել, Երուանդաշատ 30000, Բաղրեւանդ 8000, Զարիշատ 14000, Վան 18000, Նախիջևան 16000: Եբրայական դաղթականութեան այս աստիճան բաղմանայն շատ լաւ հանգամանքների ապացոյց են, Սրբազան Տէր. Նախ՝ կրօնի ազատութեան. երկրորդ՝ երկրագործութեան և վաճառականութեան զարգացման. երրորդ՝ աղղային անխտրութեան՝ և վերջապէս՝ Հայոց աշխարհում մարդկային դիւրակեցութեան: Այդ եբրայեցի դաղթականք, որոնց մնացորդներէն մինչեւ այսօր գտնուում են արեւելեան Հայաստանում: Սկզբումը՝ հէնց Արդարու ժամանակներում, երբ Քրիստոնէութիւնը Առաքելոյմէ և նրանց աշակերտներէն էր քարոզում, շատ մեծ օգնութիւն եղաւ նրա ծաւալման մեր աշխարհում: Ինչպէս ասում է պատմութիւնը՝ Յիսուս Քրիստոս համբառնալուց յետոյ՝ Թովմաս առաքեալը, որ տասներկուսէն մինն էր, ուղարկեց Թադէոսին Եգիպտոս քաղաքը բժշկել Արդարին և քարոզել Յիսուսի բանը: Թադէոս եկաւ մի հրեայ Տուբիա իշխանի տանն իջաւ, որ ասում են թէ Բաղրատունի եղած լինի: Հապա Բարդուղիմէոս առաքեալն իր աշակերտներովն ու՛մ տանն իջեանեց, անշուշտ նա էլ Հրէից բնակած կողմերը, որովհետեւ ասում է պատմութիւնը, սա էլ քրիստոնէութիւնը Հայաստանի արեւելեան մասումը տարածեց, եկեղեցիք հաստատեց, աշակերտներ

առաջ բերեց և եպիսկոպոսներ ձեռնադրեց: Կը մնան հիմա Թովմաս, Յուդա Թադէոս և Եղիշէ, որ Յակոբ առաքելու աշակերտն էր: Սրանց մէջէն Եղիշէ էլ Աղուանից աշխարհի քարոզիչ է եղել և Ուտի նահանգում նահատակուել:

Այդ իրողութեանց ստուգութեանը տարակոյս կայ ոչ. միայն կարելի է որ պարագայներն ու հանգամանքները քննութեան ենթակայ լինին: Բայց մեզ պարտ է իմանալ թէ այդ Քրիստոսի աշակերտները և այդ աշակերտների աշակերտները ինչ հանգիլ քրիստոնէական վարդապետութիւն քարոզեցին Հայոց: Վասնզի ինչպէս երեւում է պատմութեանէն և թէ աշխարհի դրութեանէն, մինչեւ Գրիգոր Լուսաւորիչ, արդէն՝ Արարատ, Սիւնիք, Բարձր Հայք, Վասպուրական և Տուրուբերան քրիստոնէայներ գտնուում են եղել. վասնզի ոչ միայն այն ժամանակուայ յիշատակարաններն ենք տեսնում, այլ նաև պատմութիւնն էլ անուղղակի կերպով հաստատում է քրիստոնէից գոյութիւնը Հայոց աշխարհի այլեւայլ կողմերում, և ոչ թէ միայն Հայք քրիստոնէանում էին, այլ աշխարհիս չորս ծագէն քրիստոնէայք փախչում էին ու դալիս Հայաստանումն էին ապաւինում: հետեւաբար քրիստոնէական մի բաւական ընկերականութիւն կար Գրիգորի ժամանակ Հայաստանում:

Վերեն ասածս այսօրուայ մի ապացուցով հաստատեմ, Բարդուղիմէոսի անուանը յիշատակ մի վանք կայ այսօր Վանայ կուսակալութեան մէջ Պաշքալեում, ուր տեղերն էին և հնում Հաղամակերտ քաղաքը և Արեւբանոս: Մինչեւ այսօր այդ կողմերը մօտ 100 տան չափ Հրէայք կան. Թադէոսի վանքն, Շաւարչան, այսօր Մակուայ սահմաններում, Պարոնից Հայաստանում, նորէն Վանայ կուսակալութեան մէջ Ռշտունեաց երկրում Թովմաս առաքելոյն վանքը, ուր կայ մինչ այսօր նրա նշխարներէն մի մասը, այդ դաւառն էլ հնում Հրէայք կային, իսկ Թադէի յիշատակին շատ վանքեր կան Հայաստանում, որոնք իրանց ժամանակին նոր քրիստոնէայներին կացարաններ էին:

Սրբազան Տէր, պատմութեան դատաւորը, ամեն բանէ առաջ պէտք է ազատ արդար և ճիշդ կամ ճշմարիտ լինի,

Թէ կուզէ նա բուն իր աշխարհի և ազգի պատմութեան լինի դատաւոր: Էս էլ պէտք է որ, աղատ, արդար և ճշմարիտ լինիմ: Բայց առաջուց եմ ասում, որ այդ բաները լինելը շատ հեշտ բան չեն, այլ շատ դժուար, կարծուածէն աւելի դժուար: Ես էլ որքան կարող եմ, որքան գիտեմ և որքան կիմանամ, այնքան պիտի լինիմ: Եթէ չեմ եղած այդ այս տեղ, իմ անկարողութեան, իմ տգիտութեան և իմ անիմացութեան պէտք է տալ այդ թերութիւնը, և ոչ իմ կամքին, իմ պարտքին և իմ մտքին:

Ինչպէս տեսնուի, Հայաստանեայց աշխարհում հինգ առաքեալք են գնում քրիստոնէութիւն քարոզելու, կամ թէ ըստ իրանց ասելուն, Մեսիայի դալուստն աւետելու: Բայց դրանք Գրիստոսի երկինք համբառնալուց քանի տարի յետոյ գնում են ինձ յայտնի չէ, միայն կարող եմ եղած դրտնել նրանց մահուան թուականները: Բարդուղիմէոսը մեռել է 71 թուին և սա ունի եղել դրած մի աւետարան, որն որ կորսուել է, բայց թէ ինչ լեզուով յայտնի չէ, հաւանական է որ Ասորերէն լինի: Թագէտը, բայց երկու թագէտս կան Հայաստան գնացող. մինն է եօթանասուն աշակերտներէն մինը, որ թովմաս ուղարկեց, ասում է պատմութիւնը, Աբգարին. միւսն է Յուդա թագէտը, որ էր փոքուն Յակոբայ եղբայրը և Մարիամայ քրոջ որդին: Սա ունի դրած մի թուղթ, որ կանոնական եօթը թղթերի վրայ վերջինն է արեւելեան եկեղեցեաց ուղղուած, որուն մէջ « հաւատաւանց դործոց մեռեալ լինելն է » քարոզում 66 թուին Գրիստոսի: Սա, ըստ երեւութին, Յակոբ առաքելոյն դործակից պէտք է լինի: Թովմաս երկուրեակն կոչուած, որ և յերկուացողն էր Գրիստոսի Յարութեան մասին: Սա էլ Պատմութեան վկայութեամբ Հայաստանում քարոզիչ է եղած, մանաւանդ Պարթեւաց, որ մարտիրոս լինելը յայտնի չէ, միայն թէ Եգիպտոսումն է թաղուած ասում են. իսկ Եղիշէ որ ասում է Ուխտանես՝ թէ Թագէտի աշակերտն էր, որ թուին է գնացել Աղուանից աշխարհ, ես իմանում չեմ, բայց նահատակուել է 70 թուին Զարգունի դաշտում Աղուանքը քրիստոնէացնելուց յետոյ:

Հիմա, մեր պարտքն է իմանալ թէ այդ հինգ առաքեալներն ինչ հանգի քրիստոնէութիւն աւետարանեցին: Վասն զի Մատթէոս դրած ունի իր Աւետարանը Գրիստոս համբառնալուց 8 տարի յետոյ, Ասորա-դաղթէարէն լեզուով, Մարկոս 10 տարի յետոյ, Յունարէն լեզուով. Ղուկաս 33 տարի յետոյ. սա դրած ունի նաեւ Գործ Առաքելացը կամ Եկեղեցու առաջին ժամանակուայ պատմութիւնը, որն որ կանգ է արած Պողոսի Հռովմ լինելու երկրորդ տարին: Ղուկաս Անտիոքացի լինելով հաւանական է, որ Ասորերէն դրած լինի Աւետարանը, Առաքելաց գործերը: Յովհաննէս 95 թուին իր Յայտնութիւնն է գրել ըստ ոմանց, և ըստ այլոց 66 թուին, իսկ Աւետարանը Պաթմոս կղզուց յետ դառնալուց յետոյ դրած ունի Եփեսոսում և ինքն էլ մեռած է 94 տարեկան 101 թուին:

Այդ նշանակում է, որ մեր աշխարհի առաքեալք ինչպէս Գրիստոսէն կենդանի բարբառով սորվեցան երկնից արքայութեան վարդապետութիւնը, այնպէս էլ կենդանի բարբառով սորվացուցին և աւանդեցին իրանց երկնային ուսումը. կամ թէ իրանք անպատճառ դրած ունէին աւետարաններ Հայաստանուց համար. կամ թէ կարելի է որ իրանց ձեռին ունենային Մատթէոսի և Մարկոսի աւետարանները միայն: Ուրեմն կարճ խօսքով, պէտք է ասել որ Հայաստան աշխարհում, նախ՝ հրէական քրիստոնէութիւն մտաւ և յետոյ հելլենական. հռովմէականին ազդեցութիւն շատ հեռուանց է:

Ուստի պէտք է որ աչքով անցկացնենք թէ ինչ էր յուդայական քրիստոնէութիւնը. Գրիստոսի մինչ 63 թուին երկու գլխաւոր յիշատակարան կան այդ վարդապետութեան: Մինն է Յայտնութիւնը, երկրորդն է Յակոբայ առաքելոյն թուղթը, որոնք ընդունուած էին առհասարակ Գրիստոսի եկեղեցիում: Այդ գրքի բովանդակութիւնն յայտնի է ձեզ անշուշտ, բայց երկու բառով խօսիմ նրա մասին:

Արեւելական և յուդայական բնիկ և աղքատ ոճով մի գրուած է, դրողը միութարում է ու ապահովացնում հալած-

և ող քրիստոնեայներին, թէ քրիստոնէութիւնը յաղթող պիտի հանդիսանայ հրէականութեան և հեթանոսութեան վրայ. ներսնի ժամանակուայ հեթանոսութիւնը եօթնաբլուր քաղաքով է պատկերայնում ծիրանի հանդերձներով արիւնարբու: Հռովմ. քաղաքի անունը Բարբելոնի անունով է թագցնում: Երուսաղէմ Սողոմի անունով. իսկ Քրիստոսի կրօնը նոր Երուսաղէմով է նշանակուած, յետոյ մարգարէանում է թէ 72 թուին Յիսուս պէտք է երեւայ աշխարհումս յաղթելու թշնամիքը և հաղար տարի թագաւորելու ամբողջ երկրիս վրայ կենդանեաց և յարութիւն առած մեռելոց: Այդ գիրք մեծ նեցուկ և ապաւէն եղաւ նոր Քրիստոնեայներին իրանց հալածանքներում: Յակոբ առաքելոյն թուղթն էլ ուրիշ կերպ է. յուդայական քրիստոնէութեան հոգին բոլորովին բարոյական է ու գործնական, ամենեւին նուրբ վարդապետութիւն կամ հոգեւորութիւն չկայ նրա միջում: Սա Երուսաղէմայ եպիսկոպոս էր եղած և ուսուցանում էր թէ «Սուրբ և անարատ հաւատը մեր Հօր Աստուծոյ առաջ որբեւարիներին, որբերին այցելութիւն անելն է և աշխարհի պղծութենէն պահպանուելը: Գլուխ Ա. 27: Հաւանական է որ մեր աշխարհի առաքելքը ծումապահութիւնը, ամեն տեսակ մտեղէն շուտելը և այս կամ այն օրերը սուրբ պահելը, հրեշտակների պաշտամունքը, քահանայութիւնը հաստատեցին, եպիսկոպոս կամ առաջնորդ, տեսուչ և այլն հաստատելով: Նոյնպէս ես կարծում եմ, որ պողին երկրի բերքին տասանորդը առաքելական լինի, միեւնոյն ժամանակ հաստատուեց Զատիկն ու պատարագը, ինչպէս էլ երեւում է Հրէից բազբաին և նրանց ընթրիքին մօտ բան լինելը, դառնուկների զենումը որնոր Հայոց մէջ հաստատուած պատմական սովորութիւն է մինչեւ այսօր իբրեւ փառաբանութեան մի յիշատակ, մանաւանդ որ զատիկի օրերում դառնուկները ծնուած են լինում արդէն, բայց կարմիր ձու ուտելու սովորութիւնը աւելի հին պէտք է լինի Արմէններէն մնացած, սանդարամետի (գեհենի) վարդապետութիւնը, նոյնպէս դեւերի և մի քանի ուրիշ բաների: Այդ քրիստոնէութիւն տարածուեց Հայաստանում, ոչ բուն

Հայկազանց մէջ, այլ նախ Հրէից, յետոյ Արշակունեաց և ամեն օտարազնեաց, Ալանաց, Ամատունեաց և այլոց. բայց թէ Հրէից մեծ մասը քրիստոնէացան՝ տարակոյս չկայ. վասն զի դրանք արդէն Հին Կտակարանն իրանց մէջ ունէին, նորն էլ նոյն լեզուով գրուած իրանց հայրենիքէն էր դուրս. նոր կրօնն իրանց հայրենակիցներէն ամենայն սիրով ընդունեցան: Այն, Սրբազան Տէր, Հայաստանում նախնական քրիստոնէութիւնը հրէական եղաւ. և այդ բան շատ մեծ նշանակութիւն ունեցաւ Հայոց ապագային վրայ. հրէական կրօնի մնացութեան կամ կրօնըզգացութեան դրօշմը ընդհանուր Հայոց ճակատին վրայ դարերով երեւաց. ինչպէս որ պատմութեան մէջ էլ յայտնի երեւում է: Երբ այդ հանդի քրիստոնէութիւն հաստատուում էր Հայաստանում, շատ անց կացաւ ոչ, որ յուդայամիտ քրիստոնէութեան վրայ հեղինակութիւն քրիստոնեայները դուրս եկան, որոնք աւելի զերծ լինելով Մովսիսական կապանքներէն՝ աւելի հասարակական կենաց հետ ծանօթ էին. ուստի այդ շարժումն էլ արդէն քրիստոնէից մէջ մի փոքր կարծեաց տարբերութեանց ածղի էր տուել. Իրանց մէջ երեւելի է Ստեփաննոս սարկաւազը, որ աղքատ քրիստոնէից անաւան էր. իր համարձակախօսութեան մարտիրոսացաւ և քրիստոնէից ընթացքին մեծ ցնցում տուեց, թէեւ Յակոբեանց շատ դուր չէր գալի այդ ընթացքը: Ստեփաննոսի պատճառով հալածանք սաստկացաւ, նորէն Երուսաղէմի քրիստոնեայ Հրէայք Հայաստան փախան եկան. Սուրբ Ստեփաննոսի յիշատակն սաստիկ տարածուեց Հայաստանում մի ծայրէն միւս ծայրը. և այն աստիճան յարդ դաւա՝ որ այն ժամանակուայ քրիստոնէից պաշտպան հանդիսանալով՝ Հայաստանին էլ պաշտպան հռչակուեց. միեւնոյն ժամանակ հինգ Առաքելոց քարոզած քրիստոնէութեան մի ուժգին զարկ տալով և ծիսականութեան էլ հոգեւոր վարդապետութիւն: Մի փոքր ժամանակ յետոյ Պողոս առաքելաւն երեւաց կրակուբոց հոգւով ու մտքով ու լեզուով և յուդայամիտ քրիստոնէութեան մի սարսափելի ցնցում տուաւ, բայց սրտով Յակոբեանց հետ անմիաբան դուրս եկաւ. Պողոսն ասում

էր . « Մարգու արգարացած է հաւատով առանց օրինաց գործերով : » Պօղոս Հռովմ . Գլ . 27 . Գ . 3 . Գ . 22 : Գաղ . Գ . 6 : Միւսն Յակոբ ասում էր՝ թէ « Հաւաք առանց գործոց մեռեալ են : » Յակոբ . Բ . 16 և այլն : Մի ուրիշ իրողութիւն էլ կայ Առաքելոց կարծեաց տարբերութեան մասին Պօղոսի և Պետրոսի մէջ որ Մնախորումն է պատահում : Գաղ . Գլ . Բ . 11 . 14 :

Ես կարծում եմ, Սրբազան, թէ որ Պօղոս առաքեալ մեր աշխարհի քարոզիչը լինէր, Հայոց վիճակը մի բոլորովին ուրիշ ուղղութիւն էր ստանալու նոյն այն հինգ առաքելոց ձեռքով ստացած ուղղութենէն, Իրաւ է, որ ինչպէս երեւում է արդէն՝ Քրիստոնէից մէջ վարդապետութեան միութիւն կար ոչ, ուղղափառութիւն բառը դեռ անծանօթ էր, ինչպէս որ Յակոբ և Պօղոս՝ թէեւ սկզբունքով և նպատակով մի էին՝ բայց իրանց վարդապետութիւնն իրարմէ տարբերում էր : Այդպէս էլ էին Հայաստանի քրիստոնեայք, և տարակոյս չկայ որ՝ առաջին դարում Պօղոս Առաքելոց քարոզութիւնքն մեր աշխարհի քրիստոնէից վրայ մեծ ներգործութիւն արին ոչ . հապա երկրորդ դարում, երբ Աւետարաններն ու Առաքելոց գրուածները միասին հաւաքուեցան՝ այն ժամանակ սկսան տարածուիլ : Իսկ Պետրոս Առաքեալ ամենեւին մի ազդեցութիւն չունեցաւ մեր աշխարհի քրիստոնէից վրայ . բայց Յակոբն՝ այն, ինչպէս նաեւ իր աշակերտներն ու աշակերտաց աշակերտները, վասնզի Յակոբայ էր պատկանում քարոզիչ ուղարկելն Արեւելք : Եւ Պետրոս ինչ էր որ Յակոբայ և Պօղոսի մէջտեղ, մի երկրորդական անձ, Պօղոսի մօտ Պօղոսեան, Յակոբայ մօտ Ապօղոսեան : Քրիստոսի երկրորդ դարում, Յովհաննու Աւետարանը տարածուեց Հայաստանում և նրանով, Բանին կենաց, Ճշմարտութեան, Փառաց, Լոսոյ, Խառաբի և Լի շնորհով խօսքերը : Յետոյ և Ի սկզբանէ եր բանն և բանն եր աւ Աստուած և Աստուած եր բանն, Նա եր սկզբանէ աւ Աստուած, ամենայն ինչ նովա եղև և ոչ ինչ որ ինչ եղևն : Հոգի է Աստուած և երկրաբանացն նորա հոգով և ճշմարտութեամբ պարտ է երկրաբանել : Գիրք Դ . 24 : Եւ ծանկնով ճշմարտութեան և ճշմարտութեան պարտեցե զյնչ : Գիրք Ը . 52 : Հոգին է կենդանաբար, մարմն ինչ ոչ օրն, զբանն զըր եւ իօսեցայ ընդ յնչ հոգի է և կենդ : Գլ 2 . 65 :

Պատահում նոր համ յնչ զի սերեցե՛ զիսեանս . որդես սերեցե էս զյնչ, զի և դուր սերեցե՛ զիսեանս : ԺԳ . 54 : Ի որան հօր իմոյ օրնանս բազում էն . Գլ . ԺԴ . 2 : Այլ ոչ վասն նոյս օրայն պղպե՛մ, այլ և վասն ամենայն հասարակեց բաննն նոյս յն . զի ամենեւին օի էցեն, որդես դուր Հայր յն և ես է ինչ : Գլ . ԺԵ . 20 : Ի վերջոյ Յովհաննու վարդապետութիւնն այս իր խօսքումն է ամփոփուում : Զի այնպէս սերեաց Աստուած զաշխարհ օրն զմարմն իւր օրնն եր . զի ամենայն որ հասարայ է նա օի կորեցե, այլ ընկալցի զիսեանս յաւիտեանս :

Մի խօսքով Յովհաննու աւետարանութիւնն էր՝ Լոյս, Սեր և կենդ . Պօղոսինն էր՝ Հասար, Յոյս և Սեր : Ուստի Քրիստոսի երկրորդ դարու վերջերը, Հայաստանում հրէական կամ յուդայամիտ քրիստոնէութիւն կանգ առաւ, և մնաց անստան, ու սկսաւ հելլենաբան քրիստոնէութիւնը տարածուիլ : Հիմա մնաց մեզ իմանալ թէ Գ . դարումն ինչ էր քրիստոնէութեան վարդապետութիւն մեր աշխարհում :

Գ . դարում, թէեւ Հայաստան աշխարհում սաստիկ բազմացել էին քրիստոնեայք՝ թէ բնիկներով և թէ եկովիներով, բայց՝ ըստ ամեն երեւութիւն՝ Հայկազունք դիմադրում էին դեռ, մանաւանդ նախարարները : Հինգ երբայցի առաքեալներով, քսանու չափ եպիսկոպոսներ են յիշում Գրիգոր լուսաւորիչն էլ միասին առնելով, միմիայն միունն Բարսաբաէ համար ասում է, Հայկազուն, թէեւ Բարսուճա Ասորերէն անուն լինել երեւայ : Իսկ միւսներն ամենքն տար ազգէ են կամ փոքր Ասիացի կամ Ասորի և ոչ Հռովմայցի, թէեւ Հռովմէն կամ Իտալիայէն մի քանի փախտական եկած էին Հայոց աշխարհում, բայց հռովմէական քրիստոնէութիւն դեռ բերած չէին իրանց հետ : Կերեւայ որ այս դարուս վերջերում քրիստոնէից թիւը շատ բազմացած լինի, վասնզի Խոսրով մի հալածանք յարուց նրանց դէմ, ինչպէս նաեւ իր որդին Տրդատ երկու հրովարտակ հանեց հալածելու քրիստոնեայքը կամ պատուէր տալու նրանց՝ որ հայրենի կրօնին հաւատարիմ մնան :

Առաքելոց ժամանակէն սովորութիւն էր եղած՝ հաւատացելոց վրայ մկրտութեան խորհուրդ կատարելիս՝ Մատթէոս Աւետարանչին վերջին պատուէրը, որ աշակերտներին

տալիս է Քրիստոս, գործածել. « Գնացե՛ք այսուհետև աշակերտեցե՛ք զամենայն հինմանս, մերտցե՛ք զնոս յանան Հօր և Որդւոյ և Հոգւոյ որոյ և այլն: Բ. դարու միջում և Գ. դարու սկիզբներում հայրապետները դուրս եկան՝ թէ արեւելեան քրիստոնէից մէջ և թէ արեւմտեան: Արեւմտեաններն այնքան մեծ ազդեցութիւն չունեցան Արեւելեան եկեղեցեաց վրայ, որքան որ Արեւելեաններն ունեցան թէ՛ Արեւմտեանց եւ թէ՛ Արեւելեանց եկեղեցեաց վրայ: Դրանց մէջ երեւելիներն էին Յուստինոս Սիրեմաացի՝ Պաղեստինում ծնած 114ին, մեռած 168ին: Աստուածայն Բարսիլոսն անունով մի գիրք ունի յօրինած: Կղեմէս Աղեքսանդրացի՝ մեռած է 217ին. դրա ուղղութիւնն է եղած՝ պղատոնականութիւնն ու քրիստոնէականութիւնն իրար հետ միաւորել: Դա կապագովկիաում երկար ժամանակ քարոզութիւն է արած, և շատ գոռածքներ ունի թողած, և ամէնքն էլ ընտիր բաներ համարուած: Դրա աշակերտն է եղած Որոզինէս 185ին ծնած, 236ին մեռած: Դա էլ յունական կամ հելլենական դիտութեանց մէջ իր վարժապետին նման շատ վարժ և հմուտ էր: Բայց սա տարբեր կարծիքներ ունեցաւ դրանէն: Հուսովեական աշխարհում երեւելիքն են իրենէս, ծնած 140ին, մեռած 202ին. թէև սա Փոքր Ասիացի էր, բայց լինի՛ եպիսկոպոս է եղած և Հռովմայ եպիսկոպոսի դէմ կանգնած Արեւելեանց հետ: Տէրաուղիան, ծնած 180ին, մեռած 243ին. երեւելի գրչի տէր, բայց յետոյ հեշտուածող համարուած: Կիպրիան Գ. դարում ծնած ու մեռած. սա ունի դրած Եփեսոս Բարսիլոս մասին: Պատմաբանք Արեւելեան և Արեւմտեան հայրապետաց մէջ մեծ տարբերութիւն են նկատում կրօնական գղացմունքների և հայեցումներին մասին. Բայց ինձ հիմա հարկ չէ այդ բաները այս տեղ քննել ու առաջ բերել. հապա միայն դրանց անունները յիշեցի հասկացնելու համար թէ՛ Գ. դարում քրիստոնէական վարդապետութեան ուսմունքն ու դիտութիւնն ո՛ր տեղ էին հասած. դեռ ուրիշներ էլ կան, որ այժմ է յիշեմ այս տեղ. վասնզի նրանք էլ մեծ նշանակութիւն են ունեցած: Բ. դարու վերջերում, Անտիոքի

եպիսկոպոս Թէոփիլէ և վերեւն յիշուած Տէրաուղիան քրիստոնէութեան մէջ Երբորոշիւն բառը ներմուծին. թէև Աղատոն, Փիլոն և Պօլիալին այդ դադափարն արդէն ունեցած էին եզրկատականէն առնելով: Այդ դարում ուրիշ մի հանդամանք էլ կայ նկատելու. այն է՝ երեք կրօն իրարու դէմ ելնելը կամ թէ երեք կրօնների իրարու բախումը: Նախ՝ Հեթանոսութիւնն իր հին կերպարանքով, որ աղքային էր, կայսերական էր, դաւառական էր և աշխարհային. իրար խառնուած, արարողութենով, առասպելներով, փելիսոփայութեամբ: Մաղդեղանց կրօնը՝ բարեաց և չարեաց աստուածութեամբ, իր բարի և չար դեւերով: Յետոյ Մովսիսականութիւնն աննկուն իր հաւատով մի Աստուծոյ վրայ, սուրբ և տիեզերական, բայց շատ տկար իր կրօնական և ցեղական ջոկաւորութեամբ և հետեւաբար երկու ծայրերն իրար հետ անմիաբան. վասնզի Աստուած միայն իրանցը չէր, այլ ամեն մարդկանց, աղքաց և աղանց: Ի վերջոյ՝ Քրիստոնէութեանը՝ որ նորածին էր, արդէն յաղթանակը տանող: Բայց քանի որ տարածոււմ էր և ծաւալոււմ իբրեւ մի մեծ գետ՝ ճամբուն պատահածներն էլ իր միջումն էր խառնոււմ, որոնք շատ անգամ պզտոր ջրեր էին և նրան յստակութիւնն էլ քիչումիչ պղտորում: Օրինակ, հէնց Ա. և Բ. դարերուց է սկսում մարդկային մտաւոր շոթալութիւնն այն ժամանակուայ աշխարհի ընկերական կեանքում: Երբեմնեք կամ թշուար անունով հրէամիտ քրիստոնեայները՝ հարկաւ ճանաչում էք. դրանք կամենում էին միանգամայն Մովսիսական և միանգամայն Քրիստոսական լինել, բայց յետոյ այլևայլ անունների ներքեւ աներեւան եզան քրիստոնէութեան հեղեղում. դրանց վրայ եկան Կոստանք. որանք բազմաթիւ և իրարմէ տարբեր վարդապետութեամբ էին: Կոստանք բառը՝ հելլենարէն է և հելլենական երեւելի փելիսոփայք գործ էին անում: Բայց Աղեքսանդրեան երբայաբան և հելլենաբան փելիսոփաները նրա նշանակութիւնը ճշգրէլ էին: Ահա ձեզ կարճ խօսքով դրանց վարդապետութիւն: Աստուած իր յատկութիւնք անձնաւորում է, ինչպէս իր Եսայիսութեանը, իր քանք և միւս շատերը, այսինքն յատկու-

թիւնքը: Այդ անձնաւորուած յատկութիւնք Աստուծմէ են բղխում: այդ ամեն մէկ բղխում կոչուում է էծն: Այդ էծններին մինը, ամենքէն վերջինն է, ըստ Կնոսեանց բաղմաց, ախեղբերքին արարիչը կամ Տէփուրիսը, այսինքն ճարտարագետը, արհեստաւորը: Դա՛ ըստ ոմանց, աշխարհս ոչնչէն է ստեղծած. ըստ բաղմաց, միայն նիւթն է կերպարանաւորած, որն որ յաւիտենական է ինչպէս Աստուած:

Աղեքսանդրեան Կնոսեանք նիւթին են տալի չարեաց գոյութիւնը. և Ասորուոց աշխարհիւնները ճարտարագետ էծն են ամբաստանում, որ ինքն իրան չարագործ է ցոյց տալի: Ինչպէս որ մարդս նիւթով և չարով է ծրարուած. մի ուրիշ էծն (Քրիստոսը) միջամտեց մարդկային ազգը փրկելու: Բայց Յիսուս նոյն իսկ այդ էծնը չէր, այլ նրա երեսփոխանը կամ պատգամաւորը, կամ ըստ այլոց՝ մի պարզ երեւոյթ առանց իսկութեան: Սուրբ գիրքն էլ մեկնում էին այդ Կնոսեանք այլաբանօրէն և նրա միջում Տէմիուրկոսէն առաջ եկածները մերժում էին. զարհուրելի ժուժկալութեան հոգին և նիւթին պղծութեան դաղափարն իրանց մէջ սարսափելի ապականութիւն և անկարգութիւն պատճառեցին և իրանց գլխին պատիժ եղան:

Կնոսեանցմէ յետոյ կը գան Աղեքսանդրեան շարժարաններն, որոնք համաստուածեան էին: Ասորոց ոչնչի շարժարանները, ուր արեւելեան դաղափարն էր տիրում երկու սկզբունքների, Բարոյն և Չարոյն. վերջապէս Փոքր Ասիոյ շարժարանները, որոնք նոր կտակարանէն՝ միայն Ղուկասու Աւետարանն ու Պօղոսի թղթերն էին ընդունում: Մի ուրիշ պղտոր գետ էլ կար, որու մէջ գնաց կորաւ Կնոսիսականութիւն: Մանիքեանութիւն, Մանիքէ Պարսիկ էր. սա Պարսից կամ Արեաց Որմզդայ և Արհմնայ դաղափարի վրայ մի շէնք ուղեց կառուցանել, որու մէջ ուզում էր բոլոր կրօններն ամփոփել. ըստ Մանիքէականաց՝ Քրիստոսի գալուսան աշխարհումս լուսոյ մի յայտնութիւն էր, բայց նրա ծնունդն ու մահը մի երեւութական բան էր, մի և նոյն ժամանակ հոգեփոխութիւնը, խիստ ճգնաւորութիւնը, սեպհականութեան ջնջումը և եկեղեցական դասը: Դա՛ Մուհամէտի նման, ասում էր թէ

երկինք է բարձրացած. և Իսլամութեան նման՝ մանիքէականութիւնն էլ յայտ առնելով հաւատալ Յիսուս Քրիստոսին՝ ոչ ինչ էր կատարում նրա կրօնէն:

Միտքս այն է ասել, Սրբազան, թէ այդ կրօնը խելքէ դուրս յաջողութիւն ունեցաւ, ոչ թէ միայն արեւմտեան Ասիոյ վրայ տիրեց, այլ Եգիպտոսի, Իտալիոյ մինչեւ Գաղղիոյ: Պէտք է դիտենալ, որ այդ դարերում եկեղեցիներն իրար հետ յարաբերութիւն ունենալու սաստիկ պէտք ու կարիք ունէին, դեռ արտաքին մի միութիւն կար ոչ: Պապ, պատրիարք, ժողով, հաւատոյ խոստովանութիւն, հանգանակ կային ոչ: Միւսնոյն ժամանակ եկեղեցու շրջանէն դուրս ուզում էին անել նրանց՝ որ կամ չափազանց թոյլ էին կամ չափազանց խիստ. և նրանց մանաւանդ՝ որոնք ամենեւին զիջում չէին ուզում անել Հրէից և հեթանոսաց: Առաջին անգամ հաւատու կամ դաւանութեան միակերպութեան քամին՝ Ափրիկուց փչեց, Կարթագինից, որ տեղ առաջ էին եկել լատինական եկեղեցու սարսափելի հայրերը, ինչպէս յիշեցինք, Տէրտուղիան, Կիպրիան և վերջերում Օգոստինոս: Ինչպէս յայտնի են ձեզ, Սրբազան, Հրէից ժողովարաններն, որոնք մի կարգապահութիւն ունէին և քահանայապետք մի խիստ կարգապահ իշխանութիւն էին վարում, ոչ թէ միայն անարժաններին դուրս էին անում ժողովարանէն, այլ նզովում էին և շատ անգամ մարմնաւոր պատժոյ էին ենթարկում նրանց: Այդ օրինակը քրիստոնէից էլ մտաբերել տուաւ այդ հանգի մի կարգապահութիւն եկեղեցումն ընդունելու. ինչպէս որ այդ բան կարգաւորելու վրայ էին, երբ Որոգինէս մի բանավճիռ շինեց, թէ և ինքն յետոյ իր բանավճռովն էլ դատապարտուեց: Այս էր այդ բանավճիռ, «Չի՛ քրիստոնէի սրբոց ուղղագոս եկեղեցոյ»: Դրամէն յետոյ ուրիշ հարք եկեղեցու՝ մինը միւսին վրայ նախանձաւոր և եռանդուն եղան եկեղեցին բարեկարգելու: Իզնատիոս Անտիօքի, Իրէնէոս Լիօնի, Որոգինէս, Տէրտուղիան ամէնքն էլ վրայ վրայի իրանց Կոնստանդուպոլսեանքը դրում էին ու տարածում: Թէ որ միտք անեմ այդ երեք դարերը խորը ուսումնասիրել, Սրբազան, բանը շատ երկար կը լինի. բայց առանց

այդ բանին էլ անհնարին է լաւ ճանաչել և հասկանալ Տրդատայ և Գրիգորի քրիստոնէութիւնը և վերահաստատած եկեղեցին մեր Հայաստանեայց աշխարհներում. ահա ինչու համար այս տեղ իբրեւ մի փոքրիկ պատկեր այդ դարերու քրիստոնէական և ոչ քրիստոնէական վարդապետութիւնքն Ձեր առաջը գրի :

Ինչպէս տեսաք, Սրբազան Տէր, այդ պատկերէն թէ ինչ գաղափարներ ի մի զարհուրելի հոսանք իջաւ քրիստոնէութեան մէջ, այնպէս էլ հեթանոս ազգաց և ազանց, հռովմայեցի և ոչ հռովմայեցի գաղափարներ ի հոսանք մտաւ քրիստոնէութեան մէջ: Հետեւաբար ընդունելով կամ ներելով նրանց ճաշակը, սովորութիւնքը, արարողութիւնքը, բարքն ու վարքը: Գրանք, Սրբազան, ինչպէս տեսնում էք, այնքան մեծ բազմութիւն կազմեցին, այնքան բազմացան հռովմէական աշխարհի բոլոր շուրջն որ երբայական քրիստոնէութեան դէմ կանգնելով, նրա զարդացման առաջն առին. նզովեցին, դուրս արին եկեղեցուց էքիճեանց և Նազովրեցուց և նրանց հետևորդներին: Այդպէս հազարումէկ պատճառներով, որոնք եթէ այս տեղ առաջ բերեմ շատ երկար կը լինին. նոյնպէս աւելորդ եմ համարում ձեր աչքի առաջ բերել իբրեւ կենդանի պատկեր, հռովմէական աշխարհներ կառավարութեամբ և ընկերականութեամբ, կրօններով ու մեհեաններով, թագուն խորհրդներով ու փիլիսոփաներովը, հետադարձներով ու զինուորական և քաղաքական դասերովը, քրմերով ու քրմապետներով, որ մէկն ասեմ, հազար հազարաւոր կարգերով, սարքերով, օրէնքներով, ծէսերով, սովորութեամբ և կենավարութեամբ, վասնզի քաջ գիտեմ որ դուք արդէն այդ պատկերն ինձմէ աւելի լաւ ճանաչում էք, որոյ վրայ արդէն շատ ու շատ անգամ խօսուել է ու խօսուել, գրուել է ու գրուել և դեռ գրուում է ու գրուում:

Հայոց և Հռովմէական աշխարհաց այդ լոմ առաջ բերած վիճակումն եղած ժամանակ Գ. դարու կլիսուն Տրդատ և Գրիգոր ծնում են և մի նպատակի հակադրժողութեամբ այդ երկու մարդիկ. մինը թագաւորազն՝ միւսը իշխանազն,

հռովմէական աշխարհումն ընկնելու են վիճակում: Տրդատ Հռովմայում, Գրիգոր Կեսարիայում, որն որ արդէն Հռովմէական աշխարհի մաս էր համարուած և քրիստոնէութեան էլ պորտ. իսկ Հռովմ՝ այն ժամանակուայ կայսերական քաղաքականութեան դպրոց: Գ. դարու վերջերում Տրդատ Դիոկղեախանու օգնութեամբ արդէն տէր էր եղած Հայոց աշխարհին. և Գրիգոր Գ. դարու սկզբին եպիսկոպոսապետ էր Հայաստանեայց եկեղեցուն:

Հիմա այդ երկու անձինքն իրանց գործերում պիտի ճանաչենք: Ըստ իմ գիտութեան՝ ինչպէս ասացի Տրդատայ համար. սա՛ ըստ օրինակի Հռովմայ կայսրութեան՝ ուղեց մի միահեծան թագաւորութիւն հաստատել, որն որ չյաջողուեց, թէև իր թոռան որդին Արշակ Բ. մի երկրորդ փորձ փորձեց յաջողուելու, բայց ընդհակառակը բոլորովին Արշակունեաց նախարարապետութիւնն էլ վրայ տուեց. նախ ինքը՝ Արշակ և յետոյ իր սերունդը: Պետք է ճշմարիտն ասել, որ Գրիգորն էլ իր եկեղեցական վարչութեան ձեւով և իր վարդապետութեան հոգւով շատ ձեռնաու և նպաստաւոր եղաւ Տրդատին, բայց տարերքն Հայաստանում, բոլորովին Հայոց բառով ասելով՝ դեհհական էր, առմկական էր և դեղձկական. պատմական կերպով ասելով՝ ժողովրդական էր, հասարակական էր. մի խօսքով դեռ ամբոխին, գեղջուկին, խուժանին կրօնն էր, և ոչ Հայկայ հաստատած ընկերականին, թէև Տրդատ թագաւորը սրտանց քրիստոնեայ էր եղած, բայց թագաւորականք շատ հեռու էին դեռ այդ լինելու. նոյնպէս նախարարը և նախարարականք լոկ անունով էին քրիստոնեայ. իսկ բարքով վարքով այն էին՝ ինչ որ էին առաջ: Իմ այդ ասածի օրինակներն Գ. դարուայ մէջ թագաւորաց և նախարարաց վարուց և բարուց մէջ շատ անգամ երեւեցան: Բայց դրա հակառակ Գրիգորի որդիքն ու թոռունքը, որոնք իրան պաշտօնը ժառանգեցին, մինը քան զմիւսը գերազանց եղան ու վերջն ու վերջ մի դար ամբողջ աշխատելուց յետոյ արիւն քրտինք թափելով՝ Հայաստան աշխարհն իր տարերքներով քրիստոնէացուցին, ինչպէս իր տեղը պիտի խօսինք այդ մասին:

Հիմա կը մնայ մեզ իմանալ, Սրբազան, թէ Գրիգոր ինչ հանգի քրիստոնէութիւն քարոզեց Հայոց աշխարհում: Ինչպէս տեսանք Բ, և Գ. դարերու քրիստոնէութեան հոգին ու ձգտումն Հռովմէական աշխարհներում, Ասորոց երկրում, Փոքր Ասիաում, Եգիպտոսում, Հելլենաստանում, Իտալիաում և Ափրիկէում, որոնց ամենքը միասին Արեւելեան և Արեւմտեան եկեղեցիք է ասում պատմութեան մէջ. դիւրին էր հասկանալ թէ ուր էր կայանալու վերջն ու վերջն քրիստոնէութիւնը, երբ միանգամ ազատութիւն ձեռք բերելու լինէր և այդ ազատութեամբ իշխանութիւնը:

Ես հաւատում եմ, որ երբ Գրիգոր եպիսկոպոս ձեռնադրուեց Հայոց աշխարհի վրայ, արդէն սոյն աշխարհի քրիստոնէից մէջ մի եկեղեցական սահմանադրութիւն կար, (institution). Ինչպէս ասացինք, պատարագ կար, դաս քահանայից կար, ծով և պահք կային, մանր մունր ծէսք և արարողութիւնք և ամենէն աւելի քրիստոնէական կեանք: Պատարագի խորհրդատեարն էլ դրեթէ այսօրուայ միևնոյն էր, բայց առանց նրա միջումն աւելցածների. նախ նոյն իսկ իրան Գրիգորի Լուսաւորչի ձեռքով, յետոյ Աթանասայ, Յովհան Ոսկերեանի, Մանդակունու, Նարեկացու և այլոց, որոնք հեղհեղաբէ սկսած Գ. դարուց մինչեւ ԺԳ. դար աւելացան. բայց և այնպէս ուշադրութեամբ կարդացողն կիմանայ հինը, միջինը և նորը, նրա միջում:

Գրիգորի գլուխ վարդապետութիւնն է Նիկիոյ հանդանակին վրայ աւելացածը, որ է « Իսկ զի փառաբեցոյ՝, որ յառաջ քան զյառիտեան երկրպագանել զսբոյ Երրորդութեան և սբոյ Աստուածութեան, չօր և Որդոյ և Հոգոյ սբոյ այժմ և սբոյ և յառիտեան: Իսկ նրա աւետարանական քարոզութիւնքն յայտնի են ձեզ իր Յանապետոյն ճատերոս, որոնք Գրիստոսի բարոյականութեան ամենաընտիր հետեւութիւնք են հոգւով սրբով դրուած: Գրիգոր եկեղեցիներ հիմնեց, դպրոցներ բացեց, քահանաներ, սարկաւազներ ձեռնադրեց մեծ մասն օտար ազգի, Աւետարանի լոյսը տարածելով, Լուսաւորչի կոչուեց, բայց հեթան Հայաստանի լուսաւորութիւնն էլ ջնջեց, պատերազմ բաց անելով վահեւունեաց մեհենին քրմերուն և

քրմապետին դէմ: Տրդատ և Գրիգոր միասին վերեւն յիշուած բոլոր մեհենաներն և մեհենաների հետ միասին բոլոր մեհենական յիշատակարանները կործանեցին ամբողջ Հայաստանում և սաստիկ հալածանք հանեցին հեթանոսական պաշտամունքները դադրեցնելով՝ քրիստոնէականները կատարել տալու. և հեթանոս Հայաստանի բուն ազգային կամ բնիկ տեղական մեհենաները եկեղեցիներու, դպրոցներու, վանքերու և դրախտներու վերափոխեցին: Այդ եկեղեցեաց մէջ ամփոփեցին Յունաստանէն բերած նշխարները. և Ասորի կամ փոքր Ասիացի կրօնաւորներ առաջնորդ կարգեցին դրանց վրայ: Յետոյ Վաղարշապատում շինեց և էջմիածնի Տաճարն ըստ մի տեսիլքի: Գրիգոր մօտ հինգ հարիւրի չափ եպիսկոպոս ձեռնադրեց, որոնց խիստ մեծ մասը Ասորի և Յոյն էին, իսկ փոքր մասը Հայկազուն քրմերու և քրմապետներու որդիք:

Այդ գործողութիւնք եղան Տրդատայ և Գրիգորի ձեռքով Գ. դարու սկիզբներում, դեռ Կոստանդիանու քրիստոնէութիւն Հռովմէական աշխարհում չհաստատուած: Կոստանդիանու քրիստոնէութիւն ասացի, Սրբազան, և կուղէի ձեզ այդ մասին բացատրութիւն տալ, որպէս զի կարող լինիմ լաւ դուրս բերել Հայաստանեայց եկեղեցու կերպարանքը Գ. դարումը: Բայց այդ նիւթին չմտեցած, կուղեմ երկու խօսքով Գրիգորի հոգեւոր լուսաւորութեան գործոյն վրայ իրարու վրայ եկող իրողութիւնք առաջ բերել, որոնք ապացոյց են իմ նկատողութեանց: Գրիգորի և յաջորդների՝ այսինքն նրա որդոց և թոռանց, Արիստակէսի, 332ին, Վրթանէսի, 339ին, Գրիգորիսի, Յակոբայ, Յուսկան 355: Յետոյ երկու Ասորիների վրայ, Մեծին Ներսէսի, որ վախճանուեց 384ին և իր յաջորդներէն մինչեւ Սահակ Պարթևը 400ին, որ Գրիգորէ սկսած ամբողջ մի դար է անում. մեր Հայաստանում Գրիստոնէութեան հաստատման և զարգացման համար արած ջանքերը, ոչ մի անմիջական օգուտ բերին ոչ: Թագաւորականք և նախարարականք միայն անունով էին եղած քրիստոնեայ և ոչ հոգւով և մտքով. ապրեցան՝ ինչպէս ապրում էին հեթանոս եղած

ժամանակ: Մեծն Ներսէս իր ամէն ջանքն արեց Տրդատայ  
և Գրիգորի սկսած գործը գլուխ հանել. բայց հաղիւ թէ  
կարող եղաւ: Ինչ էր պատճառն այդ բանին, պէտք է ան-  
պատճառ այս տեղ յառաջ բերեմ, խնդրեմ ներողամիտ  
լինել երկարաբանութեանս:

Տրդատ և Գրիգոր, ինչպէս ասացինք արդէն, մինը Հռով-  
մայ և միւսը Կեսարիոյ մէջ էին դաստիարակուած, այսինքն  
մնուել ու կրթուել, Հռովմէական կայսերական միութեան  
մէջ Տրդատ՝ Եկեղեցու հոգեւոր միութեան մէջ Գրիգոր:  
Բնական էր որ դրանք կամեցան մեր հայկական և պարթե-  
ւական աշխարհն էլ, որոնք արդէն իրար հակառակ տա-  
րերք էին, այդ կրկնակի և ուղղակի միութեան մէջ ամեւ,  
որն որ անհնարին էր. բուն իսկ Հայոց երկիրը այդ վարչա-  
կան և հոգեւոր միութեանց նպատաւոր չէր, թէ՛ իր բնա-  
կան և ընկերական դրութեան կողմէն՝ թէ՛ հարեւանու-  
թեանց պատճառով բնական դրութեան կողմէն. նրա հա-  
մար որ Հայոց երկիրը, իբրեւ մի մեղրուների, փեթակ՝ բնա-  
կիչք լեռնամէջներում կամ լեռնադաշտերում աւանաբնակ  
կամ դիւղարնակ կեանք էին վարում. կամ իբրեւ հովիւ,  
մշակ, տուարած կամ իբրեւ երկրագործ, այդեպան կամ  
դրախտապան, ընկերականութեան կողմէն՝ նրա համար, որ  
տիրող մարմնու զօրութիւնն միմիայն՝ թագաւորի ձեռում  
չէր. ինչպէս տեսաք՝ բնական դրութիւնն ընկերականն էր  
առաջ բերած. ուստի և այդ համադրային կամ ամբողջ  
ժողովրդի զօրութեան ուղղութիւնն նախարարաց ձեռի  
տակ էր բաժանուած. հետեւաբար ոչ նախարարապետն,  
այսինքն թագաւորը կարող եղաւ իր իշխանական զօրու-  
թիւնը նախարարաց միջոցով ժողովրդեան զօրութեան հետ  
միացնել, և ոչ եպիսկոպոսապետն իր բարոյական զօրու-  
թիւն եպիսկոպոսաց ձեռքով՝ թէ՛ նախարարին և թէ՛ ժողո-  
վրդին վրայ ներգործել. թէ՛ միլիոնաւոր մարդիկ Հայաս-  
տանում քրիստոնէայ էին դարել, տարակոյս կայ ոչ. բայց  
ոչ թէ հայկական տարերքը ամբողջապէս ներգործուել էին  
քրիստոնէութենէն: Այդ միլիոնաւորները՝ Պարթեւք էին,  
Ալանք էին, Հրէայք էին, Ասորիք էին, Յոյնք էին, եկովի

աղք և աղինք էին: Դեռ վասպուրական, Սիւնիք, Աղուանք,  
Պարսկահայք, Աղճնիք, Մոկք և այլ հիւսիսային և արեւել-  
եան զաւանները ամբողջապէս քրիստոնէայ չէին եղած,  
այլ Բարձր-Հայք, Արարատ և Տուրուբերան, Չրադաշտա-  
կանութիւնն արեւելեան Հայոց վրայ էր ազդում: Հռով-  
մէական կամ Յունական քրիստոնէութիւնն Արեւմտեան  
Հայոց. առաջինն անդդալի էր, իսկ երկրորդը իբրեւ օտար  
աղդեցութիւն էր նկատուում. որովհետեւ ինչպէս իրանց  
երկրին բնութեան, այնպէս էլ ընկերական կազմութեան  
հակառակ էր դալի: Ուստի Գ. դարուն առաջին կիսէն թէ՛  
Տրդատեան թագաւորութիւնը և թէ՛ Նիկիական քրիստո-  
նէութիւնը պիտի ջնջուէր բուն իսկ արեւելեան նախարա-  
րաց ձեռքով. օրինակի համար՝ Արժրունեայ Մեհրուժանի,  
Մամիկոնեան վահանի և իրանց նմանների ձեռքով: Թէ որ  
Գրիգորի թուանը թու Ներսէս, որ Մեծն կոչուեց, որովհե-  
տեւ արդարեւ աղաւեց Հայաստանեայց երկիրն ու եկե-  
ղեցին թէ՛ և շատ թանգ գնով, և քրիստոնէական զարգաց-  
ման ճամբու վրայ դրաւ նոր Բուզանդաքրիստոնէական  
ընկերականութեան կազմուածքը տալով Հայոց աշխարհին  
և ազգին, Նոյն ուղղութեամբ և Արշակ Բ. թագաւորու-  
թիւն փորձ փորձեց առաջ տանելու, բայց ինչպէս ասացինք,  
նախ որ՝ աշխարհն ամենեւին հասած չէր այդ բանի համար  
թէ՛ նախարարական դրութեանով և թէ՛ նոր քրիստոնէական  
կեանքով: Երկրորդ որ՝ երկու հարեւանները, Արեւելեան և  
Արեւմտեան, այսինքն Արիք, որ ոչ մի կերպով յանձն չէին  
առնում իրանց առաջապահ Հայոց ազգն, որ Հռովմայեցւոց  
յարձակումներէ էր ազատած իրանց, համարին, համակրօն  
և համաբարբառ Հայքն՝ Հռովմէական դառնան վարչու-  
թեամբ, կրօնով և լեզուով. և այդ էր Մեհրուժան Արժ-  
րունու և իր նմանների հայեացքն իբրեւ հայկական քաղա-  
քականութիւն: Իսկ Ներսէսի քաղաքական հայեացքը յաւի-  
տեան բաժանուել էր Արիական ցեղէն, Չրադաշտական  
կրօնէն և անել Հայքն Հռովմաբուզանդական մի մաս: Բայց  
Արշակ Բ. և իր յաջորդները հայեացքն երկու հարեւաննե-  
րէն էլ միանգամ և եթ պրծացնել էր իրանց վիզը և անկախ



կամիջոցում հարիւր կտորէն աւելի ինքնածին հեղինակութիւնը և մի այնքան էլ թարգմանութիւնը առաջ բերեն. ամբողջ Հայոց աշխարհն իրանց գրականութեամբ ոչ միայն քրիստոնէացնեն, այլ և այդ աշխարհի հետ միասին այդ քրիստոնէականութիւնն էլ ազգայնացնեն և մի նոր հայկական ազգայնութիւն շինեն աշխարհով, ազգով, լեզուով, եկեղեցիով. և մի աւելի փառաւոր բան՝ արտաքին ատելութիւնքն ու հալածանքը թէ՛ արեւելքէն թէ՛ արեւմտքէն այդ նոր քրիստոնէական ազգայնութիւն ջնջելու փոխանակ, աւելի հաստատեցին նրա հիմունքը, զօրացուցին բարոյապէս, և թէ վերջն ու վերջ թէ՛ արեւելեանք և թէ արեւմտեանք ստիպուեցան ճանաչել այդ՝ եթէ ոչ քաղաքակա- նորէն, դոնէ բարոյապէս և ազգայնորէն:

Սրբազան Տէր, թէ որ մի ամենափառաւոր դար ունինք մենք մեր քրիստոնեայ Հայաստանի պատմութեան մէջ, այն դարը հինգերորդ դարն է, և այդ դարը դժբաղդութեամբ ամենէն քիչ ուսումնասիրուածն է մեր բանասէր- ներէն, և անչափ կարեւորութիւն ունի դա ուսումնասիրուելու: Այդ դարումն է հիմնուած ու հաստատուած Հայոց աշխարհի քրիստոնէական ազգայնութիւնը: Այդ դարումն է Հայոց աշխարհեցւոյ՝ այսինքն ամբողջ Հայաստանեցւոց հայկաքրիստոնէական ազգայնութեան մէջ ամբողջութիւնն ու ձուլուելը: Այդ դարումն է, որ քրիստոնէական հաւատոյ վրայէն յունահռոմէական դրօշմ իրանց ճակատէն սրբելով՝ Հայք, «Այս է մեր հաւատն» ասելով՝ ամեն աշխարհի ցոյց տուին: Այդ դարումն է՝ վերջնական կերպով, եկեղեցու սահմանադրութիւնը միանգամ եւեթ հաստատուելն, Սահմանադրութիւն եմ ասում, Սրբազան, և ուշ դիր այդ բառին, և ոչ նուիրապետութիւն: Այդ վերջին բառը չէ հայացած հնում, մեր օրերումն է դուրս ընկած: Այդ դարումն է, որ Հայոց աշխարհն ու ազգը հոգեկան ազատութեան դրօշը ձեռին վարդանանցմով և վահանանցմով (երկուսն էլ Մամիկոնեան) կրօնի ազատութեան օրինակն առաջին անգամ մեր աշխարհի երեսին կանգնեցուցին (մի և նոյնն են այն ժամանակուայ կրօնի ազատութիւնն և

այսօրուայ մտքի ազատութիւնը): Այդ դարումն է, մի խօսքով, Սրբազան, որ Հայք՝ Արեւմտեան կայսրութիւնը Սասանեայ ձեռքէն ազատելով՝ Եւրոպան դարերով դեռ բարբարոսութեան մէջ մնալուց ազատեցին. այն, հարցնում եմ թէ՛ քաղաքադիտին և թէ՛ պատմաբանին, թէ ո՞ւր կերթար Հռոմէական աշխարհի վիճակը, եթէ քրիստոնեայ Հայք՝ իրանց նախնեաց օրինակին հետեւելով, ինչպէս միացան Կիւրոսների, Կամբիւսների հետ՝ Սսորեստան և Յունաստան կործանելու, Պարթեւաց հետ էլ՝ նոյնպէս տակն ու վրայ արին Հելլենաստան և Յունաստան. եթէ այդ անգամ էլ Սասանեաց հետ միանալու լինէին կրօնով, լեզուով ամեն բանով՝ ու հրօսէին, թափուէին Կոստանդիանու սարքած խախուտ կայսրութեան վրայ, ինչպէս մի դար յետոյ միացան. երբեմն քաղաքականօրէն Սասանեանց հետ և երբեմն էլ՝ Խալիֆաների հետ Բիւզանդեան կայսերաց դէմ:

Միանգամ միտք արէք, Սրբազան, թէ ի՞նչ էր լինելու Եւրոպու վիճակ, երբ՝ հիւսիսի կողմէ բարբարօսք հեղեղի նման յորդում էին, Արեւելքէն էլ Ջրադաշտականք, այսինքն՝ Հայք, Ասորիք, Փոքր Ասիացիք մշուած Արեւայ ազգէն դիմէին Եւրոպու վրայ. ո՞վ էր կարող նրանց դէմն առնել, փոքր Թէոդոսն, որ դստրում էր Սասանեաց առջեւ, եթէ ոչ կրօնական վէճերով փճացած ու ապականած ժողովուրդը: Ես շատ հաւանական եմ կարծում, որ եթէ հինգերորդ դարում՝ մի այդպիսի դէպք պատահելու լինէր աշխարհիս երեսին, Մահմէտականութիւնն էլ Արաբիաում ծագում չէր առնելու և աշխարհիս կէսը Մահմէտական չէր լինելու. ինչպէս որ երկու կամ երեք դար յետոյ եղաւ այդ բան. և միթէ՛ Մահմէտականութեան ծաւալման համար էլ, նախ Հրէայք, յետոյ հերձուածող քրիստոնեայք, այսինքն՝ Խալիք, Ասորիք և Հայք մեծ ձեռնտու չեղան՝ միմիայն Քաղկեդոնիկներու և նրանց կայսրութեան դէմ դործելու համար:

Դէն թողնենք այդ խորհրդածութիւնք հիմա, Սրբազան, և մեր խօսքի թելը ձեռին առնենք: Ներսէս Մեծն, Մահակ Պարթեւ և Հայկազունն Մեսրոպ, երկրորդ մտաւոր Հայկն Հայաստանին՝ իրանց առաջին և երկրորդ կարգ աշակերտներով,

որոնց արձանները՝ ոչ թէ միայն մեր ամեն վարժասներում ու դպրէվանքերում, այլ ամեն Հայ քրիստոնէի տանը և պաշտօնատեղին պէտք է գտնուին, և որոնց վարքն ու դորժը, ոչ թէ մի միայն իրանց ժամանակուայ Բուզանդներն ու Կորիւններն ու Խորէնները պիտի գրեն, այլ մեր միջումը այսու յետոյ, ամեն դար մի քանի պատմաբան դուրս պէտք է կան և իրանց հայեացքը դարձնեն այդ մեծամեծ անձանց և իրանց դարու վրայ. որոնց նմանները այն ժամանակուայ ոչ մի ազգումը չեն երեւցած. միմիայն մի և նոյն դարում նրանց նման մի անձ երեւում է Դակիոյ և Թրակիոյ Իււրիլլաո եպիսկոպոսի միջում, որ Հայոց եղբերական երկրացի էր Կապադոկացի և արիոսական, և գերի գնացած այն տեղ բարբարոսների ձեռքով. դա Դակիոյ և Թրակիոյ Կոթացոց նշանագրերն է հնարած և նոյն նշանագրերով Սուրբ Գիրքն է թարգմանած նոյն լեզուի մէջ, որն որ մինչեւ այսօր գտնուում է ձեռագիր օրինակը՝ Ուպսալի համալսարանում և մի քանի անգամ էլ հրատարակուած է. Գրանց ամենամեծ գործերէն մի քանիսը թէև վերը յիշեցինք, որ էր Հայոց աշխարհն ու Հայոց ազգն ոչ թէ միայն քրիստոնէացիին, որովհետեւ այդ իրողութիւն շատերը կատարեցին այլևայլ աշխարհներում, այլ իրանց արժանաւորութիւնն ու կարեւորութիւնն այն է որ՝ այդ քրիստոնէութիւնն էլ ազգայնեցուցին, այսինքն Քրիստոսի եկեղեցուն հայկական կերպարանք տուին: Ուստի Հայկէն և նրա որդոցմէն և թոռներէն յետոյ՝ քրիստոնեայ Հայաստանին նոր Հայկերը, նոր Արամներն ու նոր Տիգրանները այդ խոշոր կերպարանքներն եղան, մանաւանդ Մեսրոպ:

Նախ իրանց հաւատը, այսինքն՝ հանուր Հայաստանցոցը՝ մեծին և փոքրին, կանանցն ու աղջկանցը, քաղաքացոցը, գիւղացոցը. և որ մեծն է՝ եկեղեցականացը և աշխարհականացը մի տեղ ձուլեցին, և դրա կենդանի պատկերը խօսքով և գործով աշխարհիս երկու ամենամեծ թագաւորաց առաջը հանեցին: Չեմ կարող, Սրբազան, այդ գրաւոր պատկերին մի քանի գեղեցիկ կողմերը ձեր աչքի առաջը չհանել այս տեղ:

Սկիզբն այդ գրաւոր պատկերի այս յետագայ խօսքերն է գրուած, որոնք այն դարէն մինչեւ այսօր՝ հոգի և ուղղութիւն է եղած Հայաստանեայց եկեղեցու, և որոնք ամեն հաւատոյ յայտարարութեան գլխին կամ վերջին կրկնուած են:

« Ի նախնեաց ունիմք սովորութիւն աստուածատուր պատուիրանաւ աղօթս առնել ի վերայ կենաց թագաւորի եւ անձանձրոյթ խնդրել յԱստուծոյ վասն երկայն ժամանակաց դորա զի խաղաղութեամբ վարեաց զտիեզերական իշխանութիւն եւայլն . . . . . »

« Մի է Աստուած եւ չիք այլ ոք բայց ի նմանէ, ոչ երիցագոյն եւ ոչ կրտսերագոյն: Ոչ սկիզբն առեալ յուրեք լինել Աստուած, այլ ինքն ինքեամբ մշտնջնաւոր. ոչ ի տեղով ուրեք, այլ ինքն ինքեան տեղի. եւ ոչ ի ժամանակի իմիք, այլ ժամանակք ի նմանէ գոյացան. ոչ միայն քան զերկինս երիցագոյն, այլեւ քան զկարծիս մտաց մարդկան եւ հրեշտակաց: Ոչ ձեւանայ ի տեսիլ տարրեղէն, եւ ոչ անկանի ընդ տեսլեամբ ական. եւ ոչ միայն ձեռին չզննի, այլեւ ոչ ընդ միտս ուրուք հարկանի, ոչ միայն ընդ մարմնականացս՝ այլ եւ ոչ ընդ անմարմին հրեշտակացն. բայց եթէ ինքն կամի՝ իւրոց արժանաւորացն մտաց իմանի, այլ ոչ աչաց տեսանի, եւ մտաց՝ ոչ երկրաւորացս, այլ որ յԱստուածն են հաւատացեալ ճշմարտի » . . . . . »

« Ձեռք, որ զերկինս եւ զերկիր հաստատեցին, նոյնք եւ տախտակս քարեղէն փորագրեցին եւ ետուն մեզ դպրութիւն՝ որ ունի զօրէնս խաղաղականս եւ փրկականս. զի զիտասցուք զմի Աստուած արարիչ երեւելեաց եւ աներեւութից. ոչ այլեւայլ, իբրեւ թէ ոմն բարի եւ ոմն չար, այլ մի եւ նոյն համակ բարի » . . . . . »

« Ձրեւս չար ասացեր, գոն եւ դեք բարի, զոր եւ դուք եւ մեք հրեշտակս անուանեմք. եթէ կամին եւ դեք բարի լինին եւ եթէ կամին եւ հրեշտակք չար լինին, Այդ եւ ի մարդիկ երեւի եւ առաւել ի միոյ հօր որդիս. է որ հնուզանդ եւ հպատակ է հօրն եւ է որ չարագոյն քան զսատանոյ: Նա եւ ինքն իսկ մարդն առանձին յերկուս բաժանեալ տեսանի, երբեմն չար եւ երբեմն բարի, եւ որ բարին էր՝ նոյն եւ չարացաւ, դէպ եղեւ զի դարձեալ անդրէն ի բարի չընցաւ, եւ բնութիւն մի է » . . . . . »

« Եթէ հաւատալ արժան է առասպելաբանութեանդ, զոր դուք եւ գործովք իսկ կատարեալ ցուցանէք ի դենիդ ձերում, մեք ոչ եւս առասպելացն հաւատալք, այլ աշակերտ եմք Մեծին Մովսիսի մարգարէին՝ ընդ որում Աստուած խօսեցաւ ի մտեւնդ ի Սինէ. եւ դէմ յանդիման օրէնս գրեաց եւ ետ ցնա եւ ծանայց զնութեղէն աշխարհն իբրեւ զարարածս եւ զիւր աննիւթ էութիւնն՝ արա-

րիչ ճիւթոցս յոչնչէ. եւ զերկիրս երկրաւորօքս եւ զերկիրնս երկնաւորօք եցոյց նմա զի գործ ձեռաց նորա են : Բնակիչք երկրի հրեշտակք, եւ բնակիչք երկրի մարդիկ . բանաւոր՝ մարդ եւ հրեշտակ միայն, եւ Աստուած ի վեր քան զերկիրնս եւ զերկիր :

« Եւ ամենայն արարածք անբանութեամբ կատարեն զհրամանս պատուիրանի նորա եւ ոչ երբէք անցանեն ըստ եղեալ սահմանն իւրեանց . բայց մարդ եւ հրեշտակ ազատ թողեալ ի կամս անձին իւրոյ քանզի մտաւորք են , եթէ կայցեն ի հրամանի նորա՝ անմահք են եւ որդիք Աստուծոյ : Զբոլոր արարածս տուեալ է ի ծառայութիւն, զերկիրս՝ մարդկան եւ զերկիրնս՝ հրեշտակաց . սպա եթէ ստունգանիցեն եւ անցանիցեն զպատուիրանաւ, զընդդէմն գործեցեն Աստուծոյ, յիւրաքանչիւր պատուոցն զանարգանս ընկալցին . զի երեւեսցի տէրութիւնն անբասրաս, եւ յանցաւորքն ամօթալից յանցանացն : . . . . . »

« Այլ մեք այսպէս զխտեմք զԱստուած, եւ ի սոյն հաւատամք յաներկբայս : Եւ որ արար զաշխարհս, նոյն եկն եւ ծնաւ ի սուրբ կուսէն Մարիամայ, յառաջագոյն նկատելով մարդարէիցն, առանց իրիք պատճառանոց մարմնաւոր կարգի : Որպէս յոչնչէ արար զայս մեծամարմին աշխարհս, սոյնպէս առանց իրիք մարմնական միջնորդի առ զմարմինն յանխորձ կուսէն ճշմարտիւ, եւ ոչ առըստուերազիր երեւմամբ : Էր Աստուած ճշմարտիւ եւ եղև մարդ ճշմարտիւ . ոչ ի լինելն մարդ՝ կորոյս զաստուածութիւնն, եւ ոչ ի կալ մեալն Աստուած՝ աղաւաղեաց զմարդկութիւնն, այլ նոյն միայն եւ մի : Այլ քանզի ոչ կարէաք տեսանել զանտեսանելին եւ մերձենալ յանմերձենալին, եկն եմուտ ընդ մերով մարդկութեամբս, զի եւ մեք մտցուք ընդ նորա աստուածութեամբն : Ոչ անարգս ինչ համարեցաւ զգեներ զիւր ստեղծուած մարմինս, այլ մեծարեաց իբրեւ աստուածաստեղծ զիւր գործ : Ոչ առ սակաւ սակաւ շնորհեաց ինչ սմա զանմահութեան պատիւն՝ իբրեւ զանմարմին հրեշտակաց, այլ միանգամայն զբոլոր բնութիւնն մարմնով՝ շնչով եւ հոգեով զգեցաւ եւ միաբանեաց ընդ աստուածութեանն . միութիւն, եւ ոչ երկուութիւն . եւ սցսուհետեւ մի զխտեմք զաստուածութիւնն որ յառաջ էր քան զաշխարհս, նոյն եւ այսօր եւ յաւիտեանս :

« Այս Յիսուս Քրիստոս՝ որ յիւր մարմինն փրկեաց զբոլոր աշխարհս, սա եկն կամօք ի մահ . եւ որպէս ինքն աստուածութիւնն զիտէ՝ թանձրացաւ յանարատ կուսէն, եւ ծնաւ եւ պատեցաւ ի խանձարուրս եւ եղաւ ի մուր, եւ շարժեաց ած զմազան յարեւելից կողմանցս յերկրպագութիւն, սնաւ իբրեւ զտղայ կաթամբ, աճեաց եւ մեծացաւ ամս երեսուն, մկրտեցաւ ի Յովհաննէ ի յամրորդայն ի Յորդանան գետ : Արար նշանս մեծամեծս եւ արուեստս ի մէջ Հրէիցն, մատնեցաւ ի քահանայից, գատապարտեցաւ ի Պիղատոս

Պոնդացոյ : Խաչեցաւ, մեռաւ, թաղեցաւ, յարեաւ յաւուր երրորդի, երեւեցաւ երկուտասան աշակերտացն եւ սյլոց բազմաց աւելի քան զհինգ հարիւրոցն : Եւ շրջելով ընդ նոսա զաւուրս քառասուն՝ վերացաւ յերկիրնս ի լեւոնէն Չիթենեաց յանդիման իւրոց աշակերտացն, եւ եւ նստաւ ի հայրենի աթոռն : Խոստացաւ երկրորդ անգամ դալ ահաւոր զօրութեամբ յարուցանել զմեռեալս, նորոգել զբոլոր աշխարհս, առնել դատաստան արդար ի մէջ արդարոց եւ մեղաւորաց, տալ պարգեւս արժանաւորաց, եւ հատուցանել պատիժս չարագործաց՝ որ այսմ ամենայնի բարերարութեանց ոչ հաւատան :

« Յայսմ հաւատոց զմեզ ոչ ոք կարէ խախտել, ոչ հրեշտակք եւ ոչ մարդիկ, ոչ սուր եւ ոչ հուր, ոչ ջուր, ոչ ամենայն զինչ եւ են դառն հարուածք : Ամենայն ինչք եւ ստացուածք մեր ի ձեռս քո, եւ մարմինք մեր առաջի քո կան . ըստ կամաց քոց արա զինչ եւ կամիս : Եւ այլն եւ այլն : . . . . . »

Այդ նամակին ստորագրեցին՝ Այրարատայ, Տարօնոյ, Մանաղկերտայ, Բաղրեւանդայ, Բղնունեաց, Տայոց, Բասենոյ, Տուրուբերանոյ, Մարդաստանի, Մարդազոյ, Սիւնեաց Արժրունեաց, Ռըշտունեաց, Մոկայ, Վանանդայ, Ամատունեաց, Անձեւացոյ, Ապահունեաց եպիսկոպոսներն, երէցներն, մեծ եւ փոքր նախարարներն եւ բոլոր մեծ ու փոքր Հայոց աշխարհեցիք՝ միաբան եւ միահաւան՝ ժողովուած Արտաշատում :

Մօտ տասնուհինգ դարեր են գլրուում, Սրբազան, մեր Քրիստոսեայ նախնեաց այդ հաւատոյ դաւանութեան վրայ, եւ տանն ու հինգ դար շարունակ՝ այդ հոգին, այդ զգայմունք եւ այդ սիրտ ցոյց տուին Հայք . ինչպէս Զրադաշտականաց, նոյնպէս եւ Մահմեդականաց : Բայց զարմանալեաց զարմանալին այն է որ՝ Արեաց ազգք ճանաչեց այդ առաքինութիւն մեր Հայոց մէջ . նոյնպէս եւ Իսլամք ճանաչեցին այդ եւ Հայոց խղճի ազատութիւնն ընդունեցին : Միայն Բիւղանդեանք եւ Հոովմէականք, Օրթոտօքս եւ Քաթոլիկք ճանաչեցին ոչ . եւ ամեն դար շարունակ թէ մեր բուն աշխարհում եւ թէ տար աշխարհներում, ուր որ էինք եւ ուր որ ենք, հալածելով հալածեցին մեզ եւ դեռ հալածում են ու հալածում մինչեւ այսօր, ինչպէս որ գիտեք :

Այդ նոր հայկական ազգաշինութիւն, դիտէք Սրբազան, ինչով եղաւ. Հաւատով, Յուսով և Սէրով. և ո՞ր սնունդն է դրանց՝ հոգեւոր և մտաւոր դրով և անգին արիւնով: Այդ դարու վերջերում՝ Մամիկոնեան Վահանի դրօշակի վրայ սրանք էին գրուած: «Թէ որ, ասում է Վահան Մամիկոնեան Արեւոյ Թագաւորին, մեր երեք պայմանքը կընդունիս, այն ժամանակ մենք էլ քեզ հաւատարմութեամբ կը ծառայենք: Իսկ թէ որ չես ընդունիլ, մենք ամենքս էլ ուրախ ու զուարթ սրտով մեր հոգիներն ազատ կը մեռնինք:» Այդ երեք պայմանքն էին. Ա. հայրենի ճշմարիտ հաւատու պաշտամունքը: Ոչ մէկ Հայու բռնի շատլ, զրադաշտական կրօնը: Նոյնպէս և ոչ մի ուրացող Հայու էլ փառք, պատիւ և պաշտօն. Զրադաշտայ կռատունք քանդուին Հայոց աշխարհում: Լսենք ոչ, տեսնենք ոչ այսույետոյ անպատուութիւն և անարգանք անարժան մարդկանցով մեր հաւատու և ազգի վրայ: Ամեն տեղ եկեղեցական և աշխարհական ազատ ու համարձակ քրիստոնէութիւն վարեն: Բ. Արեւոյ Թագաւորն միմիայն իր կամքին հարց անելով՝ պաշտօնի չկանչէ մարդիկը, այլ ընտրութիւն անելով լաւ և վատ մարդկանց մէջ, լաւը նախամեծար համարի վատին վրայ, և ոչ թէ վատը լաւին: Գ. Արեւոյ Թագաւորը մինչեւ որ իր ակառնջովը լսէ ոչ, իր աչքովը տեսնէ ոչ ամեն բան, այսինքն՝ մինչեւ որ հարցուփորձի ենթարկէ ոչ ամեն բան, իր դատովճիւղը տայ ոչ. և ուրիշ դրանց նման բաներ:

Սրբազան, իմ նկատողութիւնն այն է ձեզ անելու այս տեղ, որ՝ հնում շատ աւելի մեծ ու դժար բան էր հաւատոյ ազատութիւն ձեռք բերելը, քան թէ քաղաքական ազատութիւն, մանաւանդ Հայոց համար հաւատոյ կամ կրօնական ազատութիւնը մի յատուկ ջոկաւորութիւն էր համարուում աւելի բարձր քան զերկրական և զազգային. և այդ բան ի հարկէ՝ դուք ինձմէ լաւ դիտէք. և ինչ էր այն ժամանակուայ Հայաստանի քաղաքական դերութիւնն, որն որ մինչեւ այսօր չէ հասկացուած: Հայոց աշխարհը լեռների մի արշիպեղազոս է ընդարձակ, բոլոր այդ կղզիանման լեռնաձորերում և լեռնապաշտերում և շատ անգամ լեռանց

դադաթներում անգամ աւաններ, շէներ և գիւղեր կային և դեռ կան մինչեւ այսօր, որոնք իրանց յատուկ իշխաններով և եպիսկոպոսներով էին կառավարուում, այս կամ այն գերիշխանութեան ներքեւ. այսինքն՝ Հայոց տուրքն ու զօրքը մի իշխանապետի ձեռքով, որն որ երբեմն մարզպան, երբեմն ոստիկան և երբեմն կիւրապաղատ կոչուեց, և շատ անգամ էլ այդ իշխանապետն հայ էր լինում. կամ Արեւոյ Թագաւորին կամ Բիւզանդիոնի կայսեր էր ուղարկուում, եւ կամ թէ նա՝ միտուն կամ միւսին էր ծառայում: Երբ Մասանեանք Արարների առջեւէն փախան Հնդկաց աշխարհ, նրանց տեղը բռնեցին նախ Դամասի և յետոյ Պաղատաի Խալիֆէք: Միթէ և այսօր՝ այդ առաջ բերած դրութեան մէջ չեն Սիւմ, Սնտիտորոս, Կորդուաց, Կորճէից և Մոկաց լեռներում բնակող Քրդերը. որ Թագաւորին են հպատակ:

Սահահայ և Մեսրոպայ աշակերանները և մի երեւելի դործ էլ արին այդ մի և նոյն դարում, որն որ պէտք է շատ մեծ բանի տեղ դնենք: Այդ գործն է Քաղկեդոնի ժողովը մերժելով՝ Բիւզանդեան եկեղեցուց բոլորովին բաժանուիլը և Հայոց աշխարհի և ազգի եկեղեցին անկախ կայուցանելը այդ կայսերաց սարքած ժողովներէն, որոնք ինչպէս վերեւն ասացինք, էլ համա ու հոռը փախուցել էին:

Սրբազան, մեր նոր պատմաբանք՝ շատ պատճառներ կը տան ոյդ բաժանման, մինը միւսէն անհեթեթ և անխմաստ. մի դէն թողեցէք ամենքն էլ և դիտացէք որ Բիւզանդեան պատմիչները և երբեմն մերիները, այն նիւթը բաց են թողած, ո՞ր նիւթին վրայ որ խօսել չեն կամեցած և քանի անգամ որ՝ նոյն նիւթը կամ պատմութեան կամ գիտութեան կամ կրօնի մէջ առաջ է եկել, մանաւանդ Բիւզանդեանք՝ միշտ վարպետութեամբ ջանք են արել Թագուն պահել այն, եթէ չեն կարող եղել այլակերպել կամ աղաւաղել, այլակերպել են ու աղաւաղել այն՝ երբ կարող չեն եղել Թագուն պահելը Այդպէս էլ է այդ երեւելի դէպքը. ինչ զարմանք և ինչ հրաշք. նոյն մարդիկը, որոնք Եփեսոսի ժողովի վճիռներն ընդունում են և Քաղկեդոնիւնը չեն ընդունում: Եփեսոսի ժողովներն են լինում. առաջինը 431ին

երկրորդը ԿԿԹին, իսկ Քաղկեդոնինը ԿՃԱին : Քանի սարի միջոց կայ մէջ տեղում: առաջնում քսան, երկրորդում երկու, ինձ երեւում է, Սրբազան, որ Սահակայ և Մեսրոպայ աշակերտներ կամ թէ հինգերորդ դարու Հայք՝ Եփեսոսի ժողովնէլ չեն ընդունած. և այդ պատճառով երկպառակութիւն եղած լինի իրանց մէջ, որուն պատճառը մեր այդ դարուայ եկեղեցականք թագուն են պահած: (Մովսէս Խորենացու և Ղազար Պարպեցու դէմ եղած հալածանքի պատճառ յայտնի չէ մեզ): Իրաւ է որ՝ այդ անկախութիւն Հայոց շատ թանդ նստաւ: Հէնց այն ժամանակէն՝ որ Հայք ձեռնարկում են իրանց քրիստոնէական եկեղեցին ազգայնացնելու իրանց աշխարհում, Յունաց թշնամութիւնն էլ սկսում է: Արդէն Ե. դարում Սահակ Պարթեւ դանգատում է Թէոդոս կայսեր՝ իրան եղած վատ ընդունելութեան համար նրա իշխանութեան ներքեւ եղած Հայաստանում, և Հայոց տառերը չընդունուելուն այն տեղ կարգուած կառավարիչներն հրամանով: Յոյնք այդ թշնամութիւն կատարութեամբ այն ժամանակ յայտնեցին աւելի, երբ Սասանեաց և Սրբաաց ձեռքէն պրծան: Զ. դարու վերջերում Հայք՝ սկսում են իրանց պաշտպանողական դիրքը բռնել Յունաց դէմ իրանց եկեղեցին ազատելու համար: Արբահամ Կաթողիկոսի շրջաբերականը՝ հանուրց Հայաստանոց, հաստատում է իմ ասածը և հարկ եմ համարում առաջ բերել այս տեղ այն, որու մէջ Հայոց հաւատու խոստովանութիւն նորէն կրկնուած է:

« Այլ յառաջագոյն աւետարանեալքն յիսկզբանէ ակնատեսացն եւ ի սոգաստորաց Բանին եւ ի մարգարէիցն դուշակեալք՝ զոր մատուցին մեզ երեք հարիւր տասն եւ ութ հարքն ժողովեալք ի Նիկիայ, նովիմքք քաջնահաստակօքն հարիւր եւ յինօք ի կոստանդնուպօլիս՝ կործանեցին զհոգեմարտան, եւ երկիրիւքն յԵփեսոս զամբարիչտն նեստոր. եւ իւրեանց խոստովանութիւն կալեալ առաջնորդ զկեանսն յաւիտենից. զոր եւ ես կարճառօտագոյնս եւ մեկնորէն յիշատակեցից. եւ է այս :

Հաւատամք ի մի Աստուած Հայր ամենակալ, արարիչն երկնի եւ երկրի, երեւելեաց եւ աներեւելեաց, եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս, յՈրդի Աստուծոյ, ծնեալ ի յԱստուծոյ Հօրէ միածին. այլ

նչ արարեալ կամ հաստատեալ. համագոյ Հօր, այլ ոչ յոչընչէ արարեալ ամենայն երեւելեաց եւ աներեւելեաց. եւ ի Սուրբ Հոգին արարիչ եւ կենդանացուցանող եւ նորոգիչ. ոչ ծնունդ, այլ ելումն. Աստուած ասի Հայր, Աստուած Որդի, Աստուած սուրբ Հոգի. ոչ երեք Աստուածք, այլ մի աստուածութեամբ կամօք եւ զօրութեամբ փառաբանի սուրբ երրորդութիւնն, զոր իմանամ միասորութեամբ բաժանեալ, եւ բաժանմամբ միաւորեալ. ոչ սկիզբն եւ ոչ դադարումն կամ երկցութիւն. քանզի որպէս փառք առանց լուսոյ ոչ իմանի, եւ ոչ է կամ պատկեր առանց էութեան, եւ զօրութիւնն առանց զօրութեան, կամ իմաստուն առանց իմաստութեան, այսպէս եւ Հայր առանց Որդւոյ, եւ որպէս ի լուսոյ երեսաց նորա միշտ լոյս ծագէ տեսողաց, եւ ոչ ոք գատանի առանձնաբար, կամ մինն յառաջ երեւի, այսպէս Հայր եւ Որդի առանց սրբոյ Հոգւոյն: Իսկ ի վերջին աւուրս որդի իջեալ մարմնացաւ եւ մարդացաւ, ծնաւ անձառաբար ի սուրբ կուսէ Աստուածածնէ՝ մարմնով, հոգւով բանականաւ, շնոր, մտօք եւ զինչ ի մարդ յօրինակ աստուածային ճոխութեամբ: Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս անմեկնելի ի Հօրէ եւ բաւընդակ յերկրի խաչեալ՝ եւ թաղեալ՝ եւ յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ յերկինս նստաւ ընդ աջմէ Հօր. զայ նովիմք մարմնով դատել զկենդանիս եւ զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ դոյ վախճան: Իսկ որք ասենն էր՝ եթէ յորժամ ոչ էր, եւ նախ քան զիննէն չէր, եւ կամ զայս գորոց Հոգւոյն կամ փոփոխելի կամ այլայլելի եւ կամ յոյլմէ էութենէ, կամ ի գոյութենէ, զայնպիսիան նորով կաթողիկէ առաքելական եկեղեցի:

Արդ այս է խոստովանութիւնն մեր հանդերձ ամենայն տնօրինական ներգործութեամբն մարդացեալ Բանին Աստուծոյ, իսկ նոքա ասեն ընութիւն մարմնացելոյ Բանին Աստուծոյ. զոր եւ մեզ մի երբէք լիցի ասել:

Արբահամ Կաթողիկոս այս խոստովանութենէ առաջ և յետոյ, պատճառն ու նպատակը՝ նոյնպէս և բացատրութիւնն առաջ է բերում և վերջացնում՝ այսպէս.

« Քանզի Առաքեալքն Փրկչին մերոյ՝ մի Տէր քարոզեցին զՅիսուս Քրիստոս. եւ զնոյն ի խաչ ելեալ, Պօղոս յայտնադոյն ազաղակէ, եւ զՏէրն փառաց ի խաչ հանին, եւ Որդին Աստուծոյ զմահ ճաշակեաց, ասէ, մինչ թշնամիքն էաք, հաչտեցաք ընդ Աստուծոյ մահուամբ Որդւոյ նորա. եւ եթէ Քրիստոս վասն մեր մեռաւ, եւ զնոյն ասէ ի վերայ ամենեցուն Աստուած օրհնեալ յաւիտեանս ամէն: »

Իսկ շրջաբերականն էլ այսպէս :  
« Վասն որոյ եւ զյառաջագոյն սահման վարդապետացն մերոց,

զոր ի վերայ հստովին հատին, եւ կացցէ մինչեւ ցրուն, թէ ոչ դարձցին ի ճամբարան, մեք զնոյն եւ ի վերայ վրաց (Քաղկեդոնիկաց) հրամայեցաք, ամենեւին մի հաղորդիլ ընդ նոսա. մի յաղօթս, մի ի կերակուրս, մի յըմպելիս, մի ի բարեկամութիւնս, մի ի դայեակութիւնս, մի աղօթեմք երթալով ի խաչն, եւ մի ի մեր եկեղեցիս զնոսա ընդունել, այլեւ ամուսնութեամբ ամենեւին հեռանալ. բայց միայն զնել ինչ կամ զնոյ . . . » Ուխտանէս. Պար. Հայոց. եր. 152, Տէպ էջմիշնի:

Մի բան պիտի ասեմ, Չեղ, Սրբազան, և ձեր ուշադրութիւն եմ խնդրում այդ մասին: Մի կարծէք ինչ որ ասեն, թէ կաթողիկոս կամ եպիսկոպոս (ինչպէս այսօր) ինչ հաւատոյ խոստովանութիւն որ կամենար կարող էր անել մեր մէջ, ոչ ամենեւին: Հաւատոյ խոստովանութիւն մի կամ մի քանի եկեղեցականի սեպհականութիւն չէր, այլ ողջ եկեղեցու Ուխտին, այսինքն եկեղեցականին ու աշխարհականին միասին, հետեւաբար ամբողջ Հայոց ազգին, Ներսիսի, Սահակայ և Մեսրոպայ և իրանց աշակերտաց ամենամեծ գործն այն եղաւ որ, իրաւ է որ ժամանակն ու հանքամանքն էլ այնպէս պահանջեց, որ քրիստոնէական ուսմունքն ընդհանուր և հասարակաց և ամենքին սեպհականութիւն լինի: Ինչպէս որ եղաւ, սրբազան լեզուն՝ գրականութեան մէջ, այնպէս էլ եղաւ Սուրբ Գրոց ծաւալումն այլեայլ եղանակով և այլեայլ ձևերով Հայոց մէջ: Այդ իրողութիւնն այն աստիճան արմատ էր թողել մեր Հայոց կեանքում, որ մինչեւ այս մեր դարու կիսուն՝ դեռ մեր դպրոցներում կտակարան և Սաղմոս էին մեր ազոց ձեռներում՝ մանչ և աղջիկ. ցաւն այն է եղել որ՝ Հայք գաղթելով իրանց հայրենի երկրէն՝ իրանց սրբազան լեզուն հասկանալը մոռացել էին: Մեր՝ այսօրուայ քրիստոնէական վարդապետութեան ուսմունքն այս դարու հնարք է՝ մեր մէջ մտած Օրթօօքսաներէն և Քաթոլիկներէն: Այդ բանն այդպէս լինելով՝ պէտք է այն էլ լաւ գիտենանք, որ այդ դարագլխէն, այսինքն Քրիստոնէայ Հայաստանը գոյանալուց յետոյ, էլ երկու պատմութիւն չունեցաւ Հայոց ընկերականութիւնը, աշխարհական և եկեղեցական. և ոչ էլ երկու գիտութիւն, աստուածաբանական և մարդաբանական:

զրանք էլ իրար հետ խառն էին. առաջինով երկրորդն էր մեկնում, երկրորդով առաջինը: Չեղ օրինակ Խորենացու՝ Հայոց Պարմաթիւնը, Եղնկայ Եղ Սաւորոյը, Դուխթ Անյաղթի Սահմանոց Գիւրը, փիլիսոփայութիւն և քրիստոնէութիւն. Սեբէոսի Պարմաթիւնը միանգամայն աշխարհական և եկեղեցական պատմութիւն է. Անանիա Շիրակացու երկու գլխաւոր գործերն Ասողաբաշխութիւնն ու Ժամանակագրութիւնը. այդ երկուսն էլ իրօք մարդաբանական են, բայց աստուածականով են մեկնուած: Մի պատմիչ ունինք Շապուհ Բագրատունի անունով, որու գործը կորած է, ըստ երեւութին աստուածականին վրայ չխօսելուն և իր պատմութիւն ժողովրդեան խօսած լեզուով գրած լինելուն, որովհետեւ դա՛ աշխարհական դասէն լինել է երեւում: Մի Գրիգոր Մագիստրոս էլ ունինք աշխարհական դասէն՝ երկուսն իրար հետ խառնելով գրող: Իսկ Միթիթար Գօշ, որ իր դարուն մեծ վարդապետն է՝ մի Դարասարմաբիբ ունի՝ աստուածական և քաղաքական օրէնքներն իրար հետ միաբանած: Այդ Գօշ վարդապետ՝ մեծ անուն ունի, բայց իր գործն այնքան մեծ չէ: Իսկ Սմբատ Գունդստապլն էլ, որ մի աշխարհական է՝ Բիւզանդեան Յունաց և Հայոց Մեծոց Ժամանակագրութիւն ունի իր ժամանակուայ իբր թէ գրական լեզուով գրած: Նկատելու մի բան կայ այդ գրական մարդկանց մէջ: Եկեղեցական դասէն եղողները՝ եկեղեցական լեզուով են գրում. իսկ աշխարհական դասէն եղողներն աշխարհական լեզուով:

Թէ որ մեր նախնեաց գրականութեան վրայ դարձնենք մեր հայեացքը, Սրբազան, վերջը շատ ուշ կը դայ և մենք մեր ուղղութենէն դուրս կը գանք: Յունաց թշնամութիւնը գնալով աւելուեց, այն աստիճան՝ որ դրեթէ ամեն դար մի, երկու անգամ Հայոց եկեղեցին կը տեսնենք իր պաշտպանողական գրքին մէջ, Եօթներորդ դարու սկզբում, Յունաց Հերակլ կայսեր բոլոր ջանքն ու փորձը պարտադր գնալուց՝ և մի կաթողիկոս գլխի գլխը լինելուց այդ միաբարութեան փորձին մէջ՝ նոյն դարու վերջերում տեսնում ենք՝ որ Ներսէս Գ. կաթողիկոսն Հայոց՝ բոլոր եպիսկոպոսների և նախարարների և Ռշտունեաց Թէօփոս զօրավարին հետ՝ իրանց

Հաւատոյ Խոստովանութիւնն են զրկում Բիւզանդիոյ կայսեր՝ Կոստանդնու Հերակլեսայ թոռան :

« Հոգիւնկալ Մարգարէիցն եւ յԱռաքելոցն Քրիստոսի ունիմք զպատուէր՝ առնել աղաւթս խնդրուածովք ի վերայ Աստուածասէր թագաւորութեանդ եւ ամենայն իշխանացն՝ եւ զաւրաց , եւ բոլորովն ամենայն Աստուածապաշտ պալատաց , յոր սէրն Աստուծոյ հանգուցեալ է եւ շնորհ աստուածային պարգեւացն յայտնի են ի վերայ ձեր : »

Ներսէս Գ. երկար բարակ քաղաքականութեամբ Հայոց ազգի եւ եկեղեցու պատմութիւնն անելուց յետոյ՝ Սասանեաց իշխանութեան ներքեւ , պատմում է թէ ինչպէս եկեղեցու ազատութիւն ձեռք են բերել Կաւատայ , Խոսրովու թագաւորութեանց ժամանակ եւ Խոսրով ինչպէս՝ հայկական եկեղեցու հաւատը նախապատիւ է համարել Նեստորականաց , Քաղկեդոնականաց վրայ , և այլն , շարունակում է .

« Իսկ զպատճէն ուղիղ խոստովանութեան արքայ Խոսրով հրամայեաց կնքել իւրով մատանեաւն եւ տալ ի դանձն արքունի : »

« Իսկ արդ՝ զի եհան զմեզ Աստուած ի ծառայութենէ խաւարային իշխանութեանն՝ եւ արժանի արար երկնաքաղաքացի թագաւորութեանդ , որչափ եւս առաւել պարտիմք խնդրել ի Քրիստոսէ Աստուծոյ վասն բարեպաշտ եւ աստուածասէր թագաւորութեանդ անշարժ մնալ մինչեւ յաւիտեանն , իբրեւ զաւուրս երկնից ի վերայ երկրի հանդերձ յաղթութեամբ բազմաւ , տիրելով ամենայն տիեզերաց՝ ծովու եւ ցամաքի : . . . »

Եւ յետոյ թէ՛

« Եւ այժմ զնոյն շնորհեսցէ Քրիստոս Աստուած ի ձեռն բարեպաշտութեան քոյ , եւ որ վասն միաբանութեան հաւատոյ խնդիր հրամայեալ էր առնել , եւ զգիր բարեպաշտութեան խոստովանութեան արձակեալ էր առ մեզ անարժան ծառայսս՝ զոր իբրեւ տեսաք՝ երկրպագութիւն մատուցաք , եւ մեծաւ խնդութեամբ փառաւորեսցաք զՔրիստոս եւ աւրհնեցաք զբարերարութիւնն :

« Եւ արդ՝ այսպէս ուստք զհաւատոցն ճշմարտութիւն : Յովհաննէս աւետարանիչն ասէ . « Ի սկզբանէ էր բանն , եւ բանն էր առ Աստուած , եւ Աստուած էր բանն : » Եւ նոյն դարձեալ ի Կաթողիկէին իւրում ասէ . « Որ էրն ի սկզբանէ՝ զորմէ լուաքն՝ որում սկսնատես իսկ եղաք , ընդ որ հայեցաք , եւ ձեռք մեր շաւչափեցին

ի վերայ բանին կենաց : Ահա մարմին եղեւ բանն , եւ կեանքն յայտնեցան , եւ տեսաք , եւ վիայեմք եւ պատմեմք ձեզ զյաւիտեանական կենացն՝ որ էր առ հաւր , եւ երեւեցաւ մեզ » : Եւ նոյն Յովհաննէս ասէ յԱւետարանին՝ թէ « զԱստուած ուրուք չիք տեսեալ » : Եւ Պաղոս ասէ . « Չոր ոչ ոք ետես ի մարդկանէ , եւ ոչ տեսանել կարող է » : Իսկ զիմարդ ասէ « Ականատես իսկ եղաք » . եւ եթէ , « ընդ որ հայեցաք եւ ձեռք մեր շաւչափեցին ի վերայ բանին կենաց » : Եւ եթէ՛ « Որ էրն առ հաւր՝ եւ երեւեցաւ մեզ » : Այն կարի ահագին , որպէս պարտ իսկ է՝ ըստ աստուածութեան . եւ այս կարի խոնարհազոյն եւ մարդասիրաբար՝ ըստ մարդկային բնութեանն : Բայց յայտ իսկ է , զի զմարմնանալն Աստուծոյ պատմէ . որպէս տէրունականն պատմէ բան՝ եթէ , « Որ ետեսն զիս՝ ետես զհայր » : Զի ասաց որպէս զմի , եւ ոչ զմեզ որպէս զերկուսանդ զաստուածութենէն միայն ասէ . « Որ միայն ունի զանմահութիւն բնակեալ ի լոյս ահեղ եւ անմատոց » : Իսկ արդ զմարդկութենէն եւ զԱստուածութենէն զի անտեսանելին ոչ երեւէր , այլ ի տեսանելումն տեսանէին զանտեսանելին . զի ի տեսանելումն հայրենի բնութեանն աստուածային , եւ մայրենի բնութիւնն մարդկային : Զի հայրենի բնութիւնն ի մարդկային բնութիւն միացաւ անխախտելի միութեամբ : Եւ ճնաւ մի տեսակ՝ Աստուած եւ մարդ , որպէս ճրագ Տարսնացին պատմէ . « Մի է , ասէ , Աստուած , եւ մի միջնորդ Աստուծոյ եւ մարդկան » : Իսկ միջնորդն միոյ ուրուք ոչ է , զի յերկոցունցն զմիութիւնն , որպէս յԱրարհամէ եւ ի Սառայէ իսահակ ծնեալ միաբանութեամբ : Այսպէս եւ Քրիստոս ի Հոգւոյն սրբոյ եւ ի Մարիամայ ծնեալ մի բնութիւն՝ անզանդ եւ անջրկաթ միութեամբ . անձառ ըստ Աստուծոյ ի հաւրէ , եւ զի ոչ լուծաւ կուտութիւնն : Արդ՝ մի է Տէր Յիսուս Քրիստոս Աստուած եւ մարդ , կեանք կախեալ զփայտէ առաջի աջաց՝ ըստ նախամարգարէին ձայնի , որոյ վիրաւքն բժշկեցաք ամենեքեան : Այսպէս եւ երանելին Յովհաննէս զմիաւորութիւն պատմէ ի Կաթողիկէին իւրում ասելովն . « Սա է՝ որ եկն ջրով եւ հոգւով եւ արեամբն . Յիսուս Քրիստոս ոչ ջրով միայն՝ այլ արեամբ եւ ջրով . եւ հոգին է՝ որ վիայէ , զի հոգին իսկ է ճշմարտութիւն : Սոքա երեքին են՝ սր վիայեն . հոգին՝ եւ ջուրն՝ եւ արիւնն : Եւ երեքին մի են : Եթէ զմարդկան ինչ զվիայութիւն ունիցիմք՝ ապաքէն Աստուծոյ վիայութիւնն մեծ է՝ զսր վիայեաց ի վերայ որդւոյ իւրոյ » : Եթէ , « Իսկ է որդի իմ սիրելի՝ ընդ որ հաճեցայ , զմա լուսաբուք » : Եւ ոչ բաժանեաց յերկուս բնութիւնս . եւ յերկուս անձինս , եւ յերկուս միտս . այլ դայն եւ դմայն ասելով՝ զմիութիւնն յայտ արարեալ : Որպէս եւ սոյն իսկ Աւետարանիչն յայտնէ ասելովն՝ եթէ , « Հոգին եւ ջուրն եւ արիւնն , եւ երեքին մի են » : Եւ

ի միևսուսն վայրի ասէ. « Եւ արիւնն Յիսուսի որդւոյ նորա սրբէ զմեզ յամենայն մեղաց : » Ահա որդի Աստուծոյ է Յիսուս Քրիստոս, եւ որդի մարդոյ, եւ երկրքինն ի միասին մի բնութիւն. Արդ՝ զի անմարմին եւ անմահ է Աստուածութիւնն, ամենեցուն յայտնի է. բայց այն առաւել զարմացմամբ եւ բարերարութեամբ լի, սքանչելիք եւ յոյժ մարդասիրութեան նշանակ : Զի անմարմինն մարմնանայր, եւ անտեսանելին տեսանիւր, անչաւչափելին շաւղափիւր, անժամանակն սկսանիւր. որդին Աստուծոյ որդի մարդոյ լինէր, եւ զմարդկութիւն իւր խառնէր ի թիւ Աստուածութեանն իւրում : Արդ՝ զխոնարհելն մահու չափ եւ մահու խաչը՝ Առաքեալն Աստուծոյ ասէ՝ եթէ, « Մինչ թշնամիքն էաք, հաշտեցաք ընդ Աստուծոյ մահուամբ որդւոյ նորա » : Եւ դարձեալ ասէ. « Որ յիւր որդին ոչ խնայեաց, այլ վասն մեր ամենեցուն մատնեաց զնա » : Եւ դարձեալ, « Եթէ էր ծանուցեալ ոչ արդեաւք զտէրն փառաց ի խաչ հանէին » : Եւ դարձեալ՝ եթէ, « Աստուած զորդին իւր առաքեաց ի նմանութիւն մարմնոյ մեղաց, եւ վասն մեղաց եւ դատարարեաց զմեզս ի մարմնի անդ » : Զինչ իցէ դատարարեացն, այն է զի խափանեաց զայն՝ որ զիշխանութիւն մահուն ունէր, այսինքն զսատանայ : Իսկ զինչ եւ առ մշակս այգւոյն ասիցէ Տէրն՝ եթէ, « Իբրեւ մերձեցաւ ժամանակ պտղոյն, առաքեաց զժառայս իւր առնուլ զպտուղ նորա եւ կալեալ մշակացն զժառայս նորա՝ զմանս տանչեցին, զմանս քարիոճեցին, զմանս սպանին. յետոյ առաքեաց զորդի իւր՝ ասէ. Թերեւս ամաչեցեն յորդւոյ աստի իմմէ : Իսկ մշակքն իբրեւ տեսին զորդին՝ ասեն. սա է ժառանգն, եկայք սպանցուք զսա, եւ մեր եղիցի ժառանգութիւնն : Եւ հանեալ զնա արտաքոյ այգւոյն սպանին » : Արդ՝ ոչ միայն բանն է որդի մարդոյ, այլ եւ բանն եւ մարմինն. եւ մարմին բանին ի միասին. զի թէպէտ եւ մարդ է մարմինն, այլ եւ Աստուած է : Արդ՝ որք ի սկզբանէ ականատեսք եւ սպասուորք եղեն բանին՝ աշակերտաց իւրոց յայտնապէս ուսուցին : Եւ նոքա դարձեալ իւրեանց աշակերտաց զնոյն աւանդեցին : Եւ դարձեալ զնոյն աւանդութիւն գրով հաստատեցին : Եւ բազումք յառաքելոցն ընկալան զձեռնադրութիւն եպիսկոպոսութեան. որպէս զՅուստիանոս, եւ զԷնանկլիտոս եւ զԿղէմէնոս ի Հռոմ : Եւ զՍնանիաս յԱղեքսանդրիա, եւ զՇմաւոն Կղէովպեանց յերուսաղէմ : Եւ զԻսնէսիոս Արիսպաղացի յԱթէնս : Եւ զմիւս Դիոնէսիոս ի Կորնթոս : Եւ զմիւս Տիմոթէոս յԵփեսոս : Եւ զՏիտոս ի Կրետէս, եւ զՊաղիկարպոս ի Զմիւռնիա Ասիացոց : Եւ զԷւոզիա՝ որ է Պետրոս յԱնտիոք : Եւ Երենիոս Գալիլեացի աշակերտ Պաղիկարպոսի յեկեղեցւոջն Լաւողիկեցոց :

Եւ այլ եւս անթիւ բազմութիւն սքանչելի եպիսկոպոսաց՝ եւ քահանայից՝ եւ հոգեկիր ճարտասանից՝ փիլիսոփայից եւ սքանչելի

մանկանց եկեղեցւոյ, որք զճմարիտ հաւատս եկեղեցւոյ ըստ առաքելական ձայնին գրով գրոջմեցին յիւրաքանչիւր յեկեղեցիս :

Յայտնի ի Նիկիական ժողովոյն է, զի եւ նոքա լիով էին ամենեքին աշակերտք՝ որք յԱռաքելոցն ընկալան՝ եւ ի Նիկիա զնոյն հաստատեցին : Քանզի ասացին զորդւոյ՝ եթէ « Նոյն բնութիւն հար, որով ամենայն ինչ եղեւ յերկինս եւ ի վերայ երկրի, որ յաղագս մեր մարդացաւ՝ եւ յաղագս մերոյ փրկութեան » : Այսպէս եւ Սուրբն Գրիգոր յառաջնոցն ուսեալ՝ մեզ վարդապետեաց՝ եթէ « Որ ի մարմին հաւատացին՝ ծանոց նոցա զԱստուածութիւնն իւր, եւ որք ի մարմնոյն զթեցին՝ ուրացան զբնութիւն նորա : Քանզի մարմնացաւ ի մի բնութիւն, եւ խառնեաց միացոյց զմարդկութիւնս ընդ իւրում Աստուածութեանն՝ զանմահն ընդ մեռելուոցս, զի զամենայն մարդիկ անքակ արասցէ յանմահ Աստուածութենէ իւրմէ » :

Արդ՝ ունիմք մեք հաւատս՝ ոչ ի նորագունից սահմանեալ, այլ որպէս ընկալաք մեք ի սուրբ առաքելոցն ի ձեռն հայրապետին մերոյ Սրբոյն Գրիգորի վարդապետելով զՏրդատ արքայ եւ զիշխանն Հայոց աշխարհին, զոգցես եթէ Լ. զամաւք յառաջ քան զԿոստանդիանոս՝ նաեւ Սուրբն Դեռոնդ մեծ արքեպիսկոպոսն Կեսարու՝ ուր սնեալ եւ ուսեալ էր Սուրբն Գրիգորիոս, որ ձեռնադրեացն իսկ զնա ի քահանայապետութիւն, եւ նա զնոյն հաստատեաց զաւանդութիւն : Երկրորդ անգամ դարձեալ ի Նիկիայն ժողովեցան սուրբ եւ ճմարիտ հարքն հրամանաւ աստուածասէր թագաւորին Կոստանդիանոսի, եւ ի բաց եբարձ զամբարիշտ աղանդոյն մոլեգնութիւնն եւ սերմանեցին հաւատս ճմարիտս ընդ ամենայն տիեզերս : Ուստի եւ մերն հանդիսեալ անդ Սուրբն Ռոստակէս որդի Սրբոյն Գրիգորի՝ որ ընկալաւ զհրամանս հաւատոյ ի սուրբ ժողովոյն եւ ի մեծ թագաւորէն Կոստանդիանոսէ, բերեալ մատոյց առաջի Քրիստոսասէր թագաւորին Տրդատայ՝ եւ սուրբ քահանայապետին Գրիգորի հանդերձ հրամանաւք երջանիկն Կոստանդիանոսի : Կէ ի վերայ այնորիկ հասարակալ կա՛մ, եւ բաւական համարե՛մ զնոյն ի վարդապետութեան ուղիղ հասարոյս քար ասացելուս « Մի ՓՈՓՈՒԵՐ ԶՍԱՀՄԱՆՍ ՀԱՍԱՏՈՅ ԶՈՐ ՀԱՍՏԱՏԵՑԻՆ ՀԱՐՔՆ ՔՈ : »

Որովհետեւ, Սրբազան, երկար կը լինի բանը՝ եթէ ամեն բան մի առ մի գրելու լինինք այս տեղ : Այդ պատճառով՝ է. և Ը. դարերու Հայոց քրիստոնէական վարդապետութեան մի բաւականին ամբողջ դադարիար տալուց յետոյ՝ միայն մի քանի գլուխ ամուսնքներն եմ առաջ բերում այս տեղ Ներսիսի գրած պատասխանէն և անց եմ կենում յաջորդ դարերու վարդապետութեանց : Մի փոքր յետոյ ասում են Հայք :

Եւ եւս հաստատեցին առ մեզ զհաւատոցն զճշմարտութիւնն, զոր հիմնադրեաց մեզ Սուրբ հոգին: Չայլ ժողովան ուրեք ուրեք լեալ մեք ոչ գիտեմք. եւ մեք այսպէս համարեմք՝ եթէ այդ Աստուածասէր՝ պալատանդ յերանելոյն կոստանդիանոսէ՝ եւ ի ժողովոյն Նիկիոյ ունի զհաւատոցդ հիմնադրութիւն: Եւ «մենայն որ աւելի Կան զայն անի, թէ երբեք հրեշտակ եղի՝ չափեալ եղեցի:

«Արդ՝ ամենայն վարդապետք Եկեղեցւոյ՝ որք փրկիտոփայական արուեստիւ գերազանցեալք եւ աստուածային տեսութեանն հասու լեալ՝ ճշմարիտ հիմնադրութիւն ընկալեալ ի սուրբ Առաքելոցն՝ այսի ի ձէնջ աւետարանեցին ընդ ամենայն փեղերս »:

Յետոյ նոյն Նիկիոյ ժողովական հարցմէ մի քանի երեւելիքն յիշելուց յետոյ՝ առաջ է բերում բուն Նիկիական հանգանակն Գրիգոր Լուսաւորչի յաւելուածն էլ դնելով ու վերջացնում է իր խօսքը:

Ինչպէս որ տեսնում եք, Սրբազան, որքան Հայք մարդավարի կամ քրիստոնէավարի լեզուով են յառաջ բերում իրանց հաւատոյ խոստովանութիւնը, այնքան Բիւզանդիոնի կայսերք՝ մանաւանդ այդ մոլի կոստանդին վայրենավարի է վարում նրանց հետ: Երբ խօսքով ու գրով իր նպատակին չհասնում, անհամար զօրքով վեր է կենում գալիս Հայոց աշխարհում խոպառ ջնջելու Անտիքաղիկոնիկներին. Նոյնպէս Խալիֆէք էլ են արշաւում այդ երկրում իրանց Իսլամութիւն տարածելու համար: Այդպէս, Արաբները մի կողմէն հաստատում են մեր երկրում, գերում են ու գերփում մեր գեղանի և կարեւր երիտասարդ նախարարներին, սիրուն ու կայտառ աղջկանցը. իսկ Յոյնք՝ միւս կողմէն՝ բիւր բիւրով Հայոց սպանելուց յետոյ՝ մի այնքան էլ բունի իրանց հայրենի երկրէն հանելով դէպ ի թրակիւս են գաղթեցնում հառոմացիներու. բայց ոչ Արաբներն են օգուտ քաղում այդ իրանց վարմունքէն և ոչ Բիւզանդացիք: Քառօրդ դար անց է կենում թէ չէ՝ մեր Հայոց աշխարհ իր կորուսածներն տեղ կրկնապատիկն է յառաջ բերում. մինչդեռ միւսները նուազելով են նուազում հեռոջհեռէ և հէնց այդ վարդապետն էլ հրաւիրում է նորէն միուն, կամ միւսին աչքածակութիւնը: Յոյնն ասում է Հայուն՝ «արի՛ Քաղկե-

դոնիկ դարձիր » . երբ նա չէ ընդունում այդ հրաւերը, հեռեւանքն իրան համար կոտորած և հալածանք է լինում. դիմում է այն ժամանակ Հայը Իսլամին. Նա էլ, արի՛ ասում է նրան, Իսլամ եղիր եւ հեռացիր Յոյնէն: Հայն Իսլամին հրաւերն էլ է մերժում, ու մնում է երկու սրին մէջ անդ:

Այս է, Սրբազան, զբեթէ Գ. դարէն սկսած մինչեւ մեր ասլրած դարը՝ Հայոց աշխարհի և Հայոց ազգի պատմութեան մէջ ակրող ամենամեծ հանգամանքը. Զրադաշտականաց յաջորդեցին Մահմէտականք. Բուզանդականաց յաջորդեցին Հռովմէականք: Վեր կացան, զարկին զարնուեցան մեր աշխարհի հետ. քար ու քանդ արին թէ մինը և թէ միւսը, մեր գեղեցիկ քաղաքները, կերտերը, աւերեցին, փճացուցին մեր շէն շէն գիւղերն ու հիւղերը. բայց իրանք էլ փշրուեցան, հող մոխիր եղան և Հայոց աշխարհ՝ մնաց նորէն Հայոց աշխարհ, նոյնպէս և Հայոց ազգը՝ Հայոց ազգ: Իրաւ է, այդ ազգը աշխարհիս չորս ծագերում տիւուեց, և ցար ու ցրիւ եղաւ: Բայց, Սրբազան, լաւ գիտենա՛ք, որ եթէ Հայոց աշխարհ, այս եօթ, ութ դարուց աւելի է, հետ զհետէ տարէնը երբեմն չորս և հինգ անգամ, այդ իր ծոցէն դուրս գաղթողներին քամակէն կրկին կրկին գաղթականներ հասցնում չլինէր, այսօր՝ ոչ Եւրոպայում, ոչ Փոքր Ասիայում և ոչ էլ Ռուսաց աշխարհում մի Հայ օք մին չէր մնալու: Այո՛, Սրբազան, չնայելով այդ անընդհատ դէս ու դէն չուելուն Հայոց աշխարհեցոյ խաղաղ կեանք գանելու համար, այսօր թէ՛ Ռուսիոյ Հայաստանում և թէ՛ Օսմանեան Հայաստանում Հայք են բազմութիւ Քրդին, Թրքին և այլ անանուն ազգաց և ազանց վրայ, և քաղաքները՝ Հայ քաղաքացիներով են շահաստան, գիւղերը՝ Հայ գեղացիներով շէն, և տրտերն ու դաշտերն էլ, այո՛, Հայ երկրագործներու քրտինքով են մշակուած ու ծաղկած: Այդպէս տեսայ ես, Սրբազան, Մեծ ու Փոքր Հայաստան, Ռուս և Թուրք Հայաստանները, քանի անգամ որ գնացի: Ներեցէք որ մեր երկրի այդ մարդաբոլորական յատկութեան մասին իր կարգին խօսիմ: Իսկ հիմա յետ դառնանք դէպի ութերորդ

դար: Այդ դարում, որ մի քիչ շունչ առնել սկսան Հայք Պաղտատու Խաչիֆաների կողմէն, վանդի սկսան ակարանալ, Բիւզանդիանի կայսերաց կողմէն, վանդի մի քանի ուսումնասէր կայսերք յաջորդեցին մոլեկրօն կայսերաց վրայ: Բայց այդ բանն ամենեւին պատճառ չեղաւ, որ նոյն դարու կիսերում Կոստանդնուպօլսոյ պատրիարքը Փոստ՝ որ իր դարուն ամենագիտուն մարդն էր, Յունական Հայաստանում քաղկեդոնիկութիւն քարոզէ ոչ. այն ժամանակուայ կաթողիկոսն Զաքարիա՝ Փոստու գէմ է դրում, նորէն Հայոց հաւատոյ խոստովանութիւն նրա առաջ բերելով՝ նորէն ժողով ժողովի վրայ սարքելով՝ ոչինչ օգուտ յառաջ չէ դալի, նրա համար՝ որ, Փոստու կամ Բիւզանդիանի կայսերաց հասկացածը՝ քրիստոնէութիւն չէր, այլ միութիւն Կոստանդինու քրիստոնէութեան մէջ և միապետն էլ այդ միութեան՝ ինքը կայսրը և իրան հետ պատրիարքը Պօլսոյ: Հէնց այս է նոյն Փոստու հաւատոյ կռիւները՝ այն ժամանակուայ Պապ Նիկողայոս առաջնոյն հետ, որոնք բարձի և պատուոյ՝ այսինքն տիեզերական պատրիարքութեան խնդրին, հաւատոյ ինդրի կերպարանք տալով՝ մինը միւսին հերձուած համարեց ու վերջապէս իրարմէ բաժանուեցան: Արի՛, եթէ կարող ես, Սրբազան, խելք հասցու: Փոստ՝ արեւմտեան պատրիարքէն կը բաժնուի և նրան իրմէ կը բաժնէ. Արեւելեան պատրիարքը, մի ընդարձակ աշխարհի կաթողիկոսը կուզէ իրան հետ միացնէ: Այդ ինչ հանդի հաւատոյ միութիւն է՝ իմ խելքի բան չէ հասկանալը, թողնենք Օրթոտօքս և Քաթօլիք Աստուածաբաններին, հասկանալու մենք դառնանք տաներորդ դարու Հայաստանեայց եկեղեցու վարդապետութիւնը առաջ բերելու: Այդ դարու կիսում, Սրբազան, նորէն Խաչիկ Կաթողիկոսն վահանը ձեռին է առնում Անանիա Սանահնեցու գրչով՝ պաշտպանելու մեր եկեղեցին և մեր վարդապետութիւնը Քաղկեդոնիկներու գէմ: Այդ պատասխանագրէն կաժէ, Սրբազան, մի քանի հատուած ձեր առաջը բերեմ. վանդի այդ պատասխանագիրը Սեւաստու Յոյն մետրապօլիտին գրուած լինելով՝ շատ ազատօրէն համարձակութեամբ խօսած է Անանիա Սա-

նահնեցին: Եթէ կամք է ձեզ, կարող էք ամբողջն Ստ. Ասողկայ պատմութեան մէջ ուսումնասիրել: Երես 190-235:

« . . . . . վանս այսորիկ եւ մեք ոչ թշնամութեան բանս հակառակ թշնամանաց ձերոց գրեմք. զի ոչ մեք եւ ոչ եկեղեցիքն Աստուծոյ ունիմք այնպիսի սովորութիւն, որպէս ասէ Պօղոս երանելին. Արք՝ քանզի ի սկիզբն թղթոյս ձերոյ եւ զինի բազում անգամ եռետիկոս զմեզ յեղանակեալ էիք, եւ իսկ եւ իսկ երկուց բնութեանց զանազանութիւնս, զինի սրոյ երկու կամս եւ երկու ներդործութիւնս խոստովանեալ էիք Քրիստոսի. եւ որ սարսափելին է՝ քարոզութեամբ Առաքելոց եւ առաջին վարդապետաց ասացեալ, իբրեւ ողնձոյ շուրջ եղեալ զխաբէութիւն արծաթոյ, յայտ արարէք ի նոցանց առաքելոցն քարոզութենէ եւ յաւետարանչացն յաւետարանութենէ եւ ի հարցն վարդապետութենէ մարմնացեալ Բանին երկու բնութիւնս եւ երկու կամս. եւ հնազանդիմք իբրեւ ուղիղ բանի. ապա թէ պաճուճանս միայն զնէք զանուանս նոցա զօրէն բամկի թագաւոր կերպարանեալ, զի մի ասացից առիւծենեան կերպարանեալ զկենդանին զայն, կամ զարծուօջն զանց արարեալ զձային առասպել առ այլոց հաւուցն գեղեցիկութեամբ. ոչ ապաքէն խաբէութիւն է առ տգէտս ով խմաստուեդ յայտսիկ:

« Արք՝ թէպէտ եւ յոլորտս հիւսիսական աշխարհիս բնակեալ եմք, ուր սոռնասառոյց ցրտութեան օգոցն շնչմուք եւ ըստ մասին սառուցեալ յառաջագոյն անդիտութեան խաւարաւն ոգւոց մերոց՝ անճաճանչ ի ծագմանէ աւետարանական լուսոյն մնացաք հարուստ ամս եւ ժամանակս: Սակայն յորժամ այց արար մեզ ի բարձանց արեգակն արդարութեան ի ձեռն քաջաձայն առաքելութեան եւ չարչարանաց ամենեղանկին Գրիգորի՝ Լուսաւորչին սրբոյ եւ խոստովանողին Քրիստոսի, որ աստուածասաստ հարուածովք եւ աստուածահրաշ սքանչելեօք դարձոյց յանդիտութենէ յաստուածգիտութիւն զազգս եւ զթագաւորութիւնս Հայաստանեայց: Յորմէ ուսաք զերրորդութիւնն սուրբ խոստովանիլ եւանձնեան դիմօք եւ մի զօրութեամբ եւ փառօք եւ աստուածութեամբ երկրօղագեալ համագոյտիան Հօր զմրդին եւ զՀոգին սուրբ. խոստովանեալ եւ զնոյն մինն յերրորդութենէն Միածին Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, որ է պստիկեր աներեւութին Աստուծոյ, լոյս փառաց եւ նկարագիր էութեան Հօր, իջեալ յորովայն կուսին Մարիամու կամօք Հօր եւ հովանաւորութեամբ սուրբ Հոգւոյն չըջաստեղծեաց ինքեան մարմին միաւորութեամբ Աստուածութեան՝ ծնեալ ի կուսէն աստուածախառն մարմնով, յառաջ եկեալ անճառարար եւ առանց աղտոյ ի փրկութիւն մեզ եւ ամենեցուն որք կարդան զա-

նուն նորա : Զոր եւ սուրբ Սիւնհոգոսն նիկիոյ , որ ի ձեռն կոտանողիանոսի՝ 528 հարանցն սակս Արիոսի չարախառութեան ժողովեալք , ընդ որս եւ մերն Ռատակէս՝ որդի Սրբոյն Գրիգորի, զնոյն ասացեալ եւ քարոզեալ ծագաց անեղերաց, նոցին դաւանութեան ձայնակցեալ : Եւ երկրորդ ժողով 150 հարցն որ ի կոտանդնուարիս, ի ձեռն բարեպաշտ թագաւորին Թէոփոսի, ընդդէմ Մակեդոնի՝ հոգեմարտ հայհոյչին , ընդ որս եւ սուրբ հայրապետն Հայոց Ներսէս : Սոցա սակի եւ միաբարբառ է եւ երրորդ ժողովն յԵփեսոս 200 հարանց , ի ձեռն Թէոփոսի փոքուն՝ բարեյաղթ թագաւորի ժողովեալ ի յանդիմանութիւն եւ յեղծումն մարդադաւան աղանդիցն Նեստորի. ընդ որս միաբանեաց թղթովք եւ սուրբն Իսահակ՝ հայրապետն Հայոց, եւ Մեսրոբ՝ երանելի վարդապետն մեր : Ի սոցանէ ուսեալք՝ զսոցայն խոստովանիմք հաւատ, յոր դաւանեալքն եւ ուսաք եւ մկրտեցաք . եւ սրահեմք զգեղեցիկ աւանդութիւն հայրենատուր ժառանգութեանց, եւ իբրեւ զդոյն ի մարմնի անշրջելի մնայ ի սիրտս եւ յոգիս մեր : Այլ զի մի երկայնագոյն բանիւ ցնդեացուք, իբրեւ զՅուրս ընդ դաշտս տարածեալ, եւ ոչ պնդեալ խողովակաւ, հարցանեմք իբրեւ ընդ աշակերտս Առաքելոցն եւ սուրբ Հարանցն ուր արդեօք ի սոցանէ զրեցաւ կամ քարոզեցաւ բաժանեալ բնութեամբ եւ բաժանեալ կամօք Քրիստոս . զիւրդ ասէք բաժանեալ բնութիւն աստուածախառն մարմնոյն որ ոչ ի սերմանէ, այլ ի սրբոյ Հոգւոյն նիւթեցաւ եւ ի բարձանցն ծագմանէն . . . . .

« Եւ յորժամ զսահման սիրոյն Աստուծոյ առ աշխարհս յայտնէ աստուածաբան Աւետարանին, ոչ սպաքէն ասէ թէ՛ զՄիածինն եւ, եւ ուր արդեօք եւ՝ եթէ ոչ ի խաչն եւ ի մահ, արդ բաժանեալ զՄիածինն, թէ՛ ո՞ր արդեօք բնութիւն էր, ո՞վ քաջ՝ որ տուաւ ի Հօրէ : Զոր բացախայլ լուսաւորութեամբ նոյն ինքն Աւետարանին վասն անբաժանելի եւ անձառ միաւորութեան՝ երբևմն զմարդկութիւնն աստուածութիւն անուանէ, եւ երբևմն զաստուածութիւնն մարդ եւ որդի մարդոյ կոչէ. քանզի՝ յերկինս ասէ, « ոչ ոք եւ, եթէ ոչ որ էջն յերկնից Որդի մարդոյ որ էն յերկինս : » Եւ յորժամ զայս Տէրն ասաց՝ ոչ յերկինս էր մարմնով եւ ոչ կանխաւ յերկնէ իջեալ մարմին, որպէս Եւաիքեայ թուեցաւ . այլ զաստուածութիւն կոչեաց որդի մարդոյ : « Եւ տեսանիցէք զորդի մարդոյ զի ելանիցէ ուր էր զառաջինն » : Եւ զիւրդ նախ քան զմարդանալն զորդին մարդոյ յերկինս ասիցէ : Բաժանեալ աստանօր զբնութիւնն ո՞վ նոր աւետարանիչք՝ ոչ սպաքէն նոյն ինքն Միածինն ի Հօրէ եւ կուսածինն ի մօրէ անորոշաբար ասաց եթէ « Խնրէք զիս սպանանել՝ մարդ որ զճմարտութիւն ընդ ձեզ խօսեցայ, զոր

ուսայ ի Հօրէ խնէ » : Եւ յորժամ ինքն զաստուածութենէ իւրով հարցանէր՝ զորդոյ մարդոյ զինչ ասէք, եւ յայտ ասնէ խոստովանութեամբ սրաստիսանին Պետրոսի . զի որդի Աստուծոյ դաւանեաց . եւ մեկնէ բերան ոսկի Յովհանն, եթէ զաստուածութիւն կոչէ որդի մարդոյ, եւ զվերագոյն գրեալադ ի վկայութիւն բերէ, եթէ սրպէս բազում անգամ ասէ զաստուածութիւն որդի մարդոյ : Զայսքան բազմապատիկ եւ հզօրագոյն բացերեւութեամբ զսորհուրդ միաւորութեան մարմնացելոյ Բանին Աստուծոյ թողեալ յերկուս պատառէք զմիաւորութեան պատմունձանն զանազանեալ բնութեամբ եւ կամօք, զոր ոչ գրեցին եւ ոչ քարոզեցին Առաքեալքն : Որով բնութեամբ ըստ մարմնոյ զՔրիստոսն Պօղոս Աստուած ի վերայ ամենայնի ասէ . կամ ո՞ր կերպարանի եւ բնութեան ամենայն ծունր կրկնի, մարմնոյն եթէ աստուածութեանն . բաժանեալ երկու բնութեան եւ երկուս երկրպագութիւնս, քանզի ոչ իլինէք ասել երկուս երկրպագութիւնս . թէպէտ եւ յոյժ էք բաժանասէրք, եւ եթէ ասէք զմի եւ նոյն զերկրպագութեանն, զերկրպագութիւնն բաժանէք, եւ օտար ոմն աստուած ի ներս անէք . այլ որպէս մի երկրպագութիւն խոստովանիք, հարկ է ձեզ եւ ակամայ, թէպէտ եւ ոչ կամիք, միութիւն խոստովանիլ տնօրինեցելոյն . . . . .

Արդ՝ զայս կնքէ Մեծն Կիւրեղ յեօթներորդ զլուս երկոտասան զլսոցն . « Եթէ ոք ոչ, ասէ, միով երկրպագութեամբ եւ փառաւորութեամբ պատուեսցէ զԷմանուէլն, նզովեալ եղիցի » : Բարձրացուցանել ասէ Պօղոս եւ անուն շնորհել զեր ի վերոյ քան զամենայն անուն մարմնոյ . եւ զինչ իցէ գեր ի վերոյ անուն, եթէ ոչ Աստուած : Եւ զիւրդ ոք յանդգնի անել երկուս Աստուածս . քանզի Բանն եւ յառաջ իսկ ունէր զաստուածութեան անունն . եւ զի զինի անձառ միաւորութեան եւ խառնելոյ զանխառնելի բնութիւնն եւ զտուեալ մարմին աստուածացոյց եւ եղեւ ըստ բնութեան առողին եւ ըստ զօրութեան, որպէս Գրիգոր աստուածաբանն ասէ եւ դարձեալ յայլում ձառի եթէ « զաստուածային սրտակերն ընդ մարդկոյն կերպարանն խառնեաց, եւ ծանեաւ տունն Իսրայելի թէ՛ Տէր եւ Օծեալ զնա Աստուած արար, զոր մեկնեալ նոյն ինքն Աստուածաբանն, յոր դուքն սարժիք, ի մերն սարժանք, եթէ Օծեալ եւ Քրիստոս կոչեցաւ, ոչ զօրութեամբ ըստ սլոց օծելոց, այլ մերձաւորութեամբ բովանդակ օծողին, որոյ գործ էր մարդոյն լինել օծեալ եւ աւնել աստուած զօծեալն » : Բաժանեալ արդ զօծեալք անուն յերկուս բնութիւնս, եւ ցոյց զմիջոց երկուց Աստուծոց ըստ երկու բնութեանց . եւ զի ոչ կարես սրտա է քեզ խոստովանիլ մի Տէր, մի Քրիստոս, մի Աստուած, մի բնութիւն . . . . .

Այդպէս, Սրբազան, ինչպէս տեսնում էք, Անանիա Սանահնեցին Հայոց Երրորդութեան մասին ընդունած վարդապետութիւնը, բարձր նախնական եկեղեցու Հարց դրուածոց մէջէն, այսինքն, Գրիգոր Աստուածաբանին, Աթանասին, Կիւրղին, Ակակին, Բարսեղին, Պրակլին, Եպիփանին, Ոնորիոսին, Գրիգոր Նիւսացուն, Թէոփիլոս Աղեքսանդրացուն, Պօղոսի աշակերտ Դիոնէսիոսին, Յովհաննու Ոսկեբերանին, Հռովմայ եպիսկոպոս Յուլիոսին, Էրինոսին՝ մի շատ օրինակներ բերելով՝ հաստատելուց յետոյ, ասում է.

« Այսքերք բաւականապէս, ի նանիր գայթակղելոցն ի մեզ լուծցին կարծիք՝ զմի բնութիւն էւախքեան ասելով, զորս նշովմք, եւ օտար վարկանիմք յԱստուծոյ եւ ընդհանրական եկեղեցոյ. եւ լուր լիցի խոստովանութիւն հաւատոյս մերոյ ամենեցուն, որք կամին ուղիղ լել : Այլ զինչ պէտք այնոցիկ ամենեցուն ընդդիմադրութեանց. եթէ ոչ չեղեալ էիք յաւելլող խնդիրս եւ յընդունայն վիճաբանութիւնս : Քանզի լուրջալ զհասարակն եւ զբժանաւորութեան զբոլորեան հասարոյն՝ քանզի եւ քանութեան ճարտեցիք զյեզ եւ ընդունայն արարէի զեւան Քրիստոսի. քանզի հասարտ, յայժմս ժամանակն՝ քրոսն քանզի է, ասէ. զքր ասացն : .....

Զինչ պէտք են խնդրել եւ բանակել լինել. հաւատաւն է օդտակար եւ պաշտելն եւ երկիրպագանելն լուրթեամբ : Գիտեմ զնա Աստուած ճշմարտապէս յերկնից. զիտեմ զնա Որդի Դաւթի ըստ մարմնոյ՝ մարդ յաշխարհէ չարչարելի : Եւ ոչ խնդրեմ եթէ զխորդ անչարչարելի եւ զխորդ չարչարելի եւ զխորդ Աստուած մարդ. մի գուցէ զզխորդն յուզելով եւ զեղանակն խնդրելով՝ անկայց ի բարութեանցն որ առաջի կայ մեզ. քանզի միայն հաւատաւն պարտ է եւ ի վերուստ հայցել եւ ոչ ի մարմնոց եւ յարեանէ :

Խնդրեմ՝ ուշ գրէք, Սրբազան, մեր նախնեաց այդ վսեմ հաւատոյն :

.....

« Այլ զի զԴիոնիսիոս եւ զՊետրոս թշնամանս զնէք՝ իբր նոցա աշակերտս գու զմեզ : Եւ երբ արդեօք բանիւք նոցա մարտ եղաք ընդ ձեզ եւ ընդ ժողովն Քաղկեդոնի եւ ընդ տունարն Լեւոնի. յորոց ոչ երբէք զիր ընկալաք հաւատոյ, այլ միայն թէ ոչ հաւանեցան ժողովոյն որ ի Քաղկեդոն, որպէս եւ այլ աշխարհք, քա-

ղաքք եւ աղքք բազումք : Մեր ոչ միայն զի նոքք եւ ի ձեռն նոցա բան դնեմք ընդդէմ բաժանողացոյ, այլ եւ ոչ ազգական եւ սեռն ընտանի եւ ուսուցիչ վարդապետք մերովք. այլ որպէս ընդ Հրէայն ոչ աւետարանական եւ առաքելական վարդապետութեամբք վիճեմք. այլ ի նոցունց մարգարէիցն հաւանեցուցանեմք, սոյնպէս եւ ընդ ձեզ ի վարդապետաց ձերոց եւ որ յաշխարհ ձեր պայծառացան, բանազիր լինիմք յողնազան եւ բազմապատիկ պիտաութեամբք. զի առաւել երեւելի եւ նշանաւոր յաղթութիւնն լիցի ամենայն հերձուածողաց եւ պիղծ սղանդիցն :

Երբեմն գրելոցն անհմտութեամբ, եւ երբեմն յաշաղանօք թիւրերով զճշմարտութիւն կամ բռնադատելով՝ ոչ պակասեաց պատճառ առնուլ ի դրոց սրբոց եւ հաւատարիմ առնել զչարն կերպարանօք բարոյ տգիտաց եւ պարզամտաց : Որով եւ դուք մանաւանդ սեղանակապուտք եղեալ գրոյն, եւ դողացեալք զմիտս գրելոյն եւ բարեան վարեցեալ առ չարն, եւ զխախազումս մարդկան գողանայք զանազան օրինակօք, երբեմն բազմութեամբ սահմանէք զհաւատ, եւ երբեմն մեծութեամբ այնքան, մինչ զի Աստուծոյ ձայն ձեզ առնել՝ իմ է ոսկի եւ իմ է արծաթ, որ հեռի է յիսկզբանէ հաւատոյն եւ ի գալստեանէ Փրկչին. զի մայր տառապելապետ (սեղծ ու աղքատ որբեւարի) եւ աշակերտս տգէտս եւ աղքատս եւ նուազունս թուով. զի գէսն իմն խափանեցիք. որպէս զի մի պարծեցի տմենայն մարմին առաջի Աստուծոյ : Եւ եթէ բազմութեամբ կամ մեծութեամբ հաւատ սահմանի, խուժքն Պարսից եւ դուժքն Տաճկաց, եւ եւս անդր՝ որք ի ծայր եզերաց տիեզերաց բազումք եւ փարթեամբ են քան զձեզ. (անշուշտ ձեռնաց եւ Հնդկաց համար է խօսում). այլ հեռի է այս յայնմանէ : Թէ՛ « Մի երկնչիր հօտ փոքրիկ » : Եւ « Երանի աղքատաց հոգեով » : Որովք այդքերիկ հաւատարիմ լինիցին մեզ : Զտէրունեան եւ աստուածախառն մարմին եւ զաստուածացեալ ծառայական եւ արարածական բնութիւն օտարացուցանէք ի Բանէն, եւ զքանդակեալն կամ զգրեալ պատկերն ի նիւթս ոմանս պաշտէք աստուածարեւար այնքան բազմութեամբ եւ պաշտօնասիրութեամբ, մինչ զի եւ յանձանօթս եւ որք ոչ են մեզ յանուն եկեալ, ձգիք, զի իւրաքանչիւրօք առանձինն է քուրմ եւ տօն. եւ յաճախագոյն ընդ նիւթ գալով տգիտաց՝ ոչ է զգուշագոյն : Եւ յայտ առնէ Աստուածաբանն յաստուածաբանութեան ձառին : « Են ոմանք, ասէ, որք պատկեր սիրելեացն արարին, եւ որք զինի եկին՝ անգիտացան զպատճառն եւ սովորութիւն կալեալ՝ զԱստուած պաշտեցին », վասն որոյ խրատէ օրինօքն զԻսրայէլ թէ՛ մի արասցես նմանութիւն ինչ եւ պատկեր. եւ յերկրորդ օրէնսն խրատէ թէ՛ յորժամ երեւեցաւ Աստուած՝ նմանութիւն ինչ ոչ տեսաք. եւ զհրեշտակաց լինելութենէ ինչ ոչ

ճառեաց վասն նորին պատճառի: Եւ հրեշտակք որդի եւ պատկեր Աստուծոյ ոչ կոչեցան իբրեւ զմարդ յաղագս սորին խորհրդոց: զի մի բազում պաշտամանցն մուրումով լինիցի ի մարդիկ: Իսկ եթէ ի Պեննատայ քաղաքի, ի խառնուրդս Յար եւ Գան աղբերացն Յորդանանու զարդարեալ պատկեր Փրկչին ի տեսատեսս կնոջն յիշեցես: Եւ այն, որ պատմեաց զպատմութիւնն զայն, Եւսերի յեկեղեցական շարածին ասէ. « Եթէ չեն ինչ զարմանք, զի հեթանոսաբարոյ մարդիկ ըստ հեթանոսական սովորութեան արարին զայն »: Եւ եթէ ասիցես զանձեռագործ պատկերն, զոր Փրկչին Արդարու շնորհեաց: Ահա ոչ մարթ է ձեռագործ անձեռագործի օրինակ առնուլ, որպէս եւ ոչ փոխանակ անեղին Աստուծոյ եղական Աստուած: Այլ փառաւորեմք եւ երկրպագեմք զանեղն Աստուած եւ զանձեռագործ պատկեր Փրկչին: Եւ զի հեղինակ զրեալ էիք, եթէ զխաչն կնքէք եւ երկիրպագանէք: Եւ վասնզի Քրիստոս մկրտեցաւ, մի երկիրպագանէք, որով զմեզ սրբեաց եւ զՆորան մկրտեաց եւ զխոյան՝ յորում բեւեռեցաւ, ջրով եւ արեամբ ի կողէն հոսեցելով: Վասն որոյ եւ մեք, ըստ այնմ օրինակի, ջրով եւ զինուով մկրտիմք ի խորհրդական օրինակէն ուսեալք, որով սրբազնագործի հանդերձ աղօթիւք եւ ընթերցմամբ առաքելականաց եւ աւետարանականաց գրոց: Որովհետեւ ոչ համարիք սրբութիւն, ընդէր եւ դուք մկրտիք կամ ընկղմիք: Ընդէր եւ զխորհրդեան բաժակն ձեր մկրտէք ջրով կամ ապականէք. եթէ մկրտութիւնդ ոչ է սրբութիւն, ընդէր վարիցէք ընդ անօթս խաչին, զոր դրօշմէք, որպէս եւ առնէք իսկ. եւ յորժամ զերախայան ձեր քրիստոնեայս կամիք առնել փոխանակ ջրոյն մկրտելոյ նոյնպէս առնիցէք: զի ասացից ինչ եւ ծաղրականս այլ եւ ամօթալիս, ընդէր եւ զխորհրդական բաժակն ձեր մկրտէք ջրով, զորէն կրպակաւորացն խաբէութեամբ ժանտացուցանելով զանապական եւ զբռն զսրբախացուցիչն սրտից մարդկան: . . . . .

Եւ զինչ ասէք վասն խորհրդական բաժակին, զոր յաւետարանն զրեալ է, բաժակ օրհնել եւ տալ աշակերտացն. եւ ջրոյ ինչ յիշատակ ոչ գոյ. եւ ի բերոյ որթոյ ասաց ըմպել. զի որթն գինի բերէ եւ ոչ ջուր: Զոր Յովհանն ի նոյն բանի մեկնութեան հերձուածողս ասէ զայնտիկ, որ զՆորն ի սուրբ խորհուրդն ի կիր արկանեն: Բայց թէ զի ի կողէն կենաց ջուր եւ արիւն կոյտակացեալ, կիրակի ի կոչումն ընծայութեան գիրան զՆորն ի մկրտութեան խորհուրդն մեկնէ եւ զարիւնն սակս վկայիցն ըստ վկայութեան Քրիստոսի: Հարցանեմ զարձեալ իցէ այլ ինչ մեծագոյն, որ փոքրագոյն թուեցաւ յաչս ձեր զքահանայութիւնն, որ բարձր է պատուով ըստ նմանութեան քահանայապետին Քրիստոսի, զինքդ համարձա-

կեցայք կանանց տալ, եւ զինչ ասեմ կանանց, զի այն ստեղծուած Աստուծոյ է. այլ չըկանանց զոր դուք ստեղծիք իբրեւ զիշակէս (չեղբ) արտաքոյ սահմանաց եւ ստեղծուածոց Աստուծոյ. զորոց Մարգարէն ասէ. եթէ՝ « զձեռին գործի արկեր ի վերայ նորա՝ պղծեալ է. եւ կանոնական սահման արտաքոյ եկեղեցւոյ հրամայէ առնել զոյնպիսիսն ընդ այնպիսիսն համարեալ: Եւ բերանն Ոսկի Յովհանն՝ ի մեկնութեան Մատթէոսի Աւետարանին, յայնմ բանի որ ասէ, եթէ՝ « Են ներքինիք, որք զանձինս իւրեանց արարին ներքինիս »: Եւ ի Գաղատացւոց թղթին մեկնութեան բանին « Երանի թէ մօտակառուր իսկ լինէին »: Յորժամ սաստկութեամբ այսպանէ զնոսա, եւ զարմանայ եթէ՝ մատի այնպիսի անօրէն օրէնք եմուտ յազգս Հռոմայեցւոց, եւ այն զի ոչ ի մասին քահանայութեան էին յայնժամ, այլ ի զինուորաց եւ յաշխարհականաց կարգի: Արդէն ձեզն տուք զիրան: Սրժան է զայնպիսիսն ի գլուխ եկեղեցւոյ եւ բաշխիչ շնորհաց կացուցանել: Աւաղ զընդունող շնորհաց անշնորհութեանն, որք տգիտաբար եւ սովորութեամբ մուրին: Ահձ է յեկեղեցւոյ օրէնքն խոստովանութեան անքան, մինչ զի հաւատար է աղբերն մկրտութեան ապաշաւանք արտասուօք լեալ, զոր ի կաթողիկէական թուղթոն ասէ, թէ օրէնք եկեղեցւոյ ուսուցանեն մեզ « Խոստովան լերուք միմեանց զմեզս, եւ աղօթս արարէք ի վերայ միմեանց, որպէս զի բժշկեալիք »: « Եւ ասա դու նախ զանօրէնութիւնս քո, զի արդարացիս » եւ « Ասացի ինձէն պատմել զմեզս իմ, եւ դու թողցես զանօրէնութիւնս իմ »: « Զինքդ զայստօսիկ ազատստ արարեր, եւ այլ օրէնս անօրէնութեան եղբր ազգիդ քո ոչ յայտնել զյանցանս քահանային, եւ անխոր մատչել ի մարմին եւ յարիւն Տեառն, զոր Պօղոս բարձրաձայն աղաղակէ՝ « Փորձեցի մարդ զանձն իւր եւ ապա ի հացէ անտի կերիցէ եւ ի բաժակէն արցէ »: որ է խոստովանութեամբ քննութիւն քահանային զպատշաճն իւրաքանչիւր ումեք որոշել զտեղին: Իսկ զինչ վասն վարսաւոր գիտուցդ ասիցէք, զոր իբրեւ սահման քրիստոնէութեան զայդոսիկ ունիք. տեսէք զգրեալսն Պօղոսի ի թղթին Կորնթացւոց զի ասէ. « Այր եթէ գիտաւոր է՝ անարգանք են նմա »: Եւ Յովհանն ի նոյն բանի մեկնութեան ասէ. եթէ զձածկելն յայնժամ արգելու, յորժամ աղօթիցէ. իսկ վարս ունել միշտ հրաժարեցոյց, եւ այս բազումս հրաժարելիս ասէ: Բայց ձեզ չէ ինչ փոյթ զգրեցն, զի ոչ փոյն դուք յանցանէք, այլ եւ զոչ յանցուցեալսն Սարակինոս անուանէք վասն ոչ զգէսս ունելոյ: . . . . .

Անանիա Սանահնեցին վերջն ու վերջն այսպէս է խօսում Սեւաստու Մեարապոլիտին:

«Արդ դու խոստովանեսցիս մի եւ անբաժանելի բնութեամբ զեկեալն եւ զգալոցն յանուն Տեառն, եւ զերծցիս ի բաժանմանէ բաժանողաց սրոյն եւ յառաջահետեւող հրոյն : Արդեօք սակայն Սրենհոդոսացն լիցիս կաճառակից եւ ընդ մեզ երկրպագեսցես Երրորդութեանն եւ փառաւորեսցես զորդի եւ զհայր հանդերձ հոգւովս սրբով, որ է օրհնեալ յաւիտեանս : Ամէն » :

Կարծեմ մեր նախնեաց այդ գրուածք մեկնութեան կարօտ չէ. մանաւանդ նրանց համար, որոնք քիչ շատ քրիստոնէութեան պատմութեան եւ դիտութեան մէջ դեգերած են :

Մի կարծէք որ, Սրբազան, միայն եկեղեցական դասէն էին պաշտպանողները, կաթողիկոս կամ վարդապետ, մեր Հայաստանեայց եկեղեցին Քաղկեդոնիկների դէմ, այլ աշխարհական դասէն էլ կային պաշտպանողներ, որոնց մէջ երեւելին է մեր Անու թագաւոր, երիտասարդ գիտնական Գաղիկ թագաւորը, որոյ պատկերը պէտք է մեր ամենքին գրասենեկում դանուի իբրեւ մի ճշմարիտ հայրենասիրութեան օրինակ եւ դաս : Դա՛ քաջ գիտէր, միանգամայն սուրը ձեռին, իր Անի քաղաքն ու թագաւորութիւնը պաշտպանել եւ գրիչը ձեռին եւ կրակի նման խօսքը բերնում՝ մեր եկեղեցու անկախութիւնն ու ազգայնութիւնը : Եթէ երկար լինէր ոչ, եւ մի տարբերութիւն ունենար վարդապետութեան մասին իր նախորդներին եւ յաջորդներին վարդապետութեանցը հետ՝ ձեր առաջը կը բերէի այս տեղ. բայց ցանկացողը կարող են ուսումնասիրել այդ Մատթէոս Ուրահեցու պատմութեան մէջ, Երուսաղիմոյ տիպ, Մասն Բ. երես 193—214 :

Բայց, այդ հաւատոյ խոստովանութիւնքն ոչինչ օգուտ բերին ոչ. Յոյնք իրանցը շարունակեցին, ամեն դարում մի քանի անգամ. եւ բանն այն տեղ հասուցին, ասում է Մա. Ասողիկ, որ տասներորդ դարու պատմիչ է, որ սկսան ջնջել Հայոց քահանայքն ու վարդապետները, երկաթէ չլթաներով կապած եւ բռնատանը դրած : Մատթէոս Ուրահեցին՝ որ մետասաներորդ դարու պատմիչ է, ասում է.

Եւ թագաւորն զանաթինն բարով ընկալաւ զորդիս թագաւորացն Հայոց, եւ զինի սակաւ աւուրց, սկսաւ յայսնել զգար խոր-

հուրդ մտաց իւրոց եւ ասէր. եթէ՛ « հրամանք է ի թագաւորութեանս մերում՝ զի դուք եւ ամենայն իշխանք Հայոց աշխարհին առնոյք յանձինս ձեր զինուք հաւատոյ ազգիս Հոռոմոց » :

Այդ հրամանին դէմ է, որ Գաղիկ արժուի պէս թռչելով՝ դալիս է ու հասնում կոստանդնուպոլիս եւ Տուկիժ կայսեր դիմաց՝ Յակոբոս Վանանդեցու հաւատոյ խոստովանութիւնը պատառ պատառ անելով, յանդիմանում է նրան. վասնզի նա մի քիչ միտում էր ցոյց տուած Քրիստոսի երկութեանը համար : Ասում է Գաղիկ Տուկիժ կայսեր :

Ահա ես այր թագաւոր եմ եւ որդի թագաւորացն Հայոց, եւ ամենայն Հայք հնազանդին հրամանաց իմոց, եւ ամենայն կտակարանացն Աստուծոյ հնոյն եւ նորոյն հմուտ եմ եւ ամենայն Հայք վկայեն բանից իմոց, զի հաւասար վարդապետացն ընդունին զիս, եւ ահա ես խօսեցայց այսօր ընդ Հոռոմոց վասն հաւատոյ ազգիս Հայոց, եւ գրեաց Գաղիկ գիր հաւատոյ ձեռամբ իւրով :

Մի եւ նոյն պատմիչն այս էլ է ասում, թէ այն աստիճան էր հասել Հոռոմոց ատելութիւն Հայոց վրայ, որ մի Հոռոմ արեղայ բարձր մի Հայ իշխանի վրի վրայ դնելով խեղդում է, իր քարոզութեան չհամոզուելուն համար : Իսկ Բիւզանդեան կայսերը այնպիսի մի մուկերօնութեամբ էին զինուած Հայոց դէմ, որ կարծում էին շատ անգամ տգիտութեամբ, թէ երբ կաթողիկոսներն իրանց կողմը դարձնեն, Հայք էլ իրանց կողմը կը դառնան. սխալ կարծիք, որն որ տիրում է մինչեւ այսօր Օրթոսոքսներին եւ Քաթողիկոսներին միջին : Այդ նպատակով մի քանի կաթողիկոսներին մտքերը մուրրեւա յաջողեցան, ինչպէս ասացինք արդէն. բայց հետեւանքն այն եղաւ որ՝ այդ կաթողիկոսներն իրանց նշանակութիւնը կորցուցին Հայոց առջեւ. տեսնելով՝ որ այդով էլ մի ճար չեղաւ, Բիւզանդեան կայսերը, ուրիշ հանգի ուղեցին բանն առաջ տանել վարդան, ինչպէս նաեւ Մատթէոս պատմիչները, ասում են, որ Հայոց կաթողիկոսական գահը կործանել ջանացին եւ Հայոցը բռնի իրանց հաւատին դարձնել : Ռոմանոս կայսրը սպառնաց Հայոց հոռոմացնել եւ այդ պատճառով էլ կարս դնալով՝ կրակի տուեց Հայոց

եկեղեցին, Ալեքս կայսրը հրաման հանեց մկրտել Հայոցը Իսահակ Անդեղոս այն ուստիճան չարչարեց Հայոց, որ ստիպուեցան Հռովմայ Պապին օգնութեանը դիմել: Այդ մուկրոն քաղաքականութեան հետեւանքը, Սրբազան, հեշտ է գուշակել: Ոչ թէ միայն Հայոց միատեց այդ՝ այլ բուն իրանց Հռոմոնց. վասնզի, Հայք վերջապէս՝ եթէ համահաւատ չէին Յունաց հետ, դոնէ նրանց՝ միշտ իբրեւ քրիստոնեայ մի տէրութիւն և ազգ էին նկատում, որոնց օգնել էին Պարսից հետ ունեցած ամեն պատերազմներում և այնքան նեղութիւն էին կրած Սասանեան ցեղէն, կայսերական կառավարութեան հետ մտերմութիւն ունենալուն համար. բայց այդ հալածանքների վրայ էլ զղուեցան նրանցմէ և աւելի սիրեցին Մահմէտականաց հպատակ և հաւատարիմ լինել քան թէ նրանց:

Մի մեծ, բայց շատ մեծ մարդ էլ ունինք մենք, Սրբազան, երկոտասաններորդ դարումը: Այդ մարդն է Ներսէս Ծնորհալին, մեծ և սուրբ հայրապետը Հայոց ազգի և եկեղեցու, ի հարկէ այդ շնորհալի կերպարանքը ձեզ ծանօթ է իրան ընդհանրական թղթերովը, վասնզի յիրաւի ընդհանրացած են ամբողջ ազգին մէջ, ես էլ, Սրբազան, չեմ կարող ինձ բռնել այս տեղ, որ նրա կեանք և հոգի շնչող վարդապետութեանց մի քանի նմուշն առաջ չբերեմ այս տեղ: Կեանք և հոգի շնչող եմ առում, Սրբազան, նրա համար, որ յիրաւի իր ապրած դարուց մինչև այսօր, նրա վարդապետութիւնքը Հայոց եկեղեցու և ազգի հոգեւոր սնունդ ու կեանք է եղել և այդ սնունդով ու կեանքով է դեռ՝ որ Օրթոտոքսների և Քաթոլիկների միջին Հայոց եկեղեցին ապրում է: Պատրաստութիւն հարկ չէ Սրբազան, Ներսէս Ծնորհալու վարդապետութիւնքը լաւ իմանալու, իրողութիւնը, որ է կիր Մանուէլ կայսեր առաջարկութիւնը Հայոց՝ միանալու իրանց հետ, նա՛ լուսոյ մէջ դուրս կը հանէ դրանք և ամենքին բանականութեան հետ կը խօսի: Բայց որովհետեւ, մեր դործն այս տեղ Հայոց եկեղեցու վարդապետութիւնն է յառաջ բերել, քան թէ Բիւզանդեան և Հռովմայ եկեղեցու հայ ձեռնաձգութեանց փորձերն ու ջանքերը մերինին

վրայ, այդ պատճառով, նախ՝ Ներսէս Ծնորհալու քրիստոնէական վարդապետութեանց մէջէն մի քանի քաղաւածք մէջ տեղ կը բերենք, յոյց տալու համար, որ չնայելով իր դարուն կերպարանքին, իր՝ հայրենի երկրէն տարագիր լինելուն և իր շուրջ պատող ազգաց և ազանց կառավարութեանց, մանաւանդ Բիւզանդեան Օրթոտոքս կայսրութեան և Հռովմայ հոգեւոր կայսերապետութեան, Ներսէս Ծնորհալի՝ Հայկական եկեղեցու թէ՛ վարդապետութեանց և թէ՛ արտրողութեանց ազգայնութիւնը պահած է և հեռամուտ է եղած միշտ պահելու: Դա՛ մի դարման է կամեցած անել իր ժամանակուայ Հայոց եկեղեցու ցիրուցանութեանը և կարծած է նա կատարել այդ բան՝ միմիայն հոգեւոր ուժի ղորութեամբ. չէ նկատել երբէք որ, այդ Հայաստանեայց եկեղեցու վիճակը՝ հեռեւանք էր Անու, կարուց և Ոստանայ թագաւորութեանց անկմանցը, և թէ՛, քաղաքական վարչութիւն լինի, և եկեղեցական վարչութիւն լինի, երբ իր վարած աշխարհի և ազգի կամ իր հովուած ժողովրդին ազգեցութիւնը չէ կրում իր վրայ, կամ նրա վարչապետի ձեռքով, կամ նրա մի ուրիշ ուղղակի կամ անուղղակի միջոցով, կամ թէ յատուկ սարքուած մի կարգով, ուշ կամ վաղ նա կը վաթարնայ և այնպիսի մի ընթացք կառնէ, որ որ և է հոգեւոր կամ բարոյական ուղղութիւն նրա դարման չէ կարող անել. հէնց այդպէս էլ եղաւ Հայաստանեայց եկեղեցու վիճակ, երբ իրան վրայ հսկող իշխանութիւնք ընկան փճացան, և Բիւզանդեան կայսերաց էլ գլուխ դիտաւորութիւնն այդ էր. մի անգամ, նա՛ մտածում էր, նախարարաց կամ թագաւորաց իշխանութիւնը վերնոյ Հայաստանէն, հոգեւոր իշխանութիւնը ձեռու մտ կառնում, հոգեւոր իշխանութեամբ և աշխարհն ու ազգը Ուստի Ներսէս Ծնորհալու և իր նմաններին, կամ թէ յաջորդներին մանաւանդ ամենամեծ անելու դարմանը՝ Հայաստանեայց եկեղեցու, Հայաստանի ազգային վարչութիւնը կամ իշխանութիւնը կանգուն պահելն էր, և ոչ թէ՛ Օրթոտոքսների և Քաթոլիկների հետ միտաւորուելումը. վասնզի միութիւն՝ երկու հաւատար գորութեանց մէջ կը լինի, և ոչ թէ՛ նուազ

ու բազում զօրութեանց մէջ: Այդ միութիւն չէ՛ այլ տկարին հպատակութիւնն ու ընկճումը զօրաւորին տակ: Այ՛, Սրբազան, Շնորհալու դարուց սկսած՝ տեսնում ենք մեզ կաթողիկոսների միջում, նոյնպէս և Ռուբինեաց իշխանների միջում: մի ձգտում դէպ ի միաւորութիւն զօրաւորին հետ, և այդ երեւոյթը շատ անգամ կրկնուած է Շնորհալուց սկսած մինչեւ նոյն այս մեր օրերում: Եթէ ինձ համար՝ մի գլուխ անհեռատեսութիւն ունի ներսէս Շնորհալին իր հայեացքում այդ միութեան մասին, այս է, իր երեւակայութիւն լիքն նախնական դարերու ընդհանրական եկեղեցու միութեան գաղափարով, կարծում էր ու հաւատում, որ Բիւզանդեան կայսերաց և պատրիարքաց խնդրած միութիւնն էլ այդ էր, բայց ինչպէս նրանց առաջակութենէն երեւում է, որն որ առաջ պիտի բերեմ մի փոքր յետոյ, բնաւ ամենեւին այդ չէր, այլ՝ միութեան միապետութիւնը, կառավարութեան մէջ միարարութիւն, միարարագեան ինքն կայսրը լինելու պայմանով: Թէ որ պատմութեան հարցում անենք, թէ ինչ անմիջական հետեւանք ունեցան ներսէս Շնորհալու՝ և իր յաջորդներին այդ սքանչելի թղթերը, ճառերը և այլ ատենաբանութիւնքն, այդ մասին պատասխանն այս է, Հայաստանեայք վեր կացան, դիմադրեցին դրանց ձգտանքը՝ իրանց բոլոր զօրութեամբ, և ոչ թէ՛ մի կամ երկու, երեք անգամ, այլ՝ այնքան անգամ, որքան անգամ որ դրանք իրանց միտում յայտնում էին, որ և է կերպով միաւորութեան այսինքն հպատակութեան մասին: Այդ երեւոյթն մեր քրիստոնեայ պատմութեան մէջ՝ այսպէս եմ մեկնում ես: նոյն և մի մարդիկ, որոնց գլխաւորն է Եզր՝ Գրիգորէ, ներսէսէն և Սահակէն յետոյ՝ Շնորհալի, Կլայեցի և Լամբրոսացի և այլն, Բիւզանդիոն և Բիւզանդեան կայսրութիւնը, նոյնպէս Խաչակիրքն ու Խաչակրութիւնը մտանց տեսնում չլինէին, և նրանց միջում եղած հոգեւոր իշխանութեան որպիսութեանը վրայ՝ իրանց գլխում մի գաղափար չնում չլինէին, այլ Հայաստանի սարերում, դաշտերում, կամ իրանց ազատագիր դրախտներում և վանքերում լինէին բնակուած: Ինձ երեւում է որ՝ նոյն

այդ մարդիկ՝ բուն Հայաստանեայք վարդապետները կը գերազանցէին դիմադրութեան գործին մէջ: Ինչպէս Փոքր Հայաստանը՝ այնպէս էլ Կիլիկիան հռովմէական երկիր էր և ոչ հայկական: Հայք այդ երկրներում մի կերպով իրանք իրանց Բիւզանդեան կայսրութեան հովանու ներքեւ էին համարում իրանց արեւելեան կողմերի հարեւանների նկատմով՝ որոնք Մահմէտական էին: Դարեր պէտք եղան իրանց համար հասկանալու որ՝ Բիւզանդիոն կրօնի հետ՝ և ազգային և քաղաքային ներողամտութիւն չունի: Իսկ Մահմէտականք թէ և ազգային և քաղաքական ներողամտութիւն չունէին, բայց կրօնականն ունէին և իրօք էլ՝ դոնէ երբեմն քրիստոնէից համար լուսաւոր Մահմէտականներն այդ յատկութիւնքը ցոյց տուին:

Քրիստոնէութեան պատմութեան մէջ, քրիստոնէից աշխարհում, Սրբազան, շատ մեծամեծ մարդիկ են դուրս եկած, կարգէ դուրս համբերող, կարգէ դուրս հաստատամիտ, վշտամբեր, նրբամիտ, մի խօսքով ամեն տեսակ հանճարով, հոգւով և խորհրդով, բայց դրանց միջում ոչ մէկը չէ եղել, որ քրիստոնէութեան հիմնադրին, Յիսուսի Քրիստոսի նման հարիւրաւոր և բիւրաւոր դարերէն դէնը տեսնող լինի, իր աշակերտներն ու աշակերտների աշակերտները միշտ երկնքումն են արքայութիւնը փնտռել, և ոչ մեր Տէր Յիսուսին նման մարդկանց սրում: Եթէ երբեմն էլ այդ արքայութիւնն մարդկանց սրտերում փնտռէին, կարելի է որ Քրիստոսի ասած երկնից արքայութիւն գտնէին. և Հռովմաբիւզանդական ընկերականութեան նման՝ մի ընկերականութիւն կազմելու տեղ, մի ուրիշ հանգի բան, ուրիշ ձեւ աշխարհ ձեւում լինէին քրիստոնեայ ազգն ու ազինքն ազրեցնելու համար: Մեր քրիստոնեայ պատմութեան մէջ, եթէ մի կամ երկու մարդիկ ունինք իրանց դարերն և դարերէն դէնը տեսնող, այդ մարդիկը միմիայն Սահակ Պարթեւն ու Մեսրոպ հայկազունն է, որոնք մեզ գիր ու լեզու տուին, և դրանց հետ միասին ազգային և քրիստոնէական կեանք: Երանի՛ թէ մի քանի ուրիշ Սահակներ և Մեսրոպներ էլ ունենայինք, դրանց բազմութիւ յաջորդների միջին,

որ մեր նախնեաց ընկերականութիւն կանգուն պահելու համար մեր աշխարհում, մի վարչութեան մեքենայ հրարէին՝ Հայոց ազգն Հայոց աշխարհում պահելու, Հայոց աշխարհն Հայոց ազգում:

Ահաւասիկ այժմ՝ Ներսէս Շնորհալու Հաւատոյ Խոստովանութիւնը, որն որ և մեր եկեղեցոյն է այսօր:

« Պարտ եւ արժան է Քրիստոսի երկրպագուացն եւ յանուն սուրբ Երրորդութեանն մկրտելոյ, խոստովանել համագոյ զերիս անձնաւորութիւնն՝ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, մի բնութիւն, մի Աստուածութիւն եւ մի իշխանութիւն, համապատիւ եւ զուգապատ: Ոչ յուսեքէ եղեալ, եւ ոչ յետոյ սկսեալ, եւ ոչ ի խոնարհութենէ ի բարձրութիւն ամբարձեալ, կամ ի տկարութենէ ի զօրութիւն փոփոխեալ, այլ յառաջ քան զամենայն յաւիտեանս էր, եւ այժմուս է, եւ յանվախճան յաւիտեանս եղիցի: Անեղ եւ անմահ էութիւն, աներեւոյթ ի բնութենէ, եւ երեւելի վասն արարածոցս. տեսող ամենայնի, եւ անտես յամենայնէ:

« Հայր՝ անսկիզբն եւ անձին: Որդի ծնեալ ի բնութենէ Հօր, այլ՝ անժամանակ: Ոչ ըստ մարդկան ծննդեան ախտաւոր եւ հոսանուտ, զոր եւ զմտաւ ածելն է հայհոյութիւն, թող թէ բարբառել բանիւ, այլ որպէս լոյս ի լուսոյ եւ հուր ի հրոյ. զի ոչ են օտարք ի բաժանիւն, այլ մի ճառագայթ եւ մի ջերմութիւն հրոյն եւ լուսոյ, ծնելոյն եւ յորմէ ծնաւն. եւ մի է բնութիւն երկաքանչիւրոցն. թէ՛ պէտ եւ բաժանին ի միմեանց անձամբ, նոյնպէս եւ լոյս որդի ի լոյս՝ հօրէ. եւ հուր աստուածութեանն որդւոյ ի հրոյ աստուածութեան հօր յառաջ եկեալ ծննդեամբ, ոչ են այլեւայլ, այլ մի եւ նոյն բնութեամբ:

« Իսկ օրինակ անօրինակ ծննդեանն որդւոյ ոչ այլ ինչ է, բայց որ ի մեզ մտաց ծնունդ զբան. թէպէտ եւ ոչ ամենայնիւ համեմատի ճշմարտութեանն՝ օրինակս: Վասն որոյ եւ բան ասի՝ յաղագս անապական զոլոյ ծննդեանն: Իսկ Որդի՝ զի ի Հօր բնութենէ եւ ոչ օտար ի նմանէ, կամ արարած, ըստ հայհոյութեանն Արիստի: Եւ հնար իմանալոյ զանիմանալին ոչ այլ ինչ է, բայց հաւատով ասացելոցն ի գիրս սուրբս եւ ոչ ընդ քննութեամբ արկանել զանքննելին, որք անհաս մտաց ասացին զաստուածային ծնունդն, եւ անձառ բանից:

« Նոյնպէս եւ Հոգին սուրբ բղխումն ասի առ ի Հօրէ եւ փառակից Որդւոյ. Աստուած կատարեալ որպէս զՀայր եւ զՈրդի: Մի կամք երկց անձնաւորութեանն եւ մի զօրութիւն եւ մի արարչու-

թիւն. Հայր կամեցաւ ստեղծանել զերեւելի եւ զաներեւոյթ արարածս. եւ Որդի գոյացոյց յանդոյլց, եւ Հոգին սուրբ զարդարեաց իմաստութեամբ: Եւ նոյն ինքն Բանն Աստուծոյ որ արար զմարդն ի սլատիկր իւր, եւ երեւեցաւ նմա յետ յանցաւորութեանն եւ ամենայն արգարոցն առաջնոց՝ Նոյի եւ Աբրահամու, Իսահակայ եւ Յակոբայ, Յոբայ եւ Մովսիսի, Ահարոնի եւ Յեսուայ եւ այլոց մարդարէիցն. եւ խօսեցաւ ընդ նոսա, ի ժամանակս վերջինս՝ աւետեօք հրեշտակապետին Գաբրիէլի էջ յորովայն կուսին Մարիամու, եւ առեալ ի բնութենէ նորա մարմին եւ Հոգի եւ միտս, եւ խառնեաց նոր եւ անձաւելի միաւորութեամբ ընդ Աստուածութեան իւրում. եւ զարգացեալ յորովայնին իննամեայ ժամանակաւ որպէս մանուկ, ծնաւ Աստուած եւ մարդ կատարեալ, անչիօթ էութեամբ եւ անբաժանելի միաւորութեամբ, մի Քրիստոս, եւ մի անձնաւորութիւն նորա յերկուց բնութեանց միացելոց: Կաթնասուն եղեւ որպէս զմարդ, եւ ի հրեշտակաց փառաւորեցաւ որպէս զԱստուած: Երջեցաւ յաշխարհի կատարիչն ամենայնի զամս երեսուն մինչեւ ի կատարումն հասակի մարդկութեանն. մկրտեցաւ ի ծառայէն որպէս զմարդ եւ վկայեցաւ ի Հօրէ եւ ի Հոգւոյն՝ որպէս զորդի Բարձրելոյն: Փորձեցաւ ի սատանայէ որպէս զմարդ, եւ յաղթեաց փորձողին որպէս զԱստուած: Քաղցեաւ եւ ծարաւեցաւ եւ ննջեաց եւ արտասուեաց եւ վաստակեցաւ որպէս մարդ մտեալ ընդ օրինօք մարմնոյ. եւ կատարեաց սքանչելիս եւ նշանս եւ եցոյց զօրութիւնս աստուածայինս որպէս զԱստուած կատարեալ:

« Եկն կամաւորաբար ի չարչարանս, եւ չարչարեցաւ անչարչարելին՝ չարչարելի բնութեամբս ի վերայ խաչին. մեռաւ անպարտական մահու՝ մահկանացու մարմնովս, վասն կենդանացուցանելոյ զմեռեալ մեղօք բնութիւնս. էջ ի գերեզման, եւ արար աւարումն կրկին դժոխոց, մարդկային հոգւովն միացելովն ընդ աստուածութեանն՝ հոգւոցն՝ որ ի դժոխս, չնորհելով ազատութիւն. իսկ աստուածային մարմնոյն յարութեամբն՝ տալով յոյս յարութեան մահկանացու բնութեանս յապականութենէ մահու. յարեաւ ի մեռելոց իշխանաբար յաւուր երրորդի, եւ երեւեցաւ աշակերտաց իւրոց երկոտասանիցն եւ եւթանասանիցն եւ հինգ հարիւրոցն եւ այլոց բազմաց՝ սրբ եղեն նորա վկայք եւ քարոզք ընդ տիեզերս. եւ յաւուրս քառասունս երեւեալ նոցա, եւ խօսէր ընդ նոսա: Եւ ի լրումն քառասնեկի աւուրցն՝ վերացաւ յերկինս, եւ նօտաւ ընդ աջմէ Հօր ի բարձունս մերով բնութեամբս, յորմէ անբաժանելի էր Աստուածութեամբն. եւ զալոց է նովին մարմնովն՝ փառօք Աստուածութեան իւրոյ եւ Հօր, յարուցանել զմեռեալս, եւ դատել զաշխարհս արդարութեամբ. բարեգործացն զբարեացն տալով ժառանգութիւն եւ զանվախճան թագաւորութիւնն. իսկ գործո-

զացն չարեաց՝ զամօթն յաւիտենից եւ զտանջանան ըստ իւրաքանչիւր գործոց :

« Եւ արդ՝ այս դաւանութիւն ճշմարտ հաւատոյ՝ հիմն է աստուածայնոյ Տաճարիս՝ որ ի մեզ : Իսկ գործք բարեաց՝ շինուածն է ի վերայ այս հիման, որպէս եւ Տէրն զդաւանութիւնն Պետրոսի եղ որպէս զվէմ՝ հիմն խմանալի եկեղեցւոյ իւրում եւ վինքն որպէս զշինող, եւ զընտրելոց իւրոց բարեգործութիւնս, որ յամենայն ազգաց՝ իբրեւ զնիւթ շինուածոց, փոխանակ քարի եւ փայտի եւ այլոց պիտոյից :

« Դարձեալ է նա որպէս զճարտարագետ, եւ մեք որպէս զմշակս հրամանակատարս, ըստ որում ասաց աշակերտացն, թէ « Առանց իմ ոչ ինչ կարէք անել : » Գրէ եւ Պաւղոս թէ՝ ես զիմաստութիւնն Աստուծոյ հիմն եղի որ է ի Քրիստոս, եւ որ ի նա հաւատն ճշմարտութեան, բայց՝ այլ է որ շինէն, այսինքն՝ որ կն, եւ որ քաղց կն յաշխարհ, եւ շինելն՝ գործովք, զոր կտով իւրաքանչիւր ոք, եթէ բարի եւ եթէ չար : Եթէ ոք շինէ, ասէ, ի վերայ հիմանս այսորիկ սակի՝ որ է արդարութիւն եւ ճշմարտութեան, արծաթ՝ որ է մաքրութիւն մտաց եւ սրբութիւն սրտի, ականս պատուականս՝ որ են մասունք բազմապատիկ առաքինութեանց, սէր, խոնարհութիւն, ողորմածութիւն, անոխակալութիւն, պահք, աղօթք, ժուժկալութիւն : Այսքիկ եւ որ նման սոցա են պատուական ակունքն, շինեալք յարդարոց անձանց ի վերայ հիման հաւատոյն : Իսկ մեզ սասիրացն անձինք՝ ոչ ի պատուական եւ ի հաստատուն նիւթոցս յայսցանէ ասէ, շինեն զշինուածս իւրեանց ի վերայ հաւատոյն հիման, այլ յանարդաց եւ ի դիւրավատնելեաց, այսինքն փոցտ, խոտ, եղէգն, փայտն՝ զթանձրագունից մեղաց ունելով զտեսակ, զսպանութեան, զպոռնկութեան, զըողութեան, զյախշտակութեան, եւ որ նման սոցա, խոտն զխորհրդոցն չարութիւն ժողովեալս ի սրտի, եղէգն՝ զբանիցն գարշութիւնս նշանակէ, զորս բղխեն ի բերանոց մարդիկ՝ զեզուան գործարան տուեալ սատանայի, թշնամանելով եւ անարգելով զընկերս զանազան եւ պէսպէս հայհոյութեամբ, որ ըստ գեղջկացն բարբառոյ յիշոցք անուանին, եւ ըստ քրոց սովորութեան՝ անէծք եւ թշնամանք, եւ որ այսպիսիքն անուանք, զորոց եւ Դաւիթ ասէ թէ՝ « Անիծիւք եւ դառնութեամբ լինեն բերանք նոցա : » Նաեւ ստութիւնն, չարախօսութիւնն եւ մատնութիւնն եւ այլք որ յայս յարին բանք անիրաւութեան յեղեգան եւ օրինակի :

« Եւ զայսոցիկ զերկուց հակառակ շինուածոց նիւթս՝ որ ի պատուականաց եւ յանարդաց, հուրն, ասէ, ընտրեսցէ, քանզի հրով յայտնելոց է դատաւորն : Եթէ գործն՝ զոր շինեաց ի վերայ հաւատոյն հիման, սակի է եւ արծաթ եւ ականս պատուականս որ ոչ

ապականին, այլ եւ սրբին ի հրոյն, գործողն կեցցէ եւ վարձս առցէ : Իսկ եթէ խոտ է եւ եղէգն եւ փոցտ՝ որ դիւրաւ ապականին ի հրոյ անտի, որ գործեացն զայն՝ տուժեսցիս վասնզի, զոր օրինակ ապարանք հիմամբն միայն չեն քաւական լինել ի բնակութիւն մարդկան, այլ պէտս ունին որոնց եւ ձեղրաց եւ այլոց շինուածոց, նոյնպէս եւ հաւատովն միայն առանց գործոց ոչ ոք կարէ զանձն իւր շինել տաճար Աստուծոյ : Եւ որպէս գլուխ՝ առանց անձին յարմարութեան ոչ կարէ կրել կենդանութիւն, եւ ոչ անձն առանց գլխոյ, նոյնպէս եւ հաւատ առանց գործոց, եւ գործք առանց հաւատոյ, մեռեալ են երկուքին ըստ առաքելոյ : »

Ներսէս Շնորհալու սուրբ հոգին, որ այդ սքանչելի վարդապետութիւնն է իօսել երկոտասաներորդ գորում, նոյն այդ հոգին և Հայաստանեայց եկեղեցու պաշտամանց և արարողութեանց մասին էլ է վարդապետել : Սրբազան, ներեցէք ինդրեմ, որ այդ վարդապետութեանց մէջէն մի քանի քաղուածք դուրս հանեմ, բերեմ ձեր առաջ այս տեղ, տեսնէք թէ՛ ի՞նչ հանգի նշանակութիւն են տուել դրանց մեր նախնիք, կիր Մանուէլ կայսեր փեսայ Ալէքս մեծ Պառտոսաւանորին տուած հաւատոյ խոտովանութեան զրումը :

Աւետեաց, ծննդեան և մկրտութեան տօնելու մասին էլ պէտք եղած բացատրութիւնը տալուց յետոյ, այսպէս է վերջացնում :

« Էր եւ այլ իր լազուսն ասել վասն սորին, այլ սակաւս շատ է իմասնոյդ, բայց եթէ այսպէս եւ եթէ այն՝ ի փոռս Աստուծոյ կատարեսցին : »

Դարձեալ միւռնի մասին նկատողութիւն էր եղած Յունաց կողմէն՝ թէ շուշմայով (կնձիթ) են անում Հայք եւ ոչ թէ ձիթենով : Նրան ամենապարզ պատճառն էլ ցոյց տալուց յետոյ, որ է Հայոց աշխարհում ձիթենի չգտնուիլը, այսպէս է վերջացնում :

« Զի թէ նիւթոյն էր զօրութիւն, զայն նիւթ միայն արժան էր ինդրել՝ յորում աստուածային ինչ ազգումն գոյր ի նմա : ասպ թէ քահանայական օրհնութիւնն եւ աղօթքն միացուցանեն ընդ նիւթ ձիթոյն զաստուածային ճորհն, ոչ ինչ լինի առաւելութիւն կամ

պահասութիւն, եթէ ի պտղոյ ծառոց իցէ ձէթն եւ եթէ ի բուսոց :  
Որպէս եւ արեանն Գրիստոսի նիւթ գինին, յորոց եւ իցէ գունոց՝  
ընդունելի է, եթէ սեւաւ՝ եթէ կարմիր եւ եթէ սպիտակ : »

Իսկ պատկերաց պաշտաման համար էլ, որն որ մեր  
Հայք՝ ինչպէս երեւում է Ներսէս Շնորհալու խօսքերէն,  
մինչեւ իր ժամանակները չընդունելուց յետոյ, հայհոյում  
են եղել, ասում է .

« Մեք՝ որ զառաջնորդականն ունիմք զաստիճան, ընդունիմք եւ  
երկրպագեմք պատկերի տնօրէնութեան փրկչին մերոյ, այլ եւ  
զամենայն Սրբոց պատկերս ըստ իւրաքանչիւր կարգի պատուեմք .  
զորս եւ յեկեղեցիս մեր նկարեմք եւ ի պատարագամատուցի հան-  
դերձս, եւ պատուհասեալ ըմբերանեմք զոչ ընդունողսն ի մերոց՝  
զտգէտսն եւ զխմարսն : »

Միւսանդամ, Յունաց կողմէն եղած նկատողութեանց,  
որոնք են, խաչը բեւեռելու մասին, որն որ մեզք եւ հերե-  
տիկոսութիւն է եղել ըստ Յունաց . նոյնպէս եւ Սուրբ Աստ-  
ուած ասելիս, « Խաչեցարը » իրանց պէս չեն ասում են եղել  
Հայք, եւ թէ՛ մեծ պահոց շաբաթ ու կիրակի օրերում՝  
հաւկիթ կուտեն եղել Հայք : Շնորհալին, ոչ թէ այդ բանը  
հաստատում է, այլ այն էլ է յայտնում թէ՛ Հայոց իշխանք  
մեծ պահոց ձուկ էլ, ձէթ էլ, կաթնեղէն էլ ուտելուց  
յետոյ, զինի են եղել խմում : Երանի՛ թէ այդ բանն այսօր  
Հայաստանի զեղջուկներն էլ անէին : Եւ յետոյ թէ՛ Հայք  
մի միայն զինով են եղել, առանց ջուր խառնելու, պատարագ  
մատուցանում : Շնորհալի՛ Հայոց այդ սովորութիւնքը Գրի-  
գոր Լուսաւորչէն իրանց աւանդած լինելը ապացուցանելէն  
յետոյ՝ թէ՛ Աւետարանի եւ թէ՛ Սուրբ Հարց վկայութեամբ  
ասում է .

« Նաեւ այլք բազումք ի վարդապետաց եկեղեցւոյ զայն ասեն,  
եւ մեք նոցին բանիցն եւ աւանդութեանցն գրով հետեւողք,  
վասն այնորիկ ոչ արկանեմք ջուր, այլ անապակ զինեաւ զանապա-  
կանն արեան Գրիստոսի կատարեմք զխորհուրդ : » Ուշ զիւր,  
Սրբազան : « Բայց եթէ այնպէս եւ եթէ այս՝ միայն մաքուր  
հոգւով պարտ է սպասաւորել աստուածային խորհրդոյն, եւ ամե-  
նայնն ի հաճոյսն Աստուծոյ կատարեսցին : Իսկ անմաքուրն եւ

պիղծն՝ թէ անապակ բաժակաւ առնէ եւ եթէ ջուր արկանելով,  
բարկացուցանէ զընդունող պատարագին զլստուած՝ փոխանակ  
հաշտեցուցանելու : »

Նորէն՝ Հոռոմոց նկատողութիւնքը, Հայոց եկեղեցու  
պաշտամանց եւ արարողութեանց մասին միութիւնը գործե-  
լու համար, հերքելէն յետոյ՝ Շնորհալի՛ այսպէս մի լեզուով  
է խօսում Բիւզանդիոնի կայսեր հետ, որ կարծես մի  
Փէնէլան լինի կառավարել սորվեցնող Լուդովիկ ԺԴին :

« Բայց զոր օրինակ ամենազօրն Աստուած, որ կարող էր ի միում  
վայրկեան ժամու յոչդոյլից գոյացուցանել զեղեալսն ամենայն, ոչ  
միայն զզօրութիւն ի գործ արկանէր յառաջին արարչութեանն, այլ  
եւ զիմաստութիւն՝ ըստ Մարգարէին, եթէ « Զամենայն ինչ իմաս-  
տութեամբ արարեր » . նոյնպէս եւ յերկրորդ արարչութեանս՝ չու-  
նէր ինչ հարկ մարդ լինելուց եւ այնպէս վերստին ստեղծանել զմար-  
դիկ . բաւական էր կամէն միայն, եւ ամենայն ինչ վճարէր . սա-  
կայն խոնարհեցաւ ի մերս տկարութիւն, եւ էջ ուր անկեալ էաք,  
եւ այնու բարձրացոյց ընդ ինքեան եւ արար երկնայինս, եւ այնու  
պէս պէս հնարիւք եւ ճարտարութեամբ՝ որ նորին իմաստութեանն  
էր վայելչական : Սոյնպէս եւ դաք, եթէ հանդերձեալ էք Քրիս-  
տոսի լինել գործակից, պարտիք եւ ճանապարհի նորին լինել  
հետեւող եւ ճանապարհաց տնօրէնութեանն, որ եւ առաջին է  
խոնարհութիւն եւ որ նորին են մասունք՝ հեղութեանն եւ քաղց-  
րութեանն, որպէս եւ զինքն առնուլ մեզ օրինակ այսոցիկ հրա-  
մայէ . — Ուսարուք յինէն, ասէ, զի հեղ եմ եւ խոնարհ սրտիւ . —

« Զի զոր օրինակ, բժշկական արհեստ զգեղ ասողութեան  
հակառակ պատճառի տխտին մատուցանէ ատաղցելումն, նոյնպէս  
եւ բժիշկն հոգւոց, քանզի ծանօթ էր նմա մերս հիւանդութիւն՝  
առաջին պատճառ ի հպարտութենէ լինել ի սկզբանն, նորին ազա-  
գաւ ընդ խոնարհութեանն իջանելով ճանապարհ՝ գայ առ մեզ՝ զի  
զլեռնացեալ ամբարտաւանութիւնն սատանայի խոնարհեցուցէ, եւ  
զմեզ կամաւ ձգեալ առ ինքն եւ ոչ ի բռնութենէ՝ յերկինս խոնար-  
հութեանքն բարձրացուցէ : Զնոյն օրինակ եւ ձեզ արժան է առ-  
նել, ոչ թագաւորական ահարկու զօրութեամբ, այլ քաղցրազոյն  
խոնարհութեամբ ձգել առ ձեզ զհեռացեալս, որպէս եւ մեծն Գրի-  
գոր Աստուածաբան յաղագս Աստուծոյ ի Պատէքի ճառին ասէ,  
եթէ — ի վերստին ստեղծանելն զմեզ՝ զասակութիւն բժշկութեան  
ոչ առնու ի կիր . զի ոչ հարկանելովն եւ հիացուցանելովն էր կա-  
րողութիւն յաղագս ժամանակեայ ամբարտաւանութեան, այլ

ընդանի եւ մարդասիրազոյն բժշկութեամբն մատակարարէ առ ի յուզողութիւն : Որպէս եւ ոչ գտունի ինչ ընկողմանեալ՝ յուզողութիւն բերեալ բաժնութեամբ ձեռին ի միւս կողմն փոխելով, յորմէ բեկանել՝ քան թէ ուզողել լինի : Եւ ոչ զձի խտտերախ հանդարտեցուցանել բաժնութեամբ սանձուց՝ առանց ողջքանաց եւ զգաստացուցանող ձայնից — :

« Քանզի՛ եւ թն հարիւր ամ աւելի եղելոյ ժամանակաց բաժանման ի միմեանց անդամաց Քրիստոսի, եւ ի մէջ յօգուածոցն յուզաբունից մտանելով ակտից ատելութեան եւ զորո ատելութիւնն ծնանիցի՛ թշնամանաց եւ հայհոյութեանց, եւ այնքիկ կարծրացեալք եւ պնդեալք, մինչ զի՛ երկրորդ բնութիւն հնացեալ սովորութեամբքն լինել, կարօտ է բազում հոգեւոր բժշկական իւղոց օժմանց. այսինքն՝ սիրոյ, զթութեանց եւ ողորմութեանց. զի արտաքուստ մտեալ օտարոտին ախտ ելցէ արտաքս դարձեալ, եւ ապա խտտութիւն՝ որ յօգուածս անդամոցն կակղտոցի, եւ անդամքն վերապին յօգեալք շարակարգեցին ընդ միմեանս : Եւ այս լինի, յորժամ միջնորդ խաղաղութեան՝ նախ զերեւելի խաղաղութեանն եւ զնութեան սիրոյն ճառագայթ առ ժողովուրդ ազգի մերոյ՝ որ ընդ իշխանութեամբ սուրբ թագաւորութեան ձերոյ են՝ ծագէք : Եւ ոչ միայն զձերն, որ իրբեւ բնութեամբ ծաւալէք ըստ նմանութեան լուսոյ արեգական՝ զբարեացն առատութիւն առ ընդհանուր ազգս (Հայոց եկեղեցու պաշտօնէից քաղաքականական գրուցուածք) այլ եւ ձերոցդ եկեղեցական դասուց եւ ուսմիկ ժողովրդոց՝ որ իրբեւ զարդարութիւն ունին եւ զաստուածային պատուիրանաց կատարումն եւ զարքայութեանն երկնից ժառանգելոյ բաւական պատճառ՝ զատեն զմեզ եւ զհայհոյելն, հրամայեցէք ի բաց յայնտիսի պատերազմասէր բարուց լինել, եւ սիրով եւ խաղաղութեամբ բերիլ առ Նժդեհքս եւ պանդուխտքս, որք ի հակառակացն Քրիստոսի հալածեալք վասն արդարութեան՝ առ ձեզ որպէս յամուր աղատամնի դիմեալք են խաղաղանալ : Զի համբու այսպիսի բարեացդ տարածելով յարեւելեայս անաշխատ իւրաքանչիւր ոգի յօժարեցին ի սէր միաբանութեան դալ ինքնակամ հաճութեամբ, եւ մի այլ լիցի՛ սրպէս մինչեւ ցայժմ, պատճառ փախչելոյ մերոց ի ձէն՝ աւերումն եկեղեցեաց եւ սեղանոց Աստուծոյ կործանումն եւ նշանաց Քրիստոսի խորատուումն եւ բազում նեղութիւնք պաշտօնէից եւ պէսպէս զբարտաթիւնք, որպէս եւ ոչ ի մէջ թշնամեաց Քրիստոսի՝ յորս մերձ եմք. զի այսպիսի գործ՝ ոչ միայն եւ զբաժանեալսն ոչ միաւորէ, այլ եւ զմիաւորեալսն պառակտէ ի միմեանց : Քանզի՛ հակառակասէր է բնութիւն մարդկան, զորս ոչ այնքան բաժնութիւն՝ որչափ խոնարհութիւն եւ սէրն ձգէ ի հրամայովն կատարումն : Եւ զինչ ասիցեմք զբանաւոր

կենդանեացս, ուր եւ զթուշունս վայրենիս եւ զգազանս սիրով քան բաժնութեամբ սովոր են մարդիկ վարժել : »

Է՛, ի՛նչ էք ասում, Սրբազան, որ դարում երեւան դուրս եկաւ այդ հոգին Երապիում, երեքասուներորդ դարումը՝ եթէ՞ ոչ ութնասուններորդ դարում : Կարդացե՛լ էք արդեօք դուք Եւրոպու հին, միջին և դեռ ևս նոր դարերում այդպիսի մի դաս հաստաց ներսղատուութեան և խղճի ազատութեան, և այդ դաս՝ որմէ է սրբում : Հայոց եկեղեցու ծայրագոյն պաշտօնէին՝ Արեւելեան կայսրութեան անիրողին : Էլ ձեզ եմ՝ թողնում որ՝ ձեզ ու ձեզ վեր ածէք ու վէր հանէք այդ բան, Սրբազան, և ես շարունակում եմ :

« Եւ արդ՝ առաջին այս ի հոգեւորական դեղոցն՝ ատելութեան եւ բաժանման հիւանդութեանց պատճառ առողջութեան. երկրորդ՝ զինի այսորիկ եւ մեծ քան զառաջինն՝ պատուէր տալ ընդ ամենայն եկեղեցիս որ ընդ թագաւորութեամբ ձերով, աղօթս առ Աստուած մատուցանել. զի զբարի առաջարկութիւն որ առ ի ձէն՝ մի վասն մեզաց մերոց եւ անարժանութեան թոյլ տացէ հակառակին բարեաց սատանայի խափանել իւրով խորամանկութեամբն այլ ի կատարումն հասուցէ վասն ողորմութեան իւրոյ, որպէս եւ մեք առ ազգի մերոյ եկեղեցիս՝ որ յարեւելս եւ ի մեծն Հայք, եւ ի մեծաստանս որ ի սուրբ լերինս, գրեցաք զնոյն պաղատել առաջի Աստուծոյ », եւ այլն եւ այլն :

Ինչպէս որ վերեն իր տեղն ասացի, այդ քրիստոնէից միութիւնն որ հաստատուեց կոստանդինու ձեւքով՝ քաղաքական նպատակ ունէր. բայց շատ քիչ տեւեց, վասնզի այդ միութիւնը հաստատուած միջոցին՝ մի դաշնակցական միութիւն էր՝ և այդ հայեացքով, Հռովմէական աշխարհի քրիստոնեայք այդ ընդունած էին. երբ կոստանդինու յաջորդները՝ նմանապէս իր ժամանակուայ հայրապետաց յաջորդներն այդ միութեան ուղղութիւնն իշխողութեան վեր ածեցին Քաղկեդոնի ժողովէն սկսելով, գրեթէ մինչեւ մեր ժամանակները. այն ժամանակ՝ Եգիպտացիք, Ասորիք և Հայք իրանցներովը դուրս եկան այդ միութեան շրջանէն. Ներսէս Շնորհալի՛ ինձմէ խիստ լուրւսարանում է այդ խնդիր, երբ ասում է,

« Բանդի, զոր օրինակ բարկութիւն Աստուծոյ՝ որ մատնեաց զեկեղեցի ի ձեռս հեթանոսաց, վասն բաժանման եղև, եւ յետ բաժանելոյն՝ նոյն եւ գթութիւն Աստուծոյ առ քրիստոնեայս, եւ զօրացուցանել վերստին զթագաւորս եւ զզօրս քրիստոնէից ոչ այլ իւրիք լինիցի, բայց միաւորութեամբն դարձեալ եւ ամենայն եկեղեցեաց Բրիտանիա : . . . . . »

« Եւ արդ՝ զոր օրինակ առաւօտուն նշան աւետիս տայ արեգականն ծագման, այսպէս եւ շարժուն կամաց ձեր յայտօսիկ՝ գուշակէ զհաշտութեան Աստուծոյ սկիզբն ընդ եկեղեցի իւր սուրբ . քանզի — Սիրտ թագաւորի ի ձեռին Աստուծոյ է — ըստ իմաստնոյն : Նա զի եւ լուաք՝ թէ հայրապետն Հռովմայ եւ փոխանորդն Պետրոսի առաքելոյ՝ իւրոց անտի իմաստնոց առաքեաց խօսել առաջի սուրբ թագաւորութեան ձերոյ վասն միաբանութեան հաւատոյ : Այլ եւ որ զազգին Աստուծոյ ունի, զքահանայապետութիւն, ի նմին շարժութեւ յորում Գլուխն մեր վերափոխեցաւ առ զլուխն Բրիտանոս, եւ նա ընկալաւ զվախճան . եւ յորժամ ժողովեցան եպիսկոպոսք ազգի իւրեանց եւ ձեռնադրեցին նոր Պատրիարք, ի պատրիարքէ անտի եւ ի ժողովոց եպիսկոպոսացն առաքեցան առ մեզ երկու եպիսկոպոսք վասն միաբանելոյ ընդ ազգիս մերում զոր եւ ընկալաք սիրով եւ սահմանեցաք ի պատշաճ ժամու ժողով լինիլ առաջի մեր եւ խօսել առ միմեանս յԱստուածաշունչ զբոց, զի թէ գտանիցի աւանդութիւն ինչ ի միջի մերում արտաքոյ աստուածադիր կանոնաց, բարձցուք յերկոցունց կողմանց եւ զնուազութիւնն լցցուք միաբանական սիրով . ուստի ծանեաք աստուածային լինել շարժումն զայտօսիկ եւ ոչ մարդկային : »

« Այլ եւ զայս եւս հայցեմք ի ներս զքաղցրութենէ ձերմէ, զի թէ տնօրինեցէ Աստուած խօսել մեզ առ միմեանս, մի եղիցի սրովս տեսան առ ծառայս եւ ծառայից առ տեսարս, զի դուք զմերն սուկասութիւն զնէք մեր առաջի եւ մեք ոչ համարձակիմք ի ձերոց ինչ՝ յորոց զայթակղիմք ծանուցանել ձեզ, եւ այս մարմնաւորաց է օրէն եւ ոչ հոգեւորաց, զի թէ պէտ եւ ի նիւթականացս զբարձրագոյնն ունիք ամենայնիւ, եւ յիմաստութիւն առաւելեալ քան զընաւս, այլ աննիւթական շնորհան մի են հաւատացեալք ի Բրիտանոս՝ մեծամեծք եւ փոքունք ըստ Պաւղոսի, (Բերանդ պաշ անեմ Շնորհալի) վասն որոյ՝ եթէ ողորմութիւնն Աստուծոյ գէիմնարկեալս ի ձէնը շինուած խաղաղութեամբ յուարտունն հասուցէ, (երեւում է որ ըստ յոյս չունի) լինել քննութեան բան ի միասին ժողովելոց, զիցուք երկոցունց բաժանեալ սրմոցս՝ գլուխ անկեան եւ թագաւոր զլէմն Բրիտանոս՝ որպէս եւ է իսկ ճշմարիտ, եւ դատաւոր՝ զգիրս Առաքելոցն եւ Մարգարէիցն եւ զուղղապէս վարդապետացն եկեղեցւոյ . եւ մեք իւրաքանչիւր ոք որպէս դատախազք

կալով առաջի թագաւորին եւ դատաւորացն՝ խօսեցուք դատաստանաւ ընդ միմեանս, եւ խնդրեցուք իրաւունս ի նոցանէ, եւ որում բանի եւ դիմաց վկայեն դատաւորքն ուղիղ եւ ըստ կամաց նոցա լինել, զայն ընկալցուք անհակառակ, եւ զոր վկայեն արտաքոյ եղեալ ճշմարտութեան, եթէ ի դաւանութիւն հաւատոյ, եւ եթէ յաւանդութիւնս եկեղեցւոյ, եւ եթէ առ մեզ եւ թէ առ ձեզ, յայնցանէ ի բաց հրաժարեցուք երկօքեան :

« Եւ քննութիւն ոչ հակառակութեամբ եւ անօգուտ բանակուութեամբ՝ որպէս մինչեւ ցայժմ, որոց ոչ ինչ օգտեցաւ եկեղեցի յայտքան ժամանակ, այլ մանաւանդ զլասեցաւ իսկ . . . . . »

« Նա եւ ըրեք աչաց թէ պէտ եւ սրագոյն լինին զայլս տեսանելով, բայց զինքն եւ որ շուրջ զինքեամբ են դիրք մարմնոյն՝ անկարանայ նկատել, որ եւ յախտանալն՝ այլում կարօտանայ աչաց եւ ձեռին վասն առողջութեան : »

Ի՛նչ նուրբ և քնքոյշ ազգարարութիւն կործանուելու վրայ եղող մի աէրութեան և եկեղեցւոյ, բայց մի թէ Բիւզանդիօն ոյդպիսի ազգարարութեանով խեղք գլխին գալու բան էր . նա՛ ինքն էր իրան առաջնորդում դէպ ի կորուստ, դրա արքունիքը մի մուլետուն էր, ուր մուլետան սէրն ու կեանք վայելելը իրան ամենօրուայ անունդ էր եղած, ուր մի ծանրալուծ եկեղեցական դաս իրան յատուկ բան գործ էր շինած եկեղեցիքը, վանքերը մինը միւսի վրայ աւելացրնելու, աւելորդապաշտութիւնը պահպանելու, կրքերը կատղեցնելու, երկպառակութիւնքը գրգռելու իր կրօնական վէճերով, իսկ իր ժողովուրդն ու զօրքերը՝ հազարումէկ ցեղերէ, երկրներէ հաւաքուած վարձկաններ էին, միշտ ոտքի կանգնած մեծամեծների փառամարտիկութիւնք գոհացրնելու : Իսկ դպրութիւնք եւ գիտութիւնք առանց աղբեջութեան եւ նշանակութեան բաներ էին . միայն երբեմն երբեմն մի քանի կայսերք՝ ցոյց էին տալի իրանց միջում մի փոքր կամ պատերազմական կամ ուսումնական կեանք, որոնց մէջ մինն էլ է և Կիւ Մանուէլ կայսրը : Ուստի կրկին կրկին անգամ հաւատոյ խոստովանութեան սահմանք, աւանդութիւնք էին պահանջում Շնորհալուց, որոնց միշտ նոյն հագուով եւ նոյն հանձարով ազատօրէն պատասխանում էր : Յաւաջ բերենք եւ Հայոց եկեղեցւոյ աւանդութեանցմէ

մի քանի քաղուած այս տեղ, վասնզի կաժեն մեր ուշադրութեանը: Խօսքը բաղարջի և խմորի վրայ է, որն որ պահանջում էին Յոյնք մեզմէ կատարել:

«Այլ թէպէտ եւ յայնժամ որ ի Տեառնէ աւանդեցաւ խորհուրդն բաղարջով էր՝ ըստ յառաջ ասացելոցդ, բայց յԱռաքելոցն աւանդեալքն չունին տալ մեզ յայտնապէս զցոյցս ճշմարտութեանն՝ բաղարջիւ լինել եթէ խմորեալ հացիւ. քանզի հաց միայն հրամայէին բերել հաւատացելոցն՝ որով կատարէին զխորհուրդն. եւ արդ՝ եթէ փոյթ էր հոգւոյն՝ միոյն հաճոյ լինել Աստուծոյ եւ միւսին ոչ, ցուցեալ էր եկեղեցւոյ՝ կամ Առաքելովքն եւ կամ սրբոց վարդապետացն բանիւք. բայց հաստատեալ գիտեմք, եթէ ոչ այլ ինչ է հաճոյ Աստուծոյ, բայց ուղղափառ հաւատքն եւ մաքուր վարքն: Այլ եթէ պարզ մտօք եւ ոչ հերձուածողական ինչ կարծեօք կատարին այսոքիկ, աւանդութիւնք են ազգաց եւ ոչ առաւելութիւն կամ նուազութիւն ինչ ի հաւատս: Վասն որոյ յորժամ գլուխն՝ որ է հաւատն, միանայ եւ յօղի ի գլուխն Քրիստոս, (ի գլուխն կայսեր կամ պատրիարքի Հռոմոց Քիլիզանդիոնի, եւ կամ պատրիարքի Հռովմայ չէ ասում) յայնժամ եւ անդամքն՝ որ են աւանդութիւնքն ուղղին եւ կամ հաճոյանան միմեանց ի փառս Քրիստոսի Աստուծոյ:»

Յետոյ կրկին անգամ:

«Այլ զոր վասն հացին ասացաք թէ՝ ուղղափառ հաւատս եւ սուրբ վարս պահանջէ ի մէնջ Աստուծոյ, եւ ոչ կամ խմորուն հացիւ եւ կամ անխմոր կատարել զաստուածային խորհուրդն, զնոյն ասացաք եւ յաղագս բաժակին. զի թէ՝ ջրով ոք կատարէ եւ եթէ առանց ջրոյ, ոչ եւ ընդ միոյ ի սոցանէ՝ կամ փառս ընդունիցի յԱստուծոյ եւ կամ տանջանս, այլ որք սուրբ սրտիւ եւ ուղիղ հոգւով մատուցանեն, փառաւորին ի նմանէ, եւ որք անմաքուր խորհրդով եւ վատթար գործովք, տանջանաց ակնկալցեն՝ որով օրինակաւ եւ կատարեսցեն, եթէ անաղակ եւ եթէ խառնեալ ընդ ջրոյ: Զի եթէ փոյթ ինչ էր Աստուծոյ եւ աստուածայնոցն եւ հաճոյ, եւ կամ այս ինչ եւ կամ այն, որպէս զայլ պատուիրանս՝ գրեալ էին եւ զայս եւս . . . . .»

«Էին եւ այլ եւս յըզմագոյն պատճառք յաղագս արդարացոցանելոյ զմերս աւանդութիւն եւ ցուցանել համաձայն առաջնոց հարցն աւանդից, եւ թէ՝ ոչ ինքնահաճութեամբ բաժանեցաք մեք յայլոց ազգաց այսպէս տօնելովս. այլ՝ այլք զմերս ունելով յառաջագոյն՝ եւ փոխեցին որպէս կամեցան, որ այժմս ունին իսկ մերս եկեղեցի անփոփոխ գառաջնոցն սլահեաց սովորութիւն, եթէ

հեռաւորութեան աշխարհքն սրտճառաւ եւ եթէ բաժանելոյն աղագաւ՝ յորում եւ ատելութեան եմուտ ակտ ի ներքս, ոչ գիտեմք, քանզի ատելութիւն ոչ միայն նորաձեւ աւանդութեանց ոչ սոյ տեղի, այլ եւ ի հին սովորութեանցն ի բաց լինել հնարի վասն ատելութեան հակառակին:

Մի ճիծաղելի տուարկութիւն էլ անում էին Քիլիզանդացիք Հոյոյ, իբրեւ թէ այս վերջինք Խաչի վրայ դամ են եղել գամում և այդ արարք շատ ծանր մեղք է եղել: Ադոր համար, այսպէս է ասում Շնորհալին ճարակըտուր:

«Արդ՝ որ վտանգ հոգւոյ ի բեւեռելոյ խաչին լինիցի, եւ կամ օգուտ յոչ բեւեռելոյն, տղայոց եւ ոչ կատարելոց ինձ թուի սյսպիտեաց իրաց հակառակութիւն . . . . .»

«Ըստ այսմ իսկ եւ յաղագս փրկչական պատկերի եւ սրբոց նորին ի մերոց ոմանց տգիտաց հակառակութիւն ցուցանի, եւ ձեր առ այնոսիկ զայլթակղեալ՝ իբրեւ օրինադրութիւն ի մէնջ կարծելով համօրէն ազգիս: Այլ մեք եւ որ ըստ մեզ այսպէս ունիմք եւ քարոզեմք, թէ որպէս զաստուածընկալն խաչ տեսանելով՝ ոչ երեւելի նիւթոցն, այլ աներեւութին Աստուծոյ որ ի նմա գերկրպագութիւն մատուցանեմք, այսպէս եւ փրկչական պատկերին ոչ նիւթոյն եւ դեղոցն՝ այլ Քրիստոսի, որ է պատկեր աներեւութին Աստուծոյ Հօր՝ երկիրպագանեմք նովաւ: Իսկ զսրբոցն զպատկերս պատուեմք եւ փառաւորեմք միջնորդ եւ բարեխօս առ Աստուած ունելով. սակայն զերկրպագութիւնն Աստուծոյ ի ձեռն նոցա մատուցանեմ, զի երկրպագելի միայն Արարչին է պատկեր եւ ոչ արարածոց: Եւ քանզի պատկեր եւ անուն՝ մի եւ նոյն են, լոկ կերպարան եւ սոսի ձայն նշանակեցելոյ իրին, ոմն աչաց եւ միւսն ականջաց տալով զգայութիւն եւ էութիւն: Եւ երկրպագութիւն է եւ մարդոյ, ոչ արժանաւորաց միայն, այլ եւ անարժանից, որքան զպատկերն Աստուծոյ որ է հոգին՝ ընդ ինքեան կրէ կենդանութեամբն, եւ յետ բաժանելոյն ի միմեանց՝ սրբոցն միայն են երկրպագելի մարմինք. վասնզի՝ հանգուցեալ է Աստուած յոսկերս նոցա ըստ գրեցելումն. իսկ անսրբոցն ոչ երբէք, քանզի թափուր են յաստուածայնոցն. Բայց անուն եւ պատկեր առանց էութեան, ոչ սրբոյ է երկրպագելի եւ ոչ անսրբոյ, քանզի Արարչին միայն է ընդ ամենայն տեղիս լինել էութեամբ, սրով եւ երկրպագելի էութիւնն աներեւոյթ յերեւելի պատկեր նորին եւ յանուն. իսկ արարածական բնութեան էութիւն ի տեղում յորում է՝ պարունակի, եւ ոչ յամենայն է: Եւ վասնզի ոչ ունի երեւելին պատկեր

զսկզբնատիպն աներեւութաբար ընդ ինքեան որպէս Արարչին պատկեր. ոչ է երկրպագելի որպէս Աստուծոյ, այսմ եւ առաքելականն վկայէ բան, եթէ հնազանդութեան որդւոյ՝ մերով բնութեամբս՝ հօր մինչեւ ի խոչին մահ, այս փոխադարձ եղև առ ի հօրէ, զի շնորհեաց նմա անուն ասէ՝ որ ի վեր է քան զամենայն անուն: Եւ որով լիւիք անուն նորա վերագոյն է քան զայլ անուն, ինքն յայտ առնէ. « Զի յանուն Յիսուսի Քրիստոսի, ասէ, ամենայն ծոնքր կրկնեացի, երկնաւորաց եւ երկրաւորաց եւ սանդարամետականաց: » Եւ արդ՝ եթէ անունն Քրիստոսի, որ եւ պատկերն, այնու ի վեր է քան զամենայն անուն, զի երկրպագի յերկնաւորաց եւ յերկրաւորաց, որպէս ասաց Առաքեալ. եւ զի պատկերն եւ անունն համապատիւք են՝ որպէս ասացաք, սպա չէ օրէն զճառայական բնութեան անուն եւ պատկեր՝ հաւասար բնութեամբ տիրականին պատկերի եւ անունն երկրպագելի վարկանել, այլ պարտ է արարածոցս՝ Արարչին միայնոյ եւ Փրկչին նկարագրեալ կերպարանի զերկրպագութիւնն ընծայել, իսկ զմտերիմ ծառայիցն Աստուծոյ զպատկերս եւ զանուանս՝ որ են բնութեամբ ծառայակիցք մեզ, պատուել եւ յարգել ըստ իւրաքանչիւր արժանաւորութեան, եւ զառաքինութեան նոցին զվարս ի տեսլենէ իւրաքանչիւր պատկերացն օրինակ առնուլ մեզ բարեաց, զմտաւ ածելով զզանազան ձգնութիւն նոցա՝ որ վասն ճշմարտութեանն, եւ որ անարգէ զնոսս՝ ոչ զնկութ պատկերին համարեացի անարգել, այլ զայն՝ յորոյ անուն պատկերն է նկարագրեալ եթէ զտեառն եւ եթէ զճառայից նոցա: »

Կուզէք գիտենալ, Սրբազան, ի՞նչ աղքեցութիւն եւ ի՞նչ տալանորութիւն անելը, մեր ճշմարտապէս ուրբ հայրապետի աւետարանական եւ առաքելական վարդապետութիւնքը Կիւ Մանուէլի եւ իրանների վրայ, Ահաւսիկ ձեր առաջը բերեմ՝ նայն իսկ նրան՝ թագաւորէն առաջարկուած խնդիրքն, որոնք հասկանալու համար, ձեր հանճարոյն մեկնութիւն հարկ չէ:

Ա. « Նգովեցէք զաստղան մի բնութիւն զՔրիստոս. զՍեւիթէս եւ զԻնոսկորոս եւ զՍեւերիանոս եւ զՏիմոթէոս զկուզն եւ զամենայն համախոհ նոցունց (ամենքն էլ Հոռոմ են): »

Բ. « Եւ զի խոստովանիցիք զՏէր մեր Յիսուս Քրիստոս՝ մի քրիստոս, մի որդի, մի զէմբ, մի անձնաւորութիւն՝ յերկուց կառարեւոց բնութեանց միացեալք ի մի անձնաւորութիւն՝ անորիչ, անփոփոխ, անայլալելի, անշիւթ. ոչ այլ զորդին Աստուծոյ ասել եւ այլ

զորդի սրբոյ Աստուածածնին. այլ զնոյնն որդի Աստուծոյ եւ որդի մարդոյ՝ բնութիւնս երկուս, զմին խոստովանել Աստուած եւ մարդ յերկուս բնութիւնս, զնոյն եւ մի Քրիստոս՝ ունելով երկուս ներգործութիւնս բնականս աստուածային եւ մարդկային, ոչ հակառակք միմեանց, այլ ընթանայ մարդկան կամքն զինի Աստուծոյ կամացն:

Գ. « Եւ կամիմք՝ զի ասիցէք զերեք սրբասացութիւնն բաց ի խաչեցելոյն վասն մեր եւ բաց յեւէն: »

Դ. « Տօնեղիք եւ զտօնսն ընդ Հոռոմք, այս է՝ զլուետեացն Տեառն ի քսանեւէկինգ մարտի, եւ զՄնունդն ի դեկտեմբերի քսան եւ հինգ, զԹլիատութիւնն յութերորդն զինի ծննտեան Քրիստոսի, այս է՝ յառաջինն յունվարի, զՄկրտութիւնն ի վեցն յունվարի, զՏեառնընդառաջն փետրվարի յերկուսն եւ պարզաբար զամենայն տօնսն տէրունականս եւ զսրբուհոյ Աստուածածնին. եւ զվարապետին եւ զսրբոց Առաքելոցն եւ զայլ սրբոցն: »

Ե. « Եւ զի առնի՞ցիք զմիտոնն ձիթով ի պտղոյ ծառոց: »

Զ. « Եւ զի առնի՞ցիք զաստուածային Հաղորդութիւնն խմորուն հացիւ՝ գինեաւ եւ ջրով: »

Է. « Եւ զի կացցեն ամենայն քրիստոնեայքն՝ քահանայք եւ ժողովրդականք ի ներքս յեկեղեցւոջն յորժամ կատարի աստուածային պատորագն, բաց յայնցանէ՝ զորս արգելուն կանոնք յաղագս ապաշխարութեան նոյնպէս եւ յայլ կարգս եկեղեցւոյ: »

Ը. « Եւ զի ընդունիցիք զչորրորդ եւ զհինգերորդ եւ զվեցերորդ եւ զեւթներորդ զտիեզերական ժողովան: »

Թ. « Եւ զի ընդունիցիք զառաջարկութիւն կաթողիկոսին՝ միայն ի թաղաւորէն Հոռոմոց: »

Դրանք՝ իրան առաջարկութիւնքը, եւ սրանք՝ իրան վարդապետութիւնքը եւ կայսերական եւ պատրիարքական հրահանգը:

« Եղբարք ասեմ զբովանդակ Հայոց զլրումն՝ առ ի յայտնել ընդ մեզ անկուս եւ անքննութիւնս. ահա « Զինչ բարի կամ զինչ վայելուչ, ասէ Դաւիթ, զի բնակին եղբարք ի միասին », որքան առաւել սպա համակամ լինել սոցա ի բարեպաշտութիւնն, նաեւ մի հօտ լինել ըստ աւետարանական ձայնին, եւ ի մի գաւիթ ժողովիլ ըստ խոստմանցն Քրիստոսի, եւ ընդ միոյ հոգիին հրահանգ լինել, եւ ձայն նորա անմոլար լսել, այսինքն՝ զգարծոց բարեաց զհրամանս, որում պարտական եմք ծառայապէս իրրեւ տեառն նմա հաւանել, ոչ միայն ի հաւատս, այլ եւ ըստ ամենայն քաղաքավարութեան լինել աստուածահաճոյ: . . . . . »

« Զայսպիսի հաւատ ստոյգ եւ բարեպաշտ առ ամենեւեան տիա-  
բամիտս եւ խաւարեալս ասել վարդապետել եւ լուսաւորել պար-  
տիք, զի այսպէս ուսեալ խորհեցցին նորա՝ որք կամին գայթակ-  
ղեցուցանել զեղբարս : Իսկ որք այսմ ուղղափառ յայտնեցելոյ  
հաւատոյս ի ներքս բերին վայրապար քննութեամբ ընդդիմադրու-  
թիւն, խաւարի արժանի են եւ լուսութեան, եւ գաննել զայնպիսիսն՝  
կուիել ի բաց վարել որպէս զխորթս, զի մի ինչ ի ներքս անցնն ի  
քրիստոնէութիւնս գայթակղութիւն եւ զայնսով որք ոչ համա-  
ձայնին, այլ հակառակին քուճի պատուականութեան, որ ըստ այսմ  
յուսոյ վարդապետութեանն կամ երգեցողութեան կամ պաշտու-  
մանց զոր ինչ ի ներքս անէ քո սրբութիւն նորոգ ի փառս Աստու-  
ծոյ, որոչեւ ի միութենէ եկեղեցոյ, եւ եթէ այնպիսի այն՝ որ  
ներհակ զինք զբով եւ բան անցէ յառաջ կամ հակառակամարտ,  
ժողով անօրինել ամենայն իմաստիւ եւ կարծել զնորա գայթակղե-  
ցուցանելն, որպէս զի զամենայն եղբարս պատշաճ սիրով համա-  
լուծչս եւ համախոհս կարասցեն առնուլ ի բարեպաշտութիւնս : »

Էլ ըսաւ եւմ համարում, Մորազան, Հայոց եկեղեցու  
ազգային յատկութեանցը մասին խօսելը. վասնզի պէտք  
եղածէն աւելի կարծեմ խօսեցայ և խօսեցինել սուր մեր  
սուրբ Հարց. բայց և այնպէս հարկ եմ համարում և իմ  
յատուկ հայեցուածք այդ մասին մէջ բերել և ապա ուրիշ  
խնդրի վրայ դարձնել : Ասել, այսօր թէ՛ մեր օրերու  
Հայք՝ ուր որ են, Հայաստանեայց եկեղեցին կամ թէ՛ եր-  
րորդ դարուայ Նիկիական քրիստոնէութիւնը, ինչպէս որ  
ընդունած են, այնպէս են իրանց միջում պահած ու պահ-  
պանած առանց կերպարանափոխութեան, այդ անհնարին  
բան է, վասնզի չկայ արեւու ներքեւ մի բան՝ որ կերպարա-  
նափոխութեան օրէնքին ենթակայ լինի ոչ : Բուն իսկ եկե-  
ղեցին հիմնողին մէջ, այսինքն մեր Տէր Յիսուս Գրիստոսին  
մէջ՝ քրիստոնէութիւն երկնից արքայութիւն էր. Առաքելոց  
հասկացածն էլ կարող ենք ասել, թէ՛ մի և նոյն էր առանց  
ամենափոքր փոփոխութեան՝ երբ արդէն իրանց վարդապե-  
տութեանց մէջ տարբերութիւն ենք աննում : Մի և նոյնը  
կարող ենք ենթադրել նաև Առաքելոց և սուրբ Հարց  
քրիստոնէութեան մասին, ինչպէս էլ որ անանք Ա. Բ. Գ.  
դարերու քրիստոնէութեան վրայ խօսելիս : Ուր մտայ, որ

երբ քրիստոնէութիւնը, այլ և այլ աշխարհների և ազգերի,  
այլ և այլ աէրութեանց և իշխանութեանց վրայ տիրելով՝  
այդ կերպարանափոխութեան օրէնքին պիտի ենթարկուէր  
ոչ. ո՛վ որ դիտէ քրիստոնէութեան պատմութիւնը, իմ այս  
ասածը լու կը հասկանայ : Գիտենանք, որ մենք Հայքս  
մի անգամ որ մեր հայրենի աշխարհէն դուրս ենք եկել, մի  
և նոյն ժամանակ անդգալի կերպով մեր եկեղեցոյց էլ ենք  
դուրս եկած, վասնզի ինչպէս ասացինք, աշխարհ, եկեղեցի  
և ժողովուրդ իրար հետ շաղուել ու խմորուել էին ու  
այնպէս կարող էին եղել պահպանել այն՝ Զրադաշտականաց  
Մահձեականաց և Բիւզանդականաց յարձակմանց դէմ,  
միանգամ, որ ոսներնին դուրս են դնում և գաղթում թէ՛  
Հոռոմոց աշխարհում թէ՛ Կիլիկիաում և Վրաստանում, զգալի  
կերպարանափոխութիւնը երեւում է. օրինակ, Ռուբինեաց  
ժամանակ Հայոցեկեղեցու վիճակ ներսէս Շարհալուց յետոյ,  
նոյնպէս և արեւելեան Եւրոպիում, Լեհաստան, Աւստրիա  
և Թուրքիա : Այդ կերպարանափոխութիւն նրա աչքին  
աւելի է դպչում, որ ճանաչել է Հայոց՝ թէ՛ իր բուն երկ-  
րում և թէ՛ իր երկրէն դուրս օտարաց երկրներում : Կարելի  
է ինձ ասողներ լինին, թէ՛ այդ կերպարանափոխութիւն  
գրաւանց է ծիսակատարութեանց և արարողութեանց վրայ  
միայն, և թէ՛ ներսուանց հաւատը ու հաւատոյ վարդապե-  
տութիւնն այն է, ինչ սր է մեր նախնեաց մէջ. ես վարա-  
նում եմ այդ կերպ հայեցուածքին այն ասելու. վասնզի  
այդ դրսէն կերպարանափոխութիւնն ուշ կամ վաղ մի ազգի  
տղիտութեան և կապուութեան ժամանակ նրա ներսին էլ է  
ներդարձում. ինչպէս այդ բանի շատ օրինակները հէնց մեր  
դարումը մեր աչքի առաջը կատարուելը անանք : Ռուսի  
և մեր նախնեաց քրիստոնէութիւնը մեր մէջ պահպանելու  
համար, ինչպէս նրանց միջումն էր, պէտք է որ՝ նոյն քրիս-  
տոնէութեան ուսմանց և գիտութեանց մէջ, մենք այնպէս  
դեգերինք, որ մեղ մի կեանք դառնայ հատարակական. բայց  
ինչ եմ ասում, ահա այսօր մենք Օրթոօքսոքսների և Դաթո-  
լիկների միջումն ենք և նրանց առաջը մենք հերետիկոս ենք  
և հերձուածող համարուած, և այդ բանին համար մենք

դժարանում ենք ու նեղանում պարապ տեղ, և մեզ ու մեզ  
 Լուսաւորչական ենք կոչում, ցոյց տալու համար թէ, Լու-  
 սաւորիչ Նիկիական լինելով և Նիկիականն էլ ուղղափառ,  
 հետեւաբար և մենք Օրթոտոքսների հետ Օրթոտոքս ենք և  
 Գաթուղիկների հետ էլ Գաթուղիկ : Բայց այդ աւելորդ-  
 անունը մեր կամ մեր եկեղեցու վրայ պատմութիւնը դրած  
 չէ և ոչ էլ ազգովին ընդունուած մի անուանակոչում այդ  
 մեր եկեղեցուն կամ քրիստոնէութեան : Հապա շատ հնուց  
 մենք մեզումեզ Հայ քրիստոնեայ ենք կոչած, Հայ քրիս-  
 տոնեայ իմաստում, երկու բան պարունակուած է, Հայու-  
 թիւն և Քրիստոնէութիւն միասին, Քրիստոնէութիւնը ազ-  
 դայնացած է Հայութեամբ, Հայութիւնն էլ քրիստոնէա-  
 ցած է քրիստոնէութեամբ :

Գրեմք, Սրբազան, որոնք են ինձ համար հերետիկոսք  
 կամ հերձուածողք և մեծ հերետիկոսք և հերձուածողք : Այն  
 ազգերն ու աղինք կամ տէրութիւնք, որոնց մէջ կղերական  
 տիրապետութիւնը անսասան, անփոփոխ և ծանրալուծ մի  
 սարերք է դարել : Այն, Սրբազան, այդ բանն երբէք եղած  
 չէ Հայոց կեանքում և յուսամ, որ երբէք էլ պիտի չլինի :  
 Մի այնպէս դատէք, երբ կը տեսնէք այս վերջին դարերում,  
 որ Հայք իրանց թշնամի ազգաց միջում, հոգի, մարմին  
 գնացել իրանց քահանային փիլոնի տակն են մտել : Այդ  
 իրողութիւն հոգի ազատելու համար չէր միայն, այլ  
 ազգային կեանք . այդ մի փոխադարձ պարտաւորութիւն  
 էր քահանային կողմէն փիլոնի տակոյն առնելու իր ժողո-  
 վուրդը, վասնզի ժամանակով էլ նոյն ժողովուրդը քահա-  
 նայն պահպանած է նրա վանքերովը, կտրուածներով իր  
 որովն ու թրովը, իր վահանու ներքեւ : Այն, այդ իրողու-  
 թեան հետեւանք են այսօր Հայաստանում գտնուած եկե-  
 ղեցիքն ու վանքերը իրանց ժողովուրդով . այդ իրողութեան  
 հետեւանք են այսօր Ասորոց, Օսմանցոց, Ռուսաց և Յու-  
 նաց երկրներում գտնուած Հայերը : Իսկ Փրանկաց երկրնե-  
 րում գաղթող Հայոց, ան, ցաւելով և միանգամայն խաղնելով  
 եմ ասում, որ Օրթոտոքս և Գաթուղիկ ազգերը, նրանց քա-  
 հանայի փիլոնի տակէն բռնութեամբ և շատ անգամ նեղու-

թեամբ թեւէն քաշելով՝ տարել են իրանց ծանր լուծին են  
 կապել, որմէ պրծնելու հնար չկայ : Մի երկու խօսք էլ,  
 Սրբազան, մեր եկեղեցու կամ հաւատի մասին, և յետոյ էլ  
 վերջ կը տամ : Մոնթէսքիէօ ասած ունի թէ՛ մի ազգ այն  
 վարչութիւն կունենայ, որ վարչութեան, որ ինքն արժանի  
 է : Ասել է թէ՛ եթէ ինքը քաղաքային առաքինութիւնք  
 ունեցող մի ազգ է, այնպէս էլ վարչական առաքինութիւնք  
 ունեցող մի վարչութիւն կունենայ : Մի և նոյն բանն է և  
 մի կրօնի համար : Երբ մի ազգ ազէտ է, մալի է, կոպիտ է  
 և այլ դրանց նման բաներ է, ամենալոյս հաւատն էլ ունե-  
 նայ նա՛ նոյն լոյս հաւատն իրան է նմանեցնում : Իսկ եթէ  
 մի ազգ գիտուն է, առաքինի է, աղնիւ է և այլ դրանց  
 նման բաներ, նրա հաւատը կամ կրօնը խաւար կրօն էլ լինի  
 լոյս հաւատ կը դառնայ : Այդ նոյն հանգամանքում մենք  
 էլ գտնուեցանք . երբ մեր աշխարհում էինք, երբ դպրե-  
 վանքներ ունէինք, որ տեղ անդադրիլ տեսակ տեսակ  
 սուրբ դրքեր օրինակուում էին և ազգի միջում սիրուում,  
 այնպէս որ՝ սուրբ գրոց ուսումն ու գիտութիւնը՝ մեծին և  
 փոքրին, արուին և իգին հասարակաց մի բան էր եղած,  
 ինչպէս որ մեր սրբազան լեզուն էլ էր մեր հաւատին հետ : Բայց  
 միանգամ որ այդ դպրեվանքերը փակուեցան, սուրբ գրոց  
 ուսում և գիտութիւն դադրեցան և մենք ստրկացանք ու  
 տարագիր եղանք . հետեւաբար և կոշտ ու կոպիտ, այնպէս  
 էլ եղաւ մեր լոյս հաւատը : Ասել ուզում եմ, որ երբ մենք  
 խաւարեցանք՝ մեր հաւատն էլ մեր հետ եղաւ մեր միջում :

Այդպէս, Սրբազան, մեր նախնիք քրիստոնէութիւնը  
 հասկացել ու ըմբռնել են, ինչպէս որ տեսաք, այնպէս էլ  
 Յիսուս Քրիստոս իրան հաւատացեալներ է ունեցել Հայոց  
 մէջ : Տեսաք էլ որ մօտ տասնուհինգ դար, իրանց մտաւոր  
 սնունդն է եղել քրիստոնէական հոգեկանութիւնը, և իրանց  
 բարոյական կենաց առաջնորդը՝ եկեղեցին : Թէև մանր մունր  
 հանդամանքներում չմտանք, բայց հեշտ է գուշակել մի  
 աշխարհի կամ ազգի վիճակ, որ ամեն նիւթական բարե-  
 մասնութիւն ունի, և իրան բարոյական զօրութիւն միայն  
 հոգեւոր սնունդէն կառնէ և ոչ մտաւոր . այսինքն, եւրո-

պական մտաւորը, որն որ դեռ երեկուայ բան է։ Այդ ազգ՝ թէ՛ իր նիւթական և թէ՛ հոգեկան բարեմասնութեանցը համար, զարմանք չէր՝ որ դրանք չունեցող աղքատ ու ազանց նախանձը, ասելութիւնը դերումն ու գերութեմը, յափշտակութիւնն իր վրայ հրաւիրում լինէր ոչ։ Ուրբան որ վերջին նեղութեան և թշուառութեան մէջն է ընկել, այնքան էլ իր հաւատն ու եկեղեցին կունքովը գրկել է ու պիւրկ բռնել է, և նրան է ճանաչել իրան փրկութեան խարխալ։

Խօսք կայ ոչ, Սրբազան, որ անց կացած դարերում մարդկանց, բայց մարդկանց եմ ասում շեշտելով՝ մտաւոր կամ հոգեւոր անունը կրօնն էր։ Հայք էլ քրիստոնէութիւնը կամ սուրբ գիրքն են արած իրանց հոգեւոր անունը։ Բայց մի և նոյն ժամանակ պարտական էին և իրանց մարմնաւոր անդին վրայ էլ մտածել, և այդ անունը պիտի լինէր իրանց հայրենի երկիրը, որ քառսուն յիսուն դար շարունակ իր ծոցում անուցել էր իրանց։ Սակայն Հայք, կարող չեղան մի վարչութիւն հաստատել նման իրանց եկեղեցու վարչութեան, և այդ անվարչական դրութեան զոհ գնացին։ Երբ՝ սեպհական աշխարհէ, կրօնէ, լեզուէ, ստացուածքէ և այլ շատ տարերքէ զուրկ ազգ և ազինք՝ դուրան երկրներէ իրանց վրայ ամպի նման եկան պատեցին, Հայք տեղի տուին նրանց՝ և վեր կացան գնացին, իրանց ազգայնութեան, եկեղեցուն և աշխարհի վրայ չար աչք գնող Բուզանդականաց գիրկն ընկան, քրիստոնեայ է, ուղղափառ է ասելով՝ նրանց հետ ներողամտութեամբ, թոյլտուութեամբ ապրեցան և իրանց պատուական քաղաքները ինչպէս Կարս, Անի, Արծկէ, Մանազկերտ, Արզն, Տարխոն և այլն և այլն նրանց յանձնեցին, որոնք եկան, իրաւ է, տէր եղան դրանց մի փոքր ժամանակ, բայց իրանց դերեզմաններն էլ այն տեղ գտան։ Իրանց դերեզմանաց վրայ հող ծածկողներն ու քար դնողներն էլ եղան Սելջուկեանք, նոյն քաղաքների պարիսպները իրանց գլխին փլցնելով։ Վերջապէս Պարսիկ թրքերը և Օսմանցի թրքերն այդ կողոստան իրարու ձեռքէ քաշքշելով՝ մէջ տեղէն պատառեցին, մի մասը նրա ձեռում մնաց, միւս մասն էլ սրա . նա՛ ուրիշ ճար գտաւ

ոչ երկիրը պարսկացնելու՝ բայց միայն ամբողջ ժողովուրդը բռնի հանելով իր երկրէն դուրս և Սպահան տանելով։ սա էլ անտէր և անպաշտպան թողելով իրան համար մի հեռաւոր երկիր, աւազակաց և վայրենեաց ձեռին թողեց և պատճառ տուաւ բնակչացը ցրուելուն դէս ու դէն՝ մանաւանդ Կ. Պօլիս։ Այդ երկու թուրք ազգերը, մինը Պարսիկ անունով, մինը Օսմանցի՝ Հայքը երկու երեք դար իրանց իբրեւ ծառայող հասարակութիւն են դործածել (tierce état) վասնզի՝ իրանք միայն անկանոն կերպով պատերազմել գիտէին և ոչ ուրիշ բան։ Հայաստան այս դարու սկզբին, այն վիճակումն հասաւ, ինչպէս որ էր, կարելի է՝ Հայկայ գաղթականութենէն առաջ, մի քանի գիւղերով, աւաններով և շէներով և մեծ մասամբ աւերակներով մի երկիր, միայն թէ այն տարբերութեամբ որ, այն ժամանակ իր տէրն ու պաշտպանը՝ իրան բարեկամ, իրան հայր ու տանտէրն էր եղել, մինչդեռ այս դարուանը՝ հրացանով, տէգով ու թրով, աւազակներ են, բարբարոսներ են եկամուտ վայրենիք տարաբարբառ և այլադէն։ Արդ՝ դուրս արա՛ այդ հրացանակիր աւազակին նրա կշտէն, վերու նրա գլխեմէն՝ արգարութիւնն աճուրդի հանող դատաւորն ու կառավարիչը, տուր նրան գոնէ կէս դար խաղաղութեան ժամանակ, այն ժամանակ, Սրբազան, մի դար անց չկենալ, կը տեսնես որ՝ Հայք, ինչպէս արդէն փորձը ցոյց տուին, այս վերջին պատերազմէ առաջ և նախընթաց պատերազմէն յետոյ՝ նորէն զարգացել են, լուսաւորուել են և հարստացել և Հայաստանն էլ շէնացել է, քաղաքակրթուել է. և այդ իրողութեան մի նմուշը մենք մեր աչքով տեսանք թէ՛ Ռուսիոյ Հայաստանում և թէ՛ Օսմանցու Հայաստանում։ Հայք՝ իրանց սեպհական աշխարհում, այս վերջին քսան և հինգ տարուայ միջոցում, որոնք ես տեսայ նրանց Երեւան նահանգում և իր գիւղերում՝ 1859ին, Երզնկայ և իր գիւղերում, Քարբերդ և իր գիւղերում, Չաբսանճակ և իր գիւղերում, Գղի և իր գիւղերում, Բալու և իր գիւղերում, Մալաթիա և իր գիւղերում, Տիվրիկ և իր գիւղերում, Մուշ և իր գիւղերում, Սեւաստ և իր գիւղերում 1869ին։ Վերջապէս Կարին և իր գիւղե-

բում, Վան և իր գիւղերում 1877ին և ուրիշ այլևայլ քաղաքներում և գիւղաքաղաքներում թէ բուն Հայաստանում և թէ Հայաստանէն դուրս : Հայր Ղեւոնդ Ալիշանի՝ «Տեղագիր Հայոց Մեծայր» ձեռիս՝ որն որ հրատարակուած է 1854-1855ին համեմատելով՝ նկատեցի, տեղ տեղ քառապատկել են, տեղ տեղ եռապատկել են, ոչ թէ միայն թուով, այլ հարստութեամբ, ինչպէս վաճառականութեամբ, արուեստաւորութեամբ և երկրագործութեամբ. և այս վերջին ժամանակներումս մի փոքր էլ դատարակութեամբ և դրականութեամբ, որոնց նմուշը échantillon) իր կարգին ցոյց կըսամ: Բայց, աւանդ, այս վերջին պատերազմի ժամանակ, այդ քաղաքներն ու գիւղերն իրանց առաջուայ վիճակին վերածուեցան:

Խօսիմ հիմակ էլ շտապով, Սրբազան, մի փոքր՝ յրիստոնեայ Հայաստանի ընկերական կեանքի վրայ, նախարարութեանց և իրանց կազմուածքին, քաղաքաց, երկրագործութեան, արհեստաւորութեան և վաճառականութեան վրայ մանուանդ : Ժամանակ եղաւ որ, Հայք արեւելեան ազգաց և ազանց մէջ առաջին տեղը բռնեցին, ըստ վկայութեան ընդհանուր ազգաց և ազանց վաճառականական պատմութեան. և ապա աւարտեմ իմ թուղթ՝ Հայաստանի վերաջինութեան վրայ էլ իմ հայեացքը դարձնելուց յետոյ:

Այս թղթիս սկզբումբ, տեսանք թէ ինչպէս է կազմուել տանուաւերական ընկերականութիւնը, յետոյ թէ՛ ինչպէս այդ՝ նահապետական է եղել և Պարթեւայ ժամանակ էլ նախարարական. և համոզուեցանք, որ այդ դրութիւն եկովի չէր տար աշխարհէ կամ թէ մի յաղթող ազգ այդ դրութիւն իրան հետ բերած ու հաստատած չէր Հայոց աշխարհում, այլ բուն երկրի գիրքն էր, որ այդ ընկերականութեան ձեւ ու կազմուած էր տուել, և յրիստոնէութիւնն էլ չէր կարող եղել մարդկանց մէջ յրիստոնէական հաւատարութիւն մտցնելու համար, մեր աշխարհի լեւները դաշտացնել կամ թէ դաշտերը լեւնացնել, որքան որ կարող եզու մարդկանցը հոգեւորապէս լուսաւորել, ինքն էլ ստիպուեց իր եկեղեցու վարչութեան կազմուածքը՝ նոյն ընկերական,

այսինքն նախարարական կազմուածքի վրայ ձեւել և կազմարել: Ինչպէս որ ամեն դաւառ, աւան, շէն, տուն և այլն մի նախարար ունէր, այնպէս էլ մի եպիսկոպոս ունեցաւ. ինչպէս որ աշխարհն ամբողջ մի նախարարապետ՝ թագաւոր անունով ունեցաւ, այնպէս էլ մի եպիսկոպոսապետ ունեցաւ կաթողիկոս անունով: Այդ դրութիւն տեւեց Հայաստանում մինչեւ այն ժամանակ, որ օտարաց գերիշխանութիւնը թուլացաւ, Պաղտատու խալիֆաների և Բիւզանդիոյ կայսերաց: Այն ժամանակ մեր նախարարաց զօրաւորագոյններն էլ քաղաքներ շինեցին և իրանց գլխին էլ թագ դներով ասուեցան Կարուց թագաւոր, Անու թագաւոր, Ոստանու թագաւոր, ուրիշ մանր մունր քաղաքների աէրերն էլ իշխան կոչուեցան և այդ քաղաքներն՝ ինչպէս Անի, Կորս, Մանաղիկերտ, Ոստան, Արծկէ և այլն կործանեցան թէ՛ երկրաշարժէ և թէ՛ թշնամեայ յարձակմանէ. այն ժամանակ իրանք էլ փճացան անով տեղով և անունով, թէ և մի դար յետոյ նորէն ուրիշ անուններով, ուրիշ դրութեամբ, Տարսի լեւնագաշտերի վրայ մի վերջին անգամ էլ մի փոքր փայլելու համար երեւեցան, որոնց վրայ երկար խօսել այս աեղ կամք չունիմ. միայն այսքանն եմ ասում, որ երեք դարուայ մէջ մեծ և փոքր վաթսուն և հինգ պարսպապատ քաղաքներ շինեցին կամ նորոգեցին, մայր քաղաքներ և ծովեզերեայ քաղաքներ զարգարեցին՝ տաճարներով և շէնքերով, բայց՝ վերջին ժամանակները, փոխանակ հայաւարի ազգայնացնելու այդ իրանց նոր հայրենիքը, յիմար գաղափարն ունեցան փրանդացնել այդ՝ աւատական դրութեամբ Հռովմայ Պապի աւատառու հպատակ դառնալով և վերջապէս՝ ինչպէս իրանց բուն հայրենիքէն, նոյնպէս էլ այդ ստացովի հայրենիքէն էլ դէպ ի դուրս գաղթելով՝ խաղառ աներեւան եզան աշխարհիս երեսէն:

Այդ իրողութիւն, Սրբազան, ինչպէս որ իմ գրչով շատով կատարուեց, նոյնպէս էլ չեղաւ իրագործուելում: Պարթեւք, որ կամեցան մի քաղաքական միութիւն ապ իրանց թագաւորութեան Հայաստանում, տեսան որ այդ երկրում, ինչպէս որ շատ լեւներ կան այնպէս էլ շատ

նահապետներ կան ինքնադուրս, դրանցմով ուղեցին մի վարչական կապակցութիւն հաստատել. ինչպէս իրանցն էր. որովհետեւ Պարթեւաց մի ճիւղը Հայոց աշխարհի, միւսը՝ Պարսից և մի ուրիշ՝ Մասկթաց և մի չորրորդ ճիւղ Հնդկաց աշխարհներն վրայ էր տիրում, որոնցում ամենամեծը Պարսից աշխարհինն էր. ուստի և մեր նահապետութիւնքը նախարարութեանց վեր ածեցին. բայց վախենալով Հայկազանց նահապետներէն, առաջ քաշեցին Մուրացան ցեղին, թագաւորն երկրորդական աստիճանը տալով նրան, այսինքն Սատրապանութիւնը, Պարթեւք տեսնելով՝ որ ճար կայ ոչ, այդ լեռները չեն դաշտանում, այսինքն նախարարները չեն ստրկանում իրանց առաջ, յայտնի համարձակ նրանց դէմ պատերազմ բաց արին: Տիրան շատ նախարարներ առանց մի յանցանքի կոտորեց, նոյնպէս Արշակ շատ նախարարներ փճաչուց և նրանց արմատը ոչնչացուց ու կալուածներն էլ գրաւեց, խեղճ կամսարականք Արշակաց դատն որս դնացին իրանց կանանցմովն ու երախանցմովը:

Արի տես, որ այդ յիմարութիւնն Բագրատունիք էլ ունեցան, որոնք մտքերնին դրին բոլոր նախարարների իշխանութիւնն իրանց ձեռումն ամփոփել, որպէսզի ազգի բոլոր զօրութիւնն իրանց օգտին գործածեն. աշխատեցան ջնջել հիները և նորերը հաստատել նրանց տեղ, որպէսզի իրանցմէ կախում ունենան: Իրաւամբ այդ մասին Օհաննէս կաթողիկոսը դանդաղում է և ես էլ իմը նրանը հետ եմ միացնում: Եթէ Սասանեանք, եթէ խալիֆայք, նոյնպէս և Բիւզանդիոնի կայսերք մեր նախարարները փճացնելու աշխատեցան և յաջողուեցան ոչ. շատ վատ արին: Բայց ինչ ասենք Արշակունեաց և Բագրատունեաց, որ վատթարագոյն արին և իրանց կործանում պատրաստեցին: Այդ բանն եղաւ և Հայոց ընկերականութեան քանդում. ահաւասիկ ինչու. ինչպէս լեռներն ու լեռանց դօտինները պահպանում էին Հայոց աշխարհի պատուական դաշտերը, սքանչելի հովիտներն ու ձորերը, Արարիոյ խորշակէն, Սիպերիոյ բուքէն, այնպէս էլ նախարարները, հայկական ընկերականութիւնը թէ կռապաշտ և թէ քրիստոնեայ Հայաստանում պահպա-

նեցին ու պաշտպանեցին: Ծուռ է ծուռ այն կարծիքը, Սրբազան, որն որ արմատ է բռնած Հայոց մէջ՝ թէ Հայք կործանեցան իրանց նախարարաց անմիաբանութեանը համար: Այդ մեր բարեկամների հայեացքը չէ՛ այլ չարակամների. նախարարութիւնն ու եպիսկոպոսութիւնն էր հայկական ընկերականութեան կապը և որոնց շուտքը՝ մինչեւ այսօր մէլիքութեան անունով և առաջնորդութեան անունով համարեալ թէ՛ թէ որ դրանց նման չէ, դոնէ դրանց ստուերին ստուերն է այսօր:

Այո՛, կրկնում եմ նորանց, Հայոց աշխարհի ու ազգի ներքին բուն կառավարութիւնը նախարարաց ձեռին էր, թագաւորների իշխանութիւնը՝ առանց նրանց հաւանութեան կամ համաձայնութեան չէր կարող վարուիլ, եպիսկոպոսացն ու եպիսկոպոսապետինը՝ նրանցը բարեխառնում էր ու չափաւորում, ինչպէս տեսնւք նախարարաց մեծ մասին ծագումը մէկ լինելով ժողովրդի ծագմանը հետ, իրանց իշխանութիւնը ժողովրդին վրայ՝ հայրական էր, ազգային էր և բարոյական. իրանց վարչութեան օրէնքներն էին սովորութիւնք. այդ սովորութեանց տեղ՝ եպիսկոպոսը կանոն դիրքը դրաւ, որոց օրինակները հարկաւ տեսած էք: Այդ նախարարները մեծ հոգ և խնամք էին տանում իրանց սեպհական երկրի վրայ՝ նախ՝ դիւղեր, սներ, շէներ, կերտեր, աւաններ էին շինում, յետոյ երբ քրիստոնէացան, սկսան քաղաքներ, եկեղեցիներ և վանքեր շինել, որոնց յիշատակարանները մինչեւ այսօր կան: Այդ պատճառով, նախարարը շատ անգամ իրաւունք ունէին իրանց զօրքին մի մասն իրանց մօտ պահել իրանց երկիրը պաշտպանելու համար, հէնց այդ բանի համար էր, որ շատ անգամ իրանց և թագաւորին կամ մարզպանին մէջ զժտութիւն էր ծագում. վասնզի՛ նախարարի օգուտն ու թագաւորին օգուտը միասին վեր առնելով՝ մի զգալի, յօշափելի հասարակաց օգուտ դուրս չէր գալի, որու համար թագաւոր, նախարար, կաթողիկոս և եպիսկոպոս գիտենային իրանց նուիրական պարտաւորութիւնը. եկեղեցականք իմանում էին իրանցը. այն է, Հայաստանեայց եկեղեցու հոգեւոր միու-

Թիւնը, բայց կարող չեղան դրա նման մի միութեան հոգի՝  
 թագաւորին, նախարարին և ժողովրդին տալ յօգուտ աշ-  
 խարհին կամ հասարակաց, առանց ընկերական կազմուածքը  
 խանգարելու: Ինչպէս կը տեսնենք պատմութեան մէջ, շատ  
 անգամ մեր եկեղեցականք զօրաւոր նախարարներու կողմն  
 են բռնում, մինչեւ այն աստիճան որ՝ երբ նախարարն իրան  
 թագաւորէ հռչակում, գլխին մի թագ դնելով, իր գաւառի  
 եպիսկոպոսն էլ կաթուղիկոսական քօղն է ծածկում գլխին  
 և եպիսկոպոսապետ է հռչակում ինքն իրան: Այդպէս են,  
 Սրբազան, Աղուանից, Սիւնեաց, Արժրուենաց և այլ կա-  
 թուղիկոսաց ծագումը: Բաց ի այդ զօրքերէն, նախարար-  
 ները հարկ էլ էին տալի թագաւորին ամեն տարի, ինչպէս  
 էլ պաղի եպիսկոպոսին, վանքին և դպրեվանքին: Երբեմն  
 էլ պատահում էր՝ որ նախարարներն իրանց հարկը չէին  
 վճարում, այդ նշանակում էր ասպատակութեան դրօշ բաց  
 անել: Հարկաւ նկատել էր, Հայոց պատմութեանը մէջ,  
 Սրբազան, որ թագաւորն այն ժամանակ էր հզօր և յաղթող,  
 երբ այդ նախարարներն համաձայն էին իրան հետ: շատ  
 անգամ թէ՛ Արշակունեաց ժամանակ և թէ՛ մարզպանաց և  
 ոստիկանաց, մանաւանդ՝ Բագրատունեաց դարերում, երբ  
 թագաւորի կամ նախարարապետի և նախարարաց մէջ սէրն  
 ու խաղաղութիւնը տիրում էր, ազահով էին որ յաղթու-  
 թիւնն իրանց կողմն էր լինելու: որքան նախարարներն  
 իրանց իրաւանց և ազատութեան համար իրանց թագաւորի  
 դէմ կուռում էին, այնքան քաջութեամբ և եռանդով էլ  
 թշնամեաց դէմն էին դնում իրանց հայրենի աշխարհի  
 ազատութեան համար:

Այդ մեր նախարարական դրութեան պատկերը, որն որ  
 Ձեր՝ մի բանի խորը թափանցող հանճարոյն առաջը դրի և  
 որն որ դեռ ամբողջացուցի ոչ, բաւական եղաւ ձեզ համա-  
 դելու որ՝ Եւրոպիում տեսնուած աւատական դրութիւնը  
 (système féodal) կամ աւատականութիւնը (féodalité) չէր.  
 և ոչ էլ պարսկական սաղբարութիւնը, ինչպէս Մխիթար-  
 եան պատմիչները կարծեցին, և ոմանք էլ նրանցմէ առած  
 նկատեցին այդ այնպէս. ինչպէս Վիկտօր Լանկլուան և

այլք: Այդ դրութեան ինչ լինելը բացատրել հարկ չէ,  
 վասնզի դուք ինձմէ շատ աւելի քաջ գիտէք: Մեր նախա-  
 րարական դրութիւնը՝ մի փոքր Սկովտիոյ և դեռ ևս Անկ-  
 լիոյ Կոչուած ցեղական դրութեան նմանութիւնն է  
 բերում, որն որ ծանօթ պիտի լինի ձեզ: Պարսկական սա-  
 րբարութեան ինչ լինելը յայտնի եղաւ Մեծին Աղեքսանդրի  
 ժամանակ, որու առջի իսկոյն ծունկ չըքեցին, իրանց տէրը  
 կորաւ թէ չէ. նոյնպէս Արտաշիւր Ստահրացու ժամանակ՝  
 Պարթեւ նախարարներն անգամ նրա կողմը տաչեցին, իսկ  
 Մահմեդականաց առջեւ, մի փոքր մասը Հնդկաց աշխարհ  
 փախաւ, և մեծ մասը հաւատն էլ փոխեց, Տէրն էլ.  
 հետեւանք միահեծան թագաւորութեան: Բայց, մեր նա-  
 խարարներն այդպէս չէին. Աղեքսանդրի մահուց յետոյ նրա  
 յաջորդ զօրավարները հետ կուռեցան. Պարթեւաց հետ  
 ինչպէս վարուեցան՝ տեսանք, նոյնպէս Սասանեաց ցեղին  
 հետ սաստիկ թշնամութեամբ: Կարճ խօսքով պատմութիւն  
 Ձեզ հետ խօսեցնեմ, Սրբազան. վասնզի թէ՛ որ ես ասեմ  
 կարելի է, ասէք թէ՛ ազգատիրութիւնն է իմ միջում խօ-  
 սողը: Ո՛չ Բիւզանդացիք, ո՛չ Արաբացիք, ո՛չ Թրքերն ու  
 Քրդերը, որանք Հայաստան մասն իրարու ետեւէ, կարող  
 չեղան յաջողել նախարարներն իրանց ստրուկ անելու, այդ  
 եկամուտ ազդերը՝ երբ զէնք ունէին ձեռին, այն ժամանակ  
 էին զօրաւոր, եթէ չափազանցութիւն չես համարում, կա-  
 րող եմ ասել նոյնը և այսօրուայ մի քանի քցիփրիկ Քրդերի  
 Փախիների և կամ Զաղաների մասին՝ ցար ու ցրիւ եղած մի  
 քանի Հայ հասարակութեանց նկատմամբ: Մի կարծէք ամե-  
 նելին, որ այդ նախարարական ցեղէն՝ այդ մնացորդները,  
 Հայաստանի դիւղացիք, հիւղացիք, դաշտեցիք, սարեցիք,  
 (քաղաքացիք չեմ ասում, որովհետեւ քաղաքները դրանցմով  
 են բաղմաբնակուել). նոյն հողին, նոյն արիութիւնը դեռ  
 կրում չեն իրանց մէջ. եթէ հնազանդ են, եթէ արձանի  
 նման անշարժ են. մի կարծէք որ այդ իրանց բնականն է  
 իրանց վրայ. ո՛չ ամենեւին. իրանց գտնուած վիճակի զօրու-  
 թենէն է, իրանց գլխին կանգնող դատաւորը՝ այլադէն ու  
 թշնամի, իրանց կշտին կանգնող աւազակը՝ այլադէն ու

թ չնամի, երկուսն էլ համամիտ իրանց ընկճելու և ճնշելու . իրանք ունին տուն, տեղ, արտ, լուծ, տախար, պարկուպուրկ և այլն . իրանց գլխին կանգնողները ոչինչ ճանճի նման, որոնք ուր տեղ ճէնճ՝ այն տեղ ճանճ են : Ի՞նչ կարող են անել այդ ճանճերուն ու պիծակներուն :

Նախարարաց մէջ, Սրբազան, մի դասակարգութիւն էլ կար : Եղիշէ, անուանում է, ասպ նախարարներ և կրօնք նախարարներ, նոյնպէս կանանց համար էլ այդ դասակարգութիւնն է անում, ասելով թէ՛ նրանցմէ ետքը՝ մտա հինգ հարիւրի չափ իրանց անուններովն է եղել ճանաչում : Նախարարները իրանց դասակարգութեան համեմատ բարձրի վրայ էին բազմում թագաւորի մօտը, ինչպէս որ մեր ստանիկ լեզուի մէջ քառք բառը պարէ բառին հետ համանշան է : Ներսէս Պարթեւ այդ դասակարգութիւնը՝ նորէն ըստ աւագութեան և կրտսերութեան վերասարքելով՝ արձանագրեց և թագաւորական դիւանում պահեց : Մօտերս՝ ձեռն նման մի պատուական և ուսումնական Հայ՝ Պարոն Գէորգ Ախվերսեան, իմ անմտաց բարեկամը, մի հին ձեռագրի կողքում՝ դատու մի հատուած մագաղաթի վրայ գրած, որն որ Պարսից Արտաշիր և Վռամ թագաւորների և մեր Սահակ Պարթեւի ժամանակներին է վերաբերում : Այդ հատուածում եօթմասնուսն նախարարներին անուններն ու տեղերն են յիշատակուած իրանց կարգին և երկրին համաձայն, որ հաստատել է Պարսից թագաւորը : Ահաւասիկ այդ հատուածը .

Առաջին իշխան եւ Մաղխազն : Ա. Սիւնեաց Տէր. Բ. Ասպետ. Գ. Արծրունեաց Տէր. Դ. Մամիկոնէից Տէր . Ե. Ծահապն Ծովաց Տէր. Զ. Մոկաց Տէր. Է. Ռչտունեաց Տէր. Ը. Վահունեաց Տէր. Թ. Կասպէից Տէր. Ժ. Անձաւացեաց Տէր. ԺԱ. Ապահունեաց Տէր. ԺԲ. Կամսարական. ԺԳ. Ա. յլ Ապահունի. ԺԴ. Վանանդացին. ԺԵ. Ամատունի Տէր. ԺԶ. Գողթան Տէր. ԺԷ. Գնունեաց Տէր. ԺԸ. Ա. յլ Անձաւացի. ԺԹ. Տայոց. Ի. Բասենոյ դատաւորն. ԻԱ. Գընթունեաց Տէր. ԻԲ. Վարձաւունին. ԻԳ. Գարմանայ Տէր. (Գրչագրում այս տեղ բաց է թողուած) ԻԵ. Սահառունի. ԻԶ. Գաբելեից Տէր. ԻԷ. Աբելեից Տէր. ԻԸ. Սիւնեաց Երկրորդն. ԻԹ. Արծրունեաց Երկրորդն. Լ. Արծրունեաց Երրորդն. ԼԱ. Մամիկո-

նէից Երկրորդն. ԼԲ. Ռոփսեանն. ԼԳ. Գաչացեանն. ԼԴ. Դիմաքսեանն. ԼԵ. Բուխա Դիմաքսեանն. ԼԶ. Ա. յլ Աբելեանն. ԼԷ. Ա. յլ Դիմաքսեան. ԼԸ. Պալունին. ԼԹ. Առաւելեանն. Խ. Աչահմարեանն. ԽԱ. Համբուժեանն. ԽԲ. Վարասպակեանն. ԽԳ. Զիւնականն. ԽԴ. Ակէացին. ԽԵ. Զարեհաւանեանն. ԽԶ. Ընծայեցին. ԽԷ. Մանդակունին. ԽԸ. Սղկունին. ԽԹ. Տայգրեանն. Ծ. Երմանթունին. ԾԱ. Սպանտունին. ԾԲ. Առաւենեանն. ԾԳ. Տրունին. ԾԴ. Մամբերացին. ԾԵ. Նաւունին. ԾԶ. Բժնունին. ԾԷ. Գաջերունին. ԾԸ. Մեհնունին. ԾԹ. Նախճիրին. Կ. Բաղաքապետն արքունի. ԿԱ. Որսապետն արքունի. ԿԲ. Արտաշեսեանն. ԿԳ. Վանանդացին Երկրորդ. ԿԴ. Տուլն. ԿԵ. Վիթանու. ԿԶ. Աքածոյ. ԿԷ. Շիրակա Դիմաքսեան. ԿԸ. Գազրիկեանն. ԿԹ. Մարացեան Տէր. Զ. Վազրասպունին :

Այդ դասակարգութիւնը, կամ բարձակալութիւնը քանդելը շատ անգամ վտանգաւոր բան էր, թէ և այդ քանդողը լինէր մի թագաւոր և թագաւորաց թագաւոր : Միանգամ, Սիւնեաց Տէրին, Շապուհ՝ երբ իրան սեղանակից արեց, ժԳ՝ տեղը տուաւ նրան. նա՛՛ այնքան վիրաւորուեց այդ անարգանքի համար, որ սեղանի վրայ թիքա (կտորհաց) դրեց ո՛չ բերնում և իր վրէժն առաւ նոյն թագաւորի ապարանը թալանի տուով, և ինքն Բահարբերդն ապահովուեց, այնպէս որ՝ Շապուհ ոչ ինչ անել կարող չլինելով՝ նրա երկիրն աւերեց : Ինչպէս երեւում է այդ դասակարգէն՝ ոչ միայն ամեն նահանգ իր նախարարն ունէր, այլ գաւառներն ու աւաններն էլ իրանցը : Տրդատայ ժամանակ, ասում է, Օրբելեան թէ՛ 4000 իշխան կային Հայոց աշխարհում : Արշակ Բ. ի Ժամանակ 400 նախարարք էին, ասում է Մեսրոպ երէցը . իսկ Փաւստոս Բիւզանդն մինչև 900 ի է հանում նրանց թիւը : Հարկաւ յիշում էք, Սրբազան, թէ ինչպէս Արարացիք, ըստ իրանց քաղաքականութեան, որն որ մինչև այսօր տիրում է նրանց, մի միայն աշխարհակալութեանը հետեւողների մէջ, ուղեցին ջնջել այդ նախարարաց բազմութիւնը, որոնց դոյութիւնն անհնարին էր անում նուաճել Հայաստան և իտլամայնել, ինչպէս Արարաց համար, այնպէս էլ Յունաց : Ես լուում եմ՝ այս տեղ, և նոյն իսկ Դեւունդ պատմչին եմ խօսեցնում այդ բան :

« Իբրեւ զայս տեսանէր իշխանն Իամայէլի՝ եթէ առաջնորդ զօրուն Յունաց եղեն նախարարք Հայոց, դարձեալ զնոյն խորհուրդ խորամանկութեան հրամայէր Մահմետի կատարել:

« Եւ Մահմետի առեալ զհրամանն անիրաւ՝ հրամայէր կասուց ուրումն, որ էր հրամանատար նորուն ի կողմանսն Նախճուան քաղաքի, կոչել առ ինքն զնախարարս Հայոց նոցին հեծելովք իբրեւ պատճառանօք՝ եթէ անցուցանել ի համարու արքունիս եւ առնուլ Հոռոզ (ուծիկ) եւ դառնալ: Եւ նոքա ըստ օրինի պարզաբանութեան իբրեանց հաւատարիմ համարեալ զնենդութիւն գաղտասոյր որսողացն՝ վաղվաղակի անդր հասանէին: Իբրեւ ժողովեցան անդր, հրամայեցին յերկուս բաժանել զնոսա, զումանս հաւաքեցին յեկեղեցին Նախճուանու եւ զիչսն յաւանն ի Խրամ, արկանէին յեկեղեցի նորա կարգեալ ի վերայ պահապանս, եւ խորհէին թէ որպէս կորուսցեն զնոսա: Եւ միաբանեալ առ հասարակ ամենեքին՝ հանին արտաքս զազատատոհմն յարգելանէն, եւ զորս ի սրբարանն արդիւնէին՝ հրակէզ արարին եւ տոչորէին ի յարկս աստուածային խորանին. . . . .

« Իսկ զնախարար ազատացն եղին ի կասկանս բանախ, յանհանդուրժելի տանջանսն խոշտանդէին եւ պահանջէին ի նոցանէ բազում ոսկի եւ կշիւ արծաթոյ եւ երգմամբ դաշինս արարեալ հաւատարմացուցանէին զերդումն ստութեան: Եւ նոքա առ վտանգի նեղութեանն՝ զբազում մթերս գանձուցն իբրեանց, զորս ի պահեստի եղեալ էին յերեսաց նեղչացն եւ եթէ ի ցամաքի, տային ի ձեռս թշնամեացն զի թերեւս ասրեցուցեն զանձինս իբրեանց: Եւ իբրեւ ունայնացեալք ի գանձուցն եղեն՝ ձեռնամուխ եղեալ անօրինացն բառնային զիենդանութիւն նոցա եւ զիայտէ կախեալ դատապարտէին զնոսա: Անդ ըմբռնեցան Սմբատ, որդի Աշտոյ ի Բագրատունի տոհմէ, եւ Գրիգոր եւ Կորիւն՝ ի տոհմէ Արծրունեաց եւ Վարազ Շապուհ եւ եղբայր իւր ի տոհմէ Ամասունեաց եւ բազում այլք ի նախարարաց Հայոց, զորս ոչ բաւեմ մի ըստ միօջ պատմել: Զնոսա զամենեսեան բարձեալ ի կենաց՝ անժառանգ առնէին զաշխարհս ի նախարարաց:

« Յայնմ ժամանակի թափուր եղեալ աշխարհս Հայոց ի տոհմէ նախարարաց, մտանէին որպէս գայլս ի մէջ ոչխարաց: Եւ թշնամեացն ամեն օրինակ չարեօք յարձակեալ ի վերայ՝ յանհուն աղէտս վտանգի պահէին զբնակիչս աշխարհիս Հայոց, որոց տաղակացեալ յանհանգիստ նեղութեանցն՝ զհառաջանս եւ զազազակ հեծութեան բարձրացուցանէին յերկինս: » Դեւոնդ. Արշ. Արաբաց ի Հայաստան. Տարագ. Կ. Վ. Շահնազարեանց: Գլ. Զ. Երես 55-56-57-58:

Այո՛, Սրբազան, և մի մեծ այո՛: Այդ կերպ ազգաջնջողութիւն արուամ է մինչեւ այսօր մեր աշխարհում: Ահա՛ առանուշորս դար են եղած մինչեւ մեր դարը, ջնջելով ջնջեցին և ջնջում են մեր թշնամիք, մեր մարդեղէն լեռները, այսինքն նախարարներն. երբ վերջն եկաւ այդ ազգաջնջութեան, քաղաքացիքն՝ գիւղացիքը՝ իրանց երդերէն քչեցին, դեպերով, սարերով անց կացուցին և տարան նրանց՝ իրանց աշխարհներում ստրկացուցին. Բայց ինչպէս որ ձեր աչքովն էք տեսնում, մինչեւ այսօր այդ մեր օրհնեալ երկիրը, այդ մեր ազգայնոց բերրի արգանդը, իր ծոցէն հեռացող որդիքը, որ ուրիշ աշխարհներում ու քաղաքներում փճանում էին, հեռագհեռէ նրանց քամակէն հատուց ու հասցնում է մինչեւ այսօր: Եթէ մեր աշխարհն, իր բեղնաւորութեամբ իր որդիքն էլ բեղնաւոր անէր ոչ իր պատուական հացովն ու ջրովը, իր համով ոչխարովը, իր անուցիչ կաթովն ու եղովը, իր սքանչելի գինիներովը, հեռ գհեռէ անուցանում լինէր ոչ իր որդիքը, դաղթողին, սպանուածին, յափշտակուածին տեղը միշտ լքցնում, միշտ բերում լինէր ոչ: Ասում եմ, Սրբազան, շատունց գողթական Հայք ջնջուած կորած էին և նրանց տեղն էլ բռնող ջինջելով, Հայաստանում այսօր մի Հայ մարդ գտնուած չէր լինել:

Մի ազգ՝ իսպառ ջնջելու համար մի աշխարհի միջէն, երեք գլխաւոր բան կայ անելու. Առաջին՝ նրա կրօնն ու լեզուն վերու ու նրա տեղ մի ուրիշը դիր. Երկրորդը՝ նրա կանայքն ու ազնիկուհիքն առ և ազգաջնջողին տղայ մարդօքը տնւր. Երրորդն՝ քչիր դուրս այդ ազգն իր երդէն, իր բունէն, իր գերեզմաններէն սակրները դուրս հանիր, տնւր քամուն որ տանի. քառորդ դար չքչէր, որ այդ աշխարհի ու ազգի անունը միայն դրքերում կը մնայ: Փանի քանի ազգեր եկան զնացին այդ կերպով աշխարհիս երեսէն, Փիւնիկեցիք՝ իրանց երկրում և կարթագինէում: Եգիպտացիք մի մի եկավի ազգի ներքեւ ճնշուեցան, ինչպէս և այսօր: Արաբացիք Սպանիասում ու թ գտուուց յետոյ՝ միայն իրանց գիտութիւնն ու արհեստը թողուցին: Հուլմայեցիք

ինչ եղան ձեզ յայտնի է: Ուստի այդ երեք ազգայնջնութեան պայմանները մեր աշխարհի և ազգի վրայ փորձուեցան և մինչեւ այսօր այդ փորձը աւելում է Հայաստանում: Ես իսկ իմ աչքով եմ տեսել, ուր որ գնացել եմ: Եթէ՛ մի քաղքում, մի դիւղում, մի շէնում, հէնց մի հայ մարդ, որ մի փոքր փայլում է թէ չէ՛ և նշանակութիւն ստանում, նրա կեանքը վստահումն է, այնքան է ապրում նա՝ որքան որ հարկ է վճարում կառավարութեան կամ տիրող Քրիստոս, Թրքին: Ինչպէս մի հիւանդ մարդ՝ բժշկին, դեղադործին է վճարում ապրելու համար: Միանգամ՝ որ դադրեց այդ վճարը, այդ փայլուն հայ մարդը կամ ճանաչու վրայ, կամ դիշերանց իր տանը, կամ նոյն իսկ բուն քաղքի պորտում, նրա բանը պրծած է. այսինքն սպաննուած: Նոյնպէս՝ մի սիրուն Հայ կին կամ աղջիկ, եթէ մի քիչ համարձակուեց նա իր սիրութիւն լոյս աշխարհ ցոյց տալու, էլ դադրած է նա, եթէ կին է, իր հայ ամուսնոյն պատկանելոյց: Եթէ աղջիկ՝ իր ծնողքին: հապա, պէտք է որ տիրող Քրիստոս կամ Թրքին հարս երթայ, և ինչպէս, կամ գիշերանց իր տնէն վերցուելով կամ օրը ցերեկ քու չանում՝ յափշտակուելով, իսկ աշխարհ քրթացնելու կամ թրքացնելու միջոցն էլ է, գրաւել նրա գեղեցիկ կերտերը, մզկիթի կամ ամրոցի վերածել, հայերէն արձանագրերը ջնջել և նրանց տեղ իւրամերէն գնել: Քանի՛ քանի՛ եկեղեցիք և վանքեր այդպէս թրքացած են կամ քրթացած, իսկ Հայ դիւղացուն իր երդէն քշելու միջոցն էլ է, նրա գեղեցիկ կալուածը մի գենպետի վճուով Թրքի կամ Քրիստոս պատկանեցնել: այդ երկիրն անշուշտ արգաւանդ է, ահնիւ հայ կը տայ մարդուն, ընտիր խոտ՝ նախրին, պտաստական գինի և միւրդ: մի անգամ զրկուեց թէ չէ՛ Հայ դիւղացին այդ իր երդէն, նա կարօտ և խեղճ է մնում, քաղցած, սոված՝ ուրիշ հացին ու ջրին է կարօտ, հետեւաբար իր վերկութիւն գաղթականութեան մէջ է փնտռում, և ո՛ր է գնում, Պոլիս, Թիֆլիս ուրիշ տար աշխարհներ մշակութեամբ ապրելու: Այդպէս է, իմ աչքով տեսածն Հայաստանում, ըսկ Ռուսաց Հայաստանում ուրիշ կերպ, այդ մասին խօսել եմ արդէն, Ռու-

սաց ազգին համար խօսք չունիմ, որովհետեւ շատ սակաւաթիւ են նրանք մեր աշխարհում և նրա հարուածները ինքնասաց քաղաքակրթական են, այսինքն ապականութիւն բարուց: նրա վարչութիւնն աշխարհայինը կամ ազգաւեր չէ, այլ աշխարհատիտական կամ ազգաչրջական, դրա ջանքն է Հայոց հոգին ու սիրտը փոխելու իրանց աշխարհի ազգի, կրօնի և լեզուի վրայ, և նրանց մասածելու կերպին ուրիշ ուղղութիւն տալու: Մի ազգի չորս տարերքը Ռուսիսում՝ հայրենի երկիր, ազգ և ազգայնութիւն, կրօն և լեզու սրբուած ու ջնջուած մեռած բաներ պէտք է լինին Չարութեան, Օրթոտոքսութեան և Ռուսութեան տիրապետած աշխարհներում: Ինչ կերպերով, ինչ միջոցներով և ինչ բանասարկութեամբ, այսօր շատ հասարակաց է եղած ամենքին, մինչեւ անգամ դիւղական դպրոցներու աշակերտներին: Պարսկաստանում՝ վերեւն ստած միջոցներն այն աստիճան խստութեամբ կատարուած են, որ էլ նրա տէրութեան ներքեւ Հայաստանը միայն իր լեռներով, լճերով, գետերով, հովիտներով, արօտներով, մրդաստանով, ընդաստանով է Հայաստան, թէև մի քանի դիւղիկ, հիւղիկ, շէն մէն գտնում լինին, մի այնքան էլ խեղճ ու թշուառ ժողովուրդ, Հեր և Չարեանդում, Սալմաստում ու դէս ու դէն: Պարսից աշխարհի Հայք դաղթեցին Անկիւացոյ Հնդկաստան, Ռուսաց Հայաստան և Օսմանցու երկիրը: Չնայելով, Սրբազան, մեր երկրի վրայ տիրող կառավարութեանց, ազգաց ու ազանց այդ աշխարհաւեր և ազգաչինջ ընթացքին, այսօր Հայաստան նորէն Հայոցմով է չէն, Հայոցմով են քաղաքները բաղմարնակ, Հայոցմով են դիւղեր, հիւղերը մարգաշատ, և Հայոց ձեռին է երկրագործութիւն, արհեստաւարութիւն և վաճառականութիւն, ինչպէս էլ ունին և մի նոր գրականութիւն: Լաւ միտս ընկաւ, պէտք է որ, այդ աշխարհաչէն լուսաւորութեան չորս գլխաւոր լծակների վրայ էլ խօսիմ: Ինչպէս, կրօնների համար ասում է թէ՛ աստուածագիր կարգ ու սարք են մարդկային ազգում, ես էլ ասում եմ թէ՛ երկրագործութիւնն էլ է աստուածագիր մի արհեստ,

որմէ ծագում են առած և առաջ եկած, ամեն արհեստ, գիւտ, հնարք և վաճառականութիւն և այլ ամեն բանը, որմէ թրքերն, ֆրեքերն և իրանց նմանները զուրկ են բոլորովին ըստ ամենամեծ վկայութեան Համազգաց վաճառականական պատմութեան, և որու մասին այս տեղ պիտի խօսիմ. ուստի և մի փոքր էլ Ձեր համբերութիւնն եմ խնդրում իմ երկարաբանութեան համար:

Եթէ աւանդութիւնը բանի տեղ դնենք, Սրբազան, ասում է որ, երկրագործութիւնը սկսուել է Ակոսի գիւղում Մասիս լեռան ծոպերի վրայ: Հէնց Արմենաց ժամանակէն, ցորենի, այգու և մրգատնկերի մշակութիւնը սկսած է երեւում Հայաստանում և միշտ մեծ յարգ էլ է ունեցած: Մովսէս Խորենացու վկայութիւնն արդէն յիշում էք անշուշտ Շիրակայ ամբարների համար՝ Շարայի վրայ խօսելիս: Ողջ Հայոց աշխարհի ժողովրդին համար, որ մեղրով և կաթով էր ապրում, ասում է, երուանդեան Տիգրանի թագաւորութեան վրայ խօսելիս: Իսկ Արտաշէս Բ-ի ժամանակուայ համար, ինչպէս վերեւն յիշեցինք, լեռներն ու դաշտերը բարեշէն էին, ասում է, երկրագործութեամբ: Նմանապէս Աշոտ Բագրատունու ժամանակն էլ, դափ և դաշտ, սար ու ձոր գոմերով, այգիներով և պարտէզներով զարդարուած էին, ասում է Յովհաննէս Կաթողիկոս:

Հայաստանի պատմութեան մէջ՝ մի բանի էլ միտ դնել պիտի, որն որ շատ կարեւոր է: Առհասարակ մեր պատմիչներն ու տարեգրերը Հայոց աշխարհի, ազգի, եկեղեցու, թագաւորութեան և նախարարութեանց գլխին եկած փորձանքների, հարուածների և աղէտների պատմաբանն ու տարեգիրն են եղած և ոչ նրանց վայելած խաղաղութեան, բարեկեցութեան և զարգացողութեան ժամանակներին: Այդ պատճառով՝ Հայոց պատմութիւն կարգացողին վրայ մի սոսկում և յուսահատութիւն կը գայ, անընդհատ պատերազմների, հալածանքների և արշաւանքների նկարագրութիւնը և պատմութիւնը լսելով: Բայց այդպէս չէ, Սրբազան, անհնար է մի աշխարհի կամ մի ազգի, առանց խաղաղ ժամանակ ունենալու զարգանալ, հարստանալ և մինչեւ

մի աստիճան զօրանալ. և զարգացում, հարստութիւն և զօրութիւն չունեցող աշխարհի վրայ էլ՝ ոչ յարձակում, ոչ արշաւանք և ոչ էլ պատերազմ կը լինի. եթէ միտ դնելու լինիք ողջ Ասիոյ պատմութեան, այդ երեւոյթը ձեր աչքին կընկնի: Դուրանեան ազգ և աղինք, ինչպէս Մոնղոլները, շարունակ Չինաստանի, Հնդկաստանի, Պարսկաստանի և Հայաստանի վրայ թափնեցան, նմանապէս Արապիոյ անապատական ազգ ու աղինք շարունակ Միջագետքի, Հայաստանի, Պարսկաստանի և դեռ ևս միւս միջասիական աշխարհների վրայ արշաւեցին: Արդ՝ պատմութեան այդ երեւոյթը մի յայտնի իրողութիւն է. Հայոց աշխարհ, ինչպէս նաև միւսներն ըստ իրանց կարգին, դրախտ, պարտէզ, երանաւէտ երկրներ էին՝ դուրան և անապատ աշխարհների մօտ, որոնց վրայ ոչ մի տէրութիւն տիրելու փորձ չփորձեց անց կացած ժամանակներում:

Մի օրինակ առաջ բերեմ այս տեղ մեր պատմութենէն. մեր աշխարհի վրդով և խաղաղ ժամանակների մասին, որ կարգացողին բռնի մտածել կը տայ: Երբ Ղեւոնդ պատմիչ Արաբ Պուղաի գործած անգթութեանց պատմութիւնն է անում. ասում է որ, Հայոց աշխարհը քարուքանդ արեց, Հայոց ազգը ցիրուցան, իսկ նախարարներին իսպառ ջնջեց, մեծ մասը գերի տանելով, մի մասը սպանելով և մի մասն էլ իսլամացնելով. բայց մի քառորդ դար յետոյ, տեսնում ենք որ Աշոտ Բագրատունին, նոյն Հայոց աշխարհի և ազգի զարգացողական զօրութենով՝ թագաւորութիւն է հաստատում, քաղաքներ է սարքում, գիւղեր, շէներ և աւաններ է առաջ բերում. մի և նոյն հայեացքով կարելի է դատել մարզպանաց և ոստիկանաց ժամանակներն էլ. թաթարք և իրանցմէ ծագած ազգ և աղինք եղան՝ Պարսկաստանը, Հայաստանը, Արապստանը, այսինքն՝ Պաղտատը, Շամը, Հալէպը և այլն կործանողները, այնպէս որ, այնույետոյ մարդիկ բուռնելու տեղ այդ երկրներում, վայրի խօս, դազան և բուէճներ աճեցան:

Մի և նոյն իրողութիւնը, այս վերջին քսան և հինգ տարուայ խաղաղութեան միջոցում երեւաց Հայաստանի մի քա-

նի գլխաւոր կողմերում: Երեւան, Կարին և Վան ուստի  
Հայք խաղաղութեան ժամանակներում՝ ծայրագոյն երկրա-  
գործ, արհեստաւոր և վաճառական ազգ են եղած և  
ահաւաստիկ ապացոյցներ:

Ինչպէս այսօր վաճառականութեան մայր պորան է Եւ-  
րոպա, հին և միջին դարերում էլ միջին ասիական աշխարհ-  
ներն էին՝ Եգիպտոս և Բիւզանդիոնն էլ մէկտեղ առնելով՝  
Հնդկաց աշխարհի կարաւանների մեծ մասը ստիպուած էին  
Բակտրիա հանդիպիլ, այսօր Բալի: Այդ տեղէն՝ կարաւան-  
ներն իրարմէ բաժանուում էին, մի քանիսը, դէպ ի արեւելք  
և հիւսիսային արեւելք էին անում իրանց ճամբան, մի քա-  
նիսն էլ, դէպ ի ձեռնաց աշխարհ երթալու համար՝ դէպ ի  
արեւմուտք և հիւսիսային արեւմուտք, Պարսկաստան և  
Հայաստան և Սեւ ու Կասպից ծովերու միջուռն եղած  
աշխարհները: Մ. Խորենացին ասում է թէ՛ Հայք շատ ան-  
գամ նաւարկում են եղել Յունաց և Կասպից ծովերու վրայ.  
նոյնպէս՝ Սարաբան, մարական, հայկական, հնդկական և  
բարեբախտան ապրանքների առուտուրն է յիշում Տանայիս  
գետափանց վրայ: Իսկ Եղեկիէլ Մարգարէն՝ Սուրբ գրքում  
ասում է, Տիւրոս քաղքում՝ եղած ապրանքների մասին խո-  
սելիս՝ թէ Թորգոմայ անէն (այսինքն Հայոց աշխարհէն),  
ձիերով և ջորիներով լիքն արին քո հրապարակները: Իսկ  
Եփրատ ու Տիգրիս գետերը՝ Հայաստանի և Բաբելաստանի մէջ  
առուտուրին մեծ գիւրութիւն էր տալի, որքան որ իրանց  
հոսանքներն ու ծանծաղատները ներում էին նաւարկութիւ-  
նը: Հայոց աշխարհի տեսակ տեսակ գինիները՝ մանաւանդ  
Եփրատի վրայով էին հասնում Բաբելաստան՝ թէև շատ խիստ  
բերրի և շատ լաւ մշակուած էր այդ աշխարհ, բայց անփայտ  
էր, այդ պատճառով էլ նաւաշինութիւնն անկարելի էր:  
Հայոց աշխարհէն իջնող կոպտաշէն նաւակներն էլ յետ չէին  
դառնում: Գետերն ու երկիրներն ինչ որ էին նոյն ժամանակ,  
նոյն են և այսօր. բայց այն երանաւէտ աշխարհը, ուր, ինչ-  
պէս ասում է Մարգարէն, վաճառականութիւնը ծաղկում էր,  
ուր կառուցած էր վաճառականաց մեծ քաղաքը, այսօր մի  
գաղանաբնակ և նրամէն վար չմնացող մարդաբնակ անապատ է:

Հանրի Բիշլօտ, ասում է, Հերոդոտէն վեր առնելով՝ թէ  
Հայք, որոնց աշխարհը Ասորեստանէն վերեւն է, Եփրատով  
ներքեւ էին իջնում. այսինքն Բաբելաստան, ձուածեւ նա-  
ւերով: Ուռենու ճիւղերով նաու կաղմածն էին շինում,  
եղերքներն եղեգնապատ, իսկ ամբողջը մորթապատ. երկու  
թիւալար էին տանում նաւակը, իրանց գինու տկջորները  
մէջ տեղին, մի քանիս էլ իշան: Որքան որ մեծ կամ փոքր  
էին նաւակները՝ Բաբելոն հասնում էին թէ չէ, մորթանաւին  
պետը բեռը դարդըկելուց յետոյ, նաու կմախքը ապրանք-  
ների հետ վաճառելով՝ մորթը բարձում էր հետը բերած  
իշանի վրայ և չըռում դէպ ի Հայաստան, վասնզի հոսանքի  
դէմ չէր կարելի նորէն նոյն մորթանաւով ճամբորդել:

Յոյն պատմիչներն ասում են թէ, Հայք՝ ոչ միայն Եփրատ  
և Տիգրիս գետերի ճամբով էին առուտուր անում, այլ  
յամաքի և ծովու ճամպերով էլ, Սեւ, Կասպից և Միջերկ-  
րական ծովերով: Երկար կը լինէր այս անդ ճառելը թէ՛  
Հայաստան իր երկրագործութեամբ և վաճառականու-  
թեամբ ինչ մեծ նշանակութիւն է ունեցել անց կացած  
ժամանակներում: Բայց չեմ կարող առաջ չբերել այս տեղ,  
Հայոց՝ քրիստոնէութեան դարերուց սկսած՝ մինչև նախ-  
ընթաց դարերում վաճառականութեան մէջ ցոյց տուած  
գործունէութիւնը՝ որն որ յիրաւի մեծ պատիւ է բերում  
մեր պատմութեան, և ինձ էլ զարմացնում է, Սրբազան,  
դեռ մի լաւ քննողական բովուց անց կացունել կարող չլինե-  
լուս այդ հանգամանք, որոյ մասին մեր պատմիչք և տարե-  
գիրք շատ կցկատուր յիշատակներով են անց կացած: Ո՛ւր էր  
թէ մեր օրուայ վաճառականք, ո՛ւր որ են, և ո՛ր քաղքումն  
որ ունին իրանց գործունէութիւն, գտնէ յիշատակագիրը  
լինի, բռնում լինէին, յետագայ Հայ վաճառականաց հա-  
մար մի ուսում լինելու:

Մի գերմանացի պատմիչ, որոյ անունն է Հ. Շէրէր (H.  
Scherer) իր՝ Համայն ազգաց վաճառականութեան պատմու-  
թեան մէջ, այսպէս է խօսում Հայոց վաճառականութեան  
մասին:

«Քրիստոսի 2. Է. Բ. դարերում՝ Հայոց աշխարհի սահ-

մաններն էին, Միջագետքէն մինչեւ Կովկասեան լեռանց մօտերը և Սեւ ծովու հարաւային եզերքները: Իսկ արեւմտեան կողմէն, սահմանակից էր իրան՝ Փոքր Ասիոյ արեւմտեան կայսրութիւն և այդ դարերում, (թէ և ըստ մեր եկեղեցական տարեգրերի խաղաղութիւն տեսած չունէր Հայաստան, երբեմն Պաղտատու Խալիֆաների և երբեմն Բիւզանդիոնի կայսերաց դերիշխանութեան ներքեւ, բայց ընդհակառակն) արտաքոյ կարգի առևտուր ունէր այդ երկու տէրութեանց հետ, թէ և Հայոց աշխարհը, ինչպէս շատ անգամ ասացինք, լեռանց անտառ էր մեծ մասով. բայց երկիրն իր հովիտներով և ձորերով չափազանց բարեբեր էր. ցորեն, միրգ, գինի, մետաղ, փայտ մատակարարողն Արաբաց՝ Հայոց աշխարհն էր, իսկ բրդեղէն առևտուրը շատ մեծ քանակութեամբ էր լինում: (Այդ բրդի առևտուրն է որ Արաբաց ստոր հասարակութեան Հայաստան գաղթելու պատճառ եղաւ և Հայոց ձեռքէն այդ առևտուրը և նրա արհեստաւորութիւնը յափշտակելու. վասնզի մինչեւ այսօր մի անիրաւ վերահայեցողութեան արդիւնքով, անասնապահութիւնը՝ մանաւանդ ոչխարապահութիւնն Արաբ կամ անապատեցի Քրդաց ձեռին մենավաճառութիւն է, այնպէս որ, առանց չափազանցութեան, ամբողջ Օսմանցու Հայաստան՝ տարի կը լինի, որ իր ծոցէն 300,000 ոչխար դուրս կը հանէ և Բուրգն այդ արտօնութիւնն ինքն իր զէնքով իրան է տուել, սքանչելի արօտներին, մարգագետիններին, սիրուն սիրուն բլուրներին, հով հովիտներին տէր լինելով, և ոչ ոք համարձակում չէ նրա ձեռքէն խլելու և նրան դէն քշելու այն տեղերէն): Հայոց աշխարհ Բարեւաստանի և Միջագետքի պիտոյքը Տիգրիս գետով էր փոխանցնում, իր բրդով առաջին կարգի գորգի, կապերա էր շինուում, ծիրանեղունին կողմանէ, նրա համար որ այդ գոյնը, որդան կարմիրը, յատուկ էր արարատեան դաւառին: Իր վաճառականութեան պորտը՝ հիւսիսային ազգաց ու ազանց հետ Տրապիզոն էր և այդ ազգ և ազինք, որոնց մէջ Արաբները Հայոց հետ ունեցած առևտուրին պատճառով՝ Տրապիզոն քաղաքը, որ Հռովմայեցոց ժամանակէն անապատ էր դա-

րած, նորէն ծաղկեց և վերահաստատուեց: Իսկ շերամապահութիւնը շատուց էր մտած Հայոց աշխարհում հիւսիսային կողմերում, որոյ մնացորդները մինչեւ այսօր երեւում են: »

Մեր նախարարների զուգար (luxe), Սրբազան, շատ համբաւաւոր է. թէ երկար լինէր ոչ, այս տեղ նրանց և իրանց կանանց հագուստի մասին կը խօսէի. այսքան էլ, միայն նրա համար եմ խօսում, որ առանց երկրագործութեան, արհեստաւորութեան և վաճառականութեան զուգար չլինիլ մի ընկերականութեան մէջ, թէ որ լինի էլ, ինչպէս երեւաց այդ բան Հռովմայեցոց մէջ և մեր աչքի առաջը. այդ տէրութիւնք և ազգեր մի միայն սպառողներ լինելով երկրագործական և արհեստական բերքերի, շատ շուտով իրանց կործանման դրանն են հասած: Բայց Հայոց մէջ այդպէս չեղաւ, Սրբազան, մինչեւ այսօր Հայոց աշխարհում երեւում է, Հայոց տան կահ կարասեաց, դիւղացոց է եղել քաղաքացոց է եղել պարտուպատշաճը, նոյնպէս իրանց վրայ գլխի շէնքն ու շորհքը հագուելում և զուգուելում, չնայելով՝ որ աւազակներն իրանց չորս դէնն են բռնած:

Այդ մի և նոյն դարերում և յետագայներում, մեր եկեղեցու զարդերն ու եպիսկոպոսական զգեստները յատուկ յիշուած են տարեգրերում: Ուխտանէս յատուկ մի նկարագիր է անում կաթողիկոսական զգեստների մասին, հիացքով և զարմացքով ասում է.

Զվակաս կաթողիկոսին մետաքսեայ կազմեալ յահանց՝ եւ յոսկւոյ՝ եւ ի մարգարտէ եւ զայլ զգեւելիսն եւ զարկանելիս քահանայից եւ զսարկաւազաց, զբեհեզս եւ զծիրանիս, որպէս մարգարէն ի թիւ արկեալ կարգէ՝ զեզրածիրանին եւ զմիջնածիրանին եւ որ առաջին եւ զինի օյտցիկ ասի, եւ զայլ եւս պայծառ պատմուճանս պէսպէս զարդուց, դիպակաց եւ կերպասուց եւ ծիրանեաց գունակ գունակ՝ եւ երփն երփն եւ երանգ երանգ՝ ծաղկազարդ գունօք գործեալ գեղեցկապէս:

Իսկ Մատթէոս Ուրահեցին Անու Մայր եկեղեցու գմբէթի դրսի խաչի՝ և ներսի կախ արած բիւրեղեայ ջահի մասին, այսպէս.

Եւ այլ ոմն ի չարագործ ազգէն ելեալ ի վերայ բարձրութեան եկեղեցւոյն՝ սուրբ կաթուղիկէ եւ զծանրագին խաչն ընկէց յերկիր, եւ մտեալ ի դրանն որ գայր ի գումակէթն եկեղեցւոյն եւ պըրօր կանթեղն ընկեց ի մէջ եկեղեցւոյն եւ մանրեաց, զոր Սմբատ տիեզերակաւն էր բերել տուեալ ի Հնդկաց ընդ բիւր մի գանձուց, երկոտասան լիտր էր կշիւ նորա, եւ նոյն չափովն երկոտասան լիտր տանէր . եւ յորժամ ընկեց գխաչն ի գումակէթէն, նոյն ժամայն եղեւ սաստիկ որոտմունք եւ անձրեւ բազում եւ զամենայն զգէչն կոտորածոյն ելից յԱխուրեան գետն, եւ լուաց յարենէ զամենայն քաղաքն : Իսկ յորժամ մանրեցաւ պըրօր կանթեղն, որ այլ չէր լեալ ի վերայ արարածոց, լուեալ Սուլդանն (Ալի Ասլան, էլիֆ Արսլան) յոյժ վիրաւորեցաւ եւ գխաչն զարծաթին զոր ընկեցին որ էր մարդաչափ մի տարան եղին զնա ի կոխ դրան ի դուռն մաքթին Նախըւան քաղաքին, որ կայ մինչեւ այսօր :

Այգպէս եկեղեցու սպասները, զարդերը շատ թանկագին գանձեր լինելուն, եկեղեցի շինելիս՝ մեր նախնիք պատերի և գմբէթների միջում այնպիսի պտուտաւոր ճամպէք ու դարէք են շինած դրանք պահելու համար, որոնց աւերակները մինչեւ այսօր զարմայնում են տեմնուղներին : Բայց թուրք և ֆուրքք սորվելով վերջապէս այդ թագուն տեղերը, նախ գմբէթներն են վեր առած և քանդած, ինչպէս որ մինչեւ այսօր երեւում են :

Այդ բոլոր զուգսերը, Սրբազան, ասել եմ ուզում, վաճառականութենով և հարստութենով կը լինին և այդ հարստութիւն Հայոց աշխարհն ունէր, նոյն և այդ վաճառականութիւնը՝ Հայոց աղբը : Այդ վաճառականութեան հողին՝ Հայոց մէջ, իրանց քաղաքական նշանակութիւն կորցրելուց յետոյ՝ այն աստիճան զարգացաւ, որ ըստ վկայութեան Հ. Շէրէրի Ասիոյ ցամաքային ողջ առուտուրը իրանց ձեռին էր, և իրանց սուկտրական գործողութիւնք՝ Եւրոպոս բոլոր գլխաւոր քաղաքներում լինում էին, Վենետիկում, Գենովաում, Մարսիլիաում, Լիսբոնում, յԱմստերդամ և Լոնտոնում : Եւ ինչ էին Հայոց առուտուրի առարկայքը : Նոյն իսկ Հայոց աշխարհի բուսական, կենդանական և հանքական բերքերը, ցորենը՝ որ շատ տեսակները կան, խոշորը, մանրը, կարմիրը, սիպտակը, ուժովը, թոյլը : Թարմ

ու չոր մրգերը, ինչպէս՝ ծիրան, խնձոր, տանձ, խաղող, տաս տասներկու տեսակը . դեղձը, հունը, բայը և այլն : Ձին, ջորին, էշը, գոմէշը, կովը, այծը, ոչխարը, յովազը, կուզը, ջրշունը, աքիսը, սամյրը, կատուն, և այլն, որոնց մարթն ու մազը, բուրգը մեծ առուտուրի նիւթերն էին : Նոյնպէս թռչունների բմբուլը, (բարակ փետուրը), իսկ հայ-կաւը (Իլե-Երմէն, bol d'Arménie) հայ-հողը (terre d'Arménie) հայ-քարը, (Pierre d'Arménie) ոսկեսուսինձ, (lapis arméniens) ոսկերտրակ (արդ էրմէն կամ Բուրէ Էլ Էրմէն, chrysocolle arménienne) գործածական լաւ ներկեր էին : Նոյնպէս, ոսկին, արծաթը, կապարը, երկաթը, պղինձը, անագը, զինկը, զառիկը, ոսկեզառիկը, աղը, քարաղը, հողաղը, ծծումբը, նաւթը, կուպրը, քարձէթը, (petrole) ինչպէս նաև գին (genièvre) ու գինին, գասպէնը, (miel d'air) և այլն և այլն : Ինչպէս որ՝ Հայոց աշխարհէն դուրս՝ էլ իրանց վաճառականութեան առարկայքն էին, ողջ աշխարհիս բերքերն ու ապրանքները :

Իսկ ձեռակերտականներն էին, կապերտ, գորգ, կտաւ այլևայլ տեսակը, կազի՝ ապրշումէ և բամբակէ, կապացու շալ մի քանի տեսակները, մաշիկ, կոշիկ, հողաթափ, քօշ, գտակ, սօլ, և այլն : Դիլաւոր արհեստներն էին ջուլակութիւն, արծաթագործութիւն, զինաշինութիւն, որոնք մինչեւ այսօր կան, մետաքսամանութիւն, կերպասագործութիւն, հիւննութիւն, դարբնութիւն և ուրիշ դրանց նման ձեռագործ արհեստներ : Բայց Հայոց գլխ առհետք՝ Ասիաում, ինչպէս մինչեւ այսօր էլ Պօլսում, ոսկերչութիւնը, գոհարեղէնի առուտուրը, աղամանդը՝ ոսկու կամ արծաթի մէջ գամելը և ճիգճիղան տեղաւորելը, (ֆօեա դնել) նմանապէս արծաթի և ոսկու թելերով՝ երկաթի կամ փայտի վրայ գծագրելը, ինչպէս նաև ապրշումէ հաստ ու բարակ թելերով մահուտի, թաւշի, դիպակի վրայ բանելը ծաղկաձեւ :

Մի խօսքով, Սրբազան Տէր, Հայոց աշխարհի և աղբի վերջին բրիչակութեան ժամանակ, ողջ արեւմտեան Ասիաում, կարող եմ ասել և արեւելեան Եւրոպում, Հայք բերելով իրանց հետ և իրանց առուտուրն ու արհեստները,

իրանք են եղած միայն Ռուսիանում, Լեհաստանում, Տաճկաստանում վաճառական, արհեստաւոր և երկրագործ հասարակութիւնք: Օսմանցոց Սուլթանները, Պարսից Շահերը, և վերջին ժամանակներումն Ռուսաց Կայսերք, Մեծն Պետրոս մանաւանդ՝ ամեն ջանք ու ճիգն էին անում իրանց երկիրներում քաշել նրանց: Իրանց քաղաքներում, Հայոցմով առևտրական և արհեստաւորական, գործնական դըպրոցներ բաց արին, որու օրինակը ցոյց առեց Մեծն Պետրոս, երբ Կասպիական դաւառներին տիրեց, Կիլանին, Տաղուտանին, Շիրուանին, Կուր դետին բերնում մի քաղաք շինել կամեցաւ, որպէսզի Պարսից մետաքսի առուտուրն իր ձեռին գրաւէ. մի ընկերութիւն սարքեց վաճառականութեան համար Ռաներով և Հայերով: Հայոցն այն պատճառով ընդունեց այդ ընկերութեան մէջ, որպէսզի Ռաներին վարժապետ լինին, ասում է Հ. Շէրէր, վաճառականական գիտութեան մէջ, և իրօք, կրկնում է նա՝ « Կարելի է որ, չկայ աշխարհումն Հայոց պէս ձիրք ունեցող ազգ, վաճառականութեան համար: Այդ մասին Հայոց ունեցած կարողութիւնը, որու համար ամբողջ արեւելք վկայում էր, Եւրոպան տասնեօթներորդ դարու վերջերում ճանաչեց: Հայք մեծ վարկ (credit) ձեռք բերին Հոլանտիում և Իտալիում և ողջ ազգաց վրայ գերազանց եղան, Պարսից նահանգներում, որոնք մօտ էին Կասպից ծովուն, մի բանուկ առուտուր բաց արին Կէրջ և Ջուղայ քաղաքներով՝ մինչև Ռուսիոյ ներքին կողմերը, ինչպէս նաև Թրքաց և Հնդկաց աշխարհների հետ: Հայոց յաջողութիւնը տեւեց մինչև Պարսից ներքին կռիւները, որոնց ձախորդութիւնը Հայոց վրայ ընկաւ. սակայն Հայք էլի կարող եղան դիմանալ, այդ միջոցում իրանց ձեռք բերած ընդարձակ ասպարէզը՝ իրանց համար շատ յաջող ելք ունեցաւ: Մի ազգ՝ Հայոց պէս գործունեայ և ընտանի ու ծանօթ արեւելեան սովորութեանց հետ, մեծագումար գրամների տէր, կատարելագոյն խնայողութենով ապրող և առուտուրն անյիշատակ ժամանակներէ իրան բան ու գործ արած իր ամեն գործողութեանց մէջ, նոյնպէս և իր ամենամեծ շահագործութեանց



մէջ: Մի ( ) Հայք էլ բոլորովին տէր եղան այդ բանով վաճառականութեան: Մի մեծ գաղթականութիւն հաստատեցին Աթտերխանում և իրանց ձեռք քցեցին այդ ժամանակէն, այն յարաբերութեանց և հաղորդակցութեանց ամեն թելերն՝ սրնցմով Ռուսիա կամաց կամաց, բայց ապահով կերպով՝ Ասիոյ մահմէտական ազգաց և ազանց հետ կապուեց, մօտենալով նոյնպէս Անկլիոյ հնդկական կայսրութեան: »

Մինչև այսօր, Սրբազան, մեր նախնեաց վաճառականութեան, արհեստաւորութեան և երկրագործութեան մնացորդ հետքերն երեւում են. Երեւան, Շուշի, Ադուլիս, Նախիչևան, Կարին, Վան, Քարբերդ, Բաղէշ, Տիգրանակերտ և Սեւաստ, ուր առաջին տեղն են բռնում Հայք: Ինչպէս վաճառականութեան մէջ՝ ամենքի վրայ գործունեայ և հարուստներն իրանք են. նոյնպէս և արհեստաւորութեան մէջ՝ ամենքի վրայ ճարտարներն ու վարպետներն իրանք են:

Ես ինքս աչքովս տեսայ Կարինում, Տիգրանակերտում և Սեւաստում՝ Անկլիոյ և Ֆրանսիոյ ղէնքերի նմանակները շինող արհեստաւորներ, ապրանք տարուբեր անող վաճառականներ, դրամական ելեմուտ դիտացող սեղանաւորներ, Իսկ երկրագործութեան մասին՝ Հայաստանում, կարելի է գաղթական Գերմանացոց վրայ՝ գերազանց չլինին Հայք, բայց Թրքաց և Քրդաց վրայ անհամեմատ բարձր են: Ամեն հայաբնակ քաղաք, գիւղ, աւան, գաշտ՝ բնական կենդանութիւնը՝ ճամպորդին աչքին է դպչում, մինչդեռ թրքա-

բնակ և քրդաբնակ գիւղերն ու դաշտերը ամայութիւն է և մեռելութիւն: Թուրք հողատէրերի բոլոր մշակները (հարս-դաները) Հայք են: Իսկ Քրդերը բնաւ երկրագործութենով պարագլու՜մ չեն, այլ միայն ոչխարապահութեամբ, հետեւաբար այդ քաղաքներում և գիւղերում աիրող տարերքն է Հայոցը, որովհետեւ իրանցմով են դրանք՝ շահաստան, այգեստան և մրգաստան և որոնք շատ աւելի բազմաթիւ են, չնայելով իրանց անընդհատ դէպ ի դուրս գաղթութեան՝ թէ՛ Թուրքերի և թէ՛ Քրդերի վրայ զատ զատ:

Այս վերջին տարիներում՝ Հայոց մէջ սաստիկ մի սէր է ծագել և դաստիարակութեան վրայ, այնպէս որ, թէև աղքատ են գրական մարդկանց և գրեանց կողմէն, ամեն քաղաք մի, երկու և երբեմն երեք դպրոց, և ամէն գիւղ՝ մի կամ երկու ծաղիկոց ունի: Տպարան կամ մամուլ էլ ունին, էջմիածին, ինչպէս ամեն մարդ գիտէ, Բաքու, Շուշի, Վան և Մուշ: Իսկ իրանց կենդանի բարբառը՝ ու նոր գրականութիւնը, որ հաղիւ մի քանի տարուայ ծագում ունի, արդէն այնպիսի մի ուղղութիւն է ստացած բուն հայրենի երկրում, որ շատ քիչ ժամանակուայ մէջ արդէն գերազանցում է ու գերազանցեց, մայր հայրենիքէն դուրս եղող գաղթականաց բարբառի ու գրականութեան: Քսան տարուայ միջոցում, բաց ի այլևայլ մանր մունր գրական գործերէ՝ չորս հինգ հեղինակ դուրս են եկած իրանց դաւառի բարբառով արձակ ու ոտանաւոր գրող, որոնց գործերէն նմուշի համար, հարկ եմ համարում այս անգ մի քանի հատրկատոր ձեր աչքի առաջ դնել:

Անց կացած դարուայ կենդանի բարբառէն օրինակ.

Ա.

Ինձ սիրեցիր, էջմիածն նընկար, խաղը դավթար իմ քիզ ամա.  
Մի քաղի փըշի ծաղիկն՝ վարթ սուսանբար իմ քիզ ամա.  
Չեմ թօղնի արէգակումըն՝ բաղչի սաջար իմ քիզ ամա.  
Ես քու մահըն վունց կուխնդրեմ՝ նուղլ ու շաքար իմ քիզ ամա:

Թարգմանութիւն.

Չիս սիրեցիր, սիրոյ մէջն ընկար, ես երգարան եմ քեզ համար,  
Մի քաղի փըշի ծաղիկ, ես վարդ ու ամբեր եմ քեզ համար,  
Չեմ թօղուր քեզ արեւու մէջ, պարտիզու ծառ եմ քեզ համար,  
Ես ինչպէս քու մահը կը խնդրեմ, շաքարած նուշ եմ քեզ համար:

Է՛լ քու բաղին մըտիկ արան, ուրիշ բաղէն վարթ չին տա քիզ,  
Աղ ու հացըն մի դէն գըցի, շափթէնը մէկ մըտիկ տու միզ,  
Թէգուզ աշխարըս սըտուտ դաս՝ չիս տէսնի ինձ պէս աղիզ,  
Թաք ուրիշ դօզալ չը սիրես՝ իղրարով եար իմ քիզ ամա:

Թարգմանութիւն.

Է՛լ քու պարտիզին նայէ ուրիշ պարտէգէն վարդ չեն տար քեզ.  
Աղն ու հացը մի դէն թող՝ շաքարթ մէկ հեղ եկ ու տես մեզ,  
Թէեւ աշխարհք սըտըտիս, չես տեսնել ինձ պէս սիրող քեզ,  
Որպէսզի ուրիշ սիրուն չսիրես խօսք տուած սիրուհի եմ քեզ համար:

Թաք ես մօրէս չէի ծնի, վայ էն օրին՝ ես քիզ տեհայ  
Դու բուլբուլիս, ես կարմիր վարդ. մի ասեր թէ վարդը շուտով կերթայ  
Մէ փուքը էտէնց դիմացի, շուտով Հընդըստան մի էհա.  
Անգործիլ, անխարջ ու քըրեհ՝ մանտիլի դար իմ քիզ ամա.

Թարգմանութիւն.

Ուր էր թէ՛ ես մօրմէս չէի ծնել, վայ այն օրին՝ որ ես քեզ տեսայ.  
Դու սոխակ ես, ես կարմիր վարդ. մի ասեր թէ վարդը շուտով կերթայ  
Մի փուքը այդպէս դիմացի՛ր շուտով Հնդկաստան մի գնար,  
Ոչ գործուած եւ ոչ բանուած նուրբ դաստարակ եմ քեզ համար:

Աստուած վըկայ, դիմիշ արած գըլուխըս քիզ մատաղ ըլի,  
Ե՛կ քիզիդ սիրով տամ անիմ, ով գուզէ բէտամաղ ըլի,  
Ես քու խօսքէն չիմ անց կենա թաք քու տամաղըն չաղ ըլի  
Թէգուզ անմահութին ուզիս՝ սիրով կու ճարիմ քիզ ամա:

Թարգմանութիւն.

Աստուած վիայ թող գլուխս քեզ զոհ ու մատաղ լինի,  
Ե՛կ քեզ հետ սիրով Կեց՛ անեմ. ո՛վ կուզէ թող նախանձ լինի,  
Ես քու խօսքէն դուրս չեմ ելնել, որպէս զի քու սիրտը գոհ լինի,  
Թէեւ անմահութիւն ուղեւ ինձմէ՝ սիրով կը ճարեմ քեզ համար:

Քու դարդըն ինձի պառվէցուց, զմըն ասիմ, Սայեաթ Նովա.  
Մի գըցի ձէռնէմէն ձէռըն՝ օսկէ թաս իմ, Սայեաթ Նովա.  
Փռանգըստանու միջէն էլած՝ զար ատլաս իմ, Սայեաթ Նովա.  
Ծալէ դավթարըդ, զութին դի, ուանգ ու ըուքար իմ քիզ ամա.

Թարգմանութիւն.

Քու ցաւդ ինձ պառուեցուց, որո՞ւ ասեմ, Սայեաթ Նովա.  
Մի թողուր ինձ ձեռքէ ձեռք՝ ես օսկէ գաւաթ եմ, Սայեաթ Նովա.  
Եւրոպաէն եկած նուրբ ատլաս կաղ եմ Սայեաթ Նովա.  
Ծալէ երգատետրդ տուիւրդ դիր, ես նրբահիւս ծոպ եմ քեզ համար:

1751 Ապրիլ 4

Բ.

Ձէնըդ քաղցըր ունիս՝ լամիզով կու խօսիս,  
Նա պահէ քիզ, ումն օր ծառայիս, գօղալ,  
Մէջըդ ջէյրանի է, ուանգըդ շաքարի,  
Փռանգըստանէն էկած խարա իս գօղալ:

Թարգմանութիւն.

Ձայնդ քաղցր է՝ ու անոյշ խօսող ես,  
Նա թող պահէ քեզ, որու որ ես, սիրուն,  
Մէջքդ բարակ է, գոյնդ շաքարի.  
Եւրոպայէն եկած կերպաս ես, սիրուն.

Ղումաշ ասիմ՝ շուրէղէն է կու մաշվի,  
Սայրի ասիմ՝ ախըր մին օր կը տաշվի,  
Ձէյրան ասիմ՝ շատ մարթ քիզիդ կու ետաշվի,  
Բաս վիճնց թարիփ անիմ՝ միրա իս, գօղալ:

Թարգմանութիւն.

Բայց թէ կերպաս ասեմ քեզ, կտաւ է՝ պիտի մաշուի,  
Նո՞ճի ասեմ վերջապէս, հարկաւ մի օր պիտի տաշուի.  
Թէոր այժեամըն ասեմ՝ շատերը քեզ հետ կը հաւսարի.  
Ուրեմն ինչպէս միտքս յայտնեմ, երկնային սէր ես, սիրուն:

Թէ մանուշակ ասիմ՝ սարէմէն կօսին  
Թէ ջալսյիր ասիմ՝ քարէմէն կօսին,  
Թէ վուր լուսին ասիմ՝ տարրէմէն կօսին,  
Արէգագի նըման՝ փարա իս, գօղալ:

Թարգմանութիւն.

Թէ որ քեզ մանուշակ ասեմ՝ պիտի ասեն որ՝ սարէն է,  
Թէ որ ակն պատուական ասեմ՝ պիտի ասեն որ՝ քարեղէն է,  
Թէ որ լուսին ես, ասեմ՝ պիտի ասեն որ՝ տարրեղէն է,  
Հապա ինչ ասեմ քեզ, արեւու նման լոյս ես, սիրուն.

Նոյն Թուականը, Սայեաթ Նովա.

Գ.

Արի ինձ անգաճ կալ, այ դիվանա սիրտ,  
Հայա սիրէ, աղաբ սիրէ, ար սիրէ,  
Աշխարքըս քունն ըլի, ինչ պիտի տանի՝  
Աստուած սիրէ, հօքի սիրէ, եար սիրէ:

Թարգմանութիւն.

Ե՛կ ու ինձ մտիկ արա, ո՛վ իմ խենդ սիրտ,  
Ամթ սիրէ, պարկեշտ եղիր ու առաքինի,  
Թող աշխարհը քունը լինի, ինչ պիտի տանիս քո հետ,  
Աստուած սիրէ, հօգի սիրէ, ընկեր սիրէ.

Ին բանն արա՝ վուր Աստուծու շարքումն է,  
Խըրատնիրըն՝ գըրած Հարանց վարքումն է,  
Երեք բան կայ՝ հօքու մարմնու կարքումն է,  
Գիր սիրէ, զալամ սիրէ, դավթար սիրէ:

Թարգմանութիւն.

Այն բան արա՛ որն որ Աստուծոյ պատուէրն է,  
Ու խրատներն էլ գրուած են Հարանց վարքում,  
Երեք բան կան՝ հոգու եւ մարմնու պէտք են.  
Գիր սիրէ՛, գրիչ սիրէ՛, գիրք սիրէ՛ :

Ե՛կ արի, սիրտ, մի կենա դուն մէ դամաղի,  
Հալալ մրտիկ արա հացի ու աղի,  
Հէնց բան արա՛ մարթ վըրէդ չը ծիծաղի,  
Խըրատ սիրէ՛, սաբըր սիրէ՛, շար սիրէ՛ :

Թարգմանութիւն.

Արդ դու սիւ սիրտ, մի լինիր ցաւած ու դժգոհ,  
Արդարութեամբ նայէ հացի ու աղի վրայ,  
Ու այնպէս գործ արա՛ որ մարդ քո վրայ չծիծաղի,  
Խրատ սիրէ՛, համբերող եղիր ու օրէնքը պատուէ՛ :

Հընարտութիւն չանիս՝ դուր գու գաս Տէրիդ,  
Խօնարութիւն արա՛ կանց քեզ գէվէրիդ .  
Աստուած դիւտունանցըն՝ մին հօքի էրիտ  
Աղկատ սիրէ՛, դոնաղ սիրէ՛, տար սիրէ՛ :

Թարգմանութիւն.

Հպարտութիւն մի անիւ, հաճելի կը լինիս Տիրոջդ,  
Այլ խօնարութիւն արա՛ քեզմէ ստոր մարդուն  
Աստուած ամենքին էլ մի հոգի տուաւ,  
Ուստի՛ աղքատ սիրէ՛, հիւր յարգէ՛, պանդխտին օգնէ՛ :

Սայաթ-Նովա, էրնէկ քիզ, թէ էս անիս՝  
Հօքուդ խաթրի մարմնուդ ունբը կէս անիս .  
Թէ գուզես վուր դատաստան չը տեսանիս,  
Վանք սիրէ՛, անապատ սիրէ՛, քար սիրէ՛ :

Թարգմանութիւն.

Սայաթ-Նովա, էրանի քեզ թէ այս բանն անես,  
Հոգուդ համար քո կեանքը կէս անես  
Թէոր կուզես էլ, որ դատաստան չտեսնես,  
Վանք կամ անապատ գնա ու ապաշխարէ՛ : 1763 Մայիս 1

Սայեաթ-Նովու կարգէն են, Սրբազան, և Ղալօնց Բաղ-  
դասար, Շամշի Մէլքո, Լէնն, Թուրինչ, Օքտուղ Օղլան,  
Նալբանդ Օղլի, Ղարիբ Օղլան: Չախմախչի Եաղութ, Սէփիւ  
Օղլան, Քէշիչ Նովա, Գուրջի Օղլի, Քօբալի, Ջահիլ Օղլան,  
Նուրալի, Արաղու Սարգիս, Ադամ Աղբար, Նարգիզ, Յա-  
կոբ Քիմիայ, Էայն Էայն, որոնց մեծ մասը Հայոց աշխար-  
հէն են, իսկ ոմանք էլ՝ Թիֆլիզեցի, Աթաէրխանցի, Շամա-  
խեցի, և ամենքն էլ դրեթէ՛ հայերէն դաւառական լեզուով  
խաղեր ունին ասած, որոց մի նմուշն ահա՛ ձեր առաջ հանեցի:  
Դրանց բանաստեղծական շնորհատուն է եղած, ինչպէս յայտ-  
նի է Ձեզ, Մշու Սուրբ Կարապետն՝ որոնք ուխտով, ծոմա-  
պահութեամբ և մեծ ջերմեռանտութեամբ կերթան եղել  
Գլակայ վանք և խնդրում են եղել Սուրբ Կարապետի միջ-  
նորդութեամբ՝ Աստուածանից՝ իրանց բանաստեղծական  
ձիրք և իրանք իրանց Խաչի Նօթօք, այսինքն սպասաւոր ժո-  
ղովրդեան անուանելով, շատ անգամ Աւետարանի բարոյա-  
կանն էլ Հայոց հետ միասին և Մահմէտականաց էլ քարոզում  
են եղել իրանց անոյշ խաղերով. բայց զարմանալին այն է, որ  
շատերը հայերէն կարդալ գրել չեն գիտում եղել: Այդ  
հանգի բանաստեղծները, Սրբազան, (որոնց աշուղ են կո-  
չում) մեծ նշանակութիւն ունին պատմութեան առաջ,  
ինչպէս վարդապետների քարոզներն իրանց դարու կրօնա-  
կանութեան հոգուն յայտ անող հայելիք են, նոյնպէս և այդ  
հասարակաց վիպասանաց երգերն էլ՝ հասարակաց մէջ տիրող  
զգացմունքների, հայեացքների, հասկացողութեանց հայե-  
լիքն են. իսկ իրանց գրականական արժանաւորութեան՝ որն  
որ լոկ հասարակական է, այսօրուայ ամեն գիտնականները  
մեծ յարգ ու պատիւ են տալի, որոնց կարգէն է և իմ  
բարեկամ, հանգուցեալ Պ. Գէորգ Ախվերդեանից՝ Սայեաթ-  
Նովայի երգերի հրատարակողը, որ՝ այսպէս է խօսում այդ  
վիպասանի մասին, իր յառաջաբանում:

« Թէ շատ զօղ (քէյֆ) է շանց տուել, շատ անգամ էլ էս հան-  
 ճարեղ յանկարծախօսն կատարել է հոգեւոր բժշկի պաշտօնն, Լսել  
 եմ ծերերուց որ մէկ օր էրէկէ Բ. Վրաց Թագաւորի գերդաս-  
 տանն ու իշխաններն նեղանալով իրանց Պարնին (պարոնին Թագա-  
 ւորին) եկած տխրութեան համար, (որն որ երբեմն պատահում էր  
 էս՝ միշտ իր թշնամիներու արշաւանքները մղելու համար հոգած  
 քաջ պատերազմողին) ու նրանք դադարեցնելով իրանց կանացի զբո-  
 ուանքն ու սրալատական շղթքորթանքն, ճարերը կտրած՝ ստիպած  
 են ըլլում գործ դնել Սայեաթ-Նովու հոգեզուարճ խօսքն. նա քա-  
 մանչէն (Չութակ) ածելով մտած Թագաւորի սենեակն ու մտիկ  
 չտալով նրա ողորմած հայեցուածին, սկսում է բանն համարձակ  
 ասելով Վրացերէն.

Քոս քո՛ւ պարտած էրստի ջրով, շե՛ր քիմնուլ տեղ պարտաւորներ  
 ունեցողին. անձրեւային ժամանակն Բուռ՝ որ կուր դետն է Վրաս-  
 տանու, այն տեղ՝ ուր որ Երասխն է խառնվում, ջուրն առնում է  
 թուխ կարմրագեղին մի գոյն:

« Ու էսպէս իր սիրական Պարնի տխրած ճակատն պսակում է  
 խաղաղ խնդութէնով:

« Ամէն տեղ ուրախութիւն ցանող Սայեաթ-Նովէն, ինչպէս  
 տեսնում ենք իր խաղերուց, իրան էլ չէ զրկել ցնծութենից. սրա  
 աշխոյժ ու սիրատէնչակ հոգին՝ շատ գեղեցկանազին գերի կուլի  
 (կը լինի) արեւ իր կաթոգին խօսքերով՝

Ղուրբան իմ ծուցիդ նրոանն,  
 Հօքիս տամ շիւշատ (տօսախ) կըռանն (բազուկ)  
 Թաք պառկիմ եարի դռանն,  
 Գըլխօսքս քար իմ ասում.

Ինքն էլ սիրու գերութեան մէջ տարիանքով վառված՝ առանց  
 սերեկնի մէկ օր էլ չէ ուզում էս աշխարհքից՝

Դուն գլուխը մահի կուտաս, էս էլ քիզիդ (քեզ հետ) կումէռնիմ.  
 Մեր էքնէն թամամ (ողջ) աշխարըս սօվ քաչէ, հաց չը տեսնէ:

բայց չէ մնում միշտ էս սիրատարի մոռացմունքի մէջ, պահելով  
 իրան հեռու մարմնամուղ զգացմունքից, աւելի հաւան է՝ յայտնել  
 իր անձկութիւնն որպէս նուագածու քերթող՝

Թէ մէ շարաթ քիզ չ'իմ տեսնի կու կըտրեմ քամանչի սիմըն (թելը),  
 ու նկարագրելիս իր բաղձանքն, մնալով զուրկ հեշտասէր ցանկու-  
 թէնից՝ չէ վիրաւորում նուրբ զգացմունքն՝ ինչքան պարզ էրէլ  
 հասկանում սիրու սրբութիւնն ցոյց է տալի նրա խոստմունքն՝

Թէգուզ անմահութին ուզիս սիրով կու ճարիմ քիզ ամա:  
 Էնպէս որ համարձակ կարելի է ասել թէ՛ Սայեաթ-Նովու հոգին  
 ճընի տակէն նուր դուրս (նոր դուրս) էկած արիւղ դիպած սըն-  
 բուլի պէս պայծառ ու մաքուր է:

Սայեաթ-Նովու ցնծութիւնն չ'է քաշում շատ ժամանակ: Համար-  
 եան թէ հէնց էն գլխէն դրաւում է սրան տխրութիւնն, իր սէրն ու  
 բաղձանքն յայտնում է մէ տրտում ու վշտալի սճով, որ ցաւ է  
 տալի սրտին. տեղ տեղ էլ շանց (ցոյց) է տալի իր հոգւոյ ճանճ-  
 րանալն կեանքից, աշխարհքից, երգերուցն եւս՝

Է՛րէզ լավ էր կանց վուր էսօր, — վաղէրումէն (գալիք օրերէն)  
 բէզարիլ իմ, (ճանճրացել եմ)  
 Մարթ համաշա (միշտ) մէկ չ'ի ըլի, — խաղէրումէն բէզարիլ իմ:

Էսպէս զղուած աշխարհքից, գանգատուելով թէ՛ դարն (ճշմա-  
 րիտն) ճահայ շէ քնոս՝ էնդուր որ՝ շարայէլ է Խալիէ սոսոն: Սայ-  
 եաթ-Նովէն խրատում է իր գիվանա սիրտն ու քարոզում է սրան  
 սիրել Ասորոս, հոգի, ետր, պարկէշտութիւն, գէր, իբար, հաճեքո-  
 թեան, դարասարան, խոնարհութիւն, ալտար, զնաղ. (չ'ուր) օտար ու վերջումն  
 յայտնելով իր սրտի տխրութեան հիմն՝ ահեղ դատաստանից վա-  
 խենալն խորհուրդ է տալիս իրան մանաւանդ սիրել Վան, անպար,  
 ար: Սայեաթ-Նովու խրատական խաղն (որն որ առաջ բերինք վե-  
 րեւը), բովանդակում է իր մէջ կեանքի ամեն բարոյական ու մարդ-  
 կային տարերքն, ու անպաճոյճ ու կարճ խօսքով յայտնում է մէկ  
 ժողովորդի ամեն կարիքն, վկայում է ազգային երգչի բարոյական  
 ու կրօնական մտաց աճման:

Իրաւ է, էս ազգային երգիչն հասկանում է էլել իր կոչումն, ու  
 նրա միտքը լաւ հասնում է էլել իր պաշտօնին, երբ իր գլխին՝  
 Խալիէ նօտար, (ժողովրդեան ծառայ) ասելով՝ թեւադրում է իրան  
 հասնող զուլու (ծառայութիւն) անել ժողովրդին, որն որ անուանե-  
 լով ծոռն գէր՝ գիտէ որ սրա դրոշմն (ուղղելն) քերթողի սուրբ  
 պարտքն է. էնդուր էլ սիրուն կոչում է իրան դոսթար (չ'ուսն):  
 Ազգի բարոյական դուրգարն էն էլ է հասկանում, որ քերթողն՝  
 պահպանելով իր սիրտը ար Խալիէ-ց ու Կորէլ-ցն, պիտի չը վիրա-  
 ւորի ժողովրդի ապերախտութենից ու բրտութենից, ու ամեն  
 շէր պարգեւողին պատասխան տայ շարտով, լաւ խմանալով՝ որ  
 ազգն իր կրթութիւնն ու խրատն ըստանալու է երկնուց

Թէգուզ (թէեւ) դըպրատանքն պահ տաս՝ ծեծով չ'ի խրատիլի  
 խիվըն, (խենդը),  
 Ինչրու, (մինչեւ որ) անձնէն չը դուս էհայ (երթայ) անախտելի  
 էն չար դիվըն, (դեւը)

բայց ինքը վիզն է առնում միայն քարոզչի պաշտօնն, ու սորվեցը-  
նում է սիրել ու անել քարէ քարէն, որն որ դասուում է: Բարձր ամէն  
խմաստութեան ու գիտութեան վրայ, ասելով՝

Թէ դուզ իմանաս, գիտէնաս աստղերու համբարքըն (համբարքը)  
սիրուն,

Անբարի դուրձըն (դորձը) կօրած է՝ կարթն Հարանց վարքն սիրուն,

ու իր անարատ հոգին՝ թէպէտ զգում է էլ էն կենաց պայծառու-  
թիւնն, բայց միշտ նեղացած մնում է տարակուսանաց մէջ՝

Վուր (որ) տիղ՝ հասնիք. (հարսնիք), վուր տիղըն՝ սուք, վուր  
տիղ՝ սոյբաթ (ընկերութիւն) խաղ է ըլում:

Վուր տիղ՝ ժամ, վուր տիղ՝ պտտարագ, վուր տիղ՝ սիրով տաղ  
է ըլում:

Թէ վուր հօքուդ կամքն իս անում՝ մարմինդ բէտամաղ է ըլում:  
(ցաւ է կրում)

Վուր մէ (մի) դարդին (ցաւին) կու գիմանաս, դուն ջըրատար  
Սայեաթ-Նովա:

Հէնց էն գլխէն հոգուն ու մարմնու խնդիրն չէ տալի սրան դա-  
դար, ու շատ ժամանակ պահում է տաքնապում: Վերջապէս ձանձ-  
րացած էս երազական կեանքի վոյելչութիւններից՝ Սայեաթ-Նովու  
խանդակաթ սիրան ասելով՝

Կու հաքնիմ մաղեղէն, կու հաքնիմ շալըն  
Կ'երթամ ու ման կուզամ վանքիրըն մէ մէկ:

պտտում է միայնակեցութիւնն, որոյ ծարաւն էնքան սաստիկ է  
ըլում, որ իր զաւակներու թիֆլիզում թողած՝ գնում, հեռանում է  
Հաղպատու Սուրբ Նշանի վանքն, որ տեղ կրօնաւորված ձեռնա-  
դրվում է արեղայ . . . . .

Վերջն ու վերջը, Սայեաթ-Նովէն՝ լսելով Աղա Մահմէդ-խանի  
հեծեւազօրի Վրաստանու սահմանին մտեանալն, միտն է բերում իր  
զաւակներուն (ունեցել է երկու տղայ՝ Մելքիսեդ, Օհան. ու երկու  
աղջիկ՝ Սառա ու Մարիամ, որոնց սերունդէն է, մեծ մօր կողմէն եւ  
Գարեգին Մ. Աղաբէգեանը) ու գալիս թիֆլիզ: Էս տեղաց ուղար-  
կում է նրանց Մօղղօկ՝ ուր սրանք գցում են իրանց հաստատ բնա-  
կութիւնն: Սայեաթ-Նովէն դնում է իր զաւակներուն ձանապարհ  
թէ չէ, Պարսիկքն մտնում են թիֆլիզ: Հաղպատու առաջնորդա-  
րանն հէնց բերդի տակն ըլելով՝ թշնամիքն տուն են ընկնում եկե-  
ղեցու դաւիթն ու կցում են կատորեւն ու կողպտեւն: Սայեաթ-  
Նովուն վրայ են հասնում եկեղեցում աղօթք անելիս: Սրանից

պահանջում են դուրս դալն ու հաւատն ուրանալն, բայց կրօնաւորն  
Պարսից թրերու տակն աւանդում է հոգին՝ ասելով ,

Չըխմանամ քլիսագան, տօնմանամ Իսադան.  
(եկեղեցուց չ'եմ դուրս գալ, չ'եմ ուրանալ Յիսուսին)

ինչպէս մի թուրքերէն ասած խաղումն էլ՝

Սայեաթ-Նովա դինը Իսա ինքար էթմաս՝ էրմանի դուր.  
(Սայեաթ-Նովէն հաւատն չ'ի ուրանալ Հայ է):

Էդպէս Խալիսի նօքարն նահատակվում է սրպէս ծառայ Աստուծոյ  
Սեպտեմբեր ամսին 1793ին:

Ինչ էք ասում, Սրբազան, միթէ կարելի էր մեր նա-  
խորդների համար՝ այն արիւնթաթախ դարերում, աւելի  
ամուր պահելու կարող լինէին իրանց աշխարհի, ազգի եւ  
եկեղեցու աղբայնութիւնն, ինչպէս որ պահել են մեր վար-  
դապետները՝ իրանց քարոզներով, վաճառականները՝ իրանց  
կեանքով, վիպասաններն էլ իրանց երգերով: Ահաւասիկ  
ձեզ եւ Հայոց զիւղական կեանքէն էլ մի նկարագիր արձակ  
դրուած Երեւանու բարբառով, արժանայիշատակ Խաչատուր  
Աբովեանի գրչէն դուրս եկած, Երեւանու Սարտարի  
Քանաքեռ դիւղէն յափշտակած Թագուհի աղջկանը բարուց,  
վարուց եւ դեղեցկութեանը մասին:

« Ո՞ր մէկն ասեմ, որ մէկը թողամ, մարդի սիրտ կրակ ա (է)  
ընկնում. երբ որ խեղճ մօր արածն ու ասածը միտքն ա բերում:  
Ո՞վ որդի ա մեծացրել (մեծցուցել). նա՛ լաւ կիմանայ մօր սիրտը,  
տկար լեզուն ինչ կարայ (կրնայ) սրտի ամէն մէկ կսկիծը, ամէն  
մէկ եարէն (վերքը) բառով եդ պատմել (նկարագրել): Ողորմելի  
մէրը (մայրը) էսպէս խելքը կորցրել, չէր խմանում, թէ ինչ էր  
ասում, ինչ էր անում, թուրքերն էլ՝ որ տասը հատ էին թվով, էն  
անօրէն տեղըներովն էլ (իրանց վիճակով) զորդ ա (իրաւ է) բար-  
կանում, հարբայ էին գալիս (կը հուշտկէին) ամա մօր էսպէս մոր-  
մոքվիլը տեսնելով, սիրտընքը մի քիչ գութ ընկաւ: Իրանք էլ էին  
գիտում, որ մօր համար հեշտ չի (չէ) որդի մեծացընել. եղոյ էս-  
պէս բիրադի (մէկանց, յանկարծ) կորցնիլ, Հաւն իր ձագը կոր-  
ցնելիս՝ կեանքը հեռը տալիս ա, ուր մնաց բանական մարդը:  
Իրանք էլ մնացել էին մոլորված, ամա (բայց) Սարգարի հրամանն  
էր. չանէին, չտանէին, իրանց գլուխը կը թռչէր, եւ (կամ թէ)  
աչքը դուս (դուրս) կը գար: Ճարընքը կտրուեց. խօսքը մին



ցել, նրա շունչն ըլլին ուղում, որ քաշեն, ծծեն, զօրանան, դալարին հովը մազերի վրայ սլալալիս, երեսին զխաչելիս, էլ չէր ուզում որ առաջ խաղայ եա ետ գնայ . հէնց նրա գլխովն էր պըտտում, հէնց նրա մազերի հետ խաղում: Վարդի վրայ երեօը կուացընելիս (ծոռ-լու ատեն) ուզում էր որ բարձրանայ նրա շունչը քաշի, նրա պատկերի գունը գողանայ, որ դըհա (տահա, եւս) աւելի գեղեցիկ, դըհայ անուշահոտ երեւի: Բլբուլը (տոխակը) նրա հոտն առնելիս, իր վարդը մուսանում նրան էր գովում, նրա վրէն իր սէրը թափում, նրա հասրաթոփն, (կարօտովը) էրվում, խորովվում: Շատ անգամ ինքը ձէն հանելիս, եա ինքն իրան խաղ (երգ) ասելիս, հէնց խմանում էր՝ թէ հրեշտակներն են իր հետ խօսում, իրան ձէն տալիս, եա ձէնը քաշում, առաւօտեան ցօղը, իրիգվան վերջի վիտը մէկը նրան տեսնելիս՝ ցնծալով վեր էր գալիս որ նրա սուրբ երե-սին նատի, մէկը ցաւելով երեսն իրան էր քաշում, աչքը խփում, որ նա շուտով քուն մտնի, գիշերն անց կենայ, որ առաւօտն էլի գոյ նրա տեսութեան արժանանայ, նրա լուսովը հոգի առնի ու զուար-ձանայ: Քունը նրա աչքերին էնպէս էր մօտենում, ինչպէս մկ սրբի՝ երկնային հրեշտակը, Թեւերն երեսին փուում, անմահական երազով նրան գրկում, գգվում, արթնացնում . էլ եդ իր գիրկը դնում:

Այս, որ մէկն ասեմ. նրա ամէն մէկ շարժմունքը, ամէն մէկ խօսքը, ամէն մէկ մտիկ տալը (հայուածքը) ամէն մէկ աչքի ու պօռչի ժամ գալը՝ հրաշք էր: Էն լուսակոլը աչքերը, էն խնկան ծաղիկ շրթունքը որ չէր բաց անում, մարդ ուզում էր, ոչ ուտի, ոչ խմի, հէնց նրան մտիկ տայ, նրա սուրահի բոյին (երկար հասա-կին) թամաշ անի (հիացքով նայի), նրա ոտի տակին հոգին տայ, նրա ձեռիցն իր մահն առնի: Էս երկնային հրեշտակը, էս անմեղ գառն էր էս հաղաղին՝ էն գաղանների ձեռին. ինչ քարացած, ապառաժ սիրտ պէտք է ըլլի, որ նրան տեսնելիս կամ նրա պատ-մութիւնը լսելիս, գլխին կրակ չի վռուլի: Ո՞ր մէր (մայր) էս հա-ղաղին թուրը չէր առնիլ ու իր ջիգեարը (սիրտը) ցցիլ: Ո՞ր հարե-ւան (դրացի) կամ անցվորական՝ նրա էն լուսեղէն երեսին նայելիս՝ աչքին չէր հուփ տալ (աչքը չէր խփել) որ լացը դայ ու սիրտը հովանայ . Այն մեր գեղական խեղճ խալիսը էնքան էսպէս բաներ տեսել ու լսել էին, որ արտասուեցներն էլ էր ցամաքել, աչքըների լիսն էլ էր հաատել: »

Այդ նկարագիրը, որոյ նմաններ՝ շատեր կան Վերսի Հայաս-տանի անուն փխպաստանութեան մէջ, զանազան առարկայների և նիւթերի մասին, մօտ քառասուն տարի է, երկրիս երե-սէն աներեւոյթ եզող խաչատուր Աբովեանցի գրչէն է գորս

եկած, Երեւանու նահանգի քաղքեցոց և գեղացոց բարբա-ռուլ, որն որ այսօր էլ է խօսուում իրանց մէջ: Ըստ ինձ, Սրբազան, այդ արարատեան բարբառը, Հայաստանի այժ-մեան բարբառների վրայ ամէնքէն գերազանցն է ու աղ-նուականը՝ և որն որ տիրապետել է ու ներգործել՝ ոչ թէ միայն ամէն գաւառական բարբառների վրայ, այլ նաև օտար աշխարհներում գալթող Հայոց բարբառներում: Չնա-յելով՝ որ այդ բարբառը վաճառական ու երկրագործ հասա-րակութեանն է, բայց կրում է իր վրայ կենդանութեան, բնականութեան և ազգայնութեան դրօշմը . իսկ արտաբե-րութեան կողմէն ընտիր ընտրելագոյն, քաղցր քաղցրագոյն է ամէն բարբառների վրայ, Մինչդեռ, ինչպէս պիտի տես-նէք մի փոքր յետոյ, Ղարապաղեցոցը քաջ տղամարդու և պատերազմող ժողովրդեան բարբառ է, Վանեցոյն ու Մշե-ցոցը՝ երկրագործ ժողովրդեան, իսկ Կարնեցոցը քաղքեցու՝ Թիֆլիզեցոցը նման:

Այդ արարատեան բարբառը ինչ գրական լեզու է առաջ բերել, կերեւայ Պատկանեանցի Մայր Աբովեանցի, Ասքեր-եանի Հայոց Աղբիւր, Ներսէս Ե. կաթողիկոսի Ծիծեռնակ և այլ ուրիշ քերթուածներում, որոնք արդէն իրանց քաղցր եղանակներով հասարակաց են եղած բոլոր Հայոց մէջ: Այդ բարբառով, Սրբազան, թէ արձակ և թէ ստանաւոր գրող հեղինակներ շատ ունինք, որոնց մէջ առաջին տեղն է բռնում Աշտարակեցի Պէրճ Պռօշեանցն իր Սոս և Վարդիւր և Կոստանայի անուն գրուածներով, նմանապէս Թիֆլիզեցոց բարբառով գրող հեղինակներ, որոնց ամէնէն եռանդունն էր բժիշկ Ստեփաննոս Փաստամեանցն, որ վախճանած է Գէորգ Տէր Աղեքսանդրեանց՝ որ բուն իսկ բնականէն է օրի-նակող և Ս. Մնգուկեանցն, Քաղէ հանա (Veau de ville) ասուած կատակերգութեան հայրն, որ շատ մեծ անուն ունի Թիֆլիզում:

Ահաւասիկ և մի նմուշ Ղարապաղեցոց բուն բարբառի . Գրողն է Ղազարոս Աղանանցն իր Աբովեան և Մանուէլ անուն ազգային վիպում:

«Արուժիւնը իւր մօր հետ նստեց մի սայլի մէջ եւ ճանապարհ ընկան դէպ ի իւրեանց գիւղ: Գիւլջհանը՝ Արուժենի մայրը անդադար համբուրում էր իւր որդուն, ամէն անգամ կրկնելով այսպիսի խօսքերը:

«Էս քը մատաղ ընիմ, ա՛ թիւն ջան... իսկ Արուժիւնը ասում էր, տէ լաւ ա լաւ, խրիկ պաչի: Էս գիտում ըմ, վար դիւ ինձ շատ ըս սիրում — Գը մատաղ ընիմ, ա՛ թիւն ջան, դիւ վար գիտաս հուչ, էլ հո՛ւ կը գիտայ: Էս քու չարը տանեմ ա՛ թիւն ջան: Տէ լաւ, լաւ, բա՛հ: Ա՛տա, քը մատաղ ընիմ, դէ հունց անիմ, կարում չըմ, թա տաղ անիմ... քը մատաղ ընիմ Ա՛թիւն: Օտանը հո՛ւնց ա, խօխեքը լաւ ըն, մեր պառաւ խնամէն ըրխէս նըհետ բըրջումա:

Թող կորչի, մին նրայ անունը տալ մի... Երս էլ ասել պիտիմ թա՛ հար օնեմ, մար օնեմ էլի... Խէ, քը մատաղ, հինչ այ ըլալ... հինչ պիտի ընիլ, դահլաս տարալ ըն, էս հինչ ա, ասում ըն, եկալ ա կըլտըներէս եր ընգեալ. ըսկի հաց չօնենք, թա մունք ուտենք, մին պողաղ էլ սայ ա դառալ: Տիւք էլ՝ Աստուծ օրհնալ ա՛ վար մէ հէտ մին չուալ ալեր ըղարկէք, հինչ կընի, պա, ծէր սըրտումը ջգեար կսյ հուչ: Գը մատաղ, իմ ծեռանը հինչ կայ. պա դիւ գիտում չըս քօ հօր խըսեալթը... էրվալ ըմ, խրովալ, ես էտ մարթին ծեռանը... քօս ըլըղնէն վար կեալիս ըն չնը, հու՛վ վար մին չանաղ ա տալիս, նա մին չուալ ա տալիս... Ուրը քըքեր մարթիքը պիւրում ա տանը լնում, ուտըցնում, խըմըցնում... մին ամսումը հարիւր թու՛նդի կինի ա վըջըցնում, կըրէսնէն դըրտակում... խօխեքս մարնէն պէց, վընըրնէն պէց... նհանց մին ճօխտ չմօջկ չիյ ինք օնում... Ասում ըմ, էտ բրարմունք չի վար դիւ անում ըս, վէ տանը տակն է քցում, թակում, կուտրատում. թա լիւղիտ կտրէ... (արտասվում է)՝ Լաւ ա, լաւ ա, լաց մինիլ, աղի ջան... Ես լաւ տղայ կը տեռնամ, քէզ կը տանեմ քաղաք... Ա՛խ... սրտումս շատ մուրաղ կայ... Մին քէզ տանի մէ հետ տինջ նստած, էն վախդը մունի, էլ սրտումս դարդ չար ընել... ամա հո՛ւնց անեմ մը հեգ. հիւր ասեմ, թորը կորչիմ, (նօրէն լաց է լինում): Էս քօ ցաւը տանեմ, Ա՛թիւն ջան. լաց մինիլ, քը մատաղ ընիմ, լաց մինիլ... վախել մի, քը մատաղ, դիւ քօ մուրագէն կը հսնես... հալա ջահիլ էս... դիւ ինձ հետէ դարդ մանիլ... Ես էս ա պըռաւալ ըմ. էքիւծ էլ օր կը մեռնիմ... դիւ վար իմ երեսին մին հափուռ հող քցես, էն ինձ բօլ ա...»

Գլուխ ԺԲ. Երես 169, Մայրական սէր, Մայրենի լեզու:  
Թարգմանութիւն.

Ես քեզ մատաղ լինեմ, հողիս Յարուժիւն, տէ լաւ է լաւ: Հերիք

է մայր, ինձ պաչ անես, ես գիտեմ որ, դու ինձ շատ ես սիրում: — Գեզ մատաղ լինեմ, հողիս Յարուժիւն, դու որ գիտենաս ոչ, էլ օվ կը գիտենայ... Ես քս չարը տանեմ, հողիս Յարուժիւն: — Տէ, լաւ լաւ, — Ա՛ տղայ, քեզ մատաղ լինիմ, թէ ինչպէս անեմ կարող չեմ, թէ լուռ կենամ... (բանիտեղ չղնեմ) քեզ մատաղ: Ովսանէն ինչպէս է, երեխեքը լաւ են, մեր պառաւ խնամին երեխանց հետ պաչալուում է: — Թող կորչի, դնա, էլ նրա անունը մի տար, ես էլ պիտի ասեմ թէ հայր ունիմ, մայր ունիմ, այնպէս չէ... — Ի՛նչ է, քեզ մատաղ լինեմ, ի՛նչ է եղել — Ի՛նչ պիտի լինի, գլուխս տարին, այս ինչ է, ասում են, եկել է գլխներէս վեր ընկել, ամենեւին հաց չունինք. թէ մենք ուտենք՝ մի կոկորդ էլ սա է դառել, դուք էլ Աստուած օրհնեալ է, որ մի հեղ մի պարկ ալիւր ուղարկէք, միթէ ձեր սիրտը զգացում չունի: — Գեզ մատաղ լինեմ, իմ ձեռին ինչ կայ. միթէ՞ դու գիտում չես քօ հօր բնութիւնը. այրուել եմ, խորովել ես այդ մարդու ձեռին: Կուր երգ ասողները (աշուղները) գալիս են մեր գեղ. սվ որ մի աման է տալի, նա մի պարկ է տալի... օրը գիշեր մարդիկ է բերում տունը մինչեւ լոյս ուտեցնում, խմեցնում... մի ամսուայ մէջ հարիւր թու՛նկի (մի թու՛նկին չորս օխա է) գինի է վիչացնում, կարասները դարտըկում:

Երեխանցս մտերը բաց, վրանները բաց. շատունց է մի ջուխտ կօշիկ չի առնում... ասում եմ այդ արարմունք չէ, որ դու անում ես: Տունը տակն ու վրայ է անում. թակում է եւ կտրատում, թէ լեզուդ կտրէ... (Կը լայ փայլ): — Լաւ է, լաւ, մի լար, հողիս, ես լաւ տղայ կը լինիմ, քեզ կը տանեմ քաղաք. անս, սրտումս շատ փափաքներ ունիմ: Մի հեղ քեզ տեսնեմ մեզ հետ հանգստացած. էլ այնույետոյ թող մեռնիմ, էլ սրտումս ցաւ չէր լինել: Բայց ինչպէս անեմ, հիմա ո՛ւմ ասեմ, մեր կորչիմ. — Ես քօ ցաւը տանեմ, հողիս Յարուժիւն. մի լար, քեզ մատաղ, մի լար, մի վախեր, դու քօ փափաքին կը հասնիս, դեռ երիտասարդ ես, դու ինձ հետ ցաւ մի քաշիր: Ես ահա պառուել եմ, վաղը միւս օր կը մեռնիմ, դու որ իմ վրայ մի բուռը հող քցես, այն ինձ բաւական է, մի լար, ցաւդ տանիմ, մի լար:

Անշուշա՛ ընթերցողը նկատեց, որ Ղարապաղցոց բարբառն էլ, ինչպէս թիֆլիզեցոց բարբառում, սղեւու սովորութիւնը, այսինք բառերը կարճացնելու յատկութիւնն՝ իրան բնական հանգամանքն է, հետեւաբար և բառերը հնչելու կերպն էլ տարբեր՝ Երեւանցոց և թիֆլիզեցոց նոյնպէս և վանեցոց վրայ, Բայց խօսքերի կազմաւածքը կամ թէ քերականու-

Թիւնը մի և նոյնն է գրեթէ արարատեան բարբառին հետ, Պիտի աննէք, Սրբազան, այդ բարբառը սրբան մերձաւորութիւն ունի Վանեցոյ ու Մշեցոյ բարբառին հետ, այնպէս որ՝ համեմատական բանաբնութեամբ դուրս է գալի, որ Հայաստան՝ այնքան դաւառական բարբառներ չունի, որքան դաւառական հնչմունք կամ արտաբերութիւնը, թէ՛ բառերի, թէ՛ վանկերի և թէ տարրերի միջում: Վանեցոյ և Մշեցոյ հ գիրը էի պէս հնչելուն պատճառը, ես կարծում եմ, լինի կանանց բերանկապն, թէև մի և նոյն սովորութիւնը ընդհանուր է Հայաստանում, բայց Վանեցոյը սաստիկ է, կարելի է ասել նաև տիրող ազգաց և ազանց բարբառների ազդեցութիւնն էլ մեծ անդ բունում լինի Հայաստանցոյ բարբառներում: Պարսիկ, Թուրք և Քուրդ լեզուների օրինակի համար, որոնց հետ Հայաստանցիք դարերով յարաբերութեանց մէջն էին:

Հարկ եմ համարում այս տեղ, մի քանի սղացած բառեր առաջ բերել, որպէսզի հասկայուի թէ սր աստիճանի է հասել այդ սղման օրէնքը այդ բարբառներում: Աքէ, քէք, եզբայր. քէ, բան. բէ, վրէն, վրայ. շո, շուտ. շոք, սեղորդ. հնայ, մուանայ. ըհ, ահա. ըհ, եմ. հօքէ, հրամայեցէք, իսկ թիֆլիզցիք ասում են. հօքէ, Գը, քեզ. Խօ կամ հօ, հարկաւ կամ ի հարկէ. հէր, մայր. հէր, հայր. հն, մինչեւ. եր, վեր. քէքէ, տարեկան. հոքէ, լակոտիկ. Բէն, Յարութիւն. Կոն, ատոնք. ըհ, յաջողում: Կէ, այդպիսի, և այլ խիստ շատեր: Իսկ հնչմունք և արտաբերութիւն ամեն դաւառ իրանն առանձինն ունի, այնպէս որ՝ Հայոց թէ՛ ձայնաւոր և թէ բաղաձայն տառերը՝ չորս, հինգ կերպ են հնչում եւ արտաբերում դաւառական բարբառներում: օրինակի համար ա տառը, է, է, ե, օ և ը ի ձայներն ունի է, է, այժ. ե, այս. քէ, գամ. հօ, կ'ասէ, կու ասէ. քէ, տեղ. ըհ, աստի. նոյնպէս և միւս ձայնաւորները՝ ինչպէս նաև բաղաձայնները, որոնց վրայ այս տեղ երկար լինելուն խօսելը զանց կառնեմ:

### ԵՐԳ ՎԱՆԵՑՈՅ ԲԱՐԲԱՌՈՎ

Թուխ աչքեր տնէն ելեր ես կերթաս տանիք,  
Դիւ ես քեօ ջուխտակ տեղեր կնիկ.  
Պագըմ կուզեմ էրէս կկայնես .  
Աստուծու սիրուն մարդ կսպանես:  
Թուխ աչքեր տնէն ելեր ես կերթաս յէգին  
Աստուած սիրես արի մի մա զիմ խոգին  
Թողնեմ կերթամ կարիպութին չար գերութին.  
Հաւար թուխ աչ, մատաթ թուխ աչ,  
Թուխ աչքեր տնէն ելար կերթաս կանաչ մէյտան,  
Գեղուկ աչքերդ զիմ ջան կերան  
Թուխ աչքեր ինձնէ մի մնա խոռով .  
Ես կը մեռնիմ քեզի ապով .  
Դիւ կնմանես նոան գինի,  
Դիւ խմի, ես ասեմ անուշ լինի.  
Սրի երթանք մեր տուն խուր,  
Թուխ պաշ մաքին մատաղ կտրեմ,  
Ջանիդ համար զուրպան կենեմ,  
Աստուած սիրես, զիս ձեր տուն դոնախ անես :

Սեղարբան Արիստակէս վարդապետի ժողովածուց:

Թարգմանութիւն.

Սեւ աչքեր տնէն ելել ես կերթաս տանիք,  
Դու ես քո ջուխտակ տաղեր կնիկ .  
Պագնել կուզեմ երեսդ, կը կանգնես,  
Աստուծոյ սիրուն, մարդ կսպանես.  
Սեւ աչքեր տնէն ելել ես կերթաս այգին,  
Աստուած սիրես, եկու առ զիմ հոգին.  
Թողնեմ, երթամ պանդխտութիւն, չար գերութիւն.  
Խնդրեմ սեւ աչք, աղաչեմ սեւ աչք:  
Սեւ աչքեր տնէն ելար կերթաս կանանչ տափ,  
Սիրուն աչքերդ զիմ հոգի կերան.  
Սեւ աչքեր ինձմէ մի մնար խոռով .  
Ես կը մեռնիմ քեզ համար:  
Դու կը նմանիս նոան գինի,  
Դու խմէ, ես ասեմ անուշ լինի.  
Սրի երթանք մեր տուն հիւր,  
Սեւ գլուխ մաքին մատաղ կտրեմ,  
Հոգուդ համար մատաղ ընեմ,  
Աստուած սիրես, զիս ձեր տուն հիւր անես :

Մի հատուած էլ Վանեցոց արձակ բարբառի, Գարեգին Սրուանձտեանցի «Մանանա» անուն գրքէն, տես Երես 153:

«Ուրեւերի կնիկ մը կելի, մէկ աղջիկ ունի: Էդ կնիկ կերթայ իրկան. էն իրիկն էլ մէկ լաճ մէկ աղջիկ ունի ուր առջի կնիկից: Կնիկ կ'անի զանի՝ չու՛մ երիկ գլխուց կը հանի մարդու ճար ճարանք կը կտրի. իլլահ ուր լաճն ու աղջիկ պիտի տանի սարերաց գլուխ կուրիսի: Օր մը քանի՛մ հատ թափթափայ հաց կը թխի կը դնի աւուրիկ, կառնի ու ճըժեր կերթայ սարերնը վեր, կերթայ կերթայ կը հասնի անասուն տեղ մը. ճըժերաց կասի: Կըտոր մը նստենք ըստայ հանգ առնենք: Տղէյներն ի կը նստեն. Խէրն ի, երես կը չըջի մէյ դիհ, ընքուռ ընքուռ կուլայ: Կը դառնայ տղէյներաց կասի. ճըժեր, պրտու՛մ մը հաց կերէք: Կուտեն կը պոճնեն. Լաճ վերուց ասաց. Բարձ, ծարաւ եմ: Խէրն ի ուր ձեռաց կօս կը տնկի գետին. ուր կօտիկ կը հանի թալի վէր կօսին, կասի. Արե՛ իմ լաճ, արե՛ իմ կօտիկի հովը նստի, ես երթամ տեսնամ դժը ջրի աղբիւր կայ: Քոր է՛ աղբեր կը նստեն. Խէրն ի կը թողնի կերթայ մէյ դեհ կը կուրիսի: Էդ սարի ճըժեր կը մնան էն տեղ. Ծասս կ'աչքեն, քիչ կ'աչքեն, կը տեսնան որ իտէր չղարձաւ. կեչնեն չորս դեհ կը զարնուին. հը մարդ մարդասանք չկայ. Կը դառնան էլ՛մ էն տեղ. ու մէկ ձէնով կուլան կ'ասեն. «Վայ, վայ, կօսը կայ, կօտիկը կայ, բարձն չը կայ, վայ, վայ»:

Տես շարունակութիւնը Մանանա, Երես 153:

Թարգմանութիւն .

Մի որբեւորի կին, մի աղջիկ ունի եղել: Այդ կին՝ մարդու կերթայ: Այդ մարդն էլ, մի մանջ եւ մի աղջիկ զաւակ ունի եղել իր առաջուայ կնոջմէն: Կինն անում է չէ անում, մինչեւ որ իր մարդը գլխէ է հանում. մարդու ճար ճարակն կտրուած յանձն է առնում իր մանջն ու աղջիկը առնել, տանել սարերի գլխին կորցնել: Մի օր, մի քանի հատ կըր հացիկ է թխում ու դնում պարկում. յետոյ, առնում է իր երեխէքը դնում է դէպ ի սարերի վերեւը. դնում է ու դնում ու հասնում մի ամայի տեղ, ու երեխանց ասում է. մի փոքր նստինք այս տեղ կանգ առնենք: Տղեքն էլ նստում են: Հայրն երեսը շուռ է տալի մի դէն ու սկսում լաց լինել: Յետոյ դառնում տղոցն ասում է: Տղէք, մի կտոր հաց կերէք. Իրանք էլ կուտեն կը պոճնեն: Մանջն ասում է, «Հայր, ծարաւ եմ.» Հայրն իր ձեռքի ցուպը զետիւնն է տնկում, իր հագուստն էլ հանում է եւ ցուպին վրայ է դնում, ու ասում, արի՛

իմ մանջ, արի իմ հագասի շուքին նստի՛ր, ես երթամ տեսնամ ուր կայ ջրի աղբիւր: Քոյր եղբայր նստում են, հայրն թողնում է նրանց ու դնում մի դէն՝ ու կորչում: Այդ սարի երեխէքը մնում են այն տեղ, սպասում են ու սպասում, տեսնում են որ՝ հայրը չէ յետ դառնում, վեր են կենում, չորս դէնն են նայում ու դիտում, ինչ մարդ, մարդու չունչ էլ չկայ: Յետ են դառնում նորէն այն տեղ ու մէկ ձայնով լաց են լինում՝ ասելով: «Վայ մեր գլխին, ցուպը կայ, հագուստը չկայ, հայրը կայ, վայ, վայ.....»

Լսի՛ր, ինդրեմ, Սրբազան Տէր, և մի պանդուխտ Մշեցու քերթուածը, որ իր հայրենի բարբառը վիպասանութեամբ ջանք է արած զրականել, և կարծեմ էլ՝ որ յաջողած է: Այդ Մշեցի պանդուխտն է, մի պատկառելի ծերունի Յովհաննէս Ամրիկեան, երբեմն Ներսէս Ե. կաթողիկոսի փոքրաւոր և յետոյ Թիֆլիզու Հայոց Ներսէսեան աղգային դպրոցին Տնտես ու Հեղինակ Գարսնի Հայոց ու Եւանջի վանան և Էջմննի դպրոցան է դեղձ ուր հասարակեցեր շուս վերնագրով քերթուածներին, որոնք հրատարակուած են Հայոց պատմիկ Կռնիւն Ա. հատորում:

ՄՇՈՒ ԹՈՉՈՒՆ ՕՏԱՐ ԵՐԿՐՈՒՄ

Օր մի տեսու զոան թոչուն,  
Բուլբուլ կուլար պուտ պուտ արուն,  
«Յորթ ասաց՝ բուլբուլ սիրուն,  
Յորթ կուլաս պուտ պուտ արուն:  
Յժրի, (ինչո՛ւ) չուր (մինչեւ) երբ դու երերուն,  
Տխրիկ կուլաս վըր (վրայ) չոր փէտուն.  
Աշխարհ ամէն վառ քո սիրուն,  
Քո ճովաան՝ քաղցր ձէնուն.  
Ապա յորթ, դու զորն ի բուն,  
Էս լուս ու մութ՝ առաւօտուն,  
Էս շատ անուշ՝ զով հովերուն  
Ախ ու վախով՝ կուլաս արուն,  
Անգին դոհար՝ լուս աստղերուն,  
Առտ աղբիւր ու գետերուն  
Մեր սար ու ձոր՝ զօգաններուն (հովասուն վայր).  
Երգի՛ր քո երգ՝ էս վայրերուն.  
Ի՞նչ կը խօսիս՝ զոան թոչուն

Խենդ ու խելա՞ դու ցնորուն,  
 Չմեռ նստեց՝ մեր սարերուն,  
 Խամրեց գուներ՝ ծաղկըներուն,  
 Փոխեց ձկներ՝ մեր ձագերուն.  
 Էն սուրբ վանքեր՝ հազար տարուն  
 Գերի արաւ՝ մեր ամէնուն.  
 Իմանլ (ինչպէս) չլամ պուտ պուտ արուն:  
 Էլի ասաց՝ դուան թռչուն  
 Հերիք դու լաս կարմիր արուն,  
 Էլի կու գայ քեզ նոր գարուն,  
 Բարեւ կուտաս ծաղկըներուն:  
 Ա՛խ, ինչ ասեմ՝ դրան թռչուն,  
 Սիրաս չի կայ՝ երգեմ սիրուն,  
 Ո՛ւր եմ ես, տես ձմեան օրուն,  
 Օտար եմ ես՝ էս վայրերուն,  
 Մեր սուրբ երկիր՝ մէջ ուռերուն,  
 Էն տեղ ծնանք՝ մէջ բներուն.  
 Ծունչ, օգ ու լուս՝ ճնօղներուն  
 Մակրթեցաւ (չաղուեցաւ) մեր սրտերուն.  
 Էլ չենք մտնայ՝ էն տեղերուն,  
 Չուր չը թաղուինք՝ մեր հողերուն,  
 Հիմի ձմեռ իր ցրտերուն,  
 Գերի արաւ մեզ ամէնուն.  
 Ես ռւմ երգեմ՝ ձմեան օրուն.  
 Վայ, հազար վայ՝ իմ սեւ օրուն.  
 Էլ ինձ չասես՝ դուան թռչուն.  
 Երգեր անուշ՝ էս վայրերուն,  
 Քանի որ կամ՝ էս ցուրտ օրուն.  
 Միչտ ես կուլամ պուտ պուտ արուն:  
 Երբ որ ձմեռ՝ կաննի ցրտեր,  
 Ու կը թսուկի (կը թողի) նա էս տեղեր  
 Էն օր կեղնայ՝ (կըլնի) ինձ նոր գարուն  
 Հազար էրնէկ՝ էն օրերուն,  
 Էն օր կ'ենամ մէջ գիշերուն,  
 Խաբրիկ կուտամ թռչուններուն,  
 Թռչունք ամէն՝ ձկնս կիմնան,  
 Նիշուն (նկարուած) թեւեր՝ ծափ ծափ կուտան.  
 Անուշ ձկնով՝ կ'ճըրճըրտան,  
 Բորբին (րանան) թեւեր՝ թռիչ կերթան,  
 Էրամ, էրամ շարուէ շարան (կարգ կարգ)  
 Էրկնքի տակ՝ սողան լողան.

էջլըջալով (կարկաչել անձեղ թռչնու) կճըլլըլան.  
 Մեր սար ու ձոր՝ ամէնք ցրնծան:  
 Էն օր կ'ստեմ, դուան թռչուն,  
 Էլ չի խօսես, էկաւ գարուն.  
 Էլ չեմ լսի՝ քո խօսքերուն,  
 Գնաս բարեւ՝ հետ ցրտերուն:  
 Հիմի դանձամ՝ ծաղկըներուն,  
 Բարեւ կուտամ՝ էս ամէնուն,  
 Ուրախ եղէք էս օրերուն,  
 Չմեռ գնաց՝ էկաւ գարուն,  
 Խօրօտ (սիրուն) մօրօտ՝ իմ ծաղկըներ,  
 Ծաղեր շողան՝ ձեր երեսներ,  
 Աղթթրանի՝ էն սուրբ հովեր,  
 Չեղ կ'օրօրեն՝ էլէք ի վեր.  
 Մարգարտի պէս պուտ պուտ ցողեր.  
 Էնդով լվաք ձեր երեսներ:  
 Ահա էկաւ՝ գարնան օրեր,  
 Ահա ցնծան՝ սար ու ձորեր,  
 Սար ու ձորեր՝ ձեր ճնօղներ,  
 Որ ձեզ ճնան՝ գարնան օրեր,  
 Իւրանց աչաց՝ արծաթունքեր  
 Կլկլալով՝ տան ձորն ի վեր,  
 Պաղ ու անուշ գուլալ (ջինջ) ջրով  
 Ուրախ ուրախ գան ձեր ծոցեր.  
 Էն ջրերով՝ կը ժածկուէք  
 Իրար գիրար կը բարեւէք  
 Խլվալով (ուրախանալով) կը ճօճկուտիք,  
 Իրարու հետ կը պաղտուիք.  
 Չեր կլկլան՝ տակի ջրեր,  
 Չեղ անուշ գան կ'նոնց ձկներ,  
 Ծաղով ցողով ձեր կոկոններ,  
 Ծռին ի ջուր՝ հով քամիներ.  
 Յողուեն, անուշեն՝ էն ջրեր.  
 Խմեն խումրիքն, (տատրակ) ու բուլբուլներ  
 Եւ ձեր տակի հեղ ալիքներ,  
 Յնցեն ի վեր ձեր կոկոններ,  
 Չեր գողգողուն՝ թաց կոկոններ,  
 Յնցղեն, ցողեն՝ նոր անձրեւներ.  
 Արեւ գարկէ՝ ձեր երեսներ,  
 Պէճ պէճին տայ՝ (պայծառ փայլել) ձեր ալ գուներ  
 Չեղ ճածկելու՝ թուփ տերեւներ,

Որ պատել են՝ ձեր բողոքներ,  
 Գամի ու ցուրտ՝ բարկ արեւից,  
 Ձեզ կը պահեն՝ կնոնց օրից.  
 Երբ տերեւներ կժածկըտեն,  
 Արեւ թփոց մէջ կը մտնեն.  
 Անթիւ լուսեր՝ կը փուզին (սփռուիլ)  
 Ջրի երես՝ կը խաղկտեն,  
 Որ վեր ու վար՝ կը թռչան,  
 Աղեղի պէս՝ կը փլզլին,  
 Էս բնութեան՝ զարդարանքնին  
 Մէկ նոր էրկինք մեզ կերեւին.  
 Հերիք գովեմ՝ ձեզ ծաղկըներ,  
 Հիմի էլ տամ ձեր անուններ,  
 Ծիծղան ծաղիկ՝ ու կակաչներ,  
 Կակուի, տասիկ՝ ու նարգիզներ,  
 Աղբօր արուն՝ բրաբխոններ,  
 Գառնի դմակ՝ նոնոփարներ,  
 Կարմիր նորի ու նարգոսներ,  
 Համասփիւռ՝ ու սօսաններ,  
 Սամչի ծաղիկ՝ անթառամներ,  
 Տուղտի ծաղիկ կորնկաններ,  
 Արեւահետ՝ ձուռն ծաղկըներ,  
 Ասաղն ծաղիկ՝ բարձ մանուկներ,  
 Հերիք ծածկէք՝ ձեր խոպոպներ  
 Ձեր հազարաց՝ նխշուն գուններ,  
 Ձեր անուշ հոտ՝ հիմի բուրէք,  
 Մեր էս վայրեր՝ դուք անուշէք,  
 Էլ ծառայ չենք՝ մենք ցրտերուն,  
 Էլ գերի չենք՝ օտարներուն,  
 Մեզմէն ի վեր՝ ջու՛ջ (մեծ) թռչուններ  
 Թեւեն (թռչին) ի վեր՝ վեր քան զամպեր,  
 Էն աեղ լսեն՝ երգ օրէնքներ,  
 Բերեն, պահեն՝ ձեր սուրբ բներ,  
 Էն օրէնք տան՝ մեր երգերուն.  
 Որ չի խառուենք օտարներուն.  
 Փնփուշ (քնքուշ) մշուշ՝ նործին ձագեր,  
 Կնոնց էլ տանք՝ մեր օրէնքներ,  
 Որ մեր ծնած՝ սուրբ հողերուն  
 Էս երգ երգեն՝ չուր օր մահուն  
 Ամենքս հիարած (միաբանած) առօտ, երկուն  
 Երգ օրհնութեան՝ տամք Աստուծուն:

Արդեօք՝ մեկնութեան կարօտ է այդ պանդուխտ Մշեցու  
 քերթուած, Սրբազան, կարծում չեմ: Գերթողը՝ ներշնչուած  
 մի անակնկալ աղգային դէպքէ, կարծում է՝ իր պանդխտ-  
 առութեան մէջ, թէ իր բուրբուրը՝ էլ հայրենիք է դառնալու  
 և այն տեղ՝ դարունն իր ծաղիկներով վայելելու, ազատ-  
 ուելով հիւսիսի սառուցներէն:

Վանեցոյ և Մշեցոյ այժմեան բարբառները, ինչպէս նկա-  
 տեց ընթերցողը, իրանց միջում աւելի նախնեաց գրական լեզ-  
 ուի հետքերն ունին, բայց երկու դիտաւոր ներգործութիւն  
 խանգարել են նրանց դաշնակաւորութիւնը: Առաջինն է՝ բա-  
 աերի հնչմունքն որ՝ որքան կանանց բերանակապութենէն  
 (քթկալ) է առաջ եկած, ինչպէս արդէն ասացի, այնքան  
 էլ օտարազգաց՝ Բրդաց և Թրքաց բարբառների արտաբ-  
 րութենէն էլ են ներգործուել: Երկրորդ՝ թէ՛ Վանեցիք և թէ՛  
 Մշեցիք իրանց պանդխտութեան մէջ, Ռուսոց և Օսմանցոց  
 մեծ քաղաքներում, Հայոց բարբառներէն շատ բաներ խառ-  
 նել են իրանցում, այնպէս որ, եթէ այդ բարբառների  
 հնչմունքն ուղղուի, կերեւայ նրանցում, Արարտեան և  
 Պօղոտ-հայկական ձեւեր, դարձուածքներ և այլն:

Վանեցոյ և Մշեցոյ բարբառները, գրականապէս կենդա-  
 նացնող իմ գիտեցածն է, առաջին Ամրիկեան Օհաննէս  
 աղէն՝ իր քերթուածներով. Սենեքերիմ Արծրունին՝ իր  
 Նոր Պայպիսի գաղթական Մշեցոյ հարանեաց նկարագրովը: Իսկ  
 Օսմանեան Հայոց մէջ, առաջին անգամ, Սրուանձտեան Գա-  
 րեգին վարդապետն իր Գրոց ու Քրոց անմահ գրքուկով  
 և յետոյ իր գանձ Մանասով, այդ բարբառների ճա-  
 շակը տուողը: Նմանապէս Տէր Սարգսեանց երկու եղբարք,  
 մինը՝ Արիստակէս վարդապետ՝ իր Պանդուխտ Վանեցոյի,  
 միւսը՝ Պ. Սեդրակը՝ իր Շահնէ և Արդիւով: Այդ վերջնոյն  
 գործը մնայուն է՝ թէ և հեղինակական ամեն պայմանները  
 չեն պահուած այդ բարբառական գրականութեան մէջ՝  
 բայց գործը կոյս աղգային է, այնպէս որ, եթէ մէկը ճա-  
 շակն ունի այդ բարբառին և եթէ ճամպորդել է այդ պատ-  
 ուական վայրերում, որոնք նկարագրում է հեղինակը, զմայ-  
 լելով է զմայլում կարդալիս այդ գիրքը և կարծում է թէ՛



«Փարիզի խոհարարները գուցէ քանի մը հազար բառ ունին միայն իրենց արուեստին վերաբերեալ : Բայց Հայաստանցին քանի մը տեսակ մտեղէն բանջարով կերակուրներ, եւ կաթն ու մածոն, սերն ու կարագ, թանն ու սրանիքը գիտէ : Դիր դու Աղեքսանդր Տիւմաի վիպասանութիւններն, կամ Հիւկիօ Թշառնէրը՝ իմ աչքիս առջեւ, կը կարդամ ծայրէ ի ծայր, բայց կը հասկնամ միայն այն մասերը՝ որոց վրայ գաղափար ունիմ : Այո, Թշառնէրու մէջ կը հասկնամ ժան վալժանի վիճակը, անոր անցքերը եւ արկածները, քանզի քաջադէպ է յաճախ մեր շուրջը տեսնուածին եւ կատարուածին : Կգնայիմ, քանզի կը հասկընամ Պիէնվընիւ եպիսկոպոսին սրտով եւ արգեամբ՝ սղորմածին, մարդասիրին վարքն ու արարքը, նորա պատկերն Աւետարանի մէջ կայ : Եկեղեցին շարունակ ցոյց տուած է անոր նման առաքիները, եւ ոչ միայն ի դասուց եկեղեցւոյ պաշտօնէից, այլ եւ թագակրաց : Հայ էր Աշոտ սղորմածն, իսկ Փարիզի բանտերու, պալատներու, ականներու նկարագիրէն բան մը չեմ հասկնար :

« Լեզուի մը բառերն ուրեմն տեղեաց եւ կենցաղավարութեանց համեմատ շատ կամ քիչ են : Գեղացիներն ալ անթուելի բուսոց տեսակները եւ անունները գիտեն, որոց վրայ երբէք գաղափար չունի սրանքեռը կամ սեղանաւորը : Իժիշկն իրեն բառերն ու բառարանն ունի, աստղագէտն՝ իրեն, դերձակն՝ իրեն, մեքենագործն՝ իրեն, եւ այլն . . . . . :

« Գալով մեր հայրենական դաւառական բառերուն, անհարին է որ մէկը կարող լինի Հայաստանի ամեն դաւառաց բնակչաց բերանը գործածուած բառերը հաւաքել (մէկը չէ՝ բայց շատ մարդիկ կարող են հաւաքել) որոց կարեւորութիւնն արդէն շատերը սկսեր են զգալ եւ հասկացած են թէ մեր դրաբառ մատենաներու մէջ գործածուած ու բառարաններու մէջ ղեակողուած բառերը հերիք չեն ազգի մը լեզուի ամբողջութեան եւ կատարելութեան պէտքը լեցընել, թէպէտ ղիւրութիւն կայ մեր լեզուի կանոններու մէջ նոր բառեր յօրինելու, նոր բարդութիւն կազմելու, բայց ժողովրդեան ու հնութեան ժամանակի շինածն աւելի բնական է : Օրինակի համար ըսենք, ժողովուրդը կըսէ « բանթու », գրականութիւնը կըսէ « գործադու » : ժողովուրդը ամեն օր նոր բան մը տեսած կամ ըսած ժամանակ նոր բառ մը կ'ստեղծէ, շուկայի մէջ, ընկերութեան մէջ, գեղերու մէջ մօտիկ եւ փորձէ մանաւանդ զուարճարանութեանց մէջ :

« Ըստ մեզ՝ դաւառական բառերու հաւաքումն մի միայն դաւառական ժողովրդական լեզուներով զանազան գրուածներ հրատարակել պէտք է, եւ այն հրատարակութեանց մէջ գործածուած բառերը հաւաքել եւ նշանակութիւնը գնել՝ կամ առընթեր կամ վերջընթեր » :

Հայոց ազգն ու եկեղեցին պահպանող մի գլխաւոր տարերքն է եղել, ամուսնական կեանքը, որն որ իր հիմքը տանուտէրական եւ նահապետական ժամանակներէն ունի դրած Հայոց աշխարհում, թէև Արշակունիք այդ ընկերական սարքը խանդարեցին իրանց բազմակիւն կեանքով, բայց քրիստոնէութիւնը վրայ հասաւ եւ վերահաստատեց աւելի նուիրական անելով այն՝ եւ յիրաւի շատ դարեր Հայք՝ ամուսնական կեանքն սուրբ պահելով իրանց մէջ, այդ կեանքով էլ իրանց կրօնն ու լեզուն պահպանուեց : Այդ հայեացքը, Սրբազան, մեր ուշագրութիւն դէպ իրանց է հրաւիրում Հայոց կանայքը, վասնզի Հայոց պատմական կեանքում, Հայոց կանանց նշանակութիւնը շատ մեծ է ազգապահութեան եւ կրօնապահութեան մէջ, մանաւանդ գաղթականութեան միջոցում : Հայոց կանայք՝ միշտ իրանց սրտերում պահած են ազգային կրօնական զգացմունք, բայց ոչ մոլեռանդօրէն, այլ իրրեւ հայկական աւանդութիւն եւ օրէնք, իրրեւ բարոյականութիւն եւ հոգւ վերկութիւն եւ սրտի մաքրութիւն : Ծշմարիտն ասելով՝ պէտք է խոստովանինք, որ մեր Սուրբ Հարք այդ կարգն ու սարքը, այսինքն ամուսնութիւնը, թէ բնականօրէն եւ թէ բարոյապէս շատ պատուական դրութեան մէջն են անել եւ շատ լաւ են հասկացել Պօղոս առաքելոյն այն խօսքը թէ՛ « Եթէ ոք էւրոյ եւ մանաւանդ քրիստոնէան խնամ ոչ տանիցի, ի հաւատոցն ուրացեալ է՝ եւ չար եւս քան զանհաւատն է : » Ա. Տիմոթէոս Գլխ. Ծ. համար Ծ :

Կարելի էր արգեօք, ընտանեօրութեան եւ ազգասիրութեան համար՝ դրամէն աւելի ազգու, ճիշդ եւ արդար մի պատուէր տալ մարդկային ազգին : Այդ ասել է թէ՛ ո՛վ որ իր ընտանիքին, հայրենիքին եւ ազգայնոցը վրայ խնամք չտանել, անհաւատն էլ է՝ անհաւատ, եւ իրօք էլ այնպէս ցոյց է տալի մեզ պատմութիւնը, վասնզի, որ ազգի մէջ սր՝ տեստալի մեզ պատմութիւնը, վասնզի, որ ազգի մէջ սր՝ տեստալի մեզ պատմութիւնը, սրբութիւն եւ ազատութիւն, այն ազգը զարթոյցութիւն, սրբութիւն եւ ազատութիւն, այն ազգը զարթոյց է, զիմացել է ու մնացել : Հին ազգաց ու ազգանց մէջ կովկասային ազգերը, որոնց մէջ մենք առաջինն ենք :

Նորերումս դերմանական ցեղերը, իսկ սեմական ցեղերում բաց ի երբայեցոց ազգէն՝ փճացել է կամ փճանալու վրայ է իրանց ընկերական կեանք, չնայելով որ՝ ինչպէս Արարները, որոնք լուսաւորութեան մինչեւ մի աստիճանին էլ հասած են եղել :

Ըստ ինձ, Սրբազան Տէր, մարդկային ազգի կատարելութեան հասնելու համար, եթէ մի ծաղկոց կայ, այն՝ սուրբ ընտանիքն է, մի ուսումնարան, լաւ տնօրինուած քաղաքն է, մի համալսարան, լաւ կառավարուած աշխարհը, իսկ բարձրագոյն ճեմարանն է՝ ամբողջ տիեզերքը: Կրօնական, գրականական, արուեստական, գիտութեանական լուսաւորութիւնն որ և է ազգի մէջ, որ և է աստիճանի կուղէ թող հասնի, եթէ այդ ազգում ընտանեկան սուրբ կեանք, քաղաքական առաքինի կեանք և մաթեմատիկական արդարութեան վրայ հիմնուած աշխարհավարութիւն կայ ո՛չ, ամեն բան ունայն է, ամեն բան աւազի վրայ է, ուշ կամ վաղ՝ մարդկային բանականութիւն կը յաղթուի, կը ճնշուի և կտարկանայ՝ բնութեան բռնութեան ներքեւ, որն որ իրանց՝ մէ դուրս են մղում երկրային անշէն դրութիւնը, ընկերական վատ մտլութիւնը և վարչական անիրաւութիւնը:

Մեր անբաղդութենէն, Սրբազան, այսօր Հայաստանում ամուսնական կեանքը տեղ տեղ խանգարուած է, դժբաղդ պանդխտութեան պատճառով: Հազար հազարաւոր կանայք և երեխայք երեսի վրայ մնացած են ծնողական խնամքէ դուրի: Նմանապէս



նաև Պօլսում, բոլորովին շուռ է եկած ամուսնական կարդ կանոն՝ այլ և այլ ներդործութեանց ներքեւ, որոնք ձեռ յայտնի են անշուշտ:

Մնաց հիմա խօսել մի փոքր էլ, ինչպէս երբեմն խօսեցանք, և ըստ ինձ կարեւորագունէն մինն է, Հայոց աշխարհի օգին, սնունդին, հողին և գլխաւորապէս բնութեան հանուր տեսքին և պատկերին արած ներգործութեանց մասին՝ ինչպէս նախնեաց, նոյնպէս և արդեանց կեանքին,

կրօնին և գրականութեան վրայ: Բայց որովհետեւ այդ քննութիւն մեծ պատրաստութեան է կարօտ, այսինքն Հայոց աշխարհի բնական յատկութիւնը, բնական գիտութեանց օգնութեամբ է կարելի քննել ու մեկնել, որն որ իմ կարողութենէս վեր է, գրա համար վերեւանց միայն անց կը կենամ: Սակայն գիտենալ պէտք է, որ առանց բնական գիտութեանց էլ՝ ինչպէս նաև գրական գիտութեանց, անհնարին է մի աշխարհի և նրա միջում բնակող ազգի պատմութեան բանլիքը գտնել: Երբ ազգի պատմութիւն եմ ասում, մինչեւ հիմա ընթերցողը կարծեմ լաւ իմացաւ, որ այդ ազգի վրայ տիրող թագաւորաց պատմութեան համար չեմ ասում, այլ բուն այն աշխարհին ու ազգին ընկերականութեան, գրականութեան, արուեստաւորութեան, վաճառականութեան, երկրագործութեան, ճարտարապետութեան, այսինքն քաղաքայինութեան և իրանց միջում տիրող կրօնին, օրէնքին, մտքին ու հայեացքին պատմութեանը:

Հայոց աշխարհի բնութեան համայն տեսքը, որ սարքուած է լեռնաբլրներով, լեռնամէջերով, դարաստափներով, մեծ ու փոքր ծովերով, ծովախներով, գետերով, գետախներով, այլևայլ տեսակ ջերմուկներով, աղբիւրներով, ախներով, մեծ ու պզտի դաշտերով, ձորերով, հովիտներով, որոնք ծովու երեսէն 1500 ոտքէն մինչեւ 6500-7800 ոտք բարձր են, այդ բնութեան կերպարանքն երկրին կճէպինն է, այդ կճէպին ներքեւն ուրիշ աշխարհ է, սանգարամետականը, ուր կան հրահալք նիւթեր, ինչպէս՝ երկաթահանք, ածխահանք, պղնձահանք, արծաթահանք, կապարահանք, քարահանք, աղահանք և ուրիշ շատ անքնին հրահալքիք, որոնք երբեմն բռնկելով՝ ամբողջ աշխարհին շարժ են տալի՝ ահ ու սարսափ ազգելով կճէպի վրայ եղող փառաշէն քաղաքներին, ամուր կերտերին, որոնց շատերն էլ կործանած են, ինչպէս Դուին, Անի, Արցն և ուրիշ քաղաքներ: Հայոց աշխարհի կճէպի այլևայլ գեղեցկութիւնք, իբրեւ մի սիրուն արարած հրապուրել են մեր նախնիք, որոնց յատուկ նկարագիրն են անում Մ. Խորենացի, Ղազար

Պարբեցի, Թովմա Արծրունի և ուրիշ շատեր, այն աստիճան որ մինչեւ անգամ կարծել են թէ՛ դրոխտան այդ աշխարհում լինի շինած Աստուած: Բայց արի տես, որ որքան կճէպի վրայ բնական փառաւորութիւն կայ, այնքան էլ սանդարամետն է սարսափելի իր սասանքներով: Մեր նախնիք կարծել են թէ՛ դեւաբնակ մի մութ աշխարհ կայ լերանց տակին, ուր տեղ չարտիրա մարդիկ բռնուած են ու բանտուած երկաթէ կապերով: Սակայն և այդպէս մեր աշխարհի թէ՛ երեսը, թէ՛ ներքեւը աշխարհեցոց վրայ ազդեցութիւնն են արել: Եթէ չեմ սխալուում, շատ տեղեր քաջութիւնն են շնչել նրանց, շատ տեղեր էլ անդորրութիւն, հովուական կեանք: Օրինակի համար, Սիւնեցիք, Վասպուրականցիք, Տուրուբերանցիք, Արարատեանք նոյնպէս և Տայք միշտ քաջութեան բնոյթ են ցոյց տուել իրանց վրայ, մինչդեռ դրանց հակառակ՝ Ծոպաց, Բարձր Հայոց, Գուգարաց աշխարհեցիք, Պարսկահայք էլ նոյնպէս անդորրատէր են եղած: Ինձ կերեւայ որ, Սրբազան, Հայք, այնքան բնութեան բռնութենէն ահ ու սարսափ չեն ունեցել, նոյնպէս Հռովմայեցոց և Արեաց զէնքերէն, որքան Անապատեցի Արաբներէն և յետոյ Սէլջուկեան Թրքերէն, մանաւանդ նետողաց աղգերէն, այսինքն Թաթարներէն: Այդ վերջին Գուրանեան ազգ և ազինք, ոչ թէ միայն Հայոց աշխարհը կործանեցին, այլ Չինաստանը, Պարսկաստանը, Արապստանը, Ռուսաստանը և մինչեւ անգամ Գերմանաստանն էլ սարսափեցուցին: Դրանց խժժութիւնը քան զՎանդալացը կատաղի եղաւ. կարծես դրանք, զժոխքէն դուրս փախած դեւեր լինէին աշխարհներ ու ազգեր խոպառ կործանելու: Մեր նախնիք, որքան դրանց աւերումն ու քանդումն կրել են, այնքան ծոմապահութեան և նանրահաւատութեան են դիմել, ամէն կողմէն յուսակտուր, միայն իրանց հաւատին են պլլուել փրկուելու համար, ու վերջն ու վերջն թողել են իրանց աշխարհ ու դաղթել: Մի խօսք էլ պահոց խոտութեան մասին, Սրբազան, Հայաստանի ընդեղէնք և խոտեղէնք շատ առատ են ու տեսակ տեսակ: Գիւղացիք շատ անգամ սոխ ու հացով և մի զուլալ ջրով

կշտանում են ու մնանում: Իսկ ոլորը, սալը, սիսեռը, հաճարը և ամենէն գլուխ ցորէնը, որմէ հարիւր տեսակ ուտելիք են շինում, սաստիկ սննդարար են իրանց համար: Որ տեղուանք որ, այդ մուռեղների պակասութիւն է եղել, պահքը լուծելու համար շատ խնդիրներ դուրս է եկել անտէրնչութեան ժամանակ և իրանց իսլամութեան պատճառ, ըստ աւանդութեան: Լաւ կը լինէր, Սրբազան, քանի որ այժմեան բարբարոսութեան ներքեւ՝ ընդեղէն, խոտեղէն և այլ դրանց նման մշակութիւն անելու արգելքներ կան, և գրեթէ մոռացուած է շատ տեղ պարտիզպանութեան արհեստը, Հայաստանցոց սննդին համար, պասազահութեան մէջ մի բարեխառնութիւն կամ չափաւորութիւն լինէր, այնպէս լինէր որ՝ մի փոքր արիւն տուող սննդով ապրէին դոնէ:

Այդպէս, Սրբազան, բնական զիտութեանց օգնութեամբ կարող պիտի լինինք՝ Հայոց աշխարհի ու ազգի պատմական կեանքում թագուն մնացած խնդիրները՝ բաց անել և շատ իրօքութեանց պատճառներն իմանալ:

Օրինակի համար՝ մի քանի հարցեր կան մեր մէջ անմեկին մնացած. թէ Հայք մի մեծ կառավարութիւն չեն ունեցել Ասորեստանցոց և այլոց նման. թէ Հայք՝ մեծամեծ շինութիւնք չեն թողել իրանց հարեւան ազգաց նման և այլն: Այդ հարցերը չէ կարելի լուծել, մինչեւ որ բազմատական պատմութեան զիտութեան չդիմենք: Մինչեւ որ երկրի բնական դրութեան և երկրացոց ընկերական դրութեան մէջ եղած յարաբերութիւնը զիտութենօրէն քննութեան չեն թարկենք: Մեր երկրում, ազգը մեծ եղաւ և զօրաւոր իր միջում պարունակող տոհմերով, որոնք իրանց գոյութիւն պահպանուեց պարսպանման լեռներով ու սարերով. Իսկ թագաւորութիւնը նուազ եղաւ, նրա համար որ՝ ինչպէս ասացի, ազգը մեծ ու զօրաւոր էր: Մեր նախնեաց մէջ մեծամեծ շինութիւնք չեն եղել, իրաւ է, վասնզի նախ՝ բնութեան դեղեցկութիւնը ապարանների և դրոխտների տեղն են բռնել. երկրորդ՝ տեսնում ենք մեծաշինութիւն այն աշխարհներում, ուր տեղ ժողովուրդը կամ ազգը կոչ-

ուած բանը կայ ոչ, այլ ստրկութիւն կամ մարդանման անասունք, որոնք ասրէնը քառսուն յիսուն դահեկանով ասլրում են եղել: Այդպէս էր Եգիպտոսում, այդպէս և Ասորեստանում և Հնդկաստանում, դրանցմով է շինուած եգիպտական պալատները, տաճարները և բրդերը, դրանցմով են շինուած և Հնդկաց Էլէօրա, Սալէթ քարափոր տաճարները: Բայց և այնպէս մեր մեծ նախարարները գեղեցիկ շէնքեր կառուցած են, մանաւանդ քրիստոնէութեան ժամանակները, Անու, Մանաղկերտի, Կարսու, Աղթամարայ, Ոստանու, Հաղբատայ ու Սանահնու և այլ ուրիշ կիսաւեր քաղաքներն ու եկեղեցիքը՝ աղնիւ ճարտարապետութեան նշխարներ են ցոյց տալի: Բաղրատունիք՝ Ախուրեան գետի տակով մի գետուղի (tunnel) են շինել, որն որ մինչեւ այսօր կայ և Էֆէր Կէֆէլ անուն են տուել թրքերը. իսկ եկեղեցաց շինութեան և վանքաշինութեան մասին՝ եղական են եղած Հայք. այն աստիճան լաւ են ըմբռնել թէ՛ ինչ հանգի շէնք պէտք է լինի Աստուծոյ տունը, եթէ մէկ մէկ նկարագրենք Հայոց աշխարհի եկեղեցիքն ու վանօրայքը, վերջը շատ ուշ կը գայ. միայն չէ կարելի չը յիշել Այրիվանը Սրբոյ Գեղարդայ, որոյ տաճարը քարամիջումն է փորուած, սինազորդ՝ շատ ընտիր ճաշակով. Կեչառիսու եկեղեցին, Թարգմանչաց վանքը, Աղթամարայ եկեղեցին և այլ նրանց պէսները, որոնք թէև կիսաւեր են, բայց ցոյց կը տան մեր նախնեաց սրբազան ճարտարապետութեան մասին ունեցած ճաշակը, ինչպէս նաև կիսաւեր քաղաքների շինութիւնն էլ իրանց քաղաքաւորութեան կերպը, որոնց վրայ երեւում է հայկական ազգայնութեան տիպը, որն որ փափագելի էր մեր այժմեան ճարտարապետը ուսումնասիրէին և վերակենդանացնէին, և գուցէ՝ մինչեւ այսօր թագուն մնացած արհեստական գիւտեր էլ անէին՝ խիստ նպաստաւոր՝ ճարտարապետութեան. օրինակի համար, Հայոց որմնաշինութեան արհեստին, մինչեւ այսօր քննիչք խելք չեն կարողացել հասցունել թէ՛ ինչպէս այն քառակուսի մեծ մեծ քարերն առանց կաշուն մի նիւթի կամ կրի, իրար վրայ դիզելով և հազդին պատեր են շինուել անքանդ, նոյնպէս պատամէջե-

րին և այլևայլ ձեւ արձաններին, ինչպէս դառնագլխին, շանագլխին, իշագլխին, ձիագլխին և այլ դրանց նման ձեռակերտ արձաններին:

Սրբ՝ Սրբազան, այս գրածս մի ծրագիր է Հայոց աշխարհի, ազգի և եկեղեցու պատմութեան, մի տեսակ պատրաստութիւն հայկական պատմութեան: Իմ նպատակս էր ցոյց տալ՝ տէրութեանց և տէրութեանկանաց, որ այսօր Հայոց աշխարհ էլ կայ, Հայոց ազգ էլ, Հայոց եկեղեցի էլ, և թէ ահա այս թուղթս ձեռիս՝ հրապարակ եմ դուրս բերում ձեր առաջ և ձեզմով աշխարհին՝ և ասում եմ: Մեր հայրենիք՝ Հայոց աշխարհն է, այսինքն ԱՐՄԵՆԻԱՆ (Arménie), մենք էլ Հայք ենք, այսինքն ԱՐՄԵՆԻԵՆՍ (Arméniens), և մեր եկեղեցին Հայոց է կամ Հայաստանեայց, ԷԿԼԵԶ ԱՐՄԵՆԻԵՆ ՈՒ Տ'ԱՐՄԵՆԻ (Eglise arménienne ou d'Arménie): Թող վեր կենան մեր հարեւան ազգ և ազինք, Քիւրտ, Ղըղըլպաշ, Թաթար, Չէրքէզ մէրքէզ, նոյնպէս և Պուլղարք, Քարաստաղցիք, Սէրպք և այլ նրանց նմանները, և ասեն թէ ոչ, մենք Հայոց վրայ շատ լաւ, շատ աղնիւ և շատ քաջ ազգ ենք եղած:

Ուրեմն կը վերջաբանեմ թուղթս, Սրբազան, քաջ գիտե՛նալով, որ այդ թէ՛ պատմաբանական և թէ՛ հեղինակական հայեացքով՝ բանաբնութեան ենթակայ է: Ճարուած ՚ի թերն առանց դատաւորութեան են, և առաջ բերուած առարկայքն էլ՝ առանց լուսաբանութեան և Երբեմն էլ կրկնաբանութեամբ: Չեղ յայտնի է անշուշտ, որ՝ պատմական հեղինակութիւն անել ուղղ մտրգն ամէն կողմ, հանգիստ պէտք է լինի, որպէս զի կարող լինի բոլոր իր մտաւոր կարողութիւնն այդ բանի վրայ սպառել, վասնզի՝ չկայ մի մտաւոր պարագմունք այնքան մանրաքնին և բազմազգ ին գեղեցրողութիւն պահանջում լինի, ինչպէս՝ պատմական գիտութիւնը: Իսկ ես՝ Սրբազան, զուրկ եմ այն կարողութեանէն՝ որով կարող լինէի հանգստութիւն գնել և իմ մտաբերած պատմութիւնը գրել:

Բայց յուսամ որ՝ քիչ շատ յաջողած լինիմ ապացուցանել, որ՝ այսօր Հայոց աշխարհ էլ կայ, Հայոց ազգ էլ, և թէ՛

երկուսն էլ իրար հետ սերա յարարերութեան մէջն են մի պատմութեամբ, մի եկեղեցւով և մի լեզուով, թէև այդ ազգի կէսն իր բնիկ աշխարհէն դուրս է ապրում, մի օրինաւոր կառավարութեամբ երաշխաւորուած չլինելուն իր հայրենի երկիրը, ուր կարող լինէր հաւաքուելով՝ իր գործունէութեամբ՝ և իրեն կազմող տարերքով զարգանար: Զարմանքն այն է որ՝ հին և նոր Տիեզերական պատմութեան և Աշխարհագրութեան համար՝ Հայոց ազգ և Հայոց աշխարհ կան: Քրիստոնէութեան պատմութեան մէջ մանաւանդ՝ Հայոց աշխարհի ու ազգի բռնած տեղը շատ նշանաւոր է: Ինչպէս որ տեսաք նաև Վաճառականութեան պատմութեան մէջ, ուրիշ շատ զօրաւոր և տիրող ազգաց վրայ, որոնց անունն անգամ չէ յիշուում այդ պատմութեան մէջ, Հայոցը փառաւորապէս խօսուած է ու գովուած՝ իբրև առաջին կարգի վաճառական ազգ: Բայ ի այդ անմահ վկայութեանց Հայոց աշխարհ կայ այսօր, երկրաբանին, բնագիտին, տարրաբանին, աշխարհագրին, ճանապարհորդին և ուրիշ գիտնականաց համար, և, ջաւախ է ասելը, այդ աշխարհին տիրող տէրութեանց համար չկայ, և ի՞նչպէս, հակասական և հակաբանական կերպով: Օրինակի համար, Օսմանեան տէրութիւնը՝ Էրֆէն ճանաչում է՝ առանց նրան ծագում տուող երկիրը՝ Էրֆէնի անունը, որ ազգանուն է, նա՛ կրօնի կամ ազանդի անունն տեղ է կամենում ըմբռնել: Այս ասել է՝ որ Օսմանեան քաղաքականութիւնը պատմական և աշխարհագրական ճշմարտութիւնը բանի տեղ չէ դնում: Գրեթէ՛ մի և նոյն քաղաքական հայեացքով է նկատում և Պարսից տէրութիւն Էրֆէն և Էրֆէնի անունը, ու ան և երկրանունն վրայ: Իսկ Ռուսաց տէրութիւն՝ որմէ սպասում էր աւելի բանական քաղաքականութիւն այդ մասին՝ իբրև եւրոպական Տէրութիւն, Անկլիականին, Փրանսիականին և միւսների նման, որոնք՝ իրանց տիրապետած երկիրներին և երկրացոց անուններն յարգում են ու պատուում, ինչպէս՝ Անկլիացոցը, Հնդկաստանն ու Հնդկիկը, Փրանսիացոցը՝ Ճէզայիրն ու Ճէզայիրցին, և իրանց միւս դազթական երկիրները: Իրանց հակառակ, Ռուսաց տէրու-

թիւնը՝ Կովկաս լեռան անունով է յիշում բոլոր դրա հարաւային նահանգները, որոնց մէջ և Երեսնայի Կոթէրէն, այսինքն Երեւանու նահանգը և այլն: Իսկ Հայոց կրօնին կամ եկեղեցուն, իր ազգային անունը վերցնելով՝ որ է Հայաստանեայց եկեղեցի, ասում է Կեղեցիանի Յեղեղ, Գրիգորեան ազանդը կամ տաճարը և զգուշանալով՝ որ չլինի թէ այդ ազանդ Ռուսական համարուի, Արֆէնի անունը կապում է այդ անուանակոչութեան վրայ:

Արդ՝ Սրբազան, յուսանք որ, Պէրլինու Տէրութենաժողովը՝ Օսմանեան և Ռուսաց տէրութեանց այդ հանդի քաղաքական հայեացքին մեր մասին՝ մի վերջ կը դնէ. վերջապէս կը ճանաչէ Արդարութիւն, և մեր հայրենի երկրին անունը քաղաքական անելով՝ նրա մէջ մի ազգային վարչութիւն կը հաստատէ, ի վարձատրութիւն մեր այսքան տարուայ արեւմտեան Ափաւում ամենապատուական տարերքներէն մինը լինելնուս փոխարէն:

Իսկ եթէ երբէք՝ այդ Տէրութենաժողովում, այս տան և ինտերորդ դարում Արդարութիւնը ձայն չունենայ, այլ միայն Տէրութեանց շահն ու օգուտը նկատողութեան առնուի, ահա՛ մեզ ի՞նչ է մնում անել: Թող ինչպէս որ կամին՝ այնպէս չափեն ու չափչփեն և բանավճռեն այդ տէրութիւնը և Տէրութեանականը, թէ իրանց յատուկ դահլճում, և թէ իրանց սրոշագրերում: Զարգացման ընթացքում եղող ազգաց, ժողովրդոց, հասարակութեանց ԵՍՈՒԹՒՒՆՆԸ (individualité) որն որ իրանց զգացմունքով, խցմամսքով, և հանճարով է՝ դարերով սնուել, ապրել և արկացել, չեն կարող դրանք՝ մահացնել և մեռելացնել: Այդ ազգային, ժողովրդական և հասարակական ԵՍՈՒԹՒՒՆՆԸ, ինչպէս պատմութիւնը մեզ սորվացնում է, իր միջում կարծես՝ մի աստուածային անմահութիւն ունենայ: Իրաւ է, ախարանում է նա, նուազում և երբեմն կարծես մեռնում էլ է իր ստըրկութեան մէջ: Բայց մինն էլ տեսնես որ՝ յանկարծ վեր է կենում, յարութիւն է առնում, և իբրև առաջ մարդ սրիանում է: Ե՛րբ, և ի՞նչպէս՝ մարդ իմանում չէ. իսկ այդ իրանց դահլիճներում բարակ մանուկ տէրութեանական մար-

դիկ՝ ամենեւին: Այո՛, Սրբազան, ինչպէս որ ԵՍՈՒԹԻՒՆՆԸ մի պաշտօն ունի մի անհատի միջում, նոյնպէս ունի և մի ազգի, մի ժողովրդի և մի համասիրտ հասարակութեան միջում: Հայոց ազգի ինքնազգայողութիւնը, այսինքն՝ իր ԵՍՈՒԹԵԱՆ զգացմունքը, որ հինգ դարուց հետէ քաղաքական ստրկութեան մէջ՝ սողալով էր սնանում և ապրում իր եկեղեցւոյը, իր պատմութեանօրէն ու զրականութեամբն և իր սուրբ ընտանեկան կեանքովը, թէ՛ իր բնիկ աշխարհում և թէ՛ պանդխտութեան մէջ, բնակելով՝ գետնափոր անակներում, պարսպապատ վանքերում, դամանման եկեղեցիներում, առանձին թաղերում, դձուձ աներում, ո՛չ թէ՛ մի կայսեր կամ Սուլթանի կամ Շահի իշխանութեան ներքեւ, այլ մի ամբողջ հրօտակ կազմող՝ յաղթող, յաղթահարող ազգաց և ազանց ներքեւ: Յանկարծ այս իննևտասաններորդ դարու սկզբէն՝ շուշ, հոգի և կեանք առնելով՝ վեր կացաւ և լոյս աշխարհում ապրեց, ինչպէս միւս ազգերը, ժողովրդները և հասարակութիւնքը:

Այո՛, Սրբազան, իր հոգեկան սնունդն էր եղած մինչեւ այսօր իր նախնեաց հայացուցած Խաչն ու Աւետարանը, մինչ այսօր այդ հայացած Խաչին ու Աւետարանին է պարտական իր ազգային ԵՍՈՒԹԻՒՆՆԸ: Այսույետայ այդ Խաչին ու Աւետարանին դիտութեան և ուսման լուսովը պիտի սիրէ ու պաշտէ և իր ԵՍՈՒԹԻՒՆՆԸ էլ պիտի սնուցանէ և ուզէ նրանցմով և իր մտաւոր ազատութիւնը, մինչեւ որ ազգային ազատութիւնն էլ նրանց վրայ ստանայ: Մինչեւ հիմա սիրած էր իր պատմութիւնը, զրականութիւնը, այսույետայ բնական և գրական դիտութեանց լուսով մեր աշխարհի, ազգի և եկեղեցու պատմութիւնը պիտի ուսումնասիրէ, և մեր միջում առհասարակ արանց և կանանց, ազայոց և աղջկանց համար մի Սրբազան մատեան պիտի անէ, իբրեւ իր երկրորդ Սուրբ գիրքը:

Այդ խօսքով, ասել չեմ ուզում, Սրբազան, որ Հայոց ազգն ինքն իրան մոլեռանդ պիտի անէ, իր նախնեաց պատմութեամբ, զրականութեամբ և աւանդական կարգերովն ու սարքերովը, որոնք իրանց ժամանակին իրանց պաշ-

տօնը կատարել են ու պրծել: Ասել չեմ ուզում, որ նորէն՝ մեր նախնեաց ընկերական, կրօնական և գրականական կեանքը, յետ բերենք մեր միջում և վերահաստատենք ու ունայն յուսով և ապարդիւն եռանդով ապրինք, ո՛չ ամենեւին: Էլ մենք չենք կարող յետ դառնալ մեր նախնեաց գրաբառը խօսելու, մեր նախարարական կեանքը վարելու և ոչ էլ քրիստոնէութեան համար դրանց պէս նահատակուելու: Այդ դարեկան հոգին, միտք ու եռանդն այս մեր դարերում փոխած են իրանց ուղղութիւն մարդկային ազգումը: Այսույետայ անցուկը՝ մեզ փորձ, գալուկը՝ մեզ դորձ պէտք է լինի, անցուկը մտցուկ չենք անել, հապանցուկով մեր կեանք կը պարարենք, գալուկով կապրինք: Մեր Հաւատը, մեր Յոյսը, մեր Սէրը պէտք է այսույետայ ապագայի վրայ լինի: Այդ ապագայն մեզ պիտի փրկէ: Երբ մենք մեր բանականութիւնը զօրայնենք ու զարգացընենք դորձունէութեամբ և դաստիարակութեամբ: Մեր Հայոց աշխարհը՝ սրբան ծերունի է պատմութեան մէջ, այնքան մանուկ է դեռ բնութեան մէջ, նրա բնական տեսքը, դիրքը, բերքը, օգը, շուրքը, երկիրը ինչ որ կամենան՝ այնպէս պիտի լինի Հայոց ազգ: Միայն թէ, ինչպէս մեր նախնիք այդ երկրի ծոցումն են ծնուել, սնուել ու ապրել և նրան իրանց մայր ճանաչել, և երկիր և ժողովրդը իրար սիրել են բնական օրէնքով: Մենք էլ այսույետայ՝ ոչ թէ միայն պարտինք այդ բնական օրէնքով սիրել այն, այլ դիտութեանց լոյս օրէնքովն էլ, սրպէսզի նրան դարմանելով՝ մենք դարմանուինք, նրան շէնացնելով, մենք շէնանանք ու զարգանանք: Բայց, Սրբազան, հերիք չէ որ՝ մեր ազգին մի միայն հոգեկան և մտաւոր բանականութիւնը զօրանայ, այդ զօրութեան վրայ կամ հետը մի ուրիշ զօրութիւն էլ կայ այսօր, որն որ առաջիններին պէս կարեւոր է. այդ զօրութիւնն է հարստութեանը, այսինքն՝ նիւթական զօրութիւնը, առանց որոյ հոգեկան և մտաւոր զօրութիւնք առանց դորձունէութեան են մնում: Այդ երեք զօրութիւնքը, հոգեւոր, մտաւոր և նիւթական, մի տեսակ երրորդութիւն են դարել այսօր ազգաց համար. առանց առաջնոյն՝ երկրորդը

չէ լինում, առանց երկրորդին՝ երրորդը: Հայոց ազգն այդ-  
բան այսօր չէ որ իմանում է, այլ շատունց: Բայց դժբաղ-  
դութեամբ իր ունեցած հոգեկան զօրութիւն, մտաւոր կա-  
րողութիւն և նիւթական հարստութիւնն իր Մայր-հայրեն-  
եաց միջում չլինելով՝ այլ օտար երկրներում, իբրև վարձով  
տան մէջ ապրող մարդու նման՝ իր այդ զօրութեանց տէր  
չէ կարող եղել լինել և չէ էլ կարող լինում՝ արդիւնաւոր  
անել և վայելել: Ամեն անգամ որ՝ տեղափոխութիւն անելու  
է ստիպւում, կամ իր եղած երկրներում մի յեղաշրջմունք է  
պատահում, իր այդ այլևայլ զօրութիւնք փճանում են ու  
ոչնչանում: Թող ներեն ուրեմն այն համաշխարհեցիք՝ որ  
ասում են թէ՛ «Ուր տեղ անդորրիկ՝ այն տեղ հայրենիք.»  
այդ բանավճիռը երբէք Հայոց համար ճշմարտութիւն չէ  
ունեցել, Պարսկաստանում, Տաճկաստանում, Լեհաստանում,  
Հնդկաստանում և ուրիշ տեղուանք, ինչպէս Իտալիում,  
Փրանսիում և Հոլլանտիաում: Այս երկու երեք դարուայ  
միջոցում՝ Հայոց կուտած հարստութիւն, եթէ իրանց ձե-  
ռին մնացած լինէր, ամբողջ Հայաստան ծախու կարող էին  
առնել, և եթէ այս դարումս մեր մէջ առաջ եկած հոգեկան  
և մտաւոր զօրութիւնք էլ Հայաստանում ունենային իրանց  
դորձունէութիւնքը, փոխանակ այս ու այն տէրութեանց  
օգտին ու շահին վառնելու, փոխանակ անարդիւն դորձու-  
նէութեան մէջ սպառելու, կամ անօգուտ աշխատութեան  
համար փճացնելու, Հայոց աշխարհը, կարող էինք Արեւ-  
մբտեան Ասիում դրախտ շինել, Հայոց ազգն էլ դրախտա-  
բնակ մի ժողովուրդ: Խնդրենք ուրեմն, մենք ժողովրդա-  
որդիքս՝ Աստուածանից, Սրբազան, որ Չեզ պէս Ներսէս  
պաարիարքներ, և Արժանայիշատակ Ներսէս Ե. կաթողիկո-  
սին պէս էլ կաթողիկոսներ մեր գլխէն պակաս ոչանէ, որ  
մեզ՝ մեր դարեկան օրինաւոր փափաքի հասցունեն և իրանք  
էլ իրանց բուն հայրապետական պաշտօնը կատարած լինին:

42-1  
80-3

12 MAR 2013

*Handwritten signature*

ՀՀ Ազգային գրադարան



NL0561421

1273